ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

# ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ԿԱՄ

# ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱՑ

Հ. ԱՐՍԷՆ Վ. ԱՅՏԸՆԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՎԻԷՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆ

1883.

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կրկին նպատակաւ Արդի հայերէն լեզուի քերականութեան հրատարակութեանը յորդորամիտ եղած ենք. նոյն կրկին վախճանն եղած է՝ շատոնց ի վեր նոյնպիսի աշխատասիրութիւն մը մեզմէ թախանձանաք խնդրողներուն ալ։ Այսինքն դիտելով նախ՝ ազգային հասարակութեան մէջ ազգային նոր լեզուին ըստ մասին անծանօթ մնացած ըլլալը, եւ երկրորդ՝ տեսնելով որ ըստ մասին անմերձենալի եղած է գրաւորն ու կանոնաւորը, որն որ հիմակու ատենս միակ միջոցն է մեր օրըստօրական մատենագրութեանը, — երկու վախճանին ալ ի մերձուստ հասցընող գործիք մը մատակարարել նոյն հասարակութեան։

Եթէ մինչեւ հիմայ գրաբար հայերէնի քերականութեամբ կը մտածուէր նոյն կրկին կարօտութիւնը լեցընել, երկար փորձառութիւնը ցուցուց այդ տաժանական միջոցին անբաւականութիւնը, որով երկու լեզուին ալ ծանօթութիւնէն կը զրկուէր ուսանողաց մեծագոյն մասը։ Իսկ թէ արդի լեզուին պարզ քերականութիւնը միայն առնողին, նոր գրաւոր լեզու մը ձեռքն ունենալէն զատ՝ նաեւ գրաբարի ուսման անցնելու որչափ դիւրացած կ՚ըլլայ, այնպիսի տեսութիւն մըն է

Numérisé par CDMF (PP) - 2011

որ կարծենք թէ առանց փորձառութեան ալ իրովի կ'արդարանայ. — եւ ահաւասիկ երրորդ վախճան մ'ալ աս է առաջիկայ հրատարակութեանս:

Ժամանակիս պիտոյից համեմատ՝ ամէն յառաջ ընդարձակ եւ քննական քերականութիւն մ'ի պէտս ուսուցչաց եւ բանասիրաց հրատարակելէն ետքը՝ հիմայ նոյն գործոյն զուտ քերականական մասը կը փութանք հայերէնասէր ուսանողներու առանձինն ընծայելու. միայն բանասիրական, պատմական եւ երկրորդական կարգի տեղեկութիւնները դուրս թողլով, որ հասարակութեան հարկաւոր չեն:

Ներկայ դասագիրքս նախ Բառերու կազմութեան եւ երկրորդ Մասանց-բանի համաձայնութեան կանոններն ըստ սովորութեան աւանդելէն ետքը՝ քերականութեան լրացուցիչ միւս երեք մասերը, այսինքն է Ուղղագրութիւն, Առոգանութիւն եւ Տաղաչափութիւն՝ առանձինն կ'աւանդէ: Բայց նոր լեզուին հնոյն հետ ունեցած կապակցութիւնը նկատելով, ոչ միայն գրաբարի փոքր ի շատէ հմտութիւն տալու, այլ նաեւ նոյն իսկ աշխարհաբար լեզուի ծանօթութիւնը կատարելագործելու համար յատուկ Յաւելուածով մը կու տանք Գրաբար Հայերէն Լեզուի Համառօտ Սկզբունքը, որն որ շատ դիւրութեամբ եւ քիչ ատենուան մէջ կրնայ միտք առնուիլ, եւ որով կարգաւորեալ գրաբարի ընթացք մ'ընելու ճամբան հարթուած ու դիւրացած կ'ըլլայ: Իսկ Քերականական լուծման՝ աշխարհաբարի եւ գրաբարի միատեղ տրուած են կանոններն ու օրինակները.. միայն քանի մը թղթի ամփոփելով. վասնզի բովանդակ քերականութեան ընթացքը լուծման շատ պէտք չի թողուր, ուր ստէպ լուծման վերաբերեալ մեկնութիւններ

Numérisé par CDMF (PP) - 2011

յածախած ըլլալով, այս քերականական հրահանգն ալ մտադիր ընթերցողին բաւական ընտելացած կ'ըլլայ։

Առաջիկայ երկասիրութիւնս իր դիւրութիւններովն ու պարզութեամբը՝ եթէ գրաւոր աշխարհաբարի նկատմամբ եւ եթէ բուն գրաբարի՝ ինքնին յորդոր եւ խրախոյս մըն է՝ ազգային լեզուն կանոնաւոր կերպով ճանչնալու եւ գործածելու. — եւ արդէն յայտնի է որ ազգի մը մէջ ան պհական լեզուին զարգացումն ու յառաջադիմութիւնը՝ ազգին ալ յառաջադիմութեան մէկ էական մասն է։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

*(Մէջի թուերը քերականական կանոնաց թուահամարները կը ցուցընեն:)*


Երես.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ. — Քերականութիւն. Գիր. Խօսք. Մասունք բանի . . . . . . . . 1

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԲԱՌ — ԿԱՄ ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ.

*ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.* — ԱՆՈՒՆ. . . . . . . . 4

ՅՕԴՈՒԱԾ Ա. Անուան թիւը, հոլովն ու հոլովմունքը . . . . . . . . . . . . . . —

Թիւ, 17. Հոլով, 20. Հոլովում, 21.

§. 1. Կանոնաւոր հոլովմունք. . . . . . . . 5

Ա հոլովում, 25. Բ հոլովում, 26. Գ հոլովում, 28. Դ հոլովում, 33.

§. 2. Անկանոն կամ Զարտուղի հոլովմունք . . 8

Ա. Կէս զարտուղիք, 39. Բ. Բուն. զարտուղիք, 53.

§. 3. Նախդիր. Աննախդիր հոլովներ . . . . 12

§. 4. Կրաւորական եւ փոփոխական հոլովմունք . 14

ՅՕԴՈՒԱԾ Բ. Անուան յօդը . . . . . . . . 17

§. 1. Որոշեալ կամ Որոշիչ յօդ . . . . . —

§. 2. Անորոշ յօդ . . . . . . . . . . . . 19

ՅՕԴՈՒԱԾ Գ. Գոյական եւ ածական . . . . 20

§. 1. Ածական անուն . . . . . . . . . . —

§. 2. Ածականին աստիճանները . . . . . . . 21

Ա. Դրական, 97. Բ. Բաղդատական, 98. Գ. Գերադրական. 99.

ՅՕԴՈՒԱԾ Դ. Յատուկ, թուական եւ Մասնական անուանք . . . . . . . . . . . 22


Numérisé par CDMF (PP) - 2011

Երես.

§. 1. Յատուկ անուանք . . . . . . . . . . 22
Ա. Գոյական յատուկ անուն, 101. Բ. Ածական յատուկ անուն, 102։

§. 2. Թուական անուանք . . . . . . . . . . 23
Ա. Բացարձակ, Բ. Դասական, Գ. Բաշխական, 111։

§. 3. Մասնական անուանք . . . . . . . . . 26
Հարցական, 137—140։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. — ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . 29
Գոյական եւ Ածական դերանուններ, 140։
Դերանուան դէմքը, 141։

§. 1. Անձնական դերանուն . . . . . . . . . 30

§. 2. Ցուցական դերանուն. . . . . . . . . . 32
Դիմորոշ կամ Դերանուանական յօդեր, 152։

§. 3. Ստացական դերանուն . . . . . . . . . 35
Սեռականէ-ուղղական, (ստացական.) 169։

§. 4. Յարաբերական դերանուն . . . . . . . 40

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. — ԲԱՅ. . . . . . . . . 41
Ա. Ներգործական, 177. Բ. Կրաւորական, 178
Գ. Չէզոք, 179։ —Եղանակ, ժամանակ, Թիւ եւ Դէմք, 180։ Լծորդութիւնք, 185։

ՅՕԴՈՒԱԾ Ա. Բայերու խոնարհմունքը . . . 43

§. 1. Էական բայ. Ա. Եմ. Բ. ԸԼԼԱԼ . . . . . —

§. 2. Կանոնաւոր խոնարհմունք, կամ Չորս լծորդութիւն . . . . . . . . . . . . . . 44
Ա. Ներգործական եւ չէզոք բայերուն չորս լծորդութիւնը . . . . . . . . . . —
Ա. լծորդութիւն, 193. Բ լծորդութիւն, 194։ Գ. լծորդութիւն, 195. Դ լծորդութիւն, 196։
Բ. Կրաւորական բայերուն չորս լծորդութիւնը 49

§. 3. Անկանոն խոնարհմունք. . . . . . . . 50
Ա. Կէս զարտուղիք, 203. Բ. Բուն զարտուղիք, 207։

ՅՕԴՈՒԱԾ Բ. Պակասաւոր եւ Միադիմի բայեր. 56

§. 1. Պակասաւոր բայեր . . . . . . . . . —

§. 2. Միադիմի կամ Դիմազուրկ բայեր . . . 57

ՅՕԴՈՒԱԾ Գ. Բացասական, (Ուրացական կամ Ժխտական) բայեր . . . . . . . . . 58

Numérisé par CDMF (PP) - 2011

| | |
|---|---|
| | Երես. |
| ՅՕԴՈՒԱԾ Դ. Բայերու ածանցմունքը . . . | 62 |
| Անցողական բայեր։ 282. | |
| ՅՕԴՈՒԱԾ Ե. Բայերու ժամանակներուն վրայ գիտելիք . . . . . . . . . . . . . . | 66 |
| §. 1. Բաղադրեալ ժամանակներ. . . . . . . . | — |
| §. 2. Ժամանակ չինող մասնիկներ . . . . . . | 69 |
| ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ — ԴԵՐԲԱՅ . . . . . | 70 |
| Բայանուն. 267։ | |
| ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ — ՄԱԿԲԱՅ . . . . | 73 |
| §. 1. Բուն մակբայներ . . . . . . . . . . | — |
| Ա. Որակական, Բ. Տեղական, Գ. Ժամանակական, Դ. Հարցական, բացասական, եւայլն։ | |
| §. 2. Գոյականէ-մակբայներ . . . . . . . . | 75 |
| Ա. Տեղական, Բ. Ժամանակական։ | |
| §. 3. Հոլովեալ մակբայներ . . . . . . . . | 76 |
| Ա. Որակական, Բ. Տեղական, Գ. Ժամանակական։ | |
| §. 4. Ածականէ մակբայներ . . . . . . . . | 77 |
| Ա. Որակական Բ. Ժամանակական. Գ. Քանակական։ | |
| §. 5. Դերանունական մակբայներ . . . . . . | 78 |
| Ա. Որակական կամ Ցուցական. Բ. Տեղական։ | |
| §. 6. Կրկնաւոր մակբայներ. . . . . . . . . . | 79 |
| Մակբայակերպներ, 281. | |
| ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ — ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ . | 81 |
| §. 1. Բուն նախադրութիւններ . . . . . . . | — |
| Ա. Յետադաս, Բ. Նախադաս. 302։ | |
| §. 2. Գոյականէ նախադրութիւններ . . . . . | 82 |
| §. 3. Մակբայէ նախադրութիւններ. . . . . . | 84 |
| ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ — ՇԱՂԿԱՊ . . . | 85 |
| ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ — ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ . | 87 |

Numérisé par CDMF (PP) - 2011

Երես․

*Հոլովոց զուգակշիռը* . . . . . . . . . . 112

*Տեղւոյ եւ ժամանակի որոշմունք* . . . . . 113

§․ 3․ *Ածական եւ Գոյական* . . . . . . . . 114

§․ 4․ *Յօդերու գործածութիւնը.* . . . . . . 116

*Որոշեալ յօդ*, 422․ *Անորոշ յօդ*, 441։

§․ 5․ *Թուական եւ Մասնական անուանց գործածութիւնը* . . . . . . . . . . . . 121

ՅՕԴՈՒԱԾ Բ․ *Դերանուանց եւ Դերանունական յօդերու գործածութիւնը* . . . . . . . 123

§․ 1․ *Դերանուններ* . . . . . . . . . . . —

§․ 2․ *Դերանունական յօդեր* . . . . . . . . 126

ՅՕԴՈՒԱԾ Գ․ *Բայերու կիրառութիւն* . . . 127

§․ 1․ *Բայերուն սեռը* . . . . . . . . . . —

§․ 2․ *Բայերուն եղանակներն ու ժամանակները.* 128

ՅՕԴՈՒԱԾ Դ․ *Դերբայներու գործածութիւն* . 131

§․ 1․ *Դերբայ աներեւոյթ* . . . . . . . . . 133

Ա․ *Աներեւոյթ բայ*, 499․ Բ․ *Աներեւոյթ գոյական*․ 506․ Գ․ *Աներեւոյթ ածական*, 509։

§․ 2․ *Դերբայ ընդունելութիւն (Ներկայ)* . . . 137

§․ 3․ *Դերբայ անցեալ* . . . . . . . . . . 138

Ա․ *Անցեալ բայ*, 517․ Բ․ *Անցեալ գոյական*, 520․ Գ․ *Անցեալ ածական*, 524։

§․ 4․ *Դերբայ ապառնի.* . . . . . . . . . 140

*Աձ․ ա—․ փ․ դերբայներուն գործածութեան առանձին կանոնները* . . . . . . . . . 141

ՅՕԴՈՒԱԾ Ե․ *Անփոփոխ մասանց-բանի կիրառութիւնը* . . . . . . . . . . . . . 146

§․ 1․ *Մակբայ* . . . . . . . . . . . . . —

§․ 2․ *Նախադրութիւն* . . . . . . . . . . 148

§․ 3․ *Շաղկապ.* . . . . . . . . . . . . 150

ՅՕԴՈՒԱԾ Զ․ *Բառերու կրկնութիւնը* . . . 154

Ա․ *Գոյական անուն*, 577․ Բ․ *Ածական անուն*, 580․ Գ․ *Բայ եւ դերբայ*, 582․ Դ․ *Մակբայ*․ 583։

*ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ* — ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՒԵՐ · 157

ՅՕԴՈՒԱԾ Ա․ *Շրջումն կամ Շրջան* . . . . . 158

ՅՕԴՈՒԱԾ Բ․ *Զեղչումն* . . . . . . . . . 159

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԽՕՍՔ — ԿԱՄ ԲԱՌԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ


| | Երես. |
|---|---|
| *ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ* — ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ . . | 90 |
| ՅՕԴՈՒԱԾ Ա. *Անուն՝ բայի հետ.* . . . . . . . | — |
| ՅՕԴՈՒԱԾ Բ. *Անուն՝ անուան հետ.* . . . . . | 92 |
| §. 1. *Գոյական՝ գոյականի հետ* . . . . . . . | — |
| Ա. *Բացայայտիչ եւ Բացայայտեալ* . . . | — |
| Բ. *Յատկացուցիչ եւ Յատկացեալ* . . . | 93 |
| §. 2. *Ածական գոյականի հետ* . . . . . . . | 95 |
| *ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ* — ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ . . | 96 |
| ՅՕԴՈՒԱԾ Ա. *Բայերու խնդիր* . . . . . . . | 97 |
| §. 1. *Խնդիր-սեռի* . . . . . . . . . . . . | — |
| §. 2. *Խնդիր-բնութեան* . . . . . . . . . . | 99 |
| *Ուղղական խնդիր-բն. 351. Հայցական, 355. Սեռական, 357. Տրական, 359. Աննախդիր տրական, 364. Աննախդիր ներգոյական, 367. Բացառական, 369. Գործիական, 371։* | |
| ՅՕԴՈՒԱԾ Բ. *Դերբայներու խնդիր* . . . . . | 105 |
| ՅՕԴՈՒԱԾ Գ. *Ածականներու, եւ թուական ու մասնական անուանց խնդրառութիւնը* . | 106 |
| §. 1. *Ածական անուններու խնդիր* . . . . . . | — |
| *Ուղղական խնդիր, 377. Տրական, 378. Բացառական, 379. Գործիական, 381։ — Բաղդատականներու խնդիր, 383։* | |
| §. 2. *Թուական եւ մասնական անուանց խնդրառութիւնը* . . . . . . . . . . . . . . . | 108 |
| *ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ* — ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ | |
| ՅՕԴՈՒԱԾ Ա. *Անուն.* . . . . . . . . . . . | 109 |
| §. 1. *Անուան թուոյն կիրառութիւնը* . . . | — |
| §. 2. *Հոլովներու գործածութիւն* . . . . . | — |
| *Ուղղական, Հայցական, Աննախդիր տրական եւ ներգոյական, 397—403. Սեռական, 404. Բացառական, 405. Գործիական, 408։* | |


Numérisé par CDMF (PP) - 2011

Երես.

ՅՕԴՈՒԱԾ Գ. Աւելադրութիւն . . . . . . . 161
ՅՕԴՈՒԱԾ Դ. Բակառութիւն . . . . . . . 164
Ա. Հոլովոց, 614. Բ. Թուոց, 616. Գ. Դիմաց, 617։

---

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ, ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ, ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ . . . . . . . . . . . . . . 167

Ա. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ . . . . . . . . . . . 168
ՅՕԴՈՒԱԾ Ա. Ուղղագրութեան ընդհանուր սկզբունք . . . . . . . . . . . . . . . —
Ա. Ձայնաւոր գրեր, 621. Բ. Բաղաձայն գրեր. 631։
ՅՕԴՈՒԱԾ Բ. Տրոհութիւն . . . . . . . . . 172
§. 1. Տողադարձ . . . . . . . . . . . —
§. 2. Կիտադրութիւն . . . . . . . . . . 176
Բուն կէտեր, եւ Կիտադրութեան նշաններ. Համառօտագրութիւն, եւ Գլխագրաց գործածութիւնը . . . . . . . . . . . . . 179
Բ. ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ . . . . . . . . . . . 182
Քանի մը հայերէն տառերու հնչմունքը. 692—712։
Գ. ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ . . . . . . . . . . 190
ՅՕԴՈՒԱԾ Ա. Ոտանաւորի կազմութիւնը . . —
§. 1. Տաղաչափութեան ոտքերը. . . . . . —
§. 2. Հատած եւ Անդամ. . . . . . . . . 194
§. 3. Յանգ. . . . . . . . . . . . . 199
Ա. Յանգերու նոյնաձայնութեան աստիճանները . . . . . . . . . . . . . —
Բ. Յանգերու դասաւորութիւն . . . . . . . 202
§. 4. Տող եւ Տուն. . . . . . . . . . 203
ՅՕԴՈՒԱԾ Բ. Տաղաչափական լեզու . . . . 205

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ՍԿԶԲՈՒՆՔ ԳՐԱԲԱՐ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Երես.

ԱՆՈՒՆ ԵՒ ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . . . . . . 211

Հոլով եւ Հոլովումն . . . . . . . . . . —

Կանոնաւոր հոլովմունք . . . . . . . . . 212

Անկանոն կամ զարտուղի հոլովմունք . . . . 213

Հոլովմանց վրայ գիտելիք . . . . . . . . 214

1. Խառն հոլովմունք եւ Կէս զարտուղիններ. 2. Կրկին հոլովմունք. 3. Պակասաւոր անուններ. (Անեզական եւ Անյոգնական.) 4. Երկրորդական հոլովներ. 5. Նախդրիւ հոլովներ։

Թուական անուանք . . . . . . . . . . . 217

Միջակ կամ Մասնական անուանք . . . . . 218

Դերանուանց հոլովումը. . . . . . . . . . 219

ԲԱՅ ԵՒ ԴԵՐԲԱՅ . . . . . . . . . . . . 221

Էական բայեր . . . . . . . . . . . . . 222

Կանոնաւոր խոնարհմունք . . . . . . . . 223

Ա. Պարզ բայերու լծորդութիւնք . . . . 224

Բ. Ն յաւելուածով բայերու լծորդութիւնք 228

Անկանոն խոնարհմունք. (Զարտուղի բայեր.) . 230

Բայերու խոնարհմանց վրայ գիտելիք . . . . 232

1. Ընդհանուր գիտելիք. 2. Մանր զարտուղութիւններ. 3. Խառն խոնարհմունք. 4. Կրկին ձեւով խոնարհմ. 5. Պակասաւոր խոնարհմ. (Պակասաւոր բայ. Հասարակ բայ. Դիմազուրկ.) 6. Բացառական բայեր։

ԱՆՓՈՓՈԽ ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ . . . . . . . 237

Մակբայ . . . . . . . . . . . . . . —

Նախդիր եւ Նախադրութիւն. . . . . . . . 239

Շաղկապ . . . . . . . . . . . . . . . 241

Միջարկութիւն . . . . . . . . . . . . —

Անփոփոխ մասանց-բանի վրայ գիտելիք . . . —

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ . . . . . . . . . . 242

Անուն-բայի եւ բայ . . . . . . . . . . —

Ածական, Յատկացուցիչ եւ Բացայայտիչ . . —

Numérisé par CDMF (PP) - 2011

Երես.

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ . . . . . . . . . . . . . . . 244
*Բայերու խնդիր* . . . . . . . . . . . . . —
*Դերբայներու խնդիր* . . . . . . . . . . . —
*Ածական անուանց խնդիր* . . . . . . . . . 245
ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ . . . . . . 246
*Անուան թիւն ու հոլովը* . . . . . . . . —
*Յօդերու գործածութիւն* . . . . . . . . . 247
*Բառերու կրկնութիւնն ու շարքը* . . . . . 248

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ. *աշխարհաբար եւ գրաբար.* . . . . . . . . . . . . . 250

ՑՈՒՑԱԿ. *Քերականական բառեր այբուբենի կարգաւ* 262

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՔ

| | |
|---|---|
| Ած. | ածական. |
| Աներ. | աներեւոյթ. |
| Անկ. | անկատար. |
| Անց. | անցեալ. |
| Ապռ. | ապառնի. |
| Արգել. | արգելական. |
| Բաղդ. | բաղդատական. |
| Բաց. | բացառական. |
| Գերադր. | գերադրական. |
| Գերկտ. | գերակատար. |
| Գլ. | գլուխ. |
| Գծ. | գործիական. |
| Գոյ. | գոյական. |
| Գրբ. գրբր. | գրաբար. |
| Գրծ. գործ. | գործիական. |
| Դ. | դէմք. |
| Դեր. | դերանուն. |
| Դերբ. | դերբայ. |
| Եզ. | եզական. |
| Եր. | երես. |
| Զրտղ. | զարտուղի. |
| Ընդ. | ընդունելութիւն. |
| Լծ. լծոր. | լծորդութիւն. |
| Խնդ. | խնդիր. |
| Խն. բն. | խնդիր-բնութեան. |
| Խն. ս. | խնդիր-սեռի. |
| Խնրհմ. | խոնարհում. |
| Ծան. | ծանօթութիւն. |
| Կատ. կատր. | կատարեալ. |
| Կրւ. կրաւ. | կրաւորական. |
| Հյց. | հայցական. |
| Հոլ. | հոլովումն. |
| Հսրկ. | հասարակ. |
| Հրմ. հրմյ. | հրամայական. |
| Միջ. | միջին. |
| Մկ. մկբ. | մակբայ. |
| Յոգ. | յոգնակի. |
| Յատ. | յատուկ (անուն). |
| Յտկց. | յատկացուցիչ. |
| Յրկտր. | յարակատար. |
| Յր. յրն. | յարանուանի. |
| Յօդ. | յօդուած. |
| Ներ. Ներգ. | ներգործական. |
| Ներգծ. | ներգործական. |
| Նշ. | նշանակութիւն. |
| Նր. Ներգ. | ներգործական. |
| Շղ. շղկ. | շաղկապ. |
| Ուղ. | ուղղական. |
| Պատմ. պատմ. | պատմական. |
| Պրս. | պարառական. |
| Ռմկ. ռամկ. | ռամկական. |
| Ս. Ն. | սահմանական ներկայ. |
| Սեռ. | սեռական. |
| Սհմ. սահմ. | սահմանական. |
| Ստոր. | ստորադասական. |
| Ստց. | ստացական. |
| Տ. | տես. |
| Տճ. տճկ. | տաճկերէն. |
| Տր. տրակ. | տրական. |
| Փխ. փխկ. | փոխանակ. |

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

---

### ՆԱԽԱԴԻՏԵԼԻՔ

*Քերականութիւն. Գիր. Խօսք. Մասունք-բանի:*

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ *արուեստ մըն է, որ կը սորվեցընէ լեզու մը նախ ուղիղ հասկընալ եւ երկրորդ անսխալ խօսիլ կամ գրել։ Ուստի*

2. *Հայերէն լեզուի քերականութիւնը կը սորվեցընէ՝ նախ Հայերէն լեզուն ուղիղ հասկընալ, եւ երկրորդ անսխալ խօսիլ կամ գրել։*

3. *Հայերէն լեզուն երկու տեսակ կը բաժնուի. 1. Հին Հայերէն որ կ'ըսուի Գրաբար, եւ հիմայ կը գրուի ու չի խօսուիր. եւ 2. Նոր Հայերէն որ կը կոչուի Աշխարհաբար կամ Ռամկօրէն, եւ հիմայ կը գրուի ու կը խօսուի. — Աշխարհաբարին այն մասն որ գրաւոր լեզուի կամ գրոց անարժան բառ կամ խօսուածք է՝ կը կոչուի Բարբառ կամ Գաւառական։*

4. *Ամէն լեզուի մէջ խօսքը բառէ կը շինուի. բառը՝ վանկէ, ու վանկը՝ գրէ։ Ուստի խօսուած կամ գրուած խօսքին սկզբնական արմատն է Գիր:*

5. *Հայերէն լեզուն երեսունութը գիր ունի. որ են՝ ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. ւ. փ. ք. օ. ֆ: — Ֆ գիրը միայն օտար բառերու մէջ կը գործածենք:*

6. *Գիր երկու տեսակ է. 1. Ձայնաւոր, եւ 2. Բաղաձայն: — Ձայնաւոր գիրն ինք իրմէ ձայն կրնայ հանել, եւ ութ հատ է. ա. ե. է. ը. ի. ո. ւ. օ։ Բա-*



Numérisé par CDMF (PP) - 2011

ղաձայնն առանց ձայնաւոր գրի մ'օգնականութեան ձայն չի տար. այսպէս են միացած ամէն գրերը՝ բ. գ. դ. ղ. եւայլն։

7. Ամէն ձայնաւոր գիր իւր քովի բաղաձայններովը մէկտեղ հնչում մը կու տայ՝ որ *Վանկ* կ'ըսուի. զորօրինակ. այս. չափ. լայն՝ մէյ մէկ վանկ են. այս-չափ. ա-գահ. եր-կաթ՝ երկ'երկու վանկ։ Ուստի բառի մը մէջ քանի ձայնաւոր որ ըլլայ՝ նոյնչափ ալ վանկ ունի այն բառը։

Միավանկ կը կոչուի բառ մ'որ միայն մէկ վանկ ունի, ինչպէս՝ յոյս. գործ. — Բազմավանկ՝ ան որ աւելի կամ շատ վանկ ունի, ինչպէս՝ որդի. մարդասիրական։

8. Բայց երբեմն երկու ձայնաւոր մէկտեղ՝ մէկ վանկ կը կազմեն, ինչպէս եա։ Այսպիսի վանկերն *Երկբարբառ* կը կոչուին. եւ են՝ ոա. եա. իա. ոա. եա։

9. Ի գիրն ինք իրմէ վանկ չի ձեւացըներ, այլ կամ նախընթաց ձայնաւորով մը երկբարբառ կը շինէ, եւ կամ իրմէ յառաջ բաղաձայն մը կ'ունենայ, ինչպէս՝ տարւոյ. որդւոյ։ (Տես 629։)

10. Մէկ կամ աւելի վանկ որ ինք իրմէ միտք մը կամ նշանակութիւն մը կու տայ՝ *Բառ* կ'ըսուի, ինչպէս՝ մարդ. կարդալ. իմաստուն։

11. Բառերը քովէ քով գալով՝ *խօսք* մը կը ձեւացընեն. ինչպէս. Աստուծմէ վախցէք։ Ծնողքդ պատուէ։ Ընկերդ սիրէ։ Անոր համար բառը *Մասն-բանի* կը կոչուի, այսինքն խօսքի մաս։

---

Այս քերականութիւնս երկու մաս բաժնելով՝ նախ Բառի եւ երկրորդ Խօսքի կազմութեան կանոնները կ'ընծայեցընենք։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԲԱՌ—ԿԱՄ ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

12. ԲԱՌ կամ Մասն-բանի ութ տեսակ է. չորսը փոփոխական եւ չորսն անփոփոխ։

| Փոփոխականք. | Անփոփոխք. |
|---|---|
| 1. Անուն. | 5. Մակբայ. |
| 2. Դերանուն. | 6. Նախադրութիւն. |
| 3. Բայ. | 7. Շաղկապ. |
| 4. Դերբայ. | 8. Միջարկութիւն։ |

13. Փոփոխական մասանց-բանի փոփոխութիւններն երկու են. 1. Թիւ, ու 2. Հոլով կամ Խոնարհում։

14. *Թիւ*, որ համրանք ըսել է, կը ցուցնէ բանին մէկ կամ աւելի ըլլալը։ Թիւն երկուք է. *Եզակի*, որ մէկ ըլլալը կը ցուցնէ, ու *Յոգնակի*, որ աւելի ըլլալը կը ցուցնէ։ Այսպէս, եզակի է՝ քաղաք. որդի. [illegible]. [illegible]. — յոգնակի է՝ քաղաքներ. որդիք. [illegible]. [illegible]։

15. Հոլով կամ Խոնարհում կ՚ըսուի բառի մը եզերի ծայրի փոփոխութիւնները։ — Անուանցն ու դերանուանցը կ՚ըսուի *Հոլով*. իսկ բայերունը՝ *Խոնարհում*։ Ինչպէս հաց անունը հոլովելով կ՚ըլլայ հացէ, հացով, եւայլն. տեսնել բայը խոնարհելով կ՚ըլլայ տեսնեմ. տեսայ. եւայլն։



Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ

16. *Անուն՝ առաջին տեսակ բառն է, եւ կը ցուցընէ թէ բան մը ինչ է կամ ինչպէս է. զորօրինակ. մարդ. ձու. — բարի. բարձր։*

*Անունն ունի, ըսինք՝* 1. *Թիւ,* 2. *Հոլով եւ* 3. *Հոլովումն, որ հիմայ պիտի տեսնենք։*

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ԱՆՈՒԱՆ ԹԻՒԸ, ՀՈԼՈՎՆ ՈՒ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

ԹԻՒ։ — *Եզակի անուն մը յոգնակի ընելու կանոններն ասոնք են։*

17. Ա. *Միավանկ անունները եր մասնիկն առնելով յոգնակի կ'ըլլան. այսպէս՝ եզակի ձու. քոյր. ձի. խօսք. յոգնակի՝ ձու-եր. քոյր-եր. ձի-եր. խօսք-եր։*

18. Բ. *Բազմավանկ անունները ներ մասնիկն առնելով յոգնակի կ'ըլլան. այսպէս՝ եզ. պարտէզ. նշան. գերի. մարգարէ. յոգն. պարտէզ-ներ. նշան-ներ. գերի-ներ. մարգարէ-ներ։ Նոյնպէս ներ մասնիկ կ'առնուն մէկուկէս վանկ* ունեցող անունները. ինչպէս՝ ոսկր-ներ. աստղ-ներ. գլուխ-ներ. բլուր-ներ. սրահ-ներ։*

* *Կէս կամ Սուղ կամ Նուազ կ'ըսուի այն վանկին որ ամբողջ վանկին կէս երկայնութիւնը կամ տեւողութիւնն ունի. զորօրինակ՝ աստղ բառին մէջ աս ամբողջ վանկ է, իսկ տղ (կամ տըղ) կէս վանկ. ինչու որ աս երկար է ու տղ կարճ։*

19. Գ. *Անուան մը վերջին անձայն յ որ ըլլայ, յ գիրը յոգնակիի մէջ կը կորսուի. այսպէս. եզ. տղայ. ճամբայ. վրայ. յոգն. տղա-ներ. ճամբա-ներ. վրա-ները։ Կայ գրող ալ՝ տղայներ. ճամբայներ. վրայները։*

ՀՈԼՈՎ։ — 20. *Հոլովները վեց հատ են.*

1. *Ուղղական.* 4. *Տրական.*
2. *Հայցական.* 5. *Բացառական.*
3. *Սեռական.* 6. *Գործիական։*

*Զօրօրինակ Ուղղական է երբ որ ըսեմ՝ Մարդ եկաւ. (տէնկ. ատամ կէլտի.)*

*Հայցական՝ Մարդ տեսայ. (ատամ կէօրտիւմ։)*

Numérisé par CDMF (PP) - 2011

Սեռական՝ Մարդու պատկեր. (ադամ [ադամըն] րէս-մի.)
Տրական՝ Մարդու կը նմանի. (ադամա պէնզէր.)
Բացառական՝ Մարդէ առի. (ադամտան ալտըմ.)
Գործիական՝ Մարդով խաւրեցի. (ադամ իլէ եօլլատըմ.)

ՀՈԼՈՎՈՒՄ։ — 21. Ամէն անուն միեւնոյն կերպով չի հոլովիր. ինչպէս մարդ՝ կ'ըլլայ մարդու, իսկ քոյր՝ կ'ըլլայ քոյրի։ Անկէ տեսակ տեսակ հոլովներ կ'ելլէ. եւ այս տարբերութիւնս կամ այս կերպ կերպ հոլովները կը կոչուի *Անուանց Հոլովումն*։

22. Հոլովումը չորս տեսակ է, որ եզակի սեռականէն կ'որոշուի կամ կը ճանչցուի։

Ա հոլովմանը կ'ըլլայ -ի. ինչպէս քոյր-ի.
Բ հոլովմանը կ'ըլլայ -ու. ինչպէս մարդ-ու.
Գ հոլովմանը կ'ըլլայ -ուան. ինչպէս ամառ-ուան.
Դ հոլովմանը կ'ըլլայ -եան, -ան. ինչպէս ծերութ-եան. լեր-ան։

23. Յոգնակիի մէջ հոլովմանց տարբերութիւն չկայ. ուստի յոգնակի ուղղականն ըստ կանոնի (17, 18) գտնելէդ ետքը՝ ամէն անուն միակերպ երկրորդ հոլովման եզակիին պէս հոլովէ։

24. Անուններուն մեծ մասն այս ընդհանուր կանոններուն տակ կ'երթայ. եւ այսպիսի հոլովմունքը կ'ըսուին *Կանոնաւոր հոլովմունք*։ Բայց կան նաեւ *Անկանոն հոլովմունք* ալ՝ որ այս կանոններէս դուրս կ'ելլան, որոնց վրայ վարը (§ 2.) զատ կը խօսինք։

### §. 1. Կանոնաւոր հոլովմունք։

### 25. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հյց. | Ծառ. | Ծառեր. |
| Սեռ. Տր. | Ծառ-ի. | Ծառեր-ու. |
| Բացառ. | Ծառ-է. | Ծառեր-է. |
| Գործիակ. | Ծառ-ով. | Ծառեր-ով։ |

Առաջին հոլովման տակն են անուանց մեծ մասը։

Փայտ, փայտի, տեր. — Ջինուոր, րի, ուորներ.
Ձայն, ձայնի, ձայներ. — Բարեկամ, մի, կամներ.
Չար, չարի, չարեր. — Որսորդ, դի, սորդներ.
Անուշ, անուշի, ուշներ. — Պսակ, պսակի, պսակներ։

Numérisé par CDMF (PP) - 2011

## 26. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հայց. | Ծեր. | Ծերեր. |
| Սեռ. Տր. | Ծեր-ու. | Ծերեր-ու. |
| Բացառակ. | Ծեր-է. | Ծերեր-է. |
| Գործիակ. | Ծեր-ով. | Ծերեր-ով: |

Երկրորդ հոլովման տակ կ'երթան հետեւեալ (ըստ մեծի մասին միավանկ) անունները:

Ձի, ձիու, ձիեր.
Դի, դիու, դիեր.
Հեղ, հեղու, հեղեր.
Մարդ, մարդու*.
Արեւ, եւու, եւներ.
Խենթ, թու, թեր.
Ծով, վու, վեր.
Պառաւ, պառաւու, պառաւըններ.

Շահ, հու, հեր.
Ժամ, ժամու, ժամեր.
Դար, դարու, րեր.
Հայ, Հայու, յեր.
Գլուխ, գլխու, խներ.
Էշ, իշու, էշեր.
Արջ, արջու, ջեր.
Տղայ, տղու:

*Մարդ բառին յոգնակին զարտուղի է. (տես 50:)

Այս հոլովման տակն են ամէն Աներեւոյթ բայանունները. տեսնել. նստիլ. աշխատիլ. երթալ. եւայլն. որ կ'ըլլան տեսնել-ու. նստիլ-ու. աշխատիլ-ու. երթալ-ու:

27. Երկրորդ հոլովման առջինէն տարբերութիւնը, ինչպէս կը տեսնես, միայն եզակի սեռականին եւ տրականին մէջն է: Բայց ատոնցմէ շատերն առաջին հոլովման պէս ալ կրնան հոլովիլ. այսպէս կ'ըսուի՝ Երկու ժամի մէջ. Իր շահին համար. Արեւին լոյսը:

## 28. ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հայց. | Օր. | Օրեր. |
| Սեռ. Տր. | Օր-ուան. | Օրեր-ու. |
| Բացառակ. | Օր-ուընէ. | Օրեր-է. |
| Գործիակ: | Օր-ով. | Օրեր-ով: |

29. Երրորդ հոլովման տակ կ'երթան ժամանակ ցուցընող անունները:

Առտեն, առտընուան,
Ժամանակ, կուան,
Տարի, տարուան,

Ամիս, ամսուան,
Շաբաթ, շաբթուան.
Առտու, տուան.

Numérisé par CDMF (PP) - 2011

| | |
|---|---|
| Իրիկուն, կուան. | Անգամ, գամուան. |
| Նախնիք, քուան. | Հիմայ, Հիմակ, մակուան. |
| Կէսօր, րուան. | Ցառաջ, ջուան. |
| Ամառ, ռուան. | Հերու, րուան. (անցած տարի.) |
| Ձմեռ, ռուան. | Երէկ, րեկուան. |
| Ցորեկ, րեկուան, | Վաղը, վաղուան. |
| Գիշեր, րուան, | Օրհասարակ, կուան. (գրբր. օր հասարակ. ռմկ. օղարսակ:) |
| Քառորդ, դուան. | |

Կը գրուի նաեւ գիշերուան. ամառուան, առանց դյի:

30. Մահ, թէեւ ժամանակ չի ցուցըներ, կը հոլովի գրաբար ձեւով՝ մահուան, մահուընէ:

31. Ժամանակ ցուցընող անուններէն՝ դուրս կը մնան հեղ, հեղու. ժամ, մու. դար, րու. րոպէ, պէի. վայրկեան, կենի. գարուն, րնան, աշուն, աշնան:

32. Երրորդ հոլովման անուններն երբեմն ուրիշ կերպ ալ կը հոլովին. այսպէս. Հինգ օրէ շատ. Այն օրէն ետեւ. Ամառուն սկիզբը. Անցած շաբթուն. Երկու շաբաթէն: Ամեն ամիս. Տարուէ տարի. (ուրիշ դիպուածի մէջ չ'ըսուիր տարուէ.) Այն ատենէն. քանի մը տարիէն:

## 33. ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հայց. | Տէրութիւն. | Տէրութիւններ. |
| Սեռ. Տր. | Տէրութ-եան. | Տէրութիւններ-ու. |
| Բացառ. | Տէրութ-ենէ. | Տէրութիւններ-է. |
| Գործիակ. | Տէրութ-եամբ. | Տէրութիւններ-ով: |

Չորրորդ հոլովման տակ կ'երթան ամէն ութիւն վերջաւորեալներն, եւ քանի մ'ուրիշ անուններ ալ՝ որոնց հոլովները քիչ քիչ զարտուղութիւններ ունին:

| | |
|---|---|
| Ծանրութիւն, թեան. | Էրիկ, էրկան, կանէ. |
| Բարութիւն, թեան. | Կնիկ, կնկան, կանէ. |
| Զօրութիւն, թեան. | Աղջիկ, ջկան, կանէ. |
| Ծնունդ, նընդեան. | Լեռ, լեռան, լեռնէ. |
| Ժողովուրդ, վրդեան. | Դուռ, դռան, դռնէ. |
| Կործանում, նման. | Տուն, տան, տընէ. |
| Խաւարում, րման. | Շուն, շան, շընէ. |
| Անուն, անուան. | Ձուկ, ձկան, ձըկէ: |

Numérisé par CDMF (PP) - 2011

34. Ո—ւհի—ն վերջաւորեալներուն յոգնակին շատ անգամ կը հոլովի՝ զօրու—հի—ն, զօրու—հեանց:

35. Լեռ ու քար միավանկ անունները յոգնակի մէջ ն մ'ալ կ'աւելցընեն. լեռներ. քարներ:

36. Չորրորդ հոլովման անուններէն ոմանք երբեմն Ա հոլովման պէս ալ կը բանին, մանաւանդ գործիականի մէջ. այսպէս կ'ըսուի՝ անձամբ կամ անձնով. ձեռամբ կամ ձեռքով. ձմեռան կամ ձմեռը վրայ. աշխարհ կամ աշխարհէ:

---

Չորս կանոնաւոր հոլովմանց էական տարբերութիւնները հետեւեալ տախտակիս մէջ կը տեսնուի.

| | Եզակի. | | | | Յոգնակի. |
|---|---|---|---|---|---|
| | Ա. ՀՈԼ. | Բ. ՀՈԼ. | Գ. ՀՈԼ. | Դ. ՀՈԼ. | ԱՄԷՆ ՀՈԼՈՎՄ. |
| Ուղ. Հայց. | — | — | — | — | -եր. (-ներ.) |
| Սեռ. Տր. | -ի. | -ու. | -ւան. | -ան. | -երու. |
| Բացառ. | -է. | -է. | -ւընէ. | -նէ. | -երէ. |
| Գործիակ. | -ով. | -ով. | -ով. | -ամբ. | -երով: |

---

## §. 2. *Անկանոն հոլովումներ:*

37. *Անկանոն* կամ *Զարտուղի* կ'ըսուին այն հոլովումները որ կանոնաւոր հոլովմանց ընդհանուր կանոնէն դուրս են. զորօրինակ՝ եղբայր կը հոլովի եղբօր, եղբօրմէ. (եւ ոչ եղբայրէ:)

38. Ասոնցմէ ոմանք՝ որ կանոնաւորներէն քիչ կը տարբերին, կը կոչուին *Կէս զարտուղի*. իսկ բոլորովին տարբերածները՝ *Բուն զարտուղի*:

### Ա. ԿԷՍ ԶԱՐՏՈՒՂԻՔ

39. Անուններէն շատերը գրաբարի նման ալ կրնան հոլովիլ:

40. — Ա. Ի վերջաւորեալ բազմավանկ անուններուն եզակին այսպէս կը հոլովի:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. Հ. | Հոգի. | Որդի. | Գինի. | Թշնամի. |
| Ս. Տ. | Հոգւոյ. | Որդւոյ. | Գինւոյ. | Թշնամւոյ. |
| Բցռ. | Հոգիէ. | Որդիէ. | Գինիէ. | Թշնամիէ. |
| Գրծ. | Հոգւով. | Որդւով. | Գինւով. | Թշնամւով. |

Numérisé par CDMF (PP) - 2011

Այսպէս ալ՝ Բարք, բարսոյ. կենդանիք, նոյն. գօտք, տոյ. յիշենիք, նոյն. գեղացք, ցոյ. դերացք. զինացք. դրօշեցք. տեղացք:

Ասոր հակառակ սովորութիւն եղած է հոլովել՝ գլխաւորաբար օտար անունները. Թիֆլիսէ. Ռումինէ. Էֆէնտիով. Նոյնպէս հայլէի պէս, (լաւ եւս՝ հայելւոյ.) յոքնակէ. եզակիով: (Բայց մեծ սխալ է գրել Թիֆլիսի. Ռուսիոյ.)

41. — Բ. Եզակի ու յոգնակի հայցականին սկիզբը կ'աւելցուի զ գիրը (որ նախդիր կ'ըսուի.) Մեր բանակն զթշնամին ցրուեց:

42. — Գ. Անուանց եզակի ուղղականին վրայ ք աւելցընելով կ'ըլլայ յոգնակի ուղղական եւ հայցական. — որոնց սեռականն ու տրականը կը կազմուի էց, ոց, ուց, աց, անց, մասնիկներով (որ միայն վարժութեամբ կը սորվուի.) — իսկ բացառականն ու գործիականը կը շինուին՝ նոյն սեռականին վրայ մէ եւ մով աւելցընելով: Եւ այս է Դասականական հոլովում:

| | | | |
|---|---|---|---|
| Ո. Հ. | Հայ-ք. | Յոյն-ք. | Ծառայ-ք. |
| Ս. Տ. | Հայ-ոց. | Յուն-աց. | Ծառայ-ից. |
| Բցռ. | Հայոց-մէ. | Յունաց-մէ. | Ծառայից-մէ. |
| Գրծ. | Հայոց-մով. | Յունաց-մով. | (Ծառաներով.) |

Նոյնպէս Տղայք, տղայոց կամ տղաք, տղոց, տղոցմէ, տղոցմով. — դաշտք, դաշտոց. — դուրք, դուրսոց. եւայլն:
Աւելի գործածականներն են Գ հոլովման անունները, եւ մանաւանդ ախին վերջաւորեալները. ինչպէս. տէրտօղինք, ինանց, գրծ. ինամբք. — զքողմանք, զմանց, գրծ. մամբք. եւայլն:

Կամ զուտ գրաբար ձեւով՝ Լերինք, լերանց, (լեռներէ, լեռներով.) Դրունք, դրանց, (դռներէ, դռներով.) Կողմանք, կողմանց, (կողմերէ, կողմերով:)

43. — Դ. Ք վերջաւորած գոյականներն երկու կերպ կրնան հոլովիլ. — 1. Մէյ մը գրաբարի պէս. եւ այն ատեն իրեք յոգնակի կը համարուին, ու վերը (42) գրածներնուս համեմատ կը հոլովին. Քուրձք, քուրձոց. Գէր-ք, գերոց. Յերա-ք, յերաոց. Սոփ-ք, սոփից. Ող-ք, ողոց. Զէն-ք, զինուց. Քուրձէ-ք, քուրձեաց. Դէղորայ-ք, դեղորայից, եւայլն: — 2. Մէյ մ'ալ հասարակ կանո-

Numérisé par CDMF (PP) - 2011

նով, եւ այն ատեն եզակի կը համարուին. գործք, գործ-քի. գրքի. ձեռքի. ոտքի. աչքի. շէնքի. դիզուածքի. բերքի. յոգնակի՝ գործքեր. գրքեր. ձեռքեր. շէնքեր. բերքեր, եւայլն:

44. Կան ք վերջաւորեալներ ալ որ գրաբարի կերպ չեն հոլովիր. ինչպէս՝ պահանք, հարկինք, աղանք, ցոյցք, կեցուածք, պահուածք, բռնուածք. եւ ընդհանրապէս ամէն անուն որ գրաբար չէ:

45. Ք վերջաւորեալներուն վրայ տրուած կանոնները չ'իմացուիր անոնց վրայ՝ որոնց ծայրի ք գիրն իրենց արմատական է ու չի զատուիր. ինչպէս քաղաք, թոք, թեք, ինք, եւայլն:

46. Քանի մ'անուն յոգնակի ձեւով բայց եզակի նշանակութեամբ կը բանեցուի. Այս տեղաց. այն տեղաց. նոյն շնորհաց. իւր գրոց. առենօք. դարպասօք. մօտօք. խա-մօք. աչօք. ձեռօք. ոտօք. յանցանօք:

47. Անուններէն ոմանք միայն յոգնակի հոլովման մէջ կը զարտուղին:

48. — Ա. Կտոր ու տեղ* յոգն. ուղղական կ'ըլլան կտորտանք, տեղուանք: Ոսկր, յգ. ոսկրտանք: Ձի, յգ. ձիանք, ձիանց. թէպէտ կ'ըսուի նաեւ կտորներ, ոսկրներ, ձիեր:

* Տեղ բառը կանոնաւոր հոլովմանէ զատ հոլովում մ'ալ ունի:

| | |
|---|---|
| Եզ. Տեղ. | Յոգ. Տեղեր, տեղիք, տեղուանք. |
| Տեղի, տեղւոյ, տեղաց. | Տեղերու, տեղեաց, տեղաց. |
| Տեղէ, տեղաց. | Տեղերէ, տեղաց, տեղուանքէ. |
| Տեղով, տեղեաւ. | Տեղերով, տեղեօք, տեղօք, տեղուանքով: |

49. — Բ. Եղբայր, քոյր, կին, տէր, շուն բառերուն յոգնակին կ'ըլլայ երբեմն՝ եղբըրտիք, քըրըրտիք կամ քըրըրտանք, կնիկտիք, տիրըրտիք, շըներտիք. սեռական՝ քըրըրտոց, կնկտոց, կնիկտոցմէ, կնիկտոցմով: Քըրըր-տիք յոգնակի բառն անհոլով կը մնայ:

50. — Գ. Մարդ բառին յոգնակին կ'ըլլայ եզակի ձայնով՝ մարդիկ, մարդկան, մարդկանէ, մարդկամբ, կամ դարձեալ կրկին յոգնակի մարդիկներ, ներոն, եւայլն: Իսկ բուն կանոնաւորը մարդեր շատ քիչ կը գործածուի:

Numérisé par CDMF (PP) - 2011

51. — Դ. Մարմնոյ մասերանկ զոյգ անդամներուն անունները յոգնակիի մէջ -ըներ կ'ըլլան, այսպէս

Եզ. Ձեռք. Յոգ. ձեռուըներ.
Ոտք. ոտուըներ.
Մատ. մատուըներ.
Աչք. աչուըներ.
Յօնք. յօնքուըներ, (ընքուիներ.)
Ծունկ. ծնկուըներ.
Երբեմն կ'ըսուի նաեւ՝ ձեռքեր. ոտքեր, եւ այլն։

52. Վերջապէս Ա հոլովման անուններէն ոմանց սեռականը գրաբար ձեւով կ'ըլլայ եզ. ոյ, եւ յոգ. ոց. ինչպէս մարմին, մարմնոյ, մնոց. — գետ, գետոյ, դոց. — լեառն, լեառնոյ. — լոյս, լուսոյ։ Ոմանց ալ յոգ. գործիականը էօք կամ օք կամ ովք. ինչպէս ծաղկօք, ծաղիկով. աղօթիւք, աղօթքով. մեղօք, մեղքով. փետրովք, փետուրներով, եւայլն։ Ի վերջաւորեալ բաղմավանկներուն (տես 40.) յոգ. կ'ըլլայ էք, էից, էօք. կամ իք, ից, իւք. ինչպէս Ընծայք, Ընծայեաց, մեծ. որդիք, որդւոց, դասիւք։

Իսկ ուրիշ գրաբարի կերպ գործածուած ամէն հոլովներն ըստ պատշաճի գիտնալու համար բուն գրաբար հոլովումները միտք առնելու է։

## Բ. ԲՈՒՆ ԶԱՐՏՈՒՂԻՔ

53. Գլխաւորաբար երկու տեսակ բուն զարտուղի հոլովում կայ, երկուքն ալ դերանունական կերպով.

54. Ա. որուն սեռականը կ'ըլլայ -օր։

| | | | |
|---|---|---|---|
| Ո. Հ. | Հայր. | Մայր. | Եղբայր. |
| Ս. Տ. | Հօր. | Մօր. | Եղբօր. |
| Բցռ. | Հօրմէ. | Մօրմէ. | Եղբօրմէ. |
| Գրծ. | Հօրմով. | Մօրմով. | Եղբօրմով, (եղբայրով, յոգն. եղբարք։) |
| | (հայրով, յոգն. հարք.) | (մայրով, յոգն. մարք.) | |

Ասոնց յոգնակին կանոնաւոր է, հայրեր, մայրեր, եղբայրներ. բայց գրաբարէ ալ առնելով կ'ըսուի նաեւ հարք, հարց. մարք. եղբարք, եղբարց, եղբարցմէ, եւայլն։

Numérisé par CDMF (PP) - 2011

55. Բ. սրուն սեռականն -ոջ կ՚ըլլայ։

| | | | |
|---|---|---|---|
| Ո. Հ. | Տէր. | Քոյր. | Կին. |
| Ս. Տ. | Տիրոջ. | Քրոջ. | Կնոջ. |
| Բցա. | Տիրոջմէ. | Քրոջմէ. | Կնոջմէ. |
| Գրծ. | Տիրոջմով. | Քրոջմով. | Կնոջմով։ |

Յոգնակին կանոնաւոր է, տէրեր, քոյրեր, բայց գրաբարէ ալ առնելով կ՚ըսուի նաեւ տեարք, տեարանց. կանայք, կանանց, կանանցմէ։ Այսպէս նաեւ Այր* բառին յոգնակին, արք, արանց, արանցմէ։ Նոյնպէս պարոն բառին յոգն. կը գործածուի շատ անգամ պարոնայք։ — Տալ, աներ, երբեմն նաեւ ընկեր բառերն եզակի մէջ ասոնց պէս կը հոլովին տալոջ, աներոջմէ, ընկերոջ։

56. * Այր բառին եզակին չի հոլովէր, բայց պէտք եղած ատեն, եթէ անձ. [illegible] կը նշանակէ, էրիկ բառէն առնելով կը հոլովէ էրկան, էրկանէ. իսկ եթէ անձ. էր, էրէկ կը նշանակէ, կը հոլովի էրիկ մարդու, էրիկ մարդէ։

57. Օր անունը գրաբարի նման զարտուղի հոլով մ'ալ ունի.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզա. | Օր. | Աւուր. | Օրէ. | Օրով. |
| Յգն. | Աւուրք. | Աւուրց. | Օրերէ. | Օրերով։ |

58. Աստուած անուան եզակին այսպէս կը հոլովի. Աստուած, զԱստուած, Աստուծոյ, Աստուծմէ, Աստուծով կամ -ծմով։ Իսկ յոգնակին, եթէ պէտք ըլլայ, կանոնաւոր է. աստուածներ, ներու, կամ դարձեալ աստուածք, աստուծոց։

59. Կայսր անկանոն հոլովում մ'ունի. կայսեր, կայսրմէ, կայսերաց։

---

## §. 3. Նախդիր. — Անախդիր հոլովներ:

60. Նախադիտելիք։ — Գրաբար հայերէն լեզուի մէջ քանի մը գրեր կան, որ անունէ մը յառաջ կը դրուին ու այլեւայլ հոլովներ կը շինեն. եւ կը կոչուին Նախդիր:

61. Գլխաւոր նախդիրներն են զ, ի, յ։ — Ի եւ յ միեւնոյն նախդիրն է. ի բաղաձայնէ յառաջ կը դրուի, իսկ յ ձայնաւորէ յառաջ։

Numérisé par CDMF (PP) - 2011

1. Զ հայցական կը շինէ. — Զթշնամին հալածել. Գիտեմ զքեզ ով ես։

2. Ի եւ յ տրական կը շինէ. — Ի տուն գալ. յանապատ երթալ։

3. Ի եւ յ բացառական կը շինէ. — Ի սկզբանէ գիտէի զձեզ. դարձաւ յանապատէ։

4. Ի եւ յ ներգոյական կը շինէ. — Ի ճանապարհի մնալ. ծնաւ ի Բեթղեհէմ. յերուսաղէմ բնակել։ — Ներգոյականը գրաբար հոլով մըն է որ կը ցուցընէ մէջ. ի պատկերի. (պատկերի մէջ։)

62. Արդի լեզուին մէջ նախդիրները բոլորովին դուրս ինկած են. այսպէս կ'ըսենք՝ Թշնամին հալածել. տուն գալ. անապատ երթալ. անապատէն դարձաւ. Երուսաղէմ բնակիլ։

63. Մենք հոս *Անախդիր* հոլով կը կոչենք այն հոլովները՝ որ գրաբարի նախդիրը թողուցած են։ Ասոնց մեծ մասը, առանց նախդրի ըլլալնուն, ոմանք ճիշդ ուղղականի կը նմանին եւ չեն ուղղական, ոմանք ալ տրականի, եւ տրական չեն։

Օրդ՝ 1. *Անախդիր է հայցական* հոլովը եւ ուղղականի ձեւով՝ քանի որ զ գիրը չունի. — Սա գիրքը կարդա. (քիթապը.) Սամփսոնի աչուըները փորեցին. (կէօզլէրինի։)

2. *Անախդիր տրական*, ուղղականի ձեւով. — Բռնաւորի ձեռք ինկայ. (էլինէ.) Մեր վրանը հրաւիրեցինք. (չադըրա.) Փարէզ հասանք։

3. *Անախդիր ներգոյական*, ուղղականի ձեւով։ — Եղբայրս Յունաստան մնաց. (Եունանիսթանտա.) Դուք սա տեղը նստեցէք. (շու եէրտէ։)

4. *Անախդիր ներգոյական*, տրականի ձեւով. — Ատենին չհասաւ. (վագթինտէ.) Տղայութեանս՝ դժուարաւ կը սորվէի. (չօճուգլուղումտա։)

5. *Անախդիր բացառական*, տրականի ձեւով. — Շփոթելուն՝ լեզուն կապուեցաւ. (գրբ. ի շփոթելոյն. շաշըրտըղընտան.) Գրոց խօսիլ. (գրբ. ի գրոց. քիթապտան։)

Հասարակ բացառականը միշտ աննախդիր է։

Numérisé par CDMF (PP) - 2011

64. Կոչական ըսուած հոլով մ՚ալ, որ նոյնպէս ճիշդ ուղղականի կը նմանի. եւ անունը մը կոչելով (կամ իրեն կանչելով) կ՚անուանէ. ինչպէս. Ո՛րդեակ, Աստուծմէ վախցիր: Զիս մտիկ ըրէք (ո՛վ) Աթենացիք: — Կոչականն աննախդիր հոլով չէ. միայն թէ սովորողն աղէկ միտք առնելու է որ ուղղական չկարծէ:

---

## §. 4. Կորուսմամբ եւ փոփոխմամբ հոլովմունք:

65. Հայերէն լեզուի մէջ շատ բառեր կան, որոնց վերջին ձայնաւոր գիրը կը կորսուի կամ կը փոխուի, — երբ նոյն բառին վրայ ամբողջ վանկ մը աւելնայ: Այսպէս կ՚ըսենք բերան, սեռ. բեր-նի. (եւ ոչ բերանի.) գլուխ, գլ-խու, գլ-խով. (եւ ոչ գլուխու.) սէր, սիրոյ, սիրով. (եւ ոչ սէրով:)

66. — Ա. Հոլովելու ատեն կորսուող ձայնաւորներն են՝ ա, ի, ու:

| Ա. | Ի. |
|---|---|
| Քաղաք, քաղ-քի. | Երկիր, երկ-րի. |
| Բերան, բեր-նի. | Գետին, գետ-նի. |
| Պառաւ, պառ-ւու. | Գիծ, գ-ծի. |
| Շաբաթ, շաբ-թուան. | Քիթ, ք-թի. |
| Զաւակ, զաւ-կի. | Կաղին, կաղ-նի. |
| Ոչխար, ոչխ-րի. | Դաւիթ, Դաւ-թի. |
| Տախտակ, տախտըկի*. | Սիրտ, ս-րտի. |
| Կռնակ, կռնըկի. | Մոխիր, մոխ-րի. |
| Սոտակ, սոտըկի. | Գիր, գ-րի, գ-րոյ. |
| Աղքատ, աղքըտի. | Գիրք, գ-րքի, գ-րոց. |
| Տղայ, տղ-ու. | Միս, մ-սի, մ-սոյ. |
| Ճամբայ, ճամբ-ու. | Մարմին, մարմ-նի, -նոյ. |
| Փեսայ, փես-ի. | Անկողին, ող-նի, -նոյ. |
| Աստուած, Աստ-ծոյ. | Ամիս, ամ-սոյ, ամ-սուան. |

ՈՒ.

| | |
|---|---|
| Օգոստ, օգ-ստի. | Պտուղ, պտ-ղոյ. |
| Հարուստ, ր-ստի. | Սուրբ, ս-րբոյ. |
| Ջուր, ջ-րի, ջ-րոյ. | Կերակուր, րակ-րոյ. |
| Թուղթ, թ-ղթի. | Անասուն, աս-նոյ. |

Numérisé par CDMF (PP) - 2011

Ձուկ, ձ-կան. Փուռ, փ-ռան.
Մուկ, մ-կան. Ուսում, ուս-ման.
Դուռ, դ-ռան. Ժողովուրդ, ժողովրդեան.

* Ուր որ ձայնաւոր գիրը կրճատուելով՝ ձայնի խառնութիւն կը պատահի, այն ատեն ը գրի հնչում մը կ'աւելցուի — հասարակօրէն այն կորսուած գրին տեղ. ամպրըրէ. ողջըրէ. — դաշտըններ. Ցամքըններ. Գիւղըններ։

67. Քիչ անգամ կը գտնուին նաեւ օ, ե կորսուած. — Թէյնեռ, Թէյն-ռան. օջօեռ, օջօ-ռան. Հառոմ, Հառո-մի, Հառո-մեր. Բարսեղ, Բարս-ղի։

68. — Բ. Հոլովելու ատեն փոխուող ձայնաւորներն են՝ է, եա, իւ, ոյ.

է կ'ըլլայ ի. ոյ կ'ըլլայ ու.
եա կ'ըլլայ ե. իւ կ'ըլլայ ու.

Իւ միայն այն ատեն ու-ի կը փոխուի, երբ ինք բառին վերջին գիրն ըլլայ. իսկ ոյ միայն այն ատեն՝ երբ իրմէ ետքը բաղաձայն մ'ունենայ. ինչպէս օրինակներէս կ'երեւայ։

| Է — Ի | ԵԱ — Ե |
| --- | --- |
| Սէր, սիրոյ. | Վայրկեան, կենի. |
| Հանդէս, դիսի. | Պատանեակ, նեկի. |
| Էշ, իշու. | Վառեակ, ռեկի. |
| **ԻՒ — ՈՒ** | **ՈՅ — ՈՒ** |
| Հաշիւ, շուի. | Լոյս, լուսոյ. |
| Հովիւ, վուի. | Փոյթ, փութոյ. |
| Պատիւ, տուոյ. | Սառոյց, ռուցի։ |

Բայերու իւ վերջաւորութիւնն ալ է գիրը եղի կը փոխէ. ինչպէս իւր տեղը պիտի տեսնենք. — Նայիլ, նայելու. մարիլ, մարելու, մարելով։ Ասոր հակառակ դէպ, (տճ. ծէն) բառը կ'ըլլայ. դիպէ. դիպող։

69. Կորուսմամբ հոլովումն եզականի մէջ կը պատահի, ինչպէս՝ գառնէ. բերնէ. ոտքէ. երկրէ, եւայլն. չ'ըստուիր յոգն. գառներ. բերներ. ոտքներ, այլ գառըններ. բերաններ. ոտաններ։ Բայց կայ կորուսմամբ յոգնակի ալ, այսպէս ջրեր. գրեր. գրքեր. մեր. ճիլներ. ծաղիկներ. փողներ. դաշտըններ։

Numérisé par CDMF (PP) - 2011

70. Փոփոխմամբ հոլովումը գրաբարի ձեւ հոլովելու ատեն կ'ըլլայ. ինչպէս. հայր, հաւրէ. — հայրենեան, հայրենենէ. — կեանք, կենաց. — սէր, սիրոյ. — յոյս, յուսոյ։ Որ եթէ աշխարհաբարի ձեւ հոլովես՝ կ'ըսուի առանց փոփոխման կեանքէ. յոյսէ. սէրէ. էշէ. ինչպէս առհասարակ եզակի բացառականները։ Նոյնպէս յոգն. հայրեր. յոյսեր. սատոյցներ. հայրենեաններ։ Ասկէ կը հետեւի որ՝

71. Բուն արդի լեզուին բառերն անփոփոխ կը հոլովին, ինչպէս են՝ աղէկ. գէշ. մէջ. եւայլն։

Բայց այս կորուստներն եւ փոփոխումն ըսուած կանոնն ամէն անուանց վրայ չի տարածիր։ Ուստի

72. — 1. Կան անուններ որ հարկաւ կորուսմամբ կամ փոփոխմամբ են. ինչպէս. ճամբայ. գլուխ. քոյր. Աստուած. տղայ. շաբաթ. Նայիլ. ամբիլ. եւայլն։

73. — 2. Կան անուններ որ ազատ են. կրնայ ըսուիլ աղջկանէ եւ աղջկըէ. ոչխարէ եւ ոչխ-րէ. ականջէ եւ ակ-նջէ. պարտէզէ եւ պարտիզէ. Մովսէսէ եւ Մովսիսէ։

74. — 3. Կան ալ որ երբեք գիր չեն կորսնցըներ կամ փոփոխեր. ինչպէս. մարդու. նամակէ. պատկէ. խրատէ. հիման. ուղղէ. — Այս անփոփոխներուս կարգն են։

Ա. Ամէն ա ձայնաւորով եղած միավանկները. ծառ. քայր. ձոր. գառ. ձայն. բան. եւայլն.

Բ. Ամէն է վերջաւորեալ միավանկները. ձէ. ծէ. դէ։

Գ. Ամէն է, ոյ, ու վերջաւորեալ անունները. մարգարէ. բարձէ. տղխոյ. կատու. մեղու։

Դ. Շատ մը օտար բառեր եւ յատուկ անուններ այսպէս կ'ըսենք. Սամուէլէ կամ Սամուէլոյ. Փարիզու. Մեքքիոյէ. մայիսէ. յունիսէ։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## ԱՆՈՒԱՆ ՅՕԴԸ

75. *Յօդ կ'ըսուի այն գիրը կամ մասնիկն որ անուան մը առջեւը դրուելով՝ անոր որոշ նշանակութիւն մը կու տայ եւ անոր ընդհանուր միտքը մասնաւորի կ'ամփոփէ: Զորօրինակ, ընդհանուր միտք մը կ'ունենան անունները՝ երբ որ ըսեմ առանց յօդի՝ Քաղաքներ պտըտեցայ. Մարդ տեսայ. Արուեստ սորվեցայ. եւ չ'իմացուիր թէ ո՛ր քաղաքները եւ ո՛ր արուեստը. կամ կրնայ հասկըցուիլ թէ մարդիկ տեսեր եւ արուեստներ սորվեր եմ. բայց իսկոյն մասնաւորի կ'ամփոփուի այս ընդհանուր միտքը՝ երբ յօդով ըսեմ՝ Մարդը տեսայ. արուեստը սորվեցայ. կամ Մարդ մը տեսայ. արուեստ մը սորվեցայ:*

*Այսպէս կը տեսնես առանց յօդի բառաձեւերուն յօդով բառաձեւերէն տարբերութիւնը. Ջուր խմեցի. — Ջուրը խմեցի. — Ջուր մը խմեցի: Թռչուն բռնել. — Թռչունը բռնել. — Թռչուն մը բռնել:*

76. *Երկու տեսակ յօդ կայ.* 1. *Որոշեալ կամ Որոշիչ յօդ եւ* 2. *Անորոշ յօդ:*

77. *Յօդերն անուններէն ետքը կը դրուին:*

---

### §. 1. *Որոշեալ յօդ:*

78. *Որոշեալ կամ որոշիչ յօդը կրկին է. ն, որ ձայնաւոր գրով վերջաւորեալ անուններուն վրայ կը դրուի. եւ ը, որ բաղաձայնով վերջաւորեալներուն վրայ. եւ այս ինչ իրը կամ այս ինչ մարդը կը ցուցընէ. զորօրինակ.* Որդին. Մարգարէն. Մեղուն. — Մարդը. Ձեռքը. Հայը. Պարտէզը:

79. Անուան մը յօդ առնելու ատեն ձայնաւոր գրով վերջաւորած կը համարուի՝ եթէ անձայն յ գրով լմննայ. ու բաղաձայնով վերջաւորեալ կը համարուի՝ եթէ բաղաձայնի հնչման լմննայ, այսինքն՝ աւ, եւ կամ իւ: Անոր համար ն յօդով կ'ըսուի Տղա-ն, Ծառա-ն, Վկա-ն, յ գիրն ալ դուրս թողլով. (Թէպէտ կը գրուի նաեւ գրաբարի կերպով՝ Ծառայն. Տղայն. Վկայն. — տես նաեւ 19:) իսկ ը յօդով կ'ըլլան՝ Ծարաւ-ը. Պառաւ-ը. Արեւ-ը. Բարեւ-ը. Հովիւ-ը:



Numérisé par CDMF (PP) - 2011

Անուն մ'այս որոշեալ յօդով հոլովելու համար քանի մը կանոն միտք առնելու է։

80. — Ա. Ամէն հոլովմանց մէջ գործիական հոլովն երբեք յօդ չ'առնուր։ Չ'ըսուիր՝ Փայտովը զարնել. այն ծաղիկներովը զարդարել։

81. — Բ. Երրորդ եւ չորրորդ հոլովման եզականին մէջ՝ միայն ուղղականն ու հայցականը յօդ կ'առնուն. այսպէս՝ Օրւան չորս ժամը. տէրութեան գանձը. այն տարւընէ. անցեալ ձմեռւընէ։ — Չորրորդ հոլովման բացառականը կրնայ յօդ առնուլ ու չառնուլ. այսպէս կ'ըսուի՝ Տէրութենէն կամ տէրութենէ հրամայուած. ժողովրդենէն կամ ժողովրդենէ յափըշտակել. բայց հասարակօրէն առանց յօդի կը մնայ։

82. — Գ. Գրաբարի կերպ (յոգնակի) հոլովները թէեւ որոշեալ ըլլան՝ յօդ չեն ուզեր. այսպէս. Բարբարոսաց արշաւանքը, (եւ ոչ՝ բարբարոսացը.) Մարգարէից պատգամները. առաքելոց քարոզեցին. Ծառայից պահանջել. այդ Մարդկան բառը։

Բայց զատ է դերանունական յօդն որ միշտ եւ ամէն կերպ հոլովի վրայ կը դրուի. որուն վրայ ետքը պիտի խօսինք։

83. Վերը (25—33) չորս հոլովմանց պատկերն որ դրինք, առանց որոշիչ յօդի ըլլալնուն՝ Անորոշ հոլովմունք էին. հիմայ տեսնենք որոշեալ հոլովմունքն ալ։

ՈՐՈՇԵԱԼ ՅՕԴՈՎ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

| Եզակի. | Ա. | Բ. | Գ. | Դ. |
|---|---|---|---|---|
| Ո. Հ. | Ծառ-ը. | Ձի-ն. | Օր-ը. | Տէրութիւն-ը. |
| Ս. Տ. | Ծառի-ն. | Ձիու-ն. | Օրւան. | Տէրութեան. |
| Բցռ. | Ծառէ-ն. | Ձիէ-ն. | Օրւընէ. | Տէրութենէ(-ն). |
| Գրծ. | Ծառով. | Ձիով. | Օրով. | Տէրութեամբ. |

Յոգնակի՝ չորս հոլովմանցն ալ նոյն է։

Ո. Հ. (Ծառ)եր-ը. Բցռ. (Ծառ)երէ-ն.

Ս. Տ. (Ծառ)երու-ն. Գրծ. (Ծառ)երով։

Նոյնպէս՝ Օրեր-ը. օրերու-ն. Ձիեր-ը. ձիերու-ն. ձիերէ-ն, եւայլն։

Ծն. Լեզուն՝ միայն սեռականի եւ հայցականի մէջ որոշեալի եւ անորոշի տարբերութիւն ունի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Այս որոշիչ յօդերուն համար առայժմ ընդհանուր կանոն ըլլայ որ

Ա. Ուղղականն ու հայցականը միշտ եւ ամէն դէպքի մէջ յօդ կ՚առնուն։

Բ. Գործիականը միշտ եւ ամէն դէպքի մէջ առանց յօդի կը մնայ, եւ անորոշէն հետ նոյն է։

Գ. Սեռականը, տրականն ու բացառականը՝ երբեմն կ՚առնուն յօդ եւ երբեմն չեն առնուր։

## §. 2. Անորոշ յօդ:

84. Անորոշ յօդն է մի կամ մը, որուն պաշտօնն է անուան ընդհանուր միտքը մասնաւորի ամփոփել՝ առանց որն ըլլալը որոշելու. ինչպէս այս խօսքիս մէջ. Փայտ մը կտրէ, մը յօդը փայտին ընդհանուր միտքը մասնաւորի կամ մէկի ամփոփեց՝ առանց որոշելու թէ որ փայտը։ Որ թէ ըսած ըլլայի պարզապէս՝ Փայտ կտրէ. չէիր իմանար որ արդեօք մէ՞կ փայտ թէ աւելի. կամ թէ ըսէի որոշիչ յօդով՝ Փայտը կտրէ, որոշեալ եւ ծանօթ փայտ մը կ՚իմանայիր։

85. Մի կամ մը անորոշ յօդն անուանէն ետքը կը դրուի՝ ամէն հոլովի մէջ միակերպ անփոփոխ մնալով. այսպէս.

Ուղ. Հյց. Փայտ մը. Բցռ. Փայտէ մը.
Սեռ. Տր. Փայտի մը. Գրծ. Փայտով մը։

86. Երբեք որոշեալ բառի վրայ անորոշ յօդ չի դրուիր։ Չ՚ըսուիր՝ Փայտը մը. քաղաքը մը. գիրքս մը. այս տուն մը. այլ՝ քաղաք մը, եւայլն։

87. Մը յօդը՝ հնչման վայելչութեանն համար էմ* եւ ու բառերէն յառաջ ն գիր մ՚ալ կ՚առնու. այսպէս. Անգիւտ գանձ մըն է. զարհուրանք մըն էր. անգամ մըն ալ. հատ մըն ալ, (փոխանակ՝ գանձ մը է, հատ մը ալ ըսելու։) Բայց շատ հեղ կ՚ըսուի նաեւ կրճատելով՝ Անգամ մ՚ալ. հատ մ՚ալ։

* Էմ որ կ՚ըսենք, իմացիր ամբողջ էական պակասաւոր բայը, էմ, էս, է, էնք, էք, էն. էի, էիր եւայլն. որ ետքէն պիտ՚որ տեսնենք։



Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԳՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԾԱԿԱՆ

### §. 1. *Ածական անուան իւր ըլլալը:*

88. Անունը *երկու տեսակ է. Գոյական, որ բանին ինչ ըլլալը կը ցուցընէ. ինչպէս մարդ. ծառ. աշտարակ. եւ Ածական, որ բանին ինչպէս ըլլալը կը ցուցընէ. ինչպէս բարի. պտղաբեր. բարձր:*

Նոր սորվողի մը դժուարին է որոշել թէ որ անունը գոյական է եւ որը ածական. ուստի պէտք է միտք առնուլ որ եթէ նոյն անունը շատ տեսակ բանի կրնայ ըսուիլ, նշան է թէ ածական է. ինչպէս բարի, խորին, բարձր շատ տեսակ բանի կրնան յարմարիլ: Իսկ եթէ անունը մինակ ինք զինքը կը յայտնէ, ըսել է թէ գոյական է. ինչպէս մարդ, որ մինակ մարդու կրնայ ըսուիլ. եւ ծառ՝ որ մինակ ծառի: — Դարձեալ եթէ անուան մ'առջեւ մարդ կամ բան բառը կը յարմարի, այն անունն ածական է. զորօրինակ բարի մարդ. բարձր մարդ. կամ խորին բան. բարձր բան. ուրեմն բարի, բարձր, խորին ածական են: Իսկ եթէ չի յարմարիր՝ գոյական է. ինչպէս՝ չի յարմարիր ծառ բան, խնձոր մարդ. ուրեմն ծառ եւ խնձոր գոյական են:

89. Ածականն *իւր գոյականէն միշտ յառաջ կը դրուի. այսպէս. Բարձր աշտարակ. առաքինի մարդ. պտղաբեր ծառ. ազնիւ գինի:*

90. *Հոլովելու ատեն ածականը միշտ անփոփոխ կը մնայ, եւ միայն գոյականը կը հոլովի, թէ եզակի եւ թէ յոգնակի թուերուն մէջ:*

*Եզակի.*

| | |
|---|---|
| Ուղ. Հյց. | *Բարձր աշտարակ.* |
| Սեռ. Տր. | *Բարձր աշտարակի.* |
| Բացառ. | *Բարձր աշտարակէ.* |
| Գործիակ. | *Բարձր աշտարակով.* |

*Յոգնակի.*

| | |
|---|---|
| Ուղ. Հյց. | *Բարձր աշտարակներ.* |
| Սեռ. Տր. | *Բարձր աշտարակներու.* |
| Բացառ. | *Բարձր աշտարակներէ.* |
| Գործիակ. | *Բարձր աշտարակներով:* |

Numérisé par CDMF (PP) - 2011

Օրինակէս տեսար որ բարձր ածականը թէ եզակի եւ թէ յոգնակի հոլովներու մէջ միօրինակ անփոփոխ մնաց։

91. Նոյնպէս յօդ՝ միայն գոյական անունը կ'առնու եւ ոչ ածականը. այսպէս. Բարձր աշտարակը. Ճերմակ կտաւին. ազնիւ մարդէն. կարծր փայտերը. պտղատու ծառերուն, եւայլն։

## §. 2. Ածականին աստիճանները:

92. Ածականներն երեք աստիճան ունին. 1. Դրական. 2. Բաղդատական եւ 3. Գերադրական:

93. — Ա. Դրական աստիճանը՝ գոյականին պարզապէս ինչ որ ըլլալը կը ցուցընէ. ինչպէս. Մեծ. մանր. ԲէԲէ-. աղէկ:

94. — Բ. Բաղդատական աստիճանը՝ ուրիշի համեմատութեամբ կամ բաղդատելով ուրիշէն աւելին կամ պակասը կը նշանակէ. ինչպէս. Մեծագոյն. մանրագոյն. լաւագոյն. քաղցրագոյն. կամ աւելի քաղցր. աւելի մեծ:

95. — Գ. Գերադրական աստիճանը՝ շատ կամ սաստիկ կը ցուցընէ. ինչպէս ամենամեծ. ամենամանր. ամենաաղէկն:

> Այս ըստ ձեւոյն պարզապէս [illegible] [illegible] կամ բացարձակ գերադրական է, եւ չի ցուցըներ՝ ուրիշներու համեմատութեամբ ամէնէն աւելի ծանրը կամ բարձրը։ Բայց կայ դարձեալ համեմատութեան - գերադրական. զոր տես Բ մասին մէջ։

96. Դրական ածական մը բաղդատական կ'ըլլայ՝ երբեմն -ագոյն մասնիկն առնելով. զորօրինակ. քաղցրագոյն. մեծագոյն. պատուականագոյն. բայց հասարակօրէն աւելի մակբայով կը կազմուի. այսպէս. աւելի քաղցր. աւելի ծանր. աւելի մաքուր. աւելի աղուոր։ Կամ երբեմն աւելի մակբային տեղ կը դրուի ալ. — ալ աղէկ. ալ աւելի. ալ պատուական։

97. Դրական ածական մը գերադրական կ'ըլլայ սկիզբն ամենա- մասնիկն առնելով. զորօրինակ. ամենամեծ. ամենասուրբ. ամենաքաղցր. ամենախոնարհ։ Բայց շատ անգամ ալ այլեւայլ սաստկացուցիչ մակբայնե-

Numérisé par CDMF (PP) - 2011

րով. այսպէս՝ շատ զօրաւոր. սաստիկ դժուարին. անհնարին ծանր. եւայլն:

Սովորական եղած է տաճկերէնի նման ըսել՝ Խիստ շատ մարդիկ. (փէք չօք ատամ.) Խիստ դիւրին. (փէք քօլայ.) եւ կամ պինդ առաջ. պինդ գեղեցիկ. եւայլն:

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### ՅԱՑՈՒԿ, ԹՈՒԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

98. Գոյական եւ ածական անուանց քանի մը տեսակը կայ որ առանձին մտադրութեան արժանի են: Գլխաւորներն են՝ 1. Յատուկ անուանք. 2. Թուական անուանք, եւ 3. Մասնական անուանք:

---

### §. 1. *Յատուկ անուանք:*

99. Յատուկ կ'ըսուին որոշեալ անձի կամ տեղւոյ մը անունները. ինչպէս՝ Նեղոս գետ. Արտաշէս թագաւոր:

Ուրիշ անունները յատուկ անուններէն զանազանելու համար քերականք անոնց Հասարակ անուն ըսած են: Զօրօրինակ Նեղոս գետ. — Նեղոս՝ յատուկ անուն է, եւ գետ՝ հասարակ անուն:

100. Յատուկ անուանք երկու տեսակ են. 1. Գոյական յատուկ անուն, եւ 2. Ածական յատուկ անուն:

101. Գոյական յատուկ անունն ան է որ որոշեալ անձի կամ տեղւոյ մը սեպհական անունը կու տայ. ինչպէս Արտաշէս. Կիւրոս. Սոկրատ. Յովսէփ. կամ Արմաւիր. Եփեսոս. Աթէնք. Նեղոս. Եփրատ. Ողիմպոս:

102. Ածական յատուկ անունն ան է որ որոշեալ անձի կամ տեղւոյ մը վերաբերեալը կը ցուցընէ. ինչպէս. Արտաշէսեան պատերազմներ. Սոկրատեան փիլիսոփայութիւն. Եփեսացի մեհեան. Աթենական ճեմարան:

103. Յատուկ անուանց հոլովումն ընդհանրապէս հասարակ անուանց պէս է. ինչպէս. Գրիգոր, գորի. Նեղոս, ղոսի. Ափրիկէ, կէի. Հայ, Հայու. Յովհաննէս, Յովհաննու. Լիբանան, Լիբանանու. այսպէս ալ Արմա-

Numérisé par CDMF (PP) - 2011

չու. Կլայու. Արշոծու. եւ երբեմն՝ Կլեննայու. Հասմայու: — Երրորդ եւ չորրորդ հոլովման տակ գոյական յատուկ անուն չ'երթար:

104. Շատերն ալ կը հոլովին կէս զարտուղիներուն պէս. Խոսրովանի, Խոսրովայ. Աբենոցի, ցայ:

105. Բայց գոյական յատուկ անուններէն ոմանք գրաբարէ առած մասնաւոր հոլովում մ'ունին:

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղակ. | Տիգրան. | Բաց. | Տիգրանէ. |
| Հայցակ. | զՏիգրան. | Գործ. | Տիգրանաւ. |
| Սեռ. Տր. | Տիգրանայ. | | կամ Տիգրանով: |

Այսպէս կը հոլովին՝ Սահակ, կայ. Մեսրոպ, պայ. Տրդատ, տայ. Հռոմ, մայ. Յակոբ, բայ. Նարեկ, կայ:

Ասոնց նման են նաեւ է, ի վերջաւորեալները. Հռիփսիմէ, Հռիփսիմեայ, զՀռիփսիմէ, Հռիփսիմէէ, Հռիփսիմեաւ կամ մէով, մէաւ:

Այսպէս կը հոլովին՝ Ուգինէ, նեայ. Բարթողիմէ, մեայ. Եսայի, յեայ. Ղեւի, Ղեւեայ. եւայլն:

106. Ռամկական հոլովներ կը համարուին՝ Աստուածածնայ. Էջմիածնայ. Լուսաւորչայ. Սուրբ Անտոնայ, եւայլն. փոխանակ՝ Աստուածածնի, Լուսաւորչի:

107. Ընտանեկան յատուկ անունները թէ գրութեան եւ թէ խօսակցութեան մէջ կը հոլովին պարզապէս՝ Յովսէփին, Յովհաննէսին, Մեսրոպին, Եփրեմին, եւայլն:

108. Իսկ վերջաւորեալ տեղւոյ անուններուն սեռականը հասարակօրէն իոյ կ'ըլլայ. Սպանիա, Սպանիոյ. նոյնպէս Իտալիոյ. Անգղիոյ. Նիկիոյ. Ասիոյ, եւայլն:

109. Յատուկ անուանց յոգնակին հասարակօրէն ըստ ընդհանուր կանոնի կ'ըլլայ Հայեր, Յոյներ, Պարսիկներ, Վրացիներ, Ներսէսներ, Յովսէփներ, եւայլն: կամ գրաբարի ձեւով. Հայք, Յունաց, Պարսից, Ներսիսեանք, Գայիանեանց, Մխիթարեանց, եւայլն:

---

## §. 2. *Թուական անուանք:*

110. *Թուական անուն* կ'ըսուին այն բառերն որ բանի մը որոշ համրանքը կը ցուցընեն. ինչպէս, մէկ, երկու, երեք, կամ առաջին, երկրորդ, երրորդ, եւայլն:

Numérisé par CDMF (PP) - 2011

111. Թուականներն երեք տեսակ են.

Ա. Բացարձակ կամ Գլխաւոր, որ բանին քանի՛ հատ ըլլալը կը յայտնէ.

Բ. Դասական, որ բանին քանի՛երորդ ըլլալը կը յայտնէ.

Գ. Բաշխական, որ ամէն մէկուն քանիկան հատ բաշխուած ըլլալը կը յայտնէ։

112. Երեք տեսակին միատեղ դնենք օրինակները։

| Բացարձակ. | Դասական. | Բաշխական. |
|---|---|---|
| Մէկ. | Առաջին. (առջի.) | Մէյմէկ. |
| Երկու. | Երկրորդ. | Երկ'երկու. |
| Երեք. (իրեք.) | Երրորդ. | Երեք երեք. |
| Չորս. | Չորրորդ. | Չորս չորս. |
| Հինգ. | Հինգերորդ. | Հինգ հինգ. |
| Վեց. | Վեցերորդ. | Վեց վեց. |
| Եօթը. | Եօթներորդ. | Եօթնական. |
| Ութը, ութ. | Ութերորդ. | Ութնական. |
| Ինը. | Իններորդ. | Իննական. |
| Տասը. | Տասներորդ. | Տասնական. |
| Տասնումէկ. | Տասնումէկերորդ. | Տասնումէկական. |
| Տասուերկու. | Տասուերկուերորդ. | Տասուերկուքական. |
| Տասուիրեք. | Տասուիրեքերորդ. | Տասուիրեքական. |
| Տասնուչորս. | Տասնուչորսերորդ. | Տասնուչորսական. |
| Տասնուհինգ. | Տասնուհինգերորդ. | Տասնուհինգական. |
| Տասնուվեց. | Տասնուվեցերորդ. | Տասնուվեցական. |
| Տասնեօթը. | Տասնեօթներորդ. | Տասնեօթնական. |
| Տասն'ութը. | Տասն'ութերորդ. | Տասն'ութական. |
| Տասնուինը. | Տասնուիններորդ. | Տասնուիննական. |
| Քսան. | Քսաներորդ. | Քսանական. |
| Երեսուն. | Երեսներորդ. | Երեսնական. |
| Քառասուն. | Քառասներորդ. | Քառասնական. |
| Յիսուն. | Յիսներորդ. | Յիսնական. |
| Վաթսուն. | Վաթսներորդ. | Վաթսնական. |
| Եօթանասուն. | Եօթանասներորդ. | Եօթանասնական. |
| Ութսուն. | Ութսներորդ. | Ութսնական. |
| Իննսուն. | Իննսներորդ. | Իննսնական. |

Numérisé par CDMF (PP) - 2011

| | | |
|---|---|---|
| Հարիւր. | Հարիւրերորդ. | Հարիւրական. |
| Երկու հարիւր. | Երկու հարիւրերորդ. | Երկ՚երկու հարիւր. |
| Եօթը հարիւր. | Եօթը հարիւրերորդ. | Եօթնական հարիւր. |
| Հազար. | Հազարերորդ. | Հազարական. |
| Երկու հազար. | Երկու հազարերորդ. | Երկ՚երկու հազար. |
| Միլիոն. | Միլիոներորդ. | Միլիոնական։ |

113. Ասոնք ամէնքն ալ ածական են, անոր համար ալ իրենց գոյականէն յառաջ կը դրուին եւ անհոլով ու անփոփոխ կը մնան. Երկու ձեռքով. Հինգհարիւր հոգւոյ. Չորրորդ տարի. Տասնական կտոր. (տես 89, 90։)

Բայց եթէ առանց գոյականի եւ առանձին մնան, այսպէս կը հոլովին։

Ա. Բացարձականներէն՝

114. Մէկ բառը երբեմն կը հոլովի Մէկէ, երբեմն ալ Մէկու, (որուն վրայ տես երկրորդ մասին մէջ։)

115. Մնացած թուերն ամէնքն ալ հաստատապէս առաջին հոլովման տակն են. Չորսի, Տասնի, Հարիւրով։

116. Երկու բառը յոդ որ առնու կամ հոլովի՝ + մ՚ալ հետ կ՚ուզէ. այսպէս՝ Երկուքն ու. Երկուքի, Երկուքով. (եւ ոչ՝ Երկուն ու, Երկուի։) Այսպէս կ՚ըսուի նաեւ Երկուք է, (կամ Երկու է։) Նոյնպէս իրմէ բաղադրեալները. Տասն-երկուքն ու, Քսան-երկուքին։

117. Եօթը եւ ութը թուերն հոլովելու ատեն ը գրերնին կը թողուն, ու կ՚ըլլան Եօթի, (կամ նաեւ Եօթնի,) Ութի։

118. Ինը եւ տասը թուերը հոլովելու ատեն ը գրերնուն տեղ ն կ՚առնուն, եւ կ՚ըլլան Իննի, Տասնի, Տասնով։

Բ. Դասականներէն՝

119. Առաջին բառը յոդ որ առնու՝ կը հոլովի այսպէս. Առաջնոյն, Առաջինէն, Առաջնով։ Իսկ առաջին բառին համար տես 170։

Numérisé par CDMF (PP) - 2011

120. Այլեւայլ Թուերէ յօդեալ դասականներուն առաջինը բացարձակ Թուական կը դրուի, մինակ ետքինը երորդ մասնիկ կ'առնու, եւ ինք մինակ կը հոլովի. այսպէս. Երեքհազար-վեցհարիւր-քսանուհինգերորդ. Չորսհարիւր-յիսունութերեքերորդին։

121. Տասնըմէկերորդէն մինչեւ տասնըիններորդ շատ անգամ գրաբար կը գործածուի։

Մետասաներորդ. Երկոտասաներորդ. Երեքտասաներորդ. Չորեքտասաներորդ. Հնգետասաներորդ. Վեշտասաներորդ. Եօթնեւտասաներորդ. Ութեւտասաներորդ կամ Ութուտասաներորդ. Իննեւտասաներորդ։

Գ. Բաշխականներէն՝

122. Ամէնն ալ առաջին հոլովման տակն են. այսպէս. Մէյմէկով. Երկ'երկուքէ. Եօթնականէ եւայլն։

Կարգին մէջ դրինք մէյմէկ, երկ'երկու մինչեւ վեց վեց ըստ հասարակ սովորութեան. բայց ոմանք կ'ըսեն նաեւ երկուքական, երեքական, չորսական, հինգական, վեցական. իսկ խորթ բառեր են՝ մէյմէկական, երկ'երկուքական, տասնեկական։

123. Քանի՞ հարցականն ալ Թուական անուն կը համարուի, եւ ունի դասական՝ Քաներո՞րդ կամ քանի՞երորդ, եւ բաշխական՝ Քանիկա՞ն։

---

## §. 3. Մասնական անուանք:

124. Մասնական կամ Միջակ անուն կ'ըսուին այն բառերն որ քանակութիւն մը կը նշանակեն առանց Թիւն որոշելու. ինչպէս՝ Քանի մը վկայ. Ամէնքն հոս են։

125. Մասնական անուններէն՝ կայ որ ածական են, կայ ալ որ գոյական. կամ միեւնոյն բառը երբեմն գոյական է եւ երբեմն ածական. ինչպէս հիմայ պիտի տեսնենք:

126. Մասնական անուանց շատին հոլովումը դերանուանական է. այսինքն բացառական՝ մէ. գործիական՝ մով. — յոգն. ուղղական՝ նք, սեռական՝ նց։ (Տես վարը 142։)

Numérisé par CDMF (PP) - 2011

127. Ոմանք՝ միշտ գոյական է. եզակի չունի*, եւ կը հոլովի այսպէս.

| | |
|---|---|
| Ուղ. Հյց. Ոմանք. | Բցռ. Ոմանցմէ. |
| Սեռ. Տր. Ոմանց. | Գրծ. Ոմանցմով։ |

* Գրաբար գործածուած է եզակին՝ Ոմն այս կ'ըսէր, ոմն այն կ'ըսէր։

128. Միւս, Մէկալ, Ուրիշ, ածական են. բայց յօդ առնելով գոյական ալ կ'ըլլան. եւ առաջին հոլովման պէս կը հոլովին։ Մէկալ բառին յոգնակին գոյական եղած ատեն՝ կրնայ թէ ըստ հասարակ կանոնի եւ թէ դերանուանական հոլովիլ. — բայց դերանուանական հոլովումն առանց յօդի. այսպէս.

| | |
|---|---|
| Ուղ. Հյց. Մէկալնոնք, մէկալները. | Բցռ. Մէկալնոնցմէ, մէկալներէն. |
| Սեռ. Տր. Մէկալնոնց, մէկալներուն. | Գրծ. Մէկալնոնցմով, մէկալներով։ |

129. Ամէն, ածական է. իսկ յօդով կ'ըլլայ գոյական՝ երկրորդ հոլովման տակ։

| | |
|---|---|
| Ուղ. Հյց. Ամէնը. | Բցռ. Ամէնէն. |
| Սեռ. Տր. Ամէնուն. | Գրծ. Ամէնով։ |

Այս ամէնը գոյականս որ եզակի ձայնով յոգնակի է, ունի նաեւ յոգն. ուղ. եւ հայց. Ամէնքը, ամէնքը։

130. Իրար եւ Մէկը զմէկ, եզակի ձայնով յոգնակի գոյական են. ուղղական չունին. եւ կը հոլովին այսպէս.

| | | |
|---|---|---|
| Հայցակ. | Իրար. | Մէկը զմէկ. |
| Սեռ. Տր. | Իրարու. | Մէկը մէկու. |
| Բացառ. | Իրարմէ. | Մէկը մէկէ. |
| Գործիակ. | Իրարմով. | (Մէկը մէկով։) |

Ասոնք յօդ չեն առնուր. միայն բացառականն իրարմէն ալ կ'ըսուի։ Կայ նաեւ մէկմէկու. մէկմէկէ։

131. Ինչ, երբեմն ածական է, եւ գոյականով մը կը հոլովի. Ի՞նչ սիրտ. ի՞նչ գործ. ի՞նչ բան, ի՞նչ բանի, ի՞նչ բանէ, ի՞նչ բանով. — յոգն. Ի՞նչ բաներ, եւայլն։ Երբեմն ալ գոյական է՝ երկրորդ հոլովման տակ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Ուղ. Հյց. Ինչ. Բցա. Ինչէ(ն).
Սեռ. Տր. Ինչու, ինչի. Գրծ. Ինչով.
Ցուցակն՝ ինչեր, ինչերու, եւայլն։

132. Քանի եւ քանի մը, Մէկ քանի։ — Քանի՝ թէ՛ իբրեւ ածական կը բանի. Քանի՞ հոգի. Քանի՞ մարդու. եւ թէ՛ առանձին կը հոլովի իբրեւ գոյական. Քանի՞ն առիր. Քանիո՞վ գնեցիր. Քանիներո՞ւ արիւնը մնաց։ — Քանի մը լոկ ինքեան անյօդ եւ անհոլով ածական է. իսկ եթէ պէտք ըլլայ՝ յօդով այսպէս կը հոլովի. (Անոնցմէ) մէկ քանին, մէկ քանիին, եւայլն։

133. Որ, ածական է եւ հետը գոյական մը կ'ուզէ (յօդով կամ առանց յօդի). Ո՞ր սիրտ ասոր կը դիմանայ. Ո՛ր բանը. Ո՛ր բանին. — յոգն. Ո՛ր բաները, եւայլն։ Իսկ երբ մինակ որ մնայ իբրեւ գոյական, (կը նշանակէ տճ. հանկըսը.) եւ յօդով կը հոլովի այսպէս.

| | | |
|---|---|---|
| Ուղ. Հյց. | Ո՛րը. | Որո՛նք. |
| Սեռ. Տր. | Որո՛ւն. | Որո՛նց. |
| Բացառական. | Որմէն, որմէ. | Որոնցմէ. |
| Գործիական. | Որո՛վ. | Որոնցմով։ |

Յոգնակին յօդ չ'առնուր, ինչպէս ամէն դերանունական հոլովմանց յոգնականները։

134. Ո՞վ հարցականը միշտ գոյական է, հետն ածական չի կրնար առնուլ. հոլովումը վերինին նման է.

Ուղ. Հյց. Ո՞վ*. Բցա. Որմէ՞, որմէ՞ն.
Սեռ. Տր. Որո՞ւ. Գրծ. Որո՞վ (անսովոր.)
Յոգնակին՝ Որո՞նք, որո՞նց եւայլն. վերինին պէս։

* Հայցականը սովորաբար զ նախդրով կ'որոշուի. զո՞վ. զորո՞նք.

135. Ոչ ոք, Ոչինչ, միշտ եզակի գոյական են. ունին ուղղական եւ հայցական։ Ոչ ոք իմացաւ. Ոչինչ ճաշակեց։

136. Այս ոք (մարդ.) Այսինչ (բան.) } (տճ. ֆիլան.)
Այս անուն (մարդ եւ բան.) } թէ գոյական են եւ թէ ածական. բայց միշտ անհոլով։

137. Իւրաքանչիւր, Ամէն մէկ, թէ իբրեւ գոյական մինակ կը բանին յօդով, եւ թէ իբրեւ ածական՝

Numérisé par CDMF (PP) - 2011

գոյականով մը մեկտեղ: — **Իւրաքանչիւր** (ըսէ) իւր պաշտօնն ունի. **Ամէն մէկուն** զատ զատ. — **Իւրաքանչիւր ծառ** իւր պտղէն կը ճանչցուի: **Ամէն մէկ** զի-նուորի մէյ մէկ զրահ:

138. **Նոյն**, որ ըստ ինքեան դերանուն է, կը գործածուի նաեւ իբր մասնական անուն. Երկուքն ալ **նոյն** են, կամ **միեւնոյն** են:

---

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԴԵՐԱՆՈՒՆ

139. *Դերանուն կ՚ըսուի երկրորդ մասն-բանի՝ որ գոյական անունը շատ անգամ չկրկնելու համար անոր տեղը կը դրուի:* Զօրօրինակ. Վահան եկաւ **իր** զօրքովն՝ **անոնց** սիրտ տալով. փոխանակ՝ Վահան եկաւ **Վահանին** զօրքովը՝ **զօրքերուն** սիրտ տալով՝ ըսելու:

Գոյականի կամ անուան եւ Դերանուան իրարմէ տարբերութիւնն այն է որ գոյականը բանին անունը կու տայ՝ առանց յայտնելու թէ որն է. իսկ դերանունը կը ցուցընէ թէ որն է՝ առանց իրին անունը տալու: Այսպէս՝ **ծառ. մարդ. քաղաք**՝ անուն են. **նա. դուն. ասիկա**՝ դերանուն են:

140. Ինչպէս անունը՝ նոյնպէս դերանունն ալ երկու տեսակ է. 1. Գոյական դերանուն, եւ 2. Ածական դերանուն:

Գոյական են՝ **ես, դուն, ինքը. ասիկա, ադիկա, (ատիկա,) անիկա. որն որ. ով որ**:

Ածական են՝ **Այս, այդ, (ատ,) այն. իմ, քու, իւր. մեր, ձեր, իրենց. որ**:

141. Դերանուններն անուանց պէս թիւ ու հոլով ունենալէն զատ՝ ունին նաեւ *Դէմք*, որ կը ցուցընէ խօսքին որ կողմանէ ըլլալը: Դէմք երեք է.

Առաջին դէմք՝ որ խօսողին կողմը կը ցուցընէ. **ես. մենք. իմս.** եւայլն:

Երկրորդ դէմք՝ որ լսողին (որուն որ կը խօսուի) կողմը կը ցուցընէ. **դուն. դուք. ձեր. քուկդ**, եւայլն:

Երրորդ դէմք՝ որ խօսողէն ու լսողէն զատ կողմ մը կը ցուցընէ. **անիկա. իրենք. անոնց**, եւայլն:

Numérisé par CDMF (PP) - 2011

142. Դերանուանց հոլովումն ընդհանրապէս անկանոն է։ Բայց իրենց յատկացեալ հոլովում մ'ունին. որ քիչ շատ այս կանոնիս վրայ հաստատուած է։

| Եզակ. | | Յոգնակի. | |
|---|---|---|---|
| Ուղ. | — | Ուղ. | —նք. |
| Հայց. | զ— | Հայց. | զ—նք. |
| Ս. Տ. | — | Ս. Տ. | —նց. |
| Բաց. | —մէ, —կէ. | Բաց. | —նցմէ. |
| Գործ. | —մով. | Գործ. | —նցմով։ |

Այս կերպ հոլովման Դերանունական հոլովումն ըսած ենք. ինչպէս մինչեւ հիմայ քանի մը տեղ տեսանք։

143. Դերանունները մէկանց չորս կարգի կը բաժնուին. 1. *Անձնական կամ Դիական*. 2. *Ցուցական*. 3. *Ստացական*. 4. *Յարաբերական*։

---

## §. 1. *Անձնական դերանուն*։

144. Անձնական դերանունները գոյական են, եւ անձին ով ըլլալը կը ցուցընեն. եւ կը հոլովին այսպէս.

### ԱՌԱՋԻՆ ԴԷՄՔ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. | Ես. | Մենք, մեք. |
| Հայց. | Զիս, (իս, ինծի*.) | Զմեզ, (մեզ, մեզի.) |
| Սեռ. | Իմ, (իմին.) | Մեր, (մերին.) |
| Տր. | Ինձի, ինծի. | Մեզի. |
| Բաց. | Իզմէ, ինէ. | Մեզմէ, մենէ. |
| Գործ. | Իզմով. | Մեզմով։ |

### ԵՐԿՐՈՐԴ ԴԷՄՔ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. | Դուն, դու. | Դուք. |
| Հայց. | Զքեզ, (քեզ, քեզի.) | Զձեզ, (ձեզ, ձեզի.) |
| Սեռ. | Քու, (քուկին.) | Ձեր, (ձերին.) |
| Տր. | Քեզի. | Ձեզի. |
| Բաց. | Քեզմէ, քենէ. | Ձեզմէ, ձենէ. |
| Գործ. | Քեզմով. | Ձեզմով։ |

* Փակագծի մէջ առնուածները ռամկական հոլովներ համարուած են։

Numérisé par CDMF (PP) - 2011

## ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
| --- | --- |
| Ուղ. Ինքն, ինքը*, ինք. | Իրենք. |
| Հայց. Զինքն, զինքը, զինք. | Զիրենք. |
| Սեռ. Իրեն. | Իրենց. |
| Տր. Իրեն. | Իրենց. |
| Բցռ. Իրմէ, իրմէն. | Իրենցմէ. |
| Գործ. Իրմով. | Իրենցմով։ |

* ինքը, զինքը բառերուն մէջ ը գիրն յօդ չէ, այլ ն գիրն ըի դարձած (ինչպէս ն յօդը, 79.) անոր համար ալ ինք եւ զինք ըսուած է միայն կրճատութեամբ։

145. Անձնական դերանուանց ուղղականը միւս հոլովներուն հետ մէկտեղ կրկնութեամբ կը բանի՝ երբ նշանակութիւնն ինք իր վրայ կը դառնայ. այսպէս. Ես զիս. ես ինծի. դուն զքեզ. մենք մեզի. մենք մեզմէ. մենք զմեզ։ Դնենք երրորդ դէմքին օրինակը.

Եզ. Ինք իրեն*. ինք զինք. ինք իրմէ. ինք իրմով. կամ ինքն իրեն. ինքը զինքը. ինքն իրմէն. ինքն իրմով.

Յոգ. Իրենք իրենց. իրենք զիրենք. իրենք իրենցմէ. իրենք իրենցմով։

* Կամ տառացականով՝ ինք իր — ինք իր եղբայրը. ինք իր ձեռօքը։

146. Այս երրորդ դէմքն առաջին եւ երկրորդ դէմքի եզակիներուն հետ ալ կը միանայ տառացական յօդով. Ես ինքս կամ ինք ինքս. ինք ինքդ, (ինքդ ինքդ.) ինք իրենս. ինք իրենդ, եւայլն։ (Չ'ըսուիր ես իրենս. դուն իրենդ։)

Սակայն ասկէ՝ շատ մը խորթ ու սխալ գործածութիւններ ալ ելած են, որ մեծապէս զգուշալի են. ինքը-զինքս. ինք-իր-զինքս. ինք-իր-զինքդ. մանաւանդ յոգն. ինք-իր-զինքնիս կամ ինք-իր-զինքերնիս. եւ սեռ. կամ բցռ. ինք-իր-զինքէս. ինք-իր-զինքերնուդ. ինք-իր-զինքերնին, եւ այլն։

Անձնական դերանուան երրորդ դէմք կրնայ համարուիլ՝ նաեւ Այն, անիկա ցուցականն որ հիմայ պիտի տեսնենք։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

## § 2. Ցուցական դերանուն:

147. Ցուցական դերանունները շատին մէջէն ուրիշ մէկը կը ցուցնեն. ինչպէս. Այս գիրքը. Այն տունը, եւայլն:

148. Ցուցականները՝ թէեւ միշտ երրորդ դէմքի բան մը կը ցուցնեն, սակայն երեք որոշ դէմք ունին. 1. այս, (տճ. պու.) որ Ա դէմքին մերձաւոր բան մը կը ցուցնէ. 2. այդ, (տճ. շու.) որ Բ դէմքին մերձաւոր բան մը կը ցուցնէ. 3. այն, (տճ. օ.) որ Գ. դէմքին մերձաւոր բան մը կը ցուցնէ:

149. Արդի լեզուին բազմաթիւ ցուցականներն այսպէս կը բաժնուին.

Ա դէմքէ. Այս. աս. ասի. ասիկա.
կամ Սա. սուի. սուիկա. Սոյն. պու.
Բ դէմքէ. Այդ. ատ. ատի. ատիկա.
կամ Դա. դուի. դուիկա*. Դոյն. շու.
Գ դէմքէ. Այն. ան. անի. անիկա.
կամ Նա. նուի. նուիկա. Նոյն. օ:

* Ռամկին հնչմամբը՝ դա. դուն. դունկա: Նոյնպէս շատ անգամ կ'ըսուի ռամկօրէն՝ դունկան. նունկան. սունկան. ատկան. եւայլն: Դա, դուն եւ մանաւանդ նա, նուն շատ ցանցառ կը գործածուին:

150. Ցուցական դերանուններէն ոմանք գոյական են, ոմանք ալ ածական:

Գոյական են՝ Ասի, ասիկա. Ատի, ատիկա. Անի, անիկա. որ մինակ կը մնան եւ քովերնին երբեք գոյական անուն չեն առնուր:

Ածական են՝ Այս, աս, սա, սոյն. Այդ, ատ, դա, դոյն. Այն, ան, նա, նոյն. որ քովերնին գոյ. անուն մը կ'ուզեն. — Այս մարդը. Այն կղզին. Սա կողմը. Նոյն գիշերը: Բայց այս, աս. այդ, ատ. եւ այն, ան շատ անգամ իբրեւ գոյական դերանուն մինակ ալ կը մնան. — Այս ալ փճացաւ. Այդ եր քու պարտքդ. Աս տուր, ան առ:

151. Նոյն՝ որոշեալ յօդով իբրեւ գոյական դերանուն՝ մինակ կը գործածուի. Նոյնը, Նոյնին, Նոյները:

Ցուցական դերանուանց հոլովումը չդրած՝ քանի մը խօսք ալ դերանունական յօդերուն վրայ ընենք:

Numérisé par CDMF (PP) - 2011

152. Հայերէն դերանուանց, ինչպէս մինչեւ հիմայ տեսանք, արմատն են այս երեք գրերս՝ ս, դ, ն. որ միանգամայն Դիմորոշ կամ Դերանուանական յօդ են. եւ բառերուն ետքի ծայրը կ'աւելցուին։

153. Դերանունական յօդերէն՝ ս առաջին դէմքի կը ծառայէ. դ երկրորդ դէմքի, եւ ն (ը) երրորդ դէմքի։

154. Դերանունական յօդ մ'որ ցուցական դերանուան տեղը կամ քովը կը գործածուի՝ կը կոչուի Ցուցական յօդ. ինչպէս. Այս մարդս. Այն գինին։

155. Դերանունական յօդ մ'որ ստացական դերանուան տեղը կամ քովը կը գործածուի՝ կ'ըսուի Ստացական յօդ. ինչպէս. (իմ) ձեռքս, եւայլն. (տես § 3։)

Դերանունական յօդերուն ուրիշ գործածութեանցը վրայ՝ երկրորդ մասին մէջ։

---

156. Գոյական ցուցականներն այսպէս կը հոլովին.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հյց. | Այս, աս, ասի, ասիկա. | Ասոնք. |
| Սեռ. Տր. | Ասոր. | Ասոնց. |
| Բացառ. | Ասկէ, (ասկից, ասորմէ.) | Ասոնցմէ. |
| Գործիակ. | Ասով. | Ասոնցմով։ |

Այսպէս կը հոլովին նաեւ

Այդ, ատ, ատի, ատիկա. — ատոր. ատկէ. ատով.
յոգն. ատոնք. ատոնց. ատոնցմէ. ատոնցմով։
Այն, ան, անի, անիկա. — անոր. անկէ. անով.
յոգն. անոնք. անոնց. անոնցմէ. անոնցմով։

Ասոնց նման է Բ կարգի ցուցականաց հոլովումը.

Սա, սուի, սուիկա. — սուոր. սըկէ. սուով.
յոգն. սուոնք սուոնց. սուոնցմէ. սուոնցմով։
Դա, դուի, դուիկա. — դուոր. դըկէ. դուով.
յոգն. դուոնք. դուոնց. դուոնցմէ. դուոնցմով։
Նա, նուի, նուիկա. — նուոր. նըկէ. եւայլն։

Սոյն, դոյն, նոյն. առաջին հոլովման տակն են։

157. Ածական ցուցականներն ըստ. կանոնի (90) անփոփոխ կը մնան թէ ըստ թուոյն եւ թէ ըստ հո-



Numérisé par CDMF (PP) - 2011

ըովլյն. եւ իրենցմէ ետեւ յօդով գոյական անուն մը կ'ուզեն. այսպէս. Այս կղզին. Սա երկիրը. Նոյն գիրքին։

158. Ցուցականին առջեւի գոյականին յօդը կրնայ դիմորոշ (ցուցական) յօդ ըլլալ՝ իւրաքանչիւր դէմքին համեմատ. ինչպէս Այս մարդս. Այդ ծառերդ. Այն հոգին. — կրնայ ալ պարզապէս որոշեալ յօդ ըլլալ՝ ամէն դէմքի անխտիր. ինչպէս. Այս հոգին. Այս մարդը. Այդ ծառերը, եւայլն։ Այս վերջինս աւելի յաճախեալ է։

159. Ինչ որ վերը (80—82) որոշեալ յօդին համար ըսինք, նոյնն իմացիր նաեւ ցուցականաց գոյականներուն վրայ. այսինքն թէ այն հոլովներն որ յօդ չեն առնուր, ցուցական դերանուն ունեցած ատեններնին ալ նոյնպէս առանց որոշեալ յօդի կը մնան. ուստի կ'ըսուի Այս ձայնով. սա գրքով. այն օրուան. նոյն օրուընէ. այդ նեղութենէ. սա տղոց. այն շընոց. (չ'ըսուիր՝ Այս փայտովը։) Բայց դերանուանական (ցուցական եւ ստացական) յօդ կրնան առնուլ դէմքին համեմատ. Այս մատովս. Այդ նեղութենէդ, եւայլն։

Ցուցական ածականներն իրենց գոյականովը մէկտեղ այսպէս կը հոլովին։

Ա. Ցուցական յօդով.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հյց. | Այս տուն-ս. | Այս տներ-ս. |
| Սեռ. Տր. | Այս տան-ս. | Այս տներու-ս. |
| Բացառակ. | Այս տընէ-ս. | Այս տներէ-ս. |
| Գործիակ. | Այս տընով-ս. | Այս տներով-ս։ |

Բ. Որոշեալ յօդով.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղ. Հյց. | Այս կղզի-ն. | Այս կղզիներ-ը. |
| Սեռ. Տր. | Այս կղզւոյ-ն. | Այս կղզիներու-ն. |
| Բացառակ. | Այս կղզիէ-ն. | Այս կղզիներէ-ն. |
| Գործիակ. | Այս կղզւով. | Այս կղզիներով։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

## §. 3. Ստացական դերանուն:

160. Ստացական դերանուններն ածական են, և կը ցուցընեն թէ գոյականը որունն է: Եւ են՝

Ա դէմք՝ իմ. մեր*.
Բ դէմք՝ քու. ձեր.
Գ դէմք՝ իւր. իրենց:

* Մեր, ձեր, իրենց՝ միայն ստացողին կողմանէ յոգնակի են, ինչպէս քիչ մը ետքը պիտի տեսնենք:

161. Ստացական դերանունները միշտ իրենց գոյականէն յառաջ կը դրուին՝ անփոփոխ մնալով, այսպէս.

162. — Ա. Եթէ ստացականը իմ է կամ քու կամ իւր, գոյականին վերջին ծայրը դէմքին համեմատ դիմորոշ (դերանունական) յօդ կ'ևելցուի. այսինքն իմ ստացականին գոյականը ս յօդ կ'առնու: Իմ գիրքս. Իմ տունս. Իմ տներս: — Քու ստացականինը դ յօդ կ'առնու. Քու տունդ. Քու տներդ: — Իւր ստացականինը ն (ը) յօդ կ'առնու. Իւր տունը. Իւր որդին. Իւր տները. Իւր որդիքը:

163. — Բ. Եթէ ստացականը մեր է կամ ձեր կամ իրենց, գոյականին վրայ հաստատապէս և անխտիր ն (ը) յօդ կը դրուի. այսպէս. Մեր տունը. Մեր որդին. Մեր տները. — Ձեր տունը. Ձեր որդին. — Իրենց տունը. Իրենց որդին:

Ստացական դերանուն առած գոյական մը կրնայ մէյ մը յոգնակի ըլլալ պարզապէս ստացողին կողմանէ. ինչպէս՝ Մեր հէրը. (բայց ճշդիւ խօսելով՝ Մեր հէրը եզակի է, վասնզի գլխաւորքաւը՝ որ է գոյականը՝ եզակի է.) — մէյ մ'ալ յոգնակի կրնայ ըլլալ՝ թէ ստացողին կողմանէ և թէ ստացեալին կողմանէ. ինչպէս՝ Մեր հէրերը: Այս վերջինը կը կոչենք Կրկին յոգնակի:

Աւասիկ ստացականին գոյականի հետ հոլովումը.

Ա. — ԻՄ, ՔՈՒ, ԻՒՐ.

Եզակի. (եզակի ստացող և եզակի ստացեալ.)

| | Ա. ԴԷՄՔԻ | Բ. ԴԷՄՔԻ | Գ. ԴԷՄՔԻ |
|---|---|---|---|
| Ո. Հ. | իմ գիրք-ս. | քու գիրք-դ. | իւր գիրք-ը. |
| Ս. Տ. | իմ գրքի-ս. | քու գրքի-դ. | իւր գրքի-ն. |
| Բցռ. | իմ գրքէ-ս. | քու գրքէ-դ. | իւր գրքէ-ն. |
| Գրծ. | իմ գրքով-ս. | քու գրքով-դ. | իւր գրքով-ը: |



Numérisé par CDMF (PP) - 2011

Յոգնակի. (եզակի ստացող եւ յոգնակի ստացեալ.)
Ո. Հ. Իմ գրքեր-ս. Քու գրքեր-դ. Իր գրքեր-ը.
Ս. Տ. Իմ գրքերու-ս. Քու գրքերու-դ. Իր գրքերու-ն.
Բաց. Իմ գրքերէ-ս. Քու գրքերէ-դ. Իր գրքերէ-ն.
Գործ. Իմ գրքերով-ս. Քու գրքերով-դ. Իր գրքերով-ը։

### Բ. — ՄԵՐ, ՁԵՐ, ԻՐԵՆՑ.

Եզակի. (յոգն. ստացող եւ եզակի. ստացեալ.)

| | Ա. ԴԷՄՔ | Բ. ԴԷՄՔ | Գ. ԴԷՄՔ | |
|---|---|---|---|---|
| Ո. Հ. | Մեր | Ձեր | Իրենց | գիրք-ը. |
| Ս. Տ. | Մեր | Ձեր | Իրենց | գրքի-ն. |
| Բաց. | Մեր | Ձեր | Իրենց | գրքէ-ն. |
| Գործ. | Մեր | Ձեր | Իրենց | գրքով-ը։ |

Կրկին յոգնակի. (յգ. ստացող եւ յգ. ստացեալ.)

| | Ա. ԴԷՄՔ | Բ. ԴԷՄՔ | Գ. ԴԷՄՔ | |
|---|---|---|---|---|
| Ո. Հ. | Մեր | Ձեր | Իրենց | գրքեր-ը. |
| Ս. Տ. | Մեր | Ձեր | Իրենց | գրքերու-ն. |
| Բաց. | Մեր | Ձեր | Իրենց | գրքերէ-ն. |
| Գործ. | Մեր | Ձեր | Իրենց | գրքերով-ը։ |

Ռամկօրէն կը համարուին՝ Իմին գիրքս. Մերին լաթերը. Ձերին տունը։

164. Շատ անգամ առանց դերանուան ալ միայն ստացական յօդերով գոյականը կը հոլովի, եւ նոյն զօրութիւնը կ'ունենայ. զօրօրինակ. գիրքս, (այսինքն՝ իմ գիրքս.) գրքերս, (այսինքն՝ իմ գրքերս։)

165. Եթէ մէկդի թողուած դերանունն է իմ, քու, իր, այսպէս կը հոլովին.

Ա. դէմք. Գիրքս, գրքիս, գրքէս, գրքովս.
Գրքերս, գրքերուս, գրքերէս, գրքերովս։
Բ. դէմք. Գիրքդ, գրքիդ, գրքէդ, գրքովդ.
Գրքերդ, գրքերուդ, գրքերէդ, գրքերովդ։
Գ. դէմք. Գիրքը, գրքին, գրքէն, գրքովը*.
Գրքերը, գրքերուն, գրքերէն, գրքերովը։

* Տես վերը (80.) գործիականին վրայ ըսածնիս։

Իսկ եթէ թողուած դերանունն է մեր, ձեր, իրենց, այն ատեն հետեւեալ կանոններուն համեմատ կը հոլովի։

Numérisé par CDMF (PP) - 2011

166. — Ա. Եթէ գոյականը բազմավանկ է, պարզ ստացական յօդերուն տեղ՝ նիս, նիդ, նին մասնիկները կ'աւելցուին, այսպէս. պարտէզնիս. պարտէզներնիս։

Ա. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Պարտէզ-նիս. | Պարտէզներ-նիս. |
| Պարտէզ-նուս. | Պարտէզներ-նուս. |
| Պարտէզ-նէս. | Պարտէզներ-նէս. |
| Պարտէզով-նիս. | Պարտէզներով-նիս։ |

Բ. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Պարտէզ-նիդ. | Պարտէզներ-նիդ. |
| Պարտէզ-նուդ. | Պարտէզներ-նուդ. |
| Պարտէզ-նէդ. | Պարտէզներ-նէդ. |
| Պարտէզով-նիդ. | Պարտէզներով-նիդ։ |

Գ. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Պարտէզ-նին. | Պարտէզներ-նին. |
| Պարտէզ-նուն. | Պարտէզներ-նուն. |
| Պարտէզ-նէն. | Պարտէզներ-նէն. |
| Պարտէզով-նին. | Պարտէզներով-նին։ |

Բայց այս բազմավանկներուն կրկին-յոգնակի ուղղականը եւ հայցականը լաւագոյն է ըսել մեր, ձեր, իրենց պարտէզները՝ քան թէ պարտէզներնիս. գաւազաններնիդ. խեղճութիւններնին։ Կ'ըսուի նաեւ եզականին պէս պարտէզնիս, խեղճութիւննին՝ ուր որ իմաստի շփոթութիւն չկայ։

167. — Բ. Եթէ գոյականը միավանկ է, այն ատեն անոր յոգնականին վրայ կ'աւելցուին նիս, նիդ, նին մասնիկները, թէպէտեւ նշանակութիւննին եզակի կը մնայ. ինչպէս. հայրերնիս, (եւ ոչ հայր-նիս.) տներնին, (եւ ոչ տուն-նին.) — միայն գործիականը եր մասնիկ չ'առնուր։ Յոգնակին եզականին հետ նոյն է. (ուստի հայրերնիս, կը նշանակէ մեր հայրը եւ մեր հայրերը. ձայներնիս՝ մեր ձայնը եւ մեր ձայները.) մինակ յոքն. գործիականը երկուքն կ'ըլլայ։ Եւ կը հոլովին այսպէս.

Numérisé par CDMF (PP) - 2011

### Ա. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Ձայն-երնիս. | Ձայներ-նիս. |
| Ձայն-երնուս. | Ձայներ-նուս. |
| Ձայն-երնէս. | Ձայներ-նէս. |
| Ձայնով-նիս. | Ձայներով-նիս։ |

### Բ. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Ձայն-երնիդ. | Ձայներ-նիդ. |
| Ձայն-երնուդ. | Ձայներ-նուդ. |
| Ձայն-երնէդ. | Ձայներ-նէդ. |
| Ձայնով-նիդ. | Ձայներով-նիդ։ |

### Գ. ԴԷՄՔ

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Ձայն-երնին. | Ձայներ-նին. |
| Ձայն-երնուն. . | Ձայներ-նուն. |
| Ձայն-երնէն. | Ձայներ-նէն. |
| Ձայնով-նին. | Ձայներով-նին։ |

Յոգնակի ունեցող վերջաւորողներուն այսպէս կ՚ըլլայ ստացականը։

| Եզ. | Յոգ. |
|---|---|
| Մատուընիս. | Մատուըններնիս. |
| Մատուընուս. | Մատուըններնուս. |
| Մատուընէս. | Մատուըններնէս. |
| Մատուընովնիս. | Մատուըններովնիս։ |

Ստացականի մէջ կ՚ըսուի նաեւ խելքընիս. ձեռքընիս. Թէպէտեւ խելք. ձեռք նոյն (51.) կանոնին տակ չեն իյնար։

168. Ստացական դերանուններն բնիկ թէ ածական են. բայց առանց գոյականի մնացած ատեններնին իրենք գոյական կ՚ըլլան՝ վրանին դէմքին համեմատ դիմորոշ յօդ առնելով. եւ այսպէս կը հոլովին.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. Հ. | Իմս, (իմինս.) | Իմիններս. |
| Ս. Տ. | Իմինիս. | Իմիններուս. |
| Բաց. | Իմինէս. | Իմիններէս. |
| Գործ. | Իմինովս. | Իմիններովս։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

Այսպէս նաեւ

Քուկդ*, քուկինդ. քուկինիդ, քուկինէդ, քուկինովդ.
յոգ. քուկիններդ, եւայլն։

Իւրը, իրենը. իրենին, իրենէն, իրենովը.
յոգ. իրենները, եւայլն։

Մերը, մերինը. մերինին, մերինէն, մերինովը**.
յոգ. մերինները, եւայլն։

Ձերը, ձերինը. ձերինին, ձերինէն, ձերինովը.
յոգ. ձերինները, եւայլն։

Իրենցը. իրենցին, իրենցինէն, իրենցինովը.
յոգ. իրենցները, եւայլն։

* Քու — ստացականը յօդ առած ատեն, կամ ձայնաւոր մը կից ունեցած ատեն՝ կ գիր մ'ալ հետ կ'առնու. այսպէս. քուկդ. քուկին. — քուկդ ալ. քուկդ է. (Եւ ոչ՝ քու-դ է։ Տես 116, Եղիսաբէթին. Եղիսաբէթն ալ։)

** Մերինները. ձերինները երբեմն կ'ըսուի նաեւ մերոնք կամ մերինները. ձերոնք կամ ձերինները՝ դերանուանական հոլովմամբ. մերոնց. մերիններէն։ Նոյնպէս ըսուիլ նաեւ եզ. գրծ. Մենք մերոնց գոհ կ'ըլլանք. դուք ալ ձերոնց։

169. Ինչպէս ստացական դերանուանները սեռական առնուած ուղղականներ են, նոյնպէս նաեւ ցուցականներէն ալ եւ ուրիշ որեւիցէ անուններէն սեռական մը ստացական կ'ելլէ, որ ամէնն ալ սեռականէ ուղղական եղած ածականներ են. եւ միշտ (առանց գոյականի) մնալով յօդ կ'առնուն եւ կ'ըլլան գոյական. այսպէս. Ասորը, (տճ. պունունքի.) անորը, (տճ. օնունքի.) անոնցը, (տճ. օնլարընքի.) որո՞ւնը, (տճ. քիմին-քի՞) յառաջուանը, (տճ. էվվէլքի.) ասոնցն է. անորն ալ. եւայլն։ Իսկ ուրիշ անուններէ ելածները՝ եթէ բուն սեռականը ձայնաւորով վերջացած է, ինչպէս. մարդու, գինուորի, Պետրոսի, անոնք յօդ առած ատեն կամ վրանին ձայնաւոր մը կից ունեցած ատեն Ն մ'ալ հետ կ'առնուն. այսպէս. մարդուն-ը. գինուորին-ը. Պետրոսին-ը. Թշնամւոյն-ը. մարդուն-ն ալ. ծերերուն-ն է. Հաւուին-ն է. ձեռքին-ս (տճ. էլիմդէքի, հայերէն կ'ըսենք սեռ. էլիմինքի.) այս տարւոյն-ը։ Սողոմոնի օրերը Դաւթին-ներէն աւելի խաղաղ անցան. (Եւ ոչ՝ Դաւթի-ներէն։ — (Այս օրուան-ը միւս օրուան-էն տար-

Numérisé par CDMF (PP) - 2011

բեր է. առանց Ն յաւելուածոյ, վասնզի բաղաձայնով վերջաւորած է բուն սեռականը՝ Օրուան։)

170. Այս կերպով սեռականէ ուղղական եղած ածականներ են՝ Առջի. Վերջի*. Ներսի. Դրսի. Առաջքի. Ետքի, կամ Առջեւի. Ետեւի. Վարի. Վերայի. — Քովի սենեակը. Հետի մարդիկը. Ետի դին. որ նոյն (169) կանոնով կը գործածուին այսպէս. առջին-ը. ներսին-ը. առջեւին-ին. ետեւին-էն. վրային-ն ալ. վրային-ն է. քովին-դ. քովին-ները. (եւ ոչ Առջի-ն. Քովի-ները։)

* Զատ են Առջին, Վերջին, (ինչպէս նաեւ Ներքին, Արտաքին, Յետին, եւայլն. որ զուտ գրաբար են,) եւ կը հոլովին՝ Առջնոյ. Առջնոյն. Վերջնոյն. Վերջիններն. Արտաքնով. (տես 119։)

---

## §. 4. *Յարաբերական դերանուն։*

171. Յարաբերական դերանունը քիչ մը յառաջ ըսուածը կը յարաբերէ կամ մէջ կը բերէ։

172. Որ յարաբերական դերանունը գոյական է, եւ կը հոլովի այսպէս.

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Ուղ. Հայց. Որ. | Որոնք. |
| Սեռ. Տր. Որու(ն). | Որոնց. |
| Բացառ. Որմէ(ն). | Որոնցմէ. |
| Գործիակ. Որով. | Որոնցմով։ |

173. Այս դերանունս յօդ կ'առնու իրմէ ետքը որ շաղկապով, եւ կ'ըլլայ՝ Որն որ. զորն որ. որուն որ. որմէ որ. որով որ։ Յոգն. Որոնք որ. որոնց որ, եւայլն։

174. Իսկ եթէ իբրեւ ածական գործածուի, ինքն անփոփոխ մնալով՝ յօդն առջեւի գոյականին վրայ կը դրուի՝ շաղկապէն յառաջ. այսպէս. Որ մարդն որ. Որ մարդուն որ. Որ ձեռքը որ բռնես. Որ կողմերէն որ ժողվես։ — Կամ երբեմն ալ առանց որ շաղկապի. Որ ձեռքդ բռնես. Որ վիշտը՝ քեզի անտանելի է։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԲԱՅ

175. *Բայ*, *երրորդ մասն-բանի՝ գործողութիւն մը կը ցուցընէ, այսինքն ընել կամ ըլլալ. ինչպէս* **բանալ. բացուիլ. մեռնիլ:**

176. **Բայն** *երեք տեսակ է.* 1. **Ներգործական,** 2. **Կրաւորական** *եւ* 3. **Չէզոք.** — *որ քերականօրէն բայերուն* *ՍԵՌԸ* *կը կոչուի:*

177. — Ա. *ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ այնպիսի գործողութիւն մը կը ցուցընէ՝ որ մէկը մէկուն կ՚ընէ, զորօրինակ.* **Դուն հայրդ կը սիրես. Ես փայտ կոտրեմ:**

178. — Բ. *ԿՐԱՒՈՐԱԿԱՆ՝ որ ներգործականէն յառաջ կու գայ, այնպիսի գործողութիւն մը կը ցուցընէ՝ որն որ մէկը մէկէն կը կրէ կամ որ մէկը կ՚ըլլուի. զորօրինակ.* **Հայրդ քեզմէ կը սիրուի. Փայտն ինձմէ կոտրուի:**

179. — Գ. **Չէզոքը՝** *այնպիսի գործողութիւն մը կը ցուցընէ՝ որ նոյն անձին վրայ կը մնայ եւ ուրիշին չանցնիր. զորօրինակ.* **Դուն կը խնդաս. Տղան կու լայ. Շունը կը հաչէ:**

180. **Ինչպէս** *անուններն ու դերանունները, նոյնպէս բայերն ալ, ըսինք* (15), *խօսքի մէջ հարկաւ պիտի փոփոխուին. այս փոփոխման անունն կու տանք ԽՈՆԱՐՀՈՒՄ:* — **Խոնարհման** *համար չորս բան պէտք է.* 1. **Եղանակ.** 2. **Ժամանակ.** 3. **Թիւ** *եւ* 4. **Դէմք:**

181. — Ա. *ԵՂԱՆԱԿ կը ցուցընէ թէ գործողութիւնն ինչ կերպով կը բացատրուի կամ կը զրցուի. եւ հինգ է.*

**1.** *ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, եղածը կամ ըլլալիքը պատմելով.* — **կը բանամ, կը բանայի, պիտ՚որ բանամ:**

**2.** *ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, թէութեամբ, եթէ, որպէսզի ըսելով.* — **եթէ բանամ, որ բանայի:**

**3.** *ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հրաման տալով, ապսպրելով, աղաչելով.* — **բա՛ց. սիրէ՛:**

Numérisé par CDMF (PP) - 2011

4. *Դերբայ*, գործողութեան կամ գործողին անունը տալով. — բանալ. բացող. առանց անձը յայտնելու։

182. — Բ. *Ժամանակը* գործողութեան երբը կը ցուցընէ, որ գլխաւորաբար երեք է. 1. *Ներկայ*, հիմա կը բանամ, կամ որ բանամ. 2. *Անցեալ* որ է ա. *Անկատար*, ատեն մը (դեռ) կը բանայի, կամ սովորութիւնս էր բանալ. եւ բ. *Կատարեալ*, յառաջ (անգամ մը) բացի. 3. *Ապառնի*, ետքը պիտի բանամ։

Չորս եղանակներուն գլխաւոր ժամանակներն ասոնք են.

Սահմանականն ունի 1. Ներկայ. 2. Անկատար. 3. Կատարեալ։

Ստորադասականն ունի 1. Ներկայ. 2. Անկատար։

Հրամայականն ունի մէկ ժամանակ, որ միանգամայն Ներկայ եւ Ապառնի է։

Դերբայն ունի 1. Աներեւոյթ. 2. Ընդունելութիւն*. 3. Անցեալ։

* Ընդունելութիւնը կը կոչուի նաեւ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ։ — Կան ուրիշ երկրորդական բաղադրեալ ժամանակներ ալ, որոնց վրայ ընթացքին մէջ զատ կը խօսինք։

183. — Գ. *Թիւը* գործողութիւնն ընողին մէկ կամ աւելի ըլլալը կը ցուցընէ. եւ երկու է. 1. *Եզակի*, կը բանամ. եւ 2. *Յոգնակի*, կը բանանք. (տես նաեւ 14։)

184. — Դ. *Դէմքը* կը ցուցընէ թէ գործողութիւնն ո՛ր կողմանէ է. եւ երեք է. 1. Առաջին դէմք. ես կը բանամ. 2. Երկրորդ դէմք. դուն կը բանաս. 3. Երրորդ դէմք. ուրիշ մը կը բանայ։ (Տես նաեւ դերանուանց դէմքը, 141։)

Ուստի եղանակ, ժամանակ, թիւ եւ դէմք մէկտեղ գալով բայը կը խոնարհեն։

185. Սակայն ամէն բայ միեւնոյն կերպով չի խոնարհիր. զորօրինակ. սիրել՝ կ'ըլլայ սիրեցի. — սորվիլ՝ սորվեցայ. — խաղալ՝ խաղացի։ Այս կերպ կերպ խոնարհիլը կը կոչուի բայերու Լծորդութիւնքը որ Հայերէն լեզուի մէջ չորս կերպ է։ (Տես նաեւ հոլովմանց պէսպիսութիւնը. 21։)

Numérisé par CDMF (PP) - 2011

186. Չորս լծորդութիւններն անկրեւոյթ ժամանակին մէջ իրարմէ կ'որոշուին.

Առաջին լծորդութեանն է՝ ել. ինչպէս Լս-ել.
Երկրորդ լծորդութեանն է՝ իլ. Սորվ-իլ.
Երրորդ լծորդութեանն է՝ ալ. Կարդ-ալ.
Չորրորդ լծորդութեանն է՝ նալ. Մոռ-նալ.

187. Ներգործական ու չէզոք բայերն այս չորս լծորդութեանց (կամ չորս կերպ խոնարհմանց) մէկուն տակը կ'երթան. Իսկ կրաւորականները՝ յատուկ կերպով մը ներգործականէն կազմուելէն ետեւ՝ ամէնն ալ միօրինակ եւ հաւասարապէս երկրորդ լծորդութեան պէս կը խոնարհին. ինչպէս վարը (198) պիտ'որ տեսնենք։

188. Չէզոք բայերուն կարգը կրնայ համարուիլ Էական բայն ալ, որ պարզապէս ըլլալ կը ցուցնէ։ — Էական բայը միւս բայերուն արմատն ու լեզուին գլխաւոր բայն ըլլալուն համար՝ նախ անոր խոնարհմունքը դնենք, եւ յետոյ միացածներուն։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔԸ

---

### §. 1. Էական բայ։

189. Էական բայ կրկին է. մէկը Եմ՝ պակասաւոր, այսինքն որ միայն երկու ժամանակն ունի. եւ միւսն Ըլլալ՝ ամբողջ։

190. — Ա. ԷԱԿԱՆ ԲԱՅ — ԵՄ։

Սահմանական.

| | Ներկայ. | Անկատար. |
|---|---|---|
| Եզ. | Ես եմ. պէն իմ. | Ես էի. պէն իտիմ. |
| | Դուն ես. | Դուն էիր. |
| | Ան է. | Ան էր. |
| Յոգ. | Մենք ենք. | Մենք էինք. |
| | Դուք էք. | Դուք էիք. |
| | Անոնք են. | Անոնք էին։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

191. — Բ. ԷԱԿԱՆ ԲԱՅ. — ԸԼԼԱԼ.

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| Ներկայ. | Ներկայ. |
| Կ'ըլլամ. գրբ. եմ. | Ըլլամ. գրբ. իցեմ, լիցիմ. |
| Կ'ըլլաս. | Ըլլաս. |
| Կ'ըլլայ. | Ըլլայ. |
| Կ'ըլլանք. | Ըլլանք. |
| Կ'ըլլաք. | Ըլլաք. |
| Կ'ըլլան. | Ըլլան. |
| Անկատար. | Անկատար. |
| Կ'ըլլայի. գրբ. էի. | Ըլլայի. գրբ. իցէի, լինէի. |
| Կ'ըլլայիր. | Ըլլայիր. |
| Կ'ըլլար. | Ըլլար. |
| Կ'ըլլայինք. | Ըլլայինք. |
| Կ'ըլլայիք. | Ըլլայիք. |
| Կ'ըլլային. | Ըլլային. |
| Կատարեալ. | Հրամայական. |
| Եղայ. գրբ. եղէ. | Եղի՛ր. գր. |
| Եղար. | Եղէ՛ք. |
| Եղաւ. | Դերբայ. |
| Եղանք. | Ընդ. Ըլլող, եղող. գրն. |
| Եղաք. | Անց. Եղած, եղեր. գրբ. եղեալ. |
| Եղան. | Աներ. Ըլլալ. գրբ. լինել: |

192. Բայերու խոնարհմունքներէն ոմանք որոշ կանոնի մը տակ են, ու կը կոչուին Կանոնաւոր խոնարհմունք. ոմանք ալ կանոնէ դուրս են, ու կ'ըսուին Անկանոն կամ Զարտուղի խոնարհմունք:

---

### §. 2. *Կանոնաւոր խոնարհմունք, կամ Չորս լծորդութիւն:*

### Ա.

### ՆԵՐԳՈՐԾ. ԵՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐՈՒՆ ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆԸ

*Այս չորս լծորդութեանց պատկերին մէջ միայն պարզ ժամանակները կը դնենք. իսկ բաղադրեալները՝ ետքէն կ'աւանդենք:* (Տես Յօդ. Ե:)

Numérisé par CDMF (PP) - 2011

## 193. — Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ԵԼ.

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| Ներկայ. | Ներկայ. |
| Կը լս-եմ. իշիտիր իմ. | Լս-եմ. իշիթէյիմ, իշի- |
| Կը լս-ես. | Լս-ես. [տէյիմ. |
| Կը լս-է. | Լս-է. |
| Կը լս-ենք. | Լս-ենք. |
| Կը լս-էք. | Լս-էք. |
| Կը լս-են. | Լս-են. |
| Անկատար. | Անկատար. |
| Կը լս-էի. իշիտիր իտիմ. | Լս-էի. իշիթսէ իտիմ, |
| Կը լս-էիր. | Լս-էիր. (իշիտէ իտիմ. |
| Կը լս-էր. | Լս-էր. |
| Կը լս-էինք. | Լս-էինք. |
| Կը լս-էիք. | Լս-էիք. |
| Կը լս-էին. | Լս-էին. |
| Կատարեալ. | Հրամայական. |
| Լս-եցի. իշիթտիմ. | Լս-է. իշիթ. |
| Լս-եցիր. | Լս-եցէք. |
| Լս-եց. | |
| Լս-եցինք. | Դերբայ. |
| Լս-եցիք. | Ընդ. Լս-ող. իշիտէն. |
| Լս-եցին. | Անց. Լս-ած, լս-եր. ի-շիթմիշ. |

Աներեւոյթ. Լս-ել. իշիթմէք։

Առաջին լծորդութեան տակ կ'երթան՝

| | |
|---|---|
| Հանել, նեցի, նէ, Ն*. | Վազել, զեցի, զէ, Չ. |
| Կանչել, չեցի, չէ, Ն. | Ծողվել, վեցի, վէ, Ն. |
| Սպասել, սեցի, սէ, Չ. | Խմել, խմեցի, խմէ, Ն. |
| Գովել, վեցի, վէ, Ն. | Ազատել, տեցի, տէ, Ն. |
| Ուզել, զեցի, զէ, Ն. | Պարպել, պեցի, պէ, Ն. |
| Բռնել, նեցի, նէ, Ն. | Քալել, լեցի, լէ, Չ. |

* Բայերուն առջեւի Ն գիրը կը նշանակէ Ներգործական բայ. Չ կը նշանակէ չէզոք բայ։

Numérisé par CDMF (PP) - 2011

## 194. — Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ԻԼ.

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| **Ներկայ.** | **Ներկայ.** |
| Կը սորվ-իմ. | Սորվ-իմ. |
| Կը սորվ-իս. | Սորվ-իս. |
| Կը սորվ-ի. | Սորվ-ի. |
| Կը սորվ-ինք. | Սորվ-ինք. |
| Կը սորվ-իք. | Սորվ-իք. |
| Կը սորվ-ին. | Սորվ-ին. |
| **Անկատար.** | **Անկատար.** |
| Կը սորվ-էի. | Սորվ-էի. |
| Կը սորվ-էիր. | Սորվ-էիր. |
| Կը սորվ-էր. | Սորվ-էր. |
| Կը սորվ-էինք. | Սորվ-էինք. |
| Կը սորվ-էիք. | Սորվ-էիք. |
| Կը սորվ-էին. | Սորվ-էին. |
| **Կատարեալ.** | **Հրամայական.** |
| Սորվ-եցայ. | Սորվ-է՛. |
| Սորվ-եցար. | Սորվ-եցէ՛ք. |
| Սորվ-եցաւ. | |
| Սորվ-եցանք. | **Դերբայ.** |
| Սորվ-եցաք. | Ընդ. Սորվ-ող. |
| Սորվ-եցան. | Անց. Սորվ-ած, սորվ-եր. |

**Աներևոյթ.** Սորվ-իլ։

*Երկրորդ լծորդութեան տակ կ'երթան մեծաւ մասամբ չէզոք բայեր։*

| | |
|---|---|
| Ապրիլ, րեցայ, րէ, չ. | Բնակիլ, կեցայ, կէ, չ. |
| Խօսիլ, սեցայ, սէ, չ. | Պառկիլ, կեցայ, կէ, չ. |
| Աշխատիլ, տեցայ, տէ, չ. | Յոգնիլ, նեցայ, նէ, չ. |
| Հաւնիլ, նեցայ, նէ, ն. | Նայիլ, յեցայ, յէ, ն. |
| Նստիլ, տեցայ, տէ, չ. | Համբերիլ, րեցայ, րէ, ն. |

Numérisé par CDMF (PP) - 2011

## 195. — Գ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ԱԼ.

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| **Ներկայ.** | **Ներկայ.** |
| Կը կարդ-ամ. | Կարդ-ամ. |
| Կը կարդ-աս. | Կարդ-աս. |
| Կը կարդ-այ. | Կարդ-այ. |
| Կը կարդ-անք. | Կարդ-անք. |
| Կը կարդ-աք. | Կարդ-աք. |
| Կը կարդ-ան. | Կարդ-ան. |
| **Անկատար.** | **Անկատար.** |
| Կը կարդ-այի. | Կարդ-այի. |
| Կը կարդ-այիր. | Կարդ-այիր. |
| Կը կարդ-ար. | Կարդ-ար. |
| Կը կարդ-այինք. | Կարդ-այինք. |
| Կը կարդ-այիք. | Կարդ-այիք. |
| Կը կարդ-ային. | Կարդ-ային. |
| **Կատարեալ.** | **Հրամայական.** |
| Կարդ-ացի. | Կարդ-ա՛. |
| Կարդ-ացիր. | Կարդ-ացէք. |
| Կարդ-աց. | **Դերբայ.** |
| Կարդ-ացինք. | |
| Կարդ-ացիք. | Ընդ. Կարդ-ացող. |
| Կարդ-ացին. | Անց. Կարդ-ացած, կարդ-ացեր. |

Աներեւոյթ. Կարդ-ալ:

Երրորդ լծորդութեան տակն են՝

| | |
|---|---|
| Բաղձալ, ձացի, ձա, Ն. | Ջանալ, նացի, նա, Չ. |
| Լուալ, լուացի, լուա, Ն. | Աղալ, ղացի, աղա, Ն. |
| Մնալ, մնացի, մնա, Չ. | Խաղալ, ղացի, ղա, Չ. |
| Գոռալ, ռացի, ռա, Չ. | Խղճալ, ճացի, ճա, Չ. |
| Յուսալ, սացի, սա, Չ. | Հազալ, զացի, զա, Չ. |

Numérisé par CDMF (PP) - 2011

## 196. — Դ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ՆԱԼ.

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| **Ներկայ.** | **Ներկայ.** |
| Կը մոռ-նամ. | Մոռ-նամ. |
| Կը մոռ-նաս. | Մոռ-նաս. |
| Կը մոռ-նայ. | Մոռ-նայ. |
| Կը մոռ-նանք. | Մոռ-նանք. |
| Կը մոռ-նաք. | Մոռ-նաք. |
| Կը մոռ-նան. | Մոռ-նան. |
| **Անկատար.** | **Անկատար.** |
| Կը մոռ-նայի. | Մոռ-նայի. |
| Կը մոռ-նայիր. | Մոռ-նայիր. |
| Կը մոռ-նար. | Մոռ-նար. |
| Կը մոռ-նայինք. | Մոռ-նայինք. |
| Կը մոռ-նայիք. | Մոռ-նայիք. |
| Կը մոռ-նային. | Մոռ-նային. |
| **Կատարեալ.** | **Հրամայական.** |
| Մոռ-ցայ. | Մոռ-ցի՛ր. |
| Մոռ-ցար. | Մոռ-ցէ՛ք. |
| Մոռ-ցաւ. | |
| Մոռ-ցանք. | **Դերբայ.** |
| Մոռ-ցաք. | Ընդ. Մոռ-ցող. |
| Մոռ-ցան. | Անց. Մոռ-ցած, մոռ-ցեր. |

Աներեւոյթ. Մոռ-նալ։

Չորրորդ լծորդութեան տակ կ'երթան՝

Իմա-նալ, իմացայ, իմացիր, ն.
Ճանչ-նալ, չցայ, չցիր, ն.
Գիտ-նալ, գիտցայ, գիտ-ցիր, ն.
Գողնալ, գողցայ, գողցիր, ն.
Վախնալ, վախցայ, վախ-ցիր, ն.
Կե-նալ, կեցայ, կեցիր, ն.
Ամչ-նալ, ամչցայ, ցի՛ր, ն.
Կարմր-նալ, մրցայ, մրցի՛ր, ն.

Երկու բայ ալ կայ այս լծորդութեան տակ նուլ վերջով։ Ընթեռնուլ. ընթերցայ. ընթերցիր. ընթերցած. (կարդալ։) Զգենուլ. զգեցայ. զգեցիր. զգեցած. (հագնիլ։)

Numérisé par CDMF (PP) - 2011

## Ը.

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՑԵՐՈՒ ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆԸ

197. Ներգործական բայը կրաւորականի կը դառնայ՝ աներեւոյթի ել, իլ, ալ, նալ վերջերն ուիլ ընելով. — միայն թէ Գ. ու Դ. լծորդութեան բայերուն կատարեալէն առնելով ուիլ մասնիկը դնելու է.

| | | |
|---|---|---|
| Լս-ել. | կրաւ. | Լս-ուիլ. |
| Սորվ-իլ. | " | Սորվ-ուիլ. |
| Կարդ-ալ, (կարդաց-ի,) | " | Կարդաց-ուիլ. |
| Մոռ-նալ, (մոռց-այ.) | " | Մոռց-ուիլ։ |

198. Այսպէս կրաւոր. աներեւոյթը գտնելէդ ետքը, ամէնքն Բ լծորդութեան պէս կը խոնարհին։

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| Ներկայ. | Ներկայ. |
| Կը լս-ուիմ. էշիտիլիր իմ. | Լս-ուիմ. էշիտիլէյիմ. |
| Կը լս-ուիս. | Լս-ուիս. |
| Կը լս-ուի. | Լս-ուի. |
| Կը լս-ուինք. | Լս-ուինք. |
| Կը լս-ուիք. | Լս-ուիք. |
| Կը լս-ուին. | Լս-ուին. |
| Անկատար. | Անկատար. |
| Կը լս-ուէի. | Լս-ուէի. |
| Կը լս-ուէիր. | Լս-ուէիր. |
| Կը լս-ուէր. | Լս-ուէր. |
| Կը լս-ուէինք. | Լս-ուէինք. |
| Կը լս-ուէիք. | Լս-ուէիք. |
| Կը լս-ուէին. | Լս-ուէին. |
| Կատարեալ. | Հրամայական. |
| Լս-ուեցայ. | Լս-ուէ. |
| Լս-ուեցար. | Լս-ուեցէք. |
| Լս-ուեցաւ. | Դերբայ. |
| Լս-ուեցանք. | |
| Լս-ուեցաք. | Ընդ. Լս-ուող. |
| Լս-ուեցան. | Անց. Լս-ուած, լս-ուեր. |

Աներեւոյթ. Լս-ուիլ։



Numérisé par CDMF (PP) - 2011

Այսպէս ալ մէկալ բայերուն կրաւորականք միա-
կերպ։

Առաջին լծորդութենէ՝

Հան-ուիլ, Հան-ուեցայ, Հան-ուէ.
կանչ-ուիլ, կանչ-ուեցայ, կանչ-ուէ.
Բռն-ուիլ, բռն-ուեցայ, բռն-ուէ.
Ժողվ-ուիլ, ժողվ-ուեցայ, ժողվ-ուէ.
Խմ-ուիլ, խմ-ուեցայ, խմ-ուէ.

Երկրորդ լծորդութենէ՝

Սորվ-ուիլ, սորվ-ուեցայ, սորվ-ուէ.
Հաւն-ուիլ, Հաւն-ուեցայ, Հաւն-ուէ.
Խօս-ուիլ, խօս-ուեցայ, խօս-ուէ.
Համար-ուիլ, Համար-ուեցայ, Համար-ուէ.

Երրորդ լծորդութենէ՝

Կարդաց-ուիլ, կարդաց-ուեցայ, կարդաց-ուէ.
Բաղձաց-ուիլ, բաղձաց-ուեցայ, բաղձաց-ուէ.
Լուաց-ուիլ, լուաց-ուեցայ, լուաց-ուէ.

Չորրորդ լծորդութենէ՝

Մոռց-ուիլ, մոռց-ուեցայ, մոռց-ուէ.
Գողց-ուիլ, գողց-ուեցայ, գողց-ուէ.
Իմաց-ուիլ, իմաց-ուեցայ, իմաց-ուէ.
Գիտց-ուիլ, գիտց-ուեցայ, գիտց-ուէ.
Ճանչց-ուիլ, ճանչց-ուեցայ, ճանչց-ուէ.
Հասկց-ուիլ, հասկց-ուեցայ, հասկց-ուէ.

---

## §. 3. Անկանոն խոնարհմունք։

199. Նախագիտելիք։ — Բայերուն ժամանակնե-րէն ոմանք կանոնաւոր ժամանակ են, ոմանք ալ՝ Անկանոն։

Կանոնաւոր ժամանակներն են՝

1. Աներեւոյթ, որ մէկալներուն արմատ կրնայ ըսուիլ.
2. Ստորադասական ներկայ, եւ
3. Ստորադասական անկատար, ուստի կ'ելլեն
4. Սահմանական ներկայ եւ
5. Սահմանական անկատար։

Numérisé par CDMF (PP) - 2011

Իսկ անկանոն ժամանակներն են՝

1. Սահմանական կատարեալ,
2. Հրամայական (ներկայ կամ ապառնի),
3. Ընդունելութիւն, եւ
4. Անցեալ. (ոծ եւ էր անցեալները։)

Այս անկանոն ժամանակներն իւրաքանչիւր լծորդութեանց մէջ զատ զատ սորվելու է։

200. Շատ բայեր կան որ չորս կանոնաւոր լծորդութեանց եւ ոչ մէկուն կը հետեւին, այլ կարգէ դուրս խոնարհում ունին. — այսպիսի բայերն Անկանոն կամ Զարտուղի բայ կ'ըսուին. եւ անոնց խոնարհմունքն՝ Անկանոն կամ Զարտուղի խոնարհմունք. ինչպէս գիտեմ բային կատարեալը կ'ըլլայ գիտցի (եւ ոչ գիտեցի.) — Միայն թէ աղէկ միտք առնելու է՝ որ

201. Անկանոն բայերուն ալ կանոնաւորներէն տարբերութիւնը միայն անկանոն ժամանակներուն մէջն է. իսկ կանոնաւոր ժամանակներն իրենց աներեւութին վերջաւորութեանը համեմատ չորս լծորդութիւններէն մէկուն տակն են։ Ասոր համար զարտուղի բայերուն միայն անկանոն ժամանակները կը նշանակենք։

202. Զարտուղի բայերը, (ինչպէս նաեւ զարտուղի անունները, 38.) երկու կարգ կրնան բաժնուիլ. 1. Կէս զարտուղիք, որ փոքր տարբերութիւն մ'ունին. եւ 2. Բուն զարտուղիք։

## Ա. — ԿԷՍ ԶԱՐՏՈՒՂԻՔ

203. Կան նել, նիլ, նուլ վերջաւորութեամբ բայեր՝ որ չորրորդ լծորդութեան պէս կը խոնարհին. միայն անկանոն ժամանակներուն մէջ ն գիրը ցի փոխելու տեղ՝ դուրս կը թողուն։

Գտնել, (գտանալ.) գտայ. գտիր. գտած. գտեր։
Տեսնել, (տեսանալ.) տեսայ. տես. տեսած։
Պագնել. պագայ. պա՛գ. պագած։
Մտնել. (մտանալ.) մտայ. մտիր. մտած։
Ելլել*. ելայ. ե՛լ կամ ելիր. ելած։
Ըլլալ*. եղայ. եղիր. եղած. (տես 191։)

Դառնալ. դարձայ. դարձիր. դարձած։
Իջնալ. իջայ. իջիր. իջած. կամ ինջայ. ինջիր, եւայլն։
Հասնիլ. հասայ. հասիր. հասած։
Անցնիլ. անցայ. անցիր. անցած։
Մեռնիլ. մեռայ. մեռիր. մեռած։
Ծնանիլ**. ծնայ. ծնիր. ծնած։

Այսպէս ալ՝

Թքնել, թքայ. քիր. քած. Հատանիլ, տայ. տիր. տած. Հեծնալ, ծայ. ծիր. ծած. Բուսանիլ, սայ. սիր. սած. Խածնել, ծայ. խած. ծած. Հագնիլ, գայ. գիր. գած.

* Ելնել եւ ըլլալ բայերն իրենց հնագոյն ձեւին պատճառաւ՝ նիլ, նալ վերջաւորեալ կը համարուին։

** Ծնանիլ՝ թէ չէզոք է, թէ ներգործական եւ թէ կրաւորական։

204. Ասոնց պէս կը խոնարհին նաեւ քանի մը չիլ վերջաւորածները՝ չ գիրը դուրս թողլով։
Թռչիլ. կտր. թռայ. հրմ. թռիր. անց. թռած. թռեր,

| | | | |
|---|---|---|---|
| Փախչիլ. | փախայ. | փախիր. | փախած։ |
| Փլչիլ. | փլայ. | փլիր. | փլած։ |
| Դպչիլ. | դպայ. | դպիր. | դպած։ |
| Կպչիլ. | կպայ. | կպիր. | կպած։ |
| Փակչիլ. | փակայ. | փակիր. | փակած։ |

205. Ասոնց ամէնուն, թէ չիլ վերջաւորածներուն եւ թէ նախընթացներուն, ընդունելութիւն ներկան կանոնաւոր է. այսպէս. գտնող. ելլող. տեսնող. մտնող. հագնող. փախչող. եւայլն. բայց ոմանցն երբեմն կ'ըսուի նաեւ տեսող. իջող. դպող։ Իսկ կրաւորականը ծայրէ ի ծայր կանոնաւոր է. գտնուիլ. տեսնուիլ. հագնուիլ. դպչուիլ. — գտնուած. տեսնուած. տեսնուեր, եւայլն։

Սկսիլ, փրթիլ, զրթիլ (Բ. լծ.) բայերուն կատարեալն ոյ կ'ըլլայ՝ եւ ոչ եցայ. այսպէս՝ սկսայ, փրթայ, զրթայ. իսկ հրամայականն՝ է ըստ կանոնի, կամ գրաբար ձեւով՝ էր։

206. Քանի մը կէս զարտուղի բայ ալ՝ չորս գլխաւոր վերջաւորութենէ դուրս՝ ուլ կը յանգին. եւ են՝
Թողուլ. կտր. թողի կամ թողուցի. հրմ. թո՛ղ, թողէք. ընդ. թողուցող. անց. թողած, թողուցած. թողեր,

Numérisé par CDMF (PP) - 2011

Թողուցեր. — որ կ'ըսուի նաեւ Թող տալ*։ Կրաւոր. Թողուիլ կամ Թողուցուիլ, կանոնաւոր է ըստ Բ. լծ.։

* Թող տալ բային մէջ միայն տալ կը խոնարհի. — Թող կու տամ, Թող տուի։

Առնուլ. (տես 207, Ե.) — որ կ'ըսուի նաեւ Առնել։

Երդնուլ. երդուայ. երդուիր. երդուող. երդուած. — կ'ըսուի նաեւ Երդուըննալ (Դ. լծ.) եւ Երդում ընել։

Զբօսնուլ. զբօսայ. զբօսիր. զբօսող. զբօսած — որ կ'ըսուի նաեւ Զբօսանալ (Դ. լծ.) եւ Զբօսանք ընել։

Ուրիշ այլեւայլ գրաբարի կերպ խոնարհմունքը գիտնալու համար՝ բուն գրաբար խոնարհմունքները միտք առնելու է։

## Բ. ԲՈՒՆ ԶԱՐՏՈՒՂԻՔ

207. Բուն զարտուղի խոնարհմանց վրայ երկու միտ դնելու բան կայ. նախ՝ ներգործ. ընդունելութիւնը, որ ոմանցը կանոնաւոր է, ոմանցն ալ անկանոն. զորօրինակ, կանոնաւոր է՝ Դնել, դնող. անկանոն է՝ Տալ, տուող։ Եւ երկրորդ՝ իրենց կրաւորականը, որ կամ կանոնաւոր, ինչպէս Զարնել, զարնուիլ. կամ ալ անկանոն, ինչպէս Դնել, դրուիլ. Տալ, տրուիլ։

Ա. Բերել։ Կր. Բերուիլ։

Կատ. Բերի, բերիր, բերաւ. բերինք, բերիք, բերին։
Հրմ. Բեր. բերէք։ Ընդ. Բերող. Անց. Բերած, բերեր։

Բ. Ըսել։ Կր. Ըսուիլ։

Կատ. Ըսի, ըսիր, ըսաւ. ըսինք, ըսիք, ըսին։
Հրմ. Ըսէ, ըսէք։ Ընդ. Ըսող։ Անց. Ըսած, ըսեր։

Գ. Ընել։ Կր. Ըլլալ*։

Կատ. Ըրի, ըրիր, ըրաւ. ըրինք, ըրիք, ըրին։
Հրմ. Ըրէ, ըրէք։ Ընդ. Ընող։ Անց. Ըրած, ըրեր։

* Կրաւորականի տեղ երբեմն կանոնաւոր ժամանակներուն մէջ կը գործածուի Ընուիլ։

Դ. Դնել։ Կր. Դրուիլ։

Կատ. Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին։
Հրմ. Դիր. դրէք. Ընդ. Դնող։ Անց. Դրած, դրեր։

Numérisé par CDMF (PP) - 2011

Ե. Առնուլ, առնել. (տճ. ուղղագ.) Կր. Առնուիլ:

Կատ. Առի, առիր, առաւ. առինք. առիք, առին:
Հր. Ա՛ռ. առէք: Ընդ. Առնող: Անց. Առած, առեր:

Զ. Զարնել: Կր. Զարնուիլ:

Կատ. Զարկի, զարկիր, զարկաւ. զարկինք, զարկիք, զարկին:
Հր. Զա՛րկ. զարկէք: Ընդ. Զարնող: Անց. Զարկած, զարկեր:

Է. Տանիլ: Կր. Տարուիլ:

Կատ. Տարի, տարիր, տարաւ. տարինք, տարիք, րին:
Հր. Տա՛ր, տարէք: Ընդ. Տանող: Անց. Տարած, տարեր:

Ը. Բանալ: Կր. Բացուիլ:

Կատ. Բացի, բացիր, բացաւ. բացինք, բացիք, բացին:
Հր. Բաց. բացէք: Ընդ. Բացող: Անց. Բացած, բացեր:

Թ. Լալ. (Կր. եթէ պէտք ըլլայ՝ Լացուիլ:)

Կատ. Լացի, լացիր, լացաւ. լացինք, լացիք, լացին.-
Հր. Լա՛ց. լացէք: Ընդ. Լացող: Անց. Լացած, լացեր:

Ժ. Նստիլ:

Կատ. Նստայ, նստար, նստաւ. նստանք, նստաք, նստան:
Հր. Նի՛ստ. նստէք: Ընդ. Նստող: Անց. Նստած, նստեր:

Ունի կանոնաւոր խոնարհում ալ. Կտր. Նստեցայ, ցար, ցաւ. Հրմ. Նստէ, նստեցէք:

ԺԱ. Իյնալ:

Կատ. Ինկայ, ինկար, ինկաւ. ինկանք, ինկաք, ինկան:
Հր. Ինկի՛ր. ինկէք: Ընդ. Ինկող կամ իյնող: Անց. Ինկած, ինկեր:

Կամ հին ձեւով՝ Ընկնիլ. — Կատ. Ընկայ, ընկար, կաւ, կանք, կաք, կան: Հրմ. Ընկի՛ր, ընկէք: Ընդ. Ընկնող: Անց. Ընկած, ընկեր. որ է կէս զարտ. խոնարհում. տես վերը (203:) Բռնանիլ, Հասնիլ:

ԺԲ. Տալ: Կր. Տրուիլ*:

Կատ. Տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին:

Numérisé par CDMF (PP) - 2011

Հրմ. Տո՛ւր, տուէ՛ք։ Ընդ. տուող։ Անց. Տուած, տուեր։

* Նմանապէս Թող տալ, Թոյլ տալ եւայլն բայերուն հրամայականը՝ Թո՛ղ տո՛ւր. Թո՛յլ տուէ՛ք։ (Տես 206.)

ԺԳ. Գալ։

Կատ. Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան։
Հրմ. Եկո՛ւր, (եկո՛.) եկէ՛ք։ Ընդ. Եկող. Անց. Եկած, եկեր։

ԺԴ. Երթալ։ (Կրն. եթէ պէտք ըլլայ՝ Երթըլցուիլ։)
Կատ. Գնացի, գնացիր, գնաց. գնացինք, գնացիք, գնացին։
Հրմ. Գնա՛. գնացէ՛ք։ Ընդ. Գնացող. Անց. Գնացած, գնացեր։

Շատ յաճախ կը գործածուի Կտր. Գացի, գացիր, գնաց. գացինք, գացիք, գացին։ Հրմ. Գնա՛. գացէ՛ք։ Ընդ. Գացող։ Անց. Գացած, գացեր։

ԺԵ. Ուտել։ Կրն. Ուտուիլ։

Կատ. Կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան։
Հրմ. Կե՛ր. կերէ՛ք։ Ընդ. Կերող. (ուտող։) Անց. Կերած, կերեր։

Ասոնք են լեզուին զարտուղի բայերը. որոնց հոս միայն անկանոն ժամանակները դրինք, վերստին յիշեցնելով որ մնացած (կանոնաւոր) ժամանակներն առանձին գիտելիք մը չունին, եւ ըստ ամենայնի կանոնաւոր լծորդութեանց կը հետեւին. այսպէս Զարնել բայը. Կը զարնեմ. կը զարնէի. զարնեմ. զարնէի. զարնող։ Ուտել բայը. Կ'ուտեմ. կ'ուտէի, եւայլն։

Իսկ կրաւորականի միայն աներեւոյթը դնել բաւական համարեցանք. վասնզի զարտուղի բայերուն կրաւոր. աներեւոյթը գիտնալէն ետեւ, ամէն ժամանակներն հաւասարապէս ըստ Բ լծորդութեան կը խոնարհին (198). այսպէս. Զարնուիլ՝ կ'ըլլայ Կը զարնուիմ. կը զարնուէի. զարնուեցայ. զարնուիմ. զարնուէի. զարնուէ. զարնուող. զարնուած, զարնուեր։ Նոյնպէս Տրուիլ բայը. Կը տրուիմ. կը տրուէի. տրուեցայ.

Numérisé par CDMF (PP) - 2011

տրուիմ. տրուէի. տրուէ. տրուելու. տրուած. տրուող։ Այսպէս ալ ուրիշ ամէն մէկը։ — Միայն՝

208. Ուտուիլ կրաւորականին կատարեալը կը զարտուղի եւ կ'ըլլայ Կերուեցայ, ցար, ցաւ, եւայլն. (փոխանակ՝ ուտուեցայ։)

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՊԱԿԱՍԱՒՈՐ ԵՒ ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԵՐ

### §. 1. *Պակասաւոր բայեր:*

209. *Պակասաւոր կ'ըսուին այն բայերն որոնց ամէն ժամանակը չի գործածուիր, եւ որոնց պակաս ժամանակներն ուրիշ բայով կը լրանան կամ կ'ամբողջանան։*

Ա. Եմ. — Սհմ. ներկայ. Եմ, ես, է։ Անկ. Էի, էիր, եւայլն. (տես 190.) — որ կը լրանայ Ըլլալ կէս զարտուղի էական բայով (191)։

Բ. Կամ. — Սհմ. ներկ. Կամ, կաս, կայ, կանք, եւ այլն: Անկ. Կայի, կայիր, եւայլն. — որ կը լրանայ նոյնպէս Ըլլալ էականով կամ Գտնուիլ կրաւորակերպ չէզոք բայով։

Գ. Ունիմ. — Սհմ. ներկ. Ունիմ, ունիս, ունի, ունինք, եւայլն։ Անկ. Ունէի, ունէիր, եւայլն. — որ կը լրանայ Ունենալ կանոնաւոր բայով։ (Դ. լծ։)

Դ. Կրնամ. — Սհմ. ներկ. Կրնամ, կրնաս, կրնայ, կրնանք, եւայլն։ Անկ. Կրնայի, կրնայիր, եւայլն։ Հրմ. Կրցիր, կրցէք։ Ընդ. Կրցող։ Անց. Կրցած, կրցեր։ (Չունի ստորդս. ներկ. եւ անկ։ Քիչ գործածական է Աներեւ. Կրնալ*։) — Կը լրանայ Կարենալ պակասաւորէն։

* Կրնալ աներեւոյթը սովորաբար հոլովված կը գործածուի. կրնալով. չկրնալուն։

Ե. Կարենալ. — Ստոր, ներկ. Կարենամ, րենաս, նայ, նանք. եւայլն։ Անկ. Կարենայի, նայիր, նար. եւ այլն։ Աներեւ. քիչ տեղ. Կարենալ։ Երբեմն նաեւ

Numérisé par CDMF (PP) - 2011

Սհմ. Ներկ. Կը կոչենամ. եւայլն: — Այս երկու բայե-րը շատ անգամ կը լծանան կոչուող եմ, կոչուող կ'ըլլամ բայերով:

Զ. Գիտեմ. — Սհմ. Ներկ. Գիտեմ, գիտես, գիտէ, եւայլն: Անկ. Գիտէի, գիտէիր, եւայլն. — որ կը լծանայ Գիտնալ ամբողջ բայով. (Դ լծ:)

210. Կորսուիլ չէզոք բայը բաց ի կանոնաւոր խոնարհմունքէն (կորսուեցայ, կորսուած եւայլն.) ունի նաեւ պակասաւոր խոնարհում մը՝ միայն անկանոն ժամանակներուն համար.
Սհ. հր. Կորայ, կորար, կորաւ. կորանք, կորաք, կորան: Հրամայ. Կորիր, (ռմկ. կորի.) Անց. Կորած, կորեր:

Նոյնպէս ուզել բայն երկրորդական ձեւ մ'ալ ունի՝ Ուզենալ, որ միայն կանոնաւոր ժամանակներուն մէջ կը գործածուի.

---

## §. 2. *Միադիմի բայեր:*

211. *Միադիմի* կամ *Դիմազուրկ* կ'ըսուին այն բայերն որոնց միայն եզ. երրորդ դէմքը կը գործածուի:

212. Բուն միադիմի բայերն են.

| | |
|---|---|
| Պէտք է. | Կ'օգտէ. |
| Հարկ է. | Հերիք է. |
| Արժան է. | Բաւ է. |
| Հնար է. | Ամօթ է. |
| Մեղք է. | (Ինծի) կ'իյնայ. |
| Կը վայլէ. | (Ինծի) անկ է: |

213. Պէտք է բայը իբրեւ հասարակ բայ կը գործածուի ամէն դէմքի համար ալ. Պէտք եմ երթալ. պէտք ես մնալ. պէտք են հարցընել. պէտք էիր տեղեկանալ. եւայլն:

214. Տեսակ մը միադիմի ալ կայ կրաւորականէ առնուած: Նոյնպէս չէզոքներէն ալ կրաւորական ձեւով միադիմի բայեր կ'ըլլեն. այսպէս. Կ'ըսուի թէ. կը լսուի.

Numérisé par CDMF (PP) - 2011

կը խմուի · կ'երկնցուի · կը նորոգուէր · խօսուեցաւ · պիտի ընդունուի · չի խաղցուիր · այսօր չի գործուիր :

Ուտեմ, կամ, ըլլալ, գալ բայերը կրաւորական չունին. Ըսուածը կ'ուտուի · կը կերուի · կերուեցաւ, եւայլն. այլ կ'ուտնուի՝ ուտելու բայէն. կ'ըլլայ՝ ըլլալ բայէն :

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ

215. *Բացասական* (*կամ Ուրացական կամ Ժխտական*) *կ'ըսուի բայ մ'որ գործողութիւնն ուրանալով, չէ ըսելով կը բացատրէ. ինչպէս Չբերենէլ · չերա · չերթ ըներ · չմտնար, եւայլն :*

216. — Ա. *Սահմանական կատարեալը, ստորադասական ներկայն ու անկատարը, աներեւոյթն եւ ընդունելութիւնը կը կազմուին՝ սկիզբնին չ գիրն առնելով. այսպէս. Չըրեցի · չըրեմ · չըրէի · չըրող · չըրած · չըրել :*

217. — Բ. *Սահմանական ներկայն ու անկատարը կը կազմուին 1. եմ էական բային բացասականովը, եւ 2. իւրաքանչիւր բային բացասական ձեւովը :*

218. *Բայի մը Բացասական ձեւը կը շինուի՝ աներեւոյթին ծայրի ը գիրը ըէի փոխելով. այսպէս. Ըներ · սորվեր · խօսեր · մոռնար : — Չեմ ըներ · չէն ըներ, խօսուեր, խորհրդացուեր, մոռցուեր, եւայլն : — Անկէ կը հետեւի որ՝*

219. *Աներեւոյթ չունեցող բայերը բացասական ձեւ ալ չունին. (տես 209.) ինչպէս եմ էմ. կամ. ունիմ :*

220. — Գ. *Իսկ Հրամայականին տեղ կու գայ Արգելականը (որ Հրամայականին բացասականն է). եւ կը կազմուի մի բառով եւ բային բացասական ձեւովը՝ եզակիի մէջ. իսկ յոգնականի մէջ մի բառէն ետքը ստորդս. ներկայ դնելով. այսպէս. եզ. Մի՛ ըներ · մի մոռնար. — յոգն. Մի՛ ընէք · մի մոռնաք :*

221. *Միտ դնելու բան մ'ալ է որ Բ լծորդութեան բացասական ձեւը սահմ. անկատարի մէջ եր կը վերջաւորի. այսպէս. Չէի սորվեր, (փխն. Չէի սորվէր :)*

Numérisé par CDMF (PP) - 2011

Նոյնպէս կը վերջաւորին ամէն կրաւոր. անկատար բացասականները. Չեր լսուեր. չէիր մոռցուեր. չէին կարդացուեր, եւայլն։

222. Բացասական բայերուն կազմութեանը համար էապէս հարկաւոր է եմ օժանդակ էական բային բացասականը, որ հոս կը դնենք։

| Ներկայ. | | Անկատար. | |
|---|---|---|---|
| Եզ. | Յգ. | Եզ. | Յգ. |
| Չեմ. | Չենք. | Չէի. | Չէինք. |
| Չես. | Չէք. | Չէիր. | Չէիք. |
| Չէ. | Չեն. | Չէր. | Չէին։ |

223. Ծանօթ. Ներկայի եզ. երրորդ դէմքը կ'ըլլայ՝ Չի լսեր. Չի խաղար. Չի գողնար. (փխկ. Չէ լսեր. չէ գողնար. չէ տեսներ ըսելու։)

Հիմայ դնենք չորս լծորդութեանց բացասականը՝ ներգործական ու կրաւորական։)

## ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

---

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| Ա. ԼԾՈՐԴ. | Բ. ԼԾՈՐԴ. | Գ. ԼԾՈՐԴ. | Դ. ԼԾՈՐԴ. |
|---|---|---|---|
| | *Սահմանական.* | | |
| | *Ներկայ.* | | |
| Չեմ լսեր. | Չեմ սորվիր. | Չեմ կարդար. | Չեմ մոռնար. |
| Չես լսեր. | Չես սորվիր. | Չես կարդար. | Չես մոռնար. |
| Չի լսեր. | Չի սորվիր. | Չի կարդար. | Չի մոռնար. |
| Չենք լսեր. | Չենք սորվիր. | Չենք կարդար. | Չենք մոռնար. |
| Չէք լսեր. | Չէք սորվիր. | Չէք կարդար. | Չէք մոռնար. |
| Չեն լսեր. | Չեն սորվիր. | Չեն կարդար. | Չեն մոռնար. |
| | *Անկատար.* | | |
| Չէի լսեր. | Չէի սորվիր. | Չէի կարդար. | Չէի մոռնար. |
| Չէիր լսեր. | Չէիր սորվիր. | Չէիր կարդար. | Չէիր մոռնար. |
| Չէր լսեր. | Չէր սորվիր. | Չէր կարդար. | Չէր մոռնար. |
| Չէինք լսեր. | Չէինք սորվիր. | Չէինք կարդար. | Չէինք մոռնր. |
| Չէիք լսեր. | Չէիք սորվիր. | Չէիք կարդար. | Չէիք մոռնար. |
| Չէին լսեր. | Չէին սորվիր. | Չէին կարդար. | Չէին մոռնար |

Numérisé par CDMF (PP) - 2011

Կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Չլսեցի. | Չսորվեցայ. | Չկարդացի. | Չմոռցայ. |
| Չլսեցիր. | Չսորվեցար. | Չկարդացիր. | Չմոռցար. |
| Չլսեց. | Չսորվեցաւ. | Չկարդաց. | Չմոռցաւ. |
| Չլսեցինք. | Չսորվեցանք. | Չկարդացինք. | Չմոռցանք. |
| Չլսեցիք. | Չսորվեցաք. | Չկարդացիք. | Չմոռցաք. |
| Չլսեցին. | Չսորվեցան. | Չկարդացին. | Չմոռցան. |

Ստորադասական.

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Չլսեմ. | Չսորվիմ. | Չկարդամ. | Չմոռնամ. |
| Չլսես. | Չսորվիս. | Չկարդաս. | Չմոռնաս. |
| Չլսէ. | Չսորվի. | Չկարդայ. | Չմոռնայ. |
| Չլսենք. | Չսորվինք. | Չկարդանք. | Չմոռնանք. |
| Չլսէք. | Չսորվիք. | Չկարդաք. | Չմոռնաք. |
| Չլսեն. | Չսորվին. | Չկարդան. | Չմոռնան. |

Անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Չլսէի. | Չսորվէի. | Չկարդայի. | Չմոռնայի. |
| Չլսէիր. | Չսորվէիր. | Չկարդայիր. | Չմոռնայիր. |
| Չլսէր. | Չսորվէր. | Չկարդար. | Չմոռնար. |
| Չլսէինք. | Չսորվէինք. | Չկարդայինք. | Չմոռնայինք. |
| Չլսէիք. | Չսորվէիք. | Չկարդայիք. | Չմոռնայիք. |
| Չլսէին. | Չսորվէին. | Չկարդային. | Չմոռնային. |

Արգելական.

| | | | |
|---|---|---|---|
| Մի՛ լսեր. | Մի՛ սորվիր. | Մի՛ կարդար. | Մի՛ մոռնար. |
| Մի՛ լսէք. | Մի՛ սորվիք. | Մի՛ կարդաք. | Մի՛ մոռնաք. |

Դերբայ.

Ընդունելութիւն.

Չլսող. Չսորվող. Չկարդացող. Չմոռցող.

Անցեալ.

Չլսած. Չսորված. Չկարդացած. Չմոռցած.

Աներեւոյթ.

Չլսել. Չսորվիլ. Չկարդալ. Չմոռնալ։

Numérisé par CDMF (PP) - 2011

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

Զորս լծորդութեան ալ բացասականը միեւնոյն կանոնով միակերպ ըլլալուն համար միայն մէկ օրինակ կը դնենք։

| Սահմանական. | Ստորադասական. |
|---|---|
| **Ներկայ.** | **Ներկայ.** |
| Չեմ մոռցուիր. | Չմոռցուիմ. |
| Չես մոռցուիր. | Չմոռցուիս. |
| Չի մոռցուիր. | Չմոռցուի. |
| Չենք մոռցուիր. | Չմոռցուինք. |
| Չէք մոռցուիր. | Չմոռցուիք. |
| Չեն մոռցուիր. | Չմոռցուին. |
| **Անկատար.** | **Անկատար.** |
| Չէի մոռցուեր. | Չմոռցուէի. |
| Չէիր մոռցուեր. | Չմոռցուէիր. |
| Չէր մոռցուեր. | Չմոռցուէր. |
| Չէինք մոռցուեր. | Չմոռցուէինք. |
| Չէիք մոռցուեր. | Չմոռցուէիք. |
| Չէին մոռցուեր. | Չմոռցուէին. |
| **Կատարեալ.** | **Արգելական.** |
| Չմոռցուեցայ. | Մի մոռցուիր. |
| Չմոռցուեցար. | Մի մոռցուիք. |
| Չմոռցուեցաւ. | **Դերբայ.** |
| Չմոռցուեցանք. | Ընդ. Չմոռցուող. |
| Չմոռցուեցաք. | Անց. Չմոռցուած. |
| Չմոռցուեցան. | |

Աներեւոյթ. Չմոռցուիլ։

224. Զայնաւորով սկսած բայերէն յառաջ՝ սահմ. ներկ. եզ. երրորդ դէմքին չի մասնկան ի գիրը կը կըրճատուի եւ կը գրուի ապաթարց նշանով՝ Չ'իմանար. Չ'առներ. Չ'ուզեր. Չ'ըներ. (եւ ոչ չի իմանար. չի առներ, եւայլն։) — Նոյնպէս շատ անգամ մի արգելա-

Numérisé par CDMF (PP) - 2011

կան մասնիկը՝ մանաւանդ ի ձայնաւորով սկսածներուն. **Մ՚իմանար. մ՚ըմբռնար. մ՚ելլէ. մ՚երթար:**

Դնենք համառօտ օրինակ մ՚ալ ձայնաւորով սկսած բացասական բայի:

**Սահմ. Ներկ.** Չեմ իյնար, չես իյնար, չ՚իյնար. չենք իյնար:
**Անկատար.** Չէի իյնար, չէիր իյնար, չէր իյնար:
**Կատար.** Չինկայ, չինկար, չինկաւ. չինկանք, չինկաք:
**Ստոր. Ներկ.** Չիյնամ: **Անկ.** Չիյնայի, չիյնայիր, չիյնար:
**Արգելական.** Մ՚իյնար, մ՚իյնաք:
**Ընդուն.** Չինկող: **Անց.** Չինկած. **Աներ.** Չիյնալ:

225. **Եմ, կամ, ունիմ, գիտեմ** բայերուն սահմ. ներկ. եւ անկատարը կ՚ըլլայ **Չեմ, չկայ, չունիմ. չունէի. չգիտեմ. չգիտէր.** եւայլն: — Գիտեմ հասարակ բացասական ալ ունի. **Չեմ գիտեր. չես գիտեր. չի գիտեր. չենք գիտեր. չէք գիտեր. չէի գիտեր,** եւայլն:

Չգիտեմ, չգիտէի բացասականն ըստ կանոնի է. սակայն գրոց եւ մաքուր լեզուի մէջ սովորական է՝ Չեմ գիտեր: — Ռամկ. է՝ Չիտեմ, չիտէի. (փոխանակ՝ չգիտեմ:)

226. **Գալ, տալ, լալ** բայերուն բացասականը, միավանկ ըլլալնուն համար՝ առջեւէն ի գիր մ՚ալ կ՚առնու. այսպէս **Չեմ ի գար. չես ի գար. չեմ ի տար. չեմ ի լար. չէր ի տար:** — Ոմանք կը գրեն՝ **Չեմ տար. չենք գար.** եւայլն:

---

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԲԱՅԵՐՈՒ ԱԾԱՆՑՄՈՒՆՔԸ

227. **Նախագիտելիք:** — *Ածանցումն* կամ *Ածանցք* կ՚ըսուի բառի մը ուրիշ բառէ մը յառաջ գալը. եւ յառաջ եկած բառը կը կոչուի *Ածանցեալ*: Զորօրինակ. **Ծառայ** բառէն ածանցեալ է **ծառայութիւն** գոյականը, **ծառայական** ածականը եւ **ծառայել** բայը. **ծառայել** բայէն՝ **ծառայեցնել** բայը, եւայլն: Իսկ *Արմատ* կը կոչուի սկզբնական բառն ուստի ածանցը կ՚ելլէ: — Հոս միայն բայերուն քանի մը կարեւոր ածանցմունքը դնենք:

Numérisé par CDMF (PP) - 2011

Բայերուն ներգործականէն կ՚ածանցի կրաւորականը՝ ուիլ վերջաւորութեամբ, (տես 197։) Բայց

228. — Ա. Կան շատ բայեր որոնց կրաւորականը պարզապէս իլ ալ կը վերջաւորի՝ գրաբարի ձեւով. այսպէս. ընդունիլ. բաժանեցաւ. փառաւորեցաւ. եւայլն.

229. Շատ անցեալներ կրնան առանց ու մասնը-կան կրաւորականի տեղ գործածուիլ՝ ներգործական ձեւով. այսպէս Ծաղկերով զարդարած պարտէզ մը. (փխկ. զարդարուած.) Նոր կոխած գինի. (փխկ. կոխուած.) Ոսկի բանած դիպակներ. (փխկ. բանուած.) նոյնպէս զարկած, (փխկ. զարնուած.) գոցած, (փխկ. գոցուած.) եւայլն։ (Տես երկրորդ մասին մէջ։)

230. — Բ. Շատ բայեր կրաւորականէն զատ՝ չէզոք մ՚ալ ունին, որ նոյնպէս ներգործականէն կ՚ածանցի իլ մասնիկով. ինչպէս [illegible]։ — Այդ չէզոքը չէ թէ ուրիշէն կրել կամ ըլլուիլ, այլ ինք իրմէ ըլլալ մը կը ցուցնէ։

| Ներգործ. | Չէզոք. | Կրաւոր. |
|---|---|---|
| կտրել. | կտրիլ. | կտրուիլ. |
| կոտրել. | կոտրիլ. | կոտրուիլ. |
| Այրել. | Այրիլ. | Այրուիլ. |
| Թափել. | Թափիլ. | Թափուիլ. |
| Պատռել. | Պատռիլ. | Պատռուիլ. |
| Ծռել. | Ծռիլ. | Ծռուիլ. |
| Մարել. | Մարիլ. | Մարուիլ։ |

231. Ասոնց կրաւորականները սովորաբար իբրեւ դիմազուրկ բայ կը գործածուին. այսպէս. Ջրոյն մէջը պաղլեղի կտորուանք կը թափուի. (այսինքն մարդիկ կը թափեն։) Կրի քարը կ՚այրուի կը մարուի եւ յետոյ կը գործածուի. (տես 214։)

232. *Անցողական* կ՚ըսուի բայ մ՚որ ուրիշին բան մ՚ընել տալ կը նշանակէ. ինչպէս խմցնել, (խմել տալ.) հագցընել։

233. Անցողական բայը, ինչպէս յայտնի է, ներգործականէն կ՚ածանցի՝ բային արմատին վրայ ցնել մասնիկն աւելցընելով. այսպէս.

Numérisé par CDMF (PP) - 2011

| Ներգործական. | Անցողական. |
|---|---|
| Գող-նալ. | Գող-ցընել. |
| Մոռ-նալ. | Մոռ-ցընել. |
| Հան-իլ. | Հան-եցընել. |
| Ճանչ-նալ. | Ճանչ-ցընել. |
| Կարդ-ալ. | Կարդա-ցընել. |
| Սորվ-իլ. | Սորվ-եցընել. |
| Ու-տել, (կեր.) | Կեր-ցընել։ |

234. Այս ցընել մասնիկն որ ներգործականն անցողական կ'ընէ, չէզոքն ալ ներգործական կը դարձընէ.

| Չէզոք. | Ներգործական. |
|---|---|
| Մեռ-նիլ. | Մեռ-ցընել. |
| Լմըն-նալ. | Լմըն-ցընել. |
| Յոգն-իլ. | Յոգն-եցընել. |
| Կորս-ուիլ. | Կորսն-ցընել. |
| Փրթ-իլ. | Փր-ցընել. |
| Վեր-նալ. | Վեր-ցընել. |
| Խաղ-ալ. | Խաղ-ցընել. |
| Կպ-չիլ. | Կպ-ցընել. |
| Թռ-չիլ. | Թռ-ցընել։ |

235. Ցընել մասնիկ առած բայերուն անկանոն ժամանակներն առանձին խոնարհում մ'ունին. զորօրինակ Լմըն-ցընել բայը։

Սահ. կատ. Լմըն-ցուցի, ցուցիր, ցուց, ցուցինք։
Հրաման. Լմըն-ցուր, ցուցէք։
Ընդուն. Լմըն-ցընող։ Անց. Լմըն-ցուցած, ցուցեր։

Այսպէս ալ՝ խմցուցէ. լացուցէ. վերցուց*. վախցընող. երերցուցած, եւայլն։

* Ոմանք առանց ցըն ալ կրնան խոնարհիլ. — Փրցուցէ. վերցուցէք. մեռցուցած. Թռցուցեր. — Առանց ցըն կը խոնարհին նոյնպէս Դարձընել եւ Անցընել ներգործականները. — դարձ-ուցէ. անց-ուցէ։ Դարձեալ առանց ցըն կը խոնարհին քանի մը գրաբարէ փոխառեալներ. Հագուցանել. կատ. հագուցի. հագուցեր. հագոյց. հրամ. հագո՛ հագուցէք. — Յագուցանել. յագուցի. յագոյց. յագո՛։

236. Այսպէս կը խոնարհին նաեւ Հարցընել եւ

Numérisé par CDMF (PP) - 2011

Ցուցընել, թէեւ արմատական են եւ ուրիշ բայէ ածանցեալ չեն. — Հարցուցի. ցուցուր:

237. Չէզոք բայերուն գրեթէ ամէնքն այս կերպով ներգործական կ'ըլլան. Ծծցընել. Եռցընել. Փախցընել. Դաղէցընել. Կենակցընել. Ծերացընել. Անօթնեցընել. Մօտեցընել. Ծաղկեցընել. եւայլն:

238. Իսկ ներգործականներէն՝ քիչ բայ ցընել մասնկով անցողական կ'ըլլայ. այլ անոր տեղը՝ վրանին տալ բայը կ'աւելցուի. այսպէս. Բանալ տալ. Գոցել տալ. ընել տալ. գնել տալ. Մաքրել տալ. կարել տալ. վճարել տալ. որոնց միայն տալ բայը կը խոնարհի. զորօրինակ. Բանա՛լ տուր. գոցել տուաւ. մաքրել տամ. վճարել կու տամ եւայլն: — Միայն թէ

239. Իլ վերջաւորեալ բայերը՝ թէ ցընել մասնիկ եւ թէ տալ բայ առնելու ատեն, ի գիրն ե-ի կը փոխեն. այսպէս. Սորվիլ, սորվեցընել. Դարձիլ, դարձեցընել. — Խօսիլ, խօսել տալ. Նստիլ, նստել տալ: — Բայեր ալ կան՝ որոնց վրայ պարզ ցընել կը դրուի՝ փոխանակ եցընել. ինչպէս Ողջացընել. Ցուցընել. — Վերցընել. Ողոքցընել. Ծիծաղցընել (կամ Ծիծաղեցընել:)

240. Մինչեւ հիմայ տրուած կանոններէն կը տեսնես որ հինգ դէպքի մէջ Բ լծորդութիւնը, ինչպէս նաեւ ամէն հրամայական բայ, իրեն սեպհական ի գիրն ե-ի կը փոխէ: Օրինակ առնունք տրտմիլ չէզոքն ու բանալ հրամայականը.

1. Անկատարին բացատականը. — Չէի տրտմեր. Չէին բանար:

2. Աներեւութին հոլովածը. — Տրտմելու. Բանալով. Տրտմելնիս. Բանալնիս. այսինքն երբ վրան վանկ աւելցած է:

3. Դերբայ ապառնի. — Այնչափ տրտմելիքը չէի գիտեր. Բանալիք չունի:

4. Ցընելով ածանց. — Տրտմեցընել. Խօսեցընել:

5. Տալ բայով անցող. — Նստել տալ. Խօսել տալ:

241. Տալ բայով անցողական կ'ըլլան՝ ցընել վերջաւորեալ ներգործականները որ չէզոքէ եղած են: Իսկ բուն անցողական բայերէն դարձեալ կրկնա-ան-



Numérisé par CDMF (PP) - 2011

ցողական կ'ըլլէ տալ բայով. այսինքն ուրիշի ձեռօք ընել տալ. այսպէս.

**Սորվիլ**, չէզոք. — **Սորվեցընել**, ներգործ. — **Սորվեցընել տալ**, անցողական։

**Հասկընալ**, ներգործ. — **Հասկցընել**, անցող. — **Հասկցընել տալ**, կրկին-անցողական։

242. Անցողական բայերուն կամ ցընել վերջաւորեալ ներգործականներուն կրաւորականը կ'ըլլայ՝

Ա. Ցընել վերջաւորութիւնը ցուիլ դարձընելով. այսպէս. **սորվեցուիլ. կը կերցուի. կը խմցուէր. պառկցուի. մեռցուի. վերցուեցաւ**. եւայլն։

Բ. Տալ բայով ձեւացած անցողականները կրաւորական կ'ըլլան նոյն բային կրաւորականովը. այսպէս. **ուտել կը տրուի**։

Գ. Ամէն անցողական կրաւորական չ'ունենար. այլ անոր տեղ իր ներգործականին կրաւորականը կը դրուի, որ շատերուն արդէն նոյն է. ինչպէս՝ Ճանչցընել, կրւ. **ճանչցուիլ**. գողցընել, կրւ. **գողցուիլ**. կարդացընել, կրւ. **կարդացուիլ**. (որ ճանչնալ, գողնալ եւ կարդալ բայերուն կրաւորականներն են։ — Նոյնպէս ցընել վերջաւորած ներգործականներուն՝ շատ անգամ իրենց չէզոքն է իրենց կրաւորականը։

Դ. Ցընել վերջաւորած բայերուն կրաւորականը հասարակօրէն իբրեւ միադիմի կը գործածուի՝ եզ. 3դ. դէմք. **Թոյն կը խմցուի կը մեռցուի**. այսինքն թոյն կը խմցընեն կը մեռցընեն. (տես 214։) — Այսպէս ալ կ'ըսուի կրաւորական՝ **երգեցուիլ. կ'երգեցուի**. փոխանակ՝ **երգուիլ. կ'երգուի**։

---

## ՅՕԴՈՒԱԾ. Ե.

### ԲԱՅԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԴԻՏԵԼԻՔ

---

### §. 1. *Բաղադրեալ ժամանակներ*։

243. Բայերուն ժամանակներէն ոմանք **Պարզ** են եւ ոմանք **Բաղադրեալ**։ — *Պարզ ժամանակ* են՝ որ մէկ բառով կը լմըննան. ինչպէս՝ **Տեսնել. լսեցի. գործել**.

Numérisé par CDMF (PP) - 2011

իսկ Բաղադրեալ ժամանակ՝ որ պարզ ժամանակներէն կը կազմուին՝ անոնց վրայ մէկ կամ երկու բառ աւելցընելով. ինչպէս. Լսեր է. տեսած կ'ըլլամ. ըսէ՛ որ իմանայ: — Մինչեւ հիմայ դրուած բայի ժամանակները պարզ էին. հիմայ տեսնենք բաղադրեալներն ալ:

244. Բաղադրեալ ժամանակներէն ոմանք կը կազմուին Անցեալէն. ըրած եմ. տեսեր եմ. ոմանք Ստորադասականէն. ըսէ՛ որ ըսեմ. տեսնէիր ըսէր. ոմանք ալ Աներեւութին հոլովածէն (որ է դերբայ ապառնի.) տեսնելու եմ. երթալու էիր:

245. Բաղադրեալ ժամանակներուն մեծ մասը եմ եւ կ'ըլլամ էական բայով կը ձեւանան. — որոնց նշանակութեանը համեմատ այլեւայլ անուն կու տանք:

## Սահմանական.

Յարակատար. Տեսած եմ, տեսած ես, տեսած է:
Գերակատար կամ Վաղակատար. Տեսած էի, էիր, էր:
Կրկին կատարեալ. Տեսած եղայ, եղար, եղաւ. եղանք:
Ապառնի. Պիտի տեսնեմ. կամ Պիտ'որ տեսնեմ:
Ապառնի-անկատար. Պիտի կամ Պիտ'որ տեսնէի:
Ապառնի-յարակատար Տեսած պիտի ըլլամ, ըլլաս:
Ապառնի-գերակատար. Տեսած պիտի ըլլայի:
Յարակատար անորոշ. Տեսեր եմ, ես, է. ենք, էք, են:
Գերակատար անորոշ. Տեսեր էի, էիր, էր. էինք, էիք:
Հարկադրական ներկայ. Տեսնելու եմ, ես, է. ենք:
Հարկադրական անկատար. Տեսնելու էի, էիր, էր, էինք:
Հարկադրական կատարեալ. Տեսնելու եղայ, եղար, եղաւ:
Պայմանական յարակատար. Տեսած կ'ըլլամ:
Պայմանական գերակատար. Տեսած կ'ըլլայի, կ'ըլլայիր:
Պայմանական ապառնի. Տեսնելու կ'ըլլամ, կ'ըլլաս:
Պայմանական ապառնի անկատար. Տեսնելու կ'ըլլայի:

## Ստորադասական.

Յարակատար կամ Կատարեալ. Տեսած ըլլամ, ըլլաս:
Գերակատար. Տեսած ըլլայի, ըլլայիր, ըլլար. ըլլայինք:
Ապառնի. Տեսնելու ըլլամ, ըլլաս, ըլլայ:
Ապառնի անկատար. Տեսնելու ըլլայի, ըլլայիր, ըլլար:



Numérisé par CDMF (PP) - 2011

Հրամայական.

Կատարեալ. Տեսած եղիր. տեսած եղէք։
Ապառնի. Տեսնելու եղիր. տեսնելու եղէք։

Դերբայ.

Աներեւոյթ կատարեալ. Տեսած ըլլալ։
Աներեւոյթ ապառնի. Տեսնելու ըլլալ։

Նմանապէս կրաւորականները. Տեսնուած եմ. տեսնուած էի. տեսնուեր եմ. պիտի տեսնուիմ. տեսնուելու եմ. տեսնուած ըլլայիր, եւայլն։

Նշանակութեան կողմանէ բուն յարակատարն եւ անորոշ յարակատարը փոքր տարբերութիւն մ'ունին։ Ած անցեալով շինուածը կը ցուցնէ թէ առեն մը ստուգիւ եղած է գործողութիւնը, կամ թէ՝ չեղած չէ։ Օրինակ. ինքն զմեզ տեսած ու հետերնիս խօսած է։ Տունս այրած է։ Իսկ եր անցեալով կազմուածը (եղեր մասնիկան պէս. տես վարը 253.) կը ցուցնէ թէ օտարին վկայութեամբը կը խօսուի, կամ թէ՝ յառաջ եղած բան մը դեռ հիմայ կ'իմացուի. այսպէս. ինքն զմեզ տեսեր է։ Գեղի տունս այս գիշեր այրեր է։ Ծնած օրս հայրս մեռեր է։ Քնոյս մէջ խօսեր եմ։

Բայց ած եւ եր անցեալով շինուած գերակատարներն իրարու տեղ կը գործածուին հաւասարապէս։ Հոն հասած էի. նոյն է թէ ըսես՝ Հոն հասեր էի։

246. Բաղադրեալ ժամանակներուն բացասականը կը ձեւանայ՝ երբեմն մէկ երբեմն մէկալ մասը բացասական ընելով. այսպէս.

Տեսած չեմ, կամ չեմ տեսած. Չեմ տեսեր։

Պիտ'որ չտեսնեմ, կամ չտեսնեմ պիտի, կամ չպիտի տեսնեմ։

Պիտ'որ տեսած չըլլամ, կամ չտեսած պիտի ըլլամ, կամ պիտի չտեսած ըլլամ, կամ չպիտի տեսած ըլլամ, եւայլն։

Չտեսնելու ըլլար, կամ տեսնելու չըլլար։

Տեսնուած չէի ըլլար, կամ չէի տեսնուած ըլլար, կամ չտեսնուած կ'ըլլայի։

Տեսած մի ըլլար։ Տեսնուած մի ըլլար. եւայլն։

247. Յարակատար եւ գերակատար կը շինէ Ունիմ բայն ալ ած անցեալով.— տեսած ունիմ. դիտած ունէի՞։ Այնչափ թշնամեաց դէմն ելած ունէին։

—

Numérisé par CDMF (PP) - 2011

## §. 2. Ժամանակ շինող մասնիկներ:

248. Զորս լծորդութեանց պատկերին մէջ տեսանք որ սահմանական ներկայն եւ անկատարը՝ ստորադասական ներկայէն եւ անկատարէն կ'ելլեն՝ սկիզբնին կը մասնիկն առնելով: — Այս մասնըկանս վրայ քանի մը գիտելիք կայ:

249. — Ա. Ձայնաւոր գրով սկսած բայերէն յառաջ՝ կը մասնկան ը գիրը կը թողուի կամ կը կրճատուի ապաթարց (') նշանով. այսպէս. կ'ողորմիմ. կ'ըսեմ. կ'ընէ. կ'երթային, եւայլն. (փխկ. կը ողորմիմ. կը ըսեմ եւայլն, որ անախորժ կը հնչէր:)

250. — Բ. Երեք միավանկ բայ կայ — գալ, տալ, լալ, որ կը մասնկան տեղ հին կու մասնիկը կ'առնուն. այսպէս. կու գամ. կու տամ. կու լամ. կու գային. կու տային:

251. — Գ. Հինգ բայ կայ որ երբեք կը մասնիկ չեն առնուր. եւ են՝ եմ, կամ, ունիմ, գիտեմ, կրնամ:

252. Սահմանական ներկային եւ անկատարին վերջին ծայրը կոր մասնիկ դրուելով՝ կը ցուցընէ թէ գործողութիւնը դեռ կը շարունակուի, կամ թէ հիմակ ըլլալու վրայ է. եւ նոյն է տաճկ. յօր մասնկան հետ: Օրինակ. Կը մեռնի, (տճ. եօլիւր.) — կը մեռնի կոր, (տճ. եօլիւյօր.) Կ'ելլէր, (տճ. չըքար իտի.) — կ'ելլէր կոր, (տճ. չըքայօր իտի.) բայց հիմայ գրաւորի մէջ այդ մասնիկը շատ քիչ կը բանի:

253. Եղեր (տճ. իմիշ) բառը կը դրուի յաջորդ ժամանակներուն վրայ եւ կը ցուցընէ թէ գործողութիւնն օտարին վկայութեամբը կը հաստատուի, կամ թէ յառաջ եղած բան մը դեռ հիմայ կ'իմացուի:

Սահմ. ներկայ. Կը տեսնէ եղեր. որ անկատարի տեղ ալ կը բանի. (չ'ըսուիր՝ կը տեսնէր եղեր:)
Յարակատար. Տեսած է եղեր. } — որ կատարեալի եւ
Երկտր անորոշ. Տեսեր է եղեր. } գերակատարի տեղ ալ կը բանի. (չ'ըսուիր՝ տեսաւ եղեր. տեսած էր եղեր:)
Ապառնի. Պիտի տեսնէ եղեր:
Ապռ. յրկտր. Տեսած պիտի ըլլայ եղեր:

Numérisé par CDMF (PP) - 2011

Հարկադրական. Տեսնելու է եղեր. որ աւելի բաղձալ եւ ափսոսալ կը ցուցնէ։ — Այս վերջին երեքն ալ նոյնպէս իրենց անկատարներուն տեղ կը բանին. (Հ՛ըսուիր՝ ըլլայ տեսնէր եղեր. տեսած ըլլա՛ր ըլլար եղեր, եւայլն։)

254. Նէ մասնիկը բայերուն ետքը դրուելով թէական միտք մը կու տայ անոնց, կամ՝ եթէ եւ երբ մակբայներուն զօրութիւնն ունի. զորօրինակ. տեսեր նէ. կը տեսնեմ նէ, լաւ եւս՝ տեսնեմ նէ. ըսեր ես նէ. (եթէ) չ՛ողջէր նէ. չ՛ողնէր նէ, լաւ եւս՝ չողնէ նէ, (փխկ. եթէ տեսէր կամ երբ որ տեսէր, ըսելու։) Այդ նէ մասնիկն ալ Հիմակուան մաքուր գրողները շատ չեն յաճախեր։

255. Ստորադասական ներկային եւ անկատարին սկիզբը Թող բառն աւելցնելով տեսակ մը Հրամայական կը ձեւանայ. — Թող տեսնէ. Թող տեսնէք. Թող տեսնեն. Թող տեսնէր. Թող չտեսնէ. (իբր թէ Թող որ տեսնէ։) Կամ նաեւ յետադաս՝ Տեսնէն Թող. չտեսնէր Թող։

---

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԴԵՐԲԱՅ

256. *Դերբայ*, չորրորդ փոփոխական մասն-բանի, թէ անուան եւ թէ բայի պաշտօնը միանգամայն կը կատարէ. զորօրինակ եթէ ըսեմ՝ Աշխատելէն եկայ, աշխատել բայ է՝ վաստկելու գործողութիւն կը ցուցնէ, եւ միանգամայն անուն է հոլովուած, որ նոյն էր թէ ըսէի՝ Աշխատութենէ եկայ։

Թէպէտ Դերբայը բային մէկ եղանակն ըլլալով՝ բայէն զատ մասն-բանի համարուելու չէր, բայց որովհետեւ միանգամայն անուն ալ է, Հարկ է որ քերականք իբր անունէն եւ բայէն զատ մասն-բանի՝ առանձին ճառեն Դերբայի վրայ։

257. Դերբայը չորս գլխաւոր մաս ունի. 1. *Աներեւոյթ*, Տեսնել. 2. *Ընդունելութիւն**, Տեսնող. 3. *Անցեալ*, Տեսած, տեսեր. 4. *Ապառնի*, Տեսնելիք։

* Վերջին երեքը կը կոչեն ոմանք՝ Ընդունելութիւն ներկայ. (տեսնող.) Ընդունելութիւն անցեալ. (տեսած.) Ընդունելութիւն ապառնի (տեսնելիք։)

Numérisé par CDMF (PP) - 2011

258. Դերբայ երկու տեսակ է. Գոյական դերբայ, եւ Ածական դերբայ։ (Երբեմն բայի տեղ ալ կը բանին, որ Գ մասին մէջ կը տեսնենք։)

259. Գոյական դերբայ են Աներեւոյթն ու Ապառնին, որ կը հոլովին եւ յօդ կ'առնուն. — Ձեր երգելը չիմացայ. Իմ գալս ուզեց։ Քու կանուխ հասնելէդ գիտէի։

Աներեւոյթը կը հոլովի՝

Տեսնել, տեսնելու, տեսնելէ*, տեսնելով։

Նայիլ, նայելու, նայելէ, նայելով. (տես 26։)

Պէտք որ ըլլայ՝ յոգնակի ալ կ'ունենայ. Անանկ ըղձանքներ շատ եմ տեսեր։ Այդ ուտել խմելներդ չե՞ն որ գլխէդ կը կործանեն։

* Բացառականը սովորաբար յօդով կը գործածուի

260. Ածական է ող ընդունելութիւնը. Բարկացող մարդ։ Երգ ու կաքաւ սիրող ժողովուրդ մը։ Գործ գործող մարդիկ. — եւ կը հոլովի Ա հոլովման պէս։ Յոգնակին շատ անգամ գրաբար ձեւով կ'ըլլայ՝ Բարկացողք, ողաց։

Ա լծորդութեան ընդունելութիւններէն ոմանք երբեմն գրաբարէ առնելով եցող կը յանգին՝ Գ եւ Դ լծորդ. նման. — երգեցող. ատեցող. ելլեցող. — Ինչպէս նաեւ անցեալը քիչ տեղ՝ սիրեցեալ, խաչեցեալ։

261. Ածական է ած անցեալը. — Յոգնած մարդ. Տեսած տունս. Գետնէ բռնուած ժայռեր. — Կրաւորական՝ Փոյփոյացած զաւակներ. Կարդացուած գիրքեր։ — Բաղադրեալ ժամանակներ կը կազմէ եմ եւ ըլլամ էական բայերով. Տեսած եմ. լսած ըլլամ. (տես 244, 245։) (Ած անցեալն երբեմն գոյական ալ է, եւ երբեմն բայի տեղ կը բանի. տես Գ մասն։)

262. Իսկ եր անցեալն ոչ կը հոլովի ոչ ալ մինակ կը մնայ. այլ բաղադրեալ ժամանակներ շինելու կը ծառայէ՝ եմ (եւ ոչ ըլլամ) էական բայով. Տեսեր եմ. լսեր էի. (տես 245։)

263. Լիք ապառնին միշտ գոյական է եւ յօդ կ'առնու. Ըլլալիքն յառաջուց գուշակել։ Ընելիքը չէր գիտեր։ Ընելիքս իմացան։ Գալիքէն կը վախնայինք։

Numérisé par CDMF (PP) - 2011

(Տաճկ. ըլլացողը. Եղեններէն. Ներքեներովէն.) Եղիցուք կայ. (տճ. Կերեմէ [եէմէ] վար մը։)

264. Լիք ապառնին (ոճ անցեալին պէս, 247.) բաղադրեալ ժամանակ մը կը կազմէ ունիմ բայով. Ո՛վ զինքը տեսնելիք ըլլանք։ Եթէ այսօր չյաղթուեցաւ, ա՛լ յաղթուելիք ըլլանք. (այսինքն երբեք պիտի չյաղթուի.) — որ հասարակօրէն բացասական կը գործածուի։

Ոմանք սովորած են լիք ապառնին իբր ածական ալ գործածել. Ուտելիք կերակուր. (փխկ. ուտուելու.) Խմելիք դեղայան. Ըլլալիք հրաւէրը. (265։)

Դերբայներն ամէնն ալ իրենց կրաւորականն ունին. ինչպէս բայերուն խոնարհմանց մէջ տեսանք։

265. Աներևութին սեռականը թէ բաղադրեալ ժամանակներ կը ձևացընէ. — Տեսնելու եմ, էի. և թէ իբրև ածական կը գործածուի. այսպէս. Վաճառելու երազներ. Բնակելու տուն. Տեսնելու (կամ տեսանելու) բան մը. Զովացնելու կերակուրներ։

266. Երկու ածական դերբայ ալ կայ գրաբարէ առած. — Եալ անցեալն և Լի ապառնին. այսպէս. Անցեալ տարի. Կործանեալ գահ. (այսինքն՝ անցած, կործանած.) — Սիրելի բարեկամ. (այսինքն սիրուելու.) Ողբալի վիճակ. Ամէնուն ատելի։

267. Դերբայներու կարգին կը վերաբերին տեսակ մը բառեր ալ որ բուն ինքեան գոյական անուններ են՝ բայց բայի կամ գոյական աներևութի նշանակութեամբ. որ կը կոչուին Բայանուն. այսպէս են՝ Խօսուածք, (տճ. սէօյլէյիշ, խօսիլ բայէն.) Ըմբռնոց, վազելը, (գրբր. ըմբռնել բայէն.) յոգնութիւն, (յոգնիլ բայէն.) ուսում, (ուսանել բայէն.) զարմանք, (զարմանալ բայէն.) ևայլն։

Օրինակներէս կը տեսնես որ բայանունները բայերուն արմատէն կ'ածանցին՝ վրանին փոքր յաւելուած մ'առնելով։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՄԱԿԲԱՅ

268. *Մակբայ կ՚ըսուի այն անփոփոխ մասն-բանի* (12.) *որ բայերուն կամ ածականներուն, կամ նաեւ ուրիշ մակբայի մը կերպը, տեղը, ժամանակը կը բացատրէ. (ինչպէս որ ածականը գոյականին ինչպէս ըլլալը կը ցուցընէ.) զորօրինակ. Անտեղ տրտնջել. Շուտով մոռնալ. Սաստիկ անհամբեր. Մերթ կամայ մերթ ակամայ։*

> Քերականք մակբայներն իրենց նշանակութեանը համեմատ այլեւայլ կարգերու կը բաժանեն. 1. Որակական, ինչպիսութիւն ցուցընող. 2. Քանակական, չափ. 3. Տեղական, ուր. 4. Ժամանակական, երբ. եւ 5. Հարցական, տարակուսական, ստորական, բացասական։ Մենք իւրաքանչիւր տեսակին գլուխն իրենց կարգը նշանակելէն ետքը, ուրիշ աւելի կարեւոր բաժանում ունինք ընելու։

269. Մակբայները կը բաժնուին՝ 1. Բուն մակբայներ. 2. Գոյականէ մակբայներ. 3. Հոլովեալ մակբայներ. 4. Ածականէ մակբայներ. 5. Դերանունական մակբայներ, եւ 6. Կրկնաւոր մակբայներ։

---

### §. 1. *Բուն մակբայներ:*

270. Բուն մակբայները կամ պարզ բառեր են, ինչպէս. արդէն. եւ կամ որոշ մասնիկ մը ուրիշ բառէ ածանցած. ինչպէս. մեծապէս. իշխանաբար. ոտքուանց։ — Առաւել գործածականները։

Ա. Որակական.

| | |
|---|---|
| Ի՞նչպէս իմացաւ։ | Բռնի տարին։ |
| Ի՞նչպէս դժուար է։ | Շուտ մարեցաւ։ |
| Ինչո՞ւ չտեսակցիր։ | Հետ երթալ։ |
| Ինչո՞ւ խեղճ են։ | Հայերէն խօսիլ։ |
| Հազիւ մթնցեր էր։ | Յունարէն կարդալ։ |
| Հազիւ փրծանք։ | Մէկէն առնուլ։ |
| Հազիւ չորս անգամ։ | Մէկէն կենալ։ |
| Սաստիկ տանջեց։ | Ի՞նչու կը ծեծկուիք։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

Ինչո՞ւ ես կեցեր։
Կամաւ անձնատուր եղայ։
Ակամայ սկսանք։
Կամայ ակամայ ընդունելու է։
Կամաց կը քալէր։
Ամենեւին փոյթս չէ։
Բոլորովին մոռցայ։
Բնաւ չեմ յիշեր։
Ի սպառ ջնջուեցաւ։
Աւելի կամ Եւելի ուշացան։
Աւելի կամաց։
Ա՛լ աղէկ է. Ա՛լ աւելի։
Ա՛լ կ'ուզեմ. (տճ. դահա։)
Լաւ կ'ըսես՝ ալ կը պոռայ։
Ա՛լ յոյս չկայ. (տճ. արթըգ։)
Ա՛լ չեմ սպասեր։

Այնչափ միայն լսեցի։
Մինակ մտիկ ըրի։
Սրտագին մեռաւ։
Հարկաւ վճարելու է։
Յաճախ կը հանդիպի։
Ստէպ թուղթ գրեցէք։
Յանկարծ ներս մտան։
Մէկտեղ } կը բնակին։
Միատեղ }
Գրեթէ մոռցուած էր։
Մեծապէս կը զգուշանամ։
Վերջապէս իմացուցին։
Անմիջապէս ցամքեցաւ։
Հայրաբար խրատեց։
Զօրաւոր խոցոտեցին։
Գաղտուկ ժողվուեր են։

## Բ. Տեղական։

271. Տեղական մակբայներն երկու նշանակութիւն ունին. մէյ մը ներգոյականի (տես 61. 4.) մէյ մ'ալ տրականի. այսպէս. Ո՞ւր մնացին, (տճ. նէ՞րէտէ.) Ո՞ւր հասան, (տճ. նէ՞րէյէ։) Այս երկու նշանակութիւնները մակբային քովի բայը կ'որոշէ։

Ո՞ւր դիմեցին։
Ո՞ւր թողուցիր։
Ուստի՞ եկաւ։
Ուստի՞ գիտնամ։
Ուրկէ (ասոնկէց, ո՞ր տեղէն, ո՞ր տեղաց.) անցան։

Քովերդ կ'իյնայ։
Մօտաւոր } դիտեցէք։
Մերձաւոր }
Հեռաւոր վարնուեցան։
Արտաքուստ զարդարուած։
Ներքուստ թշնամի ունէին։

## Գ. Ժամանակական։

Ե՞րբ տեսար.
Միշտ կը գտնուի։
Անկէն ի վեր զբաղած է։
Երբեմն լսելու է։
Երբեք ասելու չէ։
Մերթ զուարթ է մերթ տխուր։

Առ այժմ կէս է։
Առժամս հոս ենք։
Ուշ մնալու չէ։
Դեռ չէի լսած։
Երբ դեռ չէինք վար իջած։
Կանուխ աճապարեր է։

Numérisé par CDMF (PP) - 2011

Կանուխէն հասաւ։
Արդէն մեռած էր։
Յառաջ մենք աւետեցինք։
Յառաջագոյն լսեր էի։
Նախ պարտքդ կատարէ։
Յետոյ զղջացաւ։
Յաւիտեան պիտի թագաւորէ։

Դ. Հարցական, բացասական, եւայլն։

Ինչո՞ւ տխուր ես. (կամ ինչո՞ւ համար։)
Միթէ չէի՞ր խոստացած։
Արդեօք գիտէի՞ն, կամ Գիտէի՞ն արդեօք։
Ե՞րբ արդեօք կը դառնայ։
Գուցէ չիմացան։
Թերեւս վշտանայ։
Այո՛, այնպէս է։
Հապա՞, աղէկ գիտեմ։
Կը խառնակի, հապա՞։
Ոչ, Չէ, եկած չունի։
Ո՞չ ապաքէն դուն էիր։
Մի՛ տանիր։
Քա՛ւ լիցի, անանկ խօսք չըսաւ։
Ոչ երբեք դուրս կ'ելլէ։
Եւ ոչ դուրս ելաւ երբեք։

---

## §. 2. Գոյական մակբայներ։

272. Գոյականէ առնուած մակբայներէն տեղականներն եզակի ու յոգնակի կը հոլովին Ա. հոլովման տակ. յոգ. ալ կ'առնուն՝ մանաւանդ ներգոյականն ու բացառականը (տես 271)։ Բուն բառը (կամ ուղղականն) որ տրականի նշանակութեամբ է՝ անյօդ կը մնայ։

Ա. Տեղական։

Վեր ելան։
Վեր նայէ. (տճ. եօգարը։)
Վերը մնաց։
Վերն է մնացեր. (եօգարըդա։)
Վերէն ինկաւ։
Վար ձգեցին. (աշաղը։)
Վարը կ'աշխատէր։
Վարն ալ զէնքեր կային. (աշաղըդա։)
Վարէն թող բերեն։
Ներս յարձակեցան. (իչերի։)
Ներսը զարկաւ սպաննեց։
Ներսն էինք. (իչերդէ։)
Ներսէն աղմուկ մ'եղաւ։
Դուրս վարեցին։
Դուրս մնալ։
Դուրս ընել. (տըշարը։)
Դուրսը պտըտէ։
Դուրսն անոնց կը սպասէ. (տըշարըդա։)
Դուրսէն պաշարեցին։
Առջեւ անցնինք։

Numérisé par CDMF (PP) - 2011

Առջեւ կենայ. (էօն, էօնէ, էօնտէ։)

Առջեւէն կ'երթան։

Ետեւ նայեցաւ։

Ետեւ մնացէք. (արտայա, արտատա։)

Ետեւէն պտըտելու էր։

Դիմաց նաւեց. (գարշըյա։)

Դիմաց } մնացին. (գարշը-
Դիմացը } տա։)

Դիմացէն ակնարկեցին։

Յառաջ } անցնիլ։
Առաջ }

Ետ դառնալ։

273. Շատ մ'ալ տեղական մակբայներ կը ձեւանան տեղ եւ դի գոյական անուններով. — Այս տեղ կամ այս տեղս կամ հոս տեղս. Այն տեղ, հոն տեղ. Ատ տեղ. ատ տեղէն. հոն տեղէն. Ո՞ր տեղ, ո՞ր տեղ, ո՞ր տեղէն. Ամէն տեղ։ Կ'ըսուի նաեւ Այս տեղաց կամ հոս տեղաց. հոն տեղաց. ո՞ր կամ ո՞ր տեղաց. ամէն տեղաց. հեռու տեղաց. մօտ տեղաց. մէջ տեղ. մէջ տեղաց կամ մէջ տեղէն (կամ մէջտեղաց, մէջտեղէն.) եւայլն։ Նոյնպէս ալ՝ Ամէն դի. ամէն դիաց, այս դիաց, այն դիաց. — միշտ տեղաց եւ դիաց բառերը եզակի սեռականի՝ եւ բացառականի տեղ առնելով։

Բ. Ժամանակական։

274. Գոյականէ առնուած ժամանակական մակբայները Գ. հոլովման պէս կը հոլովին՝ եզակի թուով եւ առանց յօդի։

Այսօր գալու էին։

Վաղը կամ վաղն անձնատուր կ'ըլլան։

Երէկ չկրցան հասցընել։

Հիմայ } եկաւ։
Հիմակ }

Հերու դեռ ողջ էր. (անցած տարի։)

Առտու մարդ չկար։

Յառաջ լսէ յետոյ խօսէ։

Յառաջօրէն գուշակեց։

Միշտ յօդով կը բանի՝ Ետքը (յետոյ) զղջաց. Ետքէն կը տեսնուինք. Վերջէն ընտանեցաւ։

---

## §. 3. Հոլովեալ մակբայներ։

275. Հոլովեալ մակբայներն այլեւայլ հոլովներով ձեւացած են՝ գոյական կամ ածական անուններէ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Ա. Որոշական:

Խօսքաւ պատուիրեց:
Սիրով կ'աշխատիմ:
Փութով հասուցէք:
Շուտով բժշկեց:
Դիւրաւ կը ցրուի:
Դժուարաւ կը հանուի:
Բարով (բարեաւ) վայելէ:
Արտորնօք վեր ելան:
Երեսօք կ'ուրախանամ:

Մէջանց } վրաս յարձակե-
Մէջէն } ցաւ:
Սրտանց կ'աղաչէր. Բոլոր սրտանց կը պաղատին:
Երեսանց բարեպաշտ մէկը կ'երեւար:
Անօթի փորանց դեղ խմել:
Ծախու տալ. ծախու առնուլ. ծախու հանել:

Բ. Տեղական:

Ներսանց կը մաշի:
Դրսանց երեւցընել:
Եղեռանց պտըտելով:
Քովանց զարկին:

Մօտանց կռուեցան:
Հեռուանց նշմարեցինք:
Առաջուց ճամբայ դնելու էր:

Գ. Ժամանակական:

Առենօք ճանչուոր էինք:
Ժամանակաւ թշնամիս էր:
Օր մը օրանց ելաւ եկաւ:
Գիշերանց կոխեց մեռաւ:
Առտուանց } իմացուե-
Առաւօտանց } ցաւ:
Շուտանց գիտէինք:
Հնուց ամլորութիւն ե-ղած էր:

Պզտիկուց կրթուած:
Յառաջուց մարգարէա-ցաւ:
Հիմակուց սկսելու է:
Ի յաւիտենից սահմա-նուած է:
Ի սկզբանէ ձայն չհանեց:
Ի սկզբանէ ստեղծեց:

Քանի մը յոգնակի ալ իբրեւ մակբայ կը գործածուի: Ներքերս. Մօտերս. Անցեալներս. Յառաջները. Եղերը:

---

## §. 4. Ածական մակբայներ:

276. Կան շատ մակբայներ որ զուտ ածական ա-նուն են բայի վրայ ինկած. որոնցմէ ոմանք դարձեալ մը անորոշ յօդով մակբայ կը ձեւացընեն:

Ա. Որոշական:

Խիստ յամառեալ:
Խիստ բարձր:

Պինդ յառաջ:
Ամուր կանչեցէք:

Numérisé par CDMF (PP) - 2011

Շատ ջանացինք։
Շատջէն խմեր է։
Քիչ չյոգնեցայ։
Ծանր վարուէ։
Մանր ջարդեցէք։
Պարապ գործեր է։

Բ. Ժամանակական։

Երէկ խօսեցաւ։
Երէկոյն քնացեր եմ։
Շարունակ կռուոյ մէջ են։
Անդադար սիրտ կը մաշեցընէ։

Գ. Քանակական։

Ո՞րչափ կեցար։
Ո՞րչափ խորունկ։
Ի՞նչչափ արտմեր է։

Աւասիկ մը յօդով մակբայները։

Շատ մը կեցաւ պարծեցաւ։
Քիչ մը տարակուսեցայ։
Շատ մը կը չիջանի։
Կամացուկ մը վերուցեր է։
Խել մը փնտռելէն ետքը։
Էջ մը սպասեցուց։

---

## §. 5. Դերանուանական մակբայներ։

277. Դերանուանական կամ Դիմորոշ կը կոչենք այն մակբայներն որ ս, դ, ն դերանուանական յօդերով կազմուած են՝ երեք դէմքի համեմատ։

Ա. Որակական։

Այսպէս պատմեցին։
Այդպէս լռել չ՚ըլլար։
Այնպէս սորվեցուց։
Ասանկ հասկըցուցին։
Ադանկ խաղցուր։
Անանկ գրեցէք։
Սանկ կենայ։
(Տանկ, ռամկ. կը համարուի։)
Սանկ նանկ անցուցինք։
Սոյնպէս, Դոյնպէս, Նոյնպէս — Միացորդներն ալ։

Բ. Տեղական։

278. Դիմորոշ տեղական մակբայները դերանուանական հոլովով բացառական մ՚ունին՝ կէ յանգով. Իսկ տրականի եւ ներգոյականի զանազանութեանը համար տես վերը 271։

279. Ցուցական դերանուանց եղակի բացառականն ալ իբրեւ մակբայ կը գործածուի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Հօն վազեց։
Հօն մնաց։
Հօնկէ (Հօնկէց) անցան։
Հօդ խաւրեցին։
Հօդ ո՞վ կայ։
Հօդկէ հալածեց։
Հոն հասայ։
Հոն կը բնակէր։
Հոնկէ դառնալով։
Ասկէ ելեր։
Ադկէ փախան։
Անկէ հեռան։
Ասդին (այս դին) նայեցան։
Ասդին նստայ։
Ասդիէն եկէք։
Անդին իջան։
Անդին թառեր է։
Անդիէն շրջան ըրէ։
Այսուհետեւ կը շահիս։
Այնուհետեւ բաւական կ՚ըլլայ։
Ուսկէ ո՞վ անցաւ։
Ուսկէ ուսկէ գտնէ խօսք։
(Տըկէ, [շարժական.] ռամկ. կը համարուի։)

—

§. 6. Կրկնաւոր մակբայներ:

280. Շատ մակբայներ կրկնութեամբ կը գործածուին, ինչպէս Վեր վեր ցատքել. կամ գոյական անուն մը կրկնուելով մակբայ կ՚ըլլայ. ինչպէս Ատէն ատէն աներեւոյթ կ՚ըլլայ։

Սողեղ սողեղ շարժիլ։
Կամաց կամաց յառաջանալ։
Ոլոր ոլոր շոգին վեր կ՚ելլէ։
Կախ կախ կը պտըտէր։
Ծուռ ծուռ նայիլ։
Խոր խոր քաշուեցան։

Քիչ քիչ, Քչիկ քչիկ } մօտեցաւ։
Ծանր ծանր կը կարդար։
Մէկիկ մէկիկ* քննելու է։
Երկու երկու առջեւս հանեցին։

* Մէկիկ՝ շուտ ածական է. սակայն իբրեւ մակբայ՝ առանց կրկնութեան չի բանիր։ Այս մակբայիս տեղ ռամիկը սովորած է տաճկական ոճով ըսել՝ մէյմէկ մէյմէկ. երկ՚երկու երկ՚երկու. որ արդէն կրկնաւոր թուական ածականներ են. (122։)

Տեղ տեղ փոսեր բացին։
Ատէն ատէն կ՚երեւար։
Հատ հատ փրցուց կերաւ։
Թել թել կախուած էր։
Ոտք ոտք վար իջնալ։
Դաս դաս կ՚երգէին։
Կարգ կարգ եկան շարուեցան։

Կամ հոլովուած.

Վերէն ի վար սուզեր է։
Մէկէն ի մէկ վեր ցատքեց։
Ծայրէ (ի) ծայր, Գլխէ գլուխ } կարդացի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Քովէ-քով կեցեր են։
Դէմոցէ դէմոց խօսիլ։
Տեղն է տեղը պատմեց։
Փոխն է փոխը պահապան կեցանք։
Վաղն է վաղը | վրանիս
Վաղէ վաղ | եկաւ։
Ձեռք ձեռքէ կը պտըտէին։
Օրէ օր | կը պայծառա-
Օր առ օր | նայ։
Հիմակուան հիմայ | յայտնի չէ։
Հիմըկուան հիմայ |
Կայր գիշերայն հետեւիլ։

Ձեռքէ ձեռք անցաւ անհետացաւ։
Հետ ընկեր (հետընկեր) կը բարձրանայ։
Վեր է վերոյ մտիկ ըրի։
Մէջ ընդ մէջ կ'արթըննայ։
Դէմ առ դէմ խօսեցանք։
Տուն առ տուն ասղմնել։
Դուռ առ դուռ երգել։
Բառ առ բառ օրինակել։
Խէր առ խէր բուսած։
Եւել եւելըք կ'արտորամ։
Հողէ հող լուռելու։

281. Առնըմէ զատ կան դարձեալ շատ մը բառեր, հոլովներ ու զուգուածքներ որ մակբայի տեղ կը գործածուին, եւ կը կոչուին Մակբայակերպներ. ինչպէս.

Մէջ մ'ալ հառաչեց եւ անչնչացաւ։
Առոր վրայ ամէն մարդ իւր տեղը քաշուեցաւ։
Օր օրուան վրայ թիւը կը յաճախէ։
Ըստ ամենայնի աղբօրորդւոյն նման է։
Ըստ օրէնի, Ըստ պատշաճի վարուեցան։

Ըստ պատահման խմացայ։
Առ առաւելն երկու ժամ կը տեւէ։
Առ հարկի բերանը գոցեց։
Խելօք գործել։
Զոդելով յանձն առնուլ։
Կ'ըստոյ որ՝ չի տեսներ։
Զըստոյ թէ բան մ'ըսեն։
Կարծես թէ դիւահարեր է։
Այն ատէն եկան գացին։

Կամ որ շաղկապով. Երբ որ լսեցինք։ Քանի որ առողջ հոս են։ Մինչեւ որ ժողովուրդը ցրուի։ Այնպէս որ՝ ամէնքս ապշեցանք մնացինք։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

282. *Նախադրութիւն* կ'ըսուի այն անփոփոխ հոլովառու* մասն-բանի, (12.) որ գոյականի կամ դերանուան մը՝ իւր բային հետ ունեցած յարաբերութիւնը կը ցուցընէ. ինչպէս. Ձեզի համար աշխատեցայ: — Նախադրութեան քովի հոլովը՝ Նախադրութեան *խնդիր* կը կոչուի:

* Կ'ըսենք Հոլովառու, այսինքն քովը հոլով առնող. վասնզի նախադրութիւն մը հարկաւ հոլոված բառ մը հետ կ'ուզէ. եւ այս է նախադրութեան՝ մակբայէն ունեցած տարբերութիւնը:

283. Նախադրութիւնները կը բաժնուին, 1. Բուն նախադրութիւններ. 2. Գոյականէ նախադրութիւններ, եւ 3. Մակբայէ նախադրութիւններ:

---

### §. 1. *Բուն նախադրութիւններ:*

284. Բուն նախադրութիւնները տրական հոլով խնդիր կ'առնուն. — ոմանք յետադաս, այսինքն՝ խնդրէն ետքը. եւ քանի մը հատ նախադաս, այսինքն՝ խնդրէն յառաջ:

Ա. Յետադաս

Քեզի համար յոգնեցան: Զքեզ տեսնելու համար:
Թշնամւոյս հետ հաշտուեցայ: Ինծի հետ: Իրենց հետ:
Մարդու հետ:
Որու չափ եղար: Մեզի չափ են խօսեր:
Ձեզի չափ գիտէր: Գայլի չափ մեծ:
Ծնողաց հրամանին համաձայն:
Աշխատութեանս համեմատ:
Քեզի մօտ կը բնակէին:
Ձեզի պէս բարերար: Թռչնոյ պէս անցաւ: Երազ տեսնելու պէս: Գանձ գտածի պէս:

Բ. Նախադաս

Առանց մեզի մ'երթաք: Առանց ինծի չէր ըլլար: Առանց ընկերի: Առանց բան տեսնելու:



Numérisé par CDMF (PP) - 2011

Մինչեւ մեզի եկաւ։ Մինչեւ քեզի կը հասնի։ Անկէ մինչեւ ձեզի։ (Կ'ըսեն նաեւ մինչուան, ինչուան։)

Դէպ ի անոնց։ Դէպ ի մեզի կու գային։

Փոխանակ իւր եղբօրը։ Փոխանակ մեզի։ Փոխանակ օտարին տալուս։

Իբրեւ, իբր ամէն հոլով կ'առնու՝ իմաստին պահանջելուն համեմատ. Իբրեւ մատնիչ վարուեցար։ Իբրեւ թշնամիէ կը զգուշանամ։ Իբրեւ խթանաւ արթընցընել։

285. Ի կամ յ նախդրով շինուած նախադրութիւններ ալ կան, ոմանք բացառական, ոմանք հայցական հոլովով։

Քեզմէ ի զատ (կամ Քեզմէ զատ։)

Բաց ի վտանգներէն։

Մանկութենէ ի վեր։ Պզտիկուց ի վեր։ Շաբաթէ մ' ի վեր։ Անկէ ի վեր. (օնտան պէրի։)

Երեսդ ի վեր։ Լեռն ի վեր մագլել. (տճ. տաղտան եօխարը։)

Բերանն ի վար (ի վայր)։ Ականջս ի վար։ Գետն ի վայր նաւեցին իջան։

Օրն ի բուն։ Ձմեռն ի բուն։ Ցորեկն ի բուն։ Գիշերն ի բուն։ — կամ որ նոյն է՝

Օրն ի գլուխ։ Ձմեռն ի գլուխ։ Գիշերն ի գլուխ։

286. Առ նախդիրը նոյնպէս տրական կը շինէ՝ մարդու մը երթալու, խրկելու մօտը։

Դեսպաններուն առ թագաւորն եկած իրիկունը։ Առ Աստուած դիմել։ Պօղոսի առ Հռոմայեցիս թուղթը։

---

## §. 2. Գոյական նախադրութիւններ։

287. Գոյականէ առնուած նախադրութիւններն իրենցմէ յառաջ սեռական հոլով կ'ուզեն։

288. Գոյականէ առնուած նախադրութիւնները կրնան յօդ առնուլ՝ որոշեալ կամ դերանունական.

Վկային առջեւ։ Պարտէզին առջեւը կամ առաջը։ Քու առջեւդ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Ծառերու ետեւ: Բլրոյն ետեւը:
Գլխոյս վերեւը:
Պատին ներքեւը: Ձեր բռնութեան ներքեւն ընկճեալ:
Դաշտի վրայ: Ծովուն վրայ: Լերանց վրայ: Ձեռքիդ վրան: — Անկէ ելած է՝ Վրայօք, հոլոված: Այս խնդրոյս վրայօք:
Ծառի տակ: Պաշտպանութեանս տակը:
Քաղքի մէջ: Սրտիդ մէջը: Մեր մէջը:
Զօրաց քով: Եղբօրս քով: Աւազանին քովը:
Արեւուն դէմը նստիլ: Առտուան դէմ:
Դատաւորի դիմաց ակնածութեամբ խօսիլ: Ճամբուն դիմացը:
Եղբօրը տեղ կամ Եղբօրը տեղն ինք թագաւորեց: Քու տեղդ ես պատասխանեմ: Փախչելու տեղ՝ դէմ դնելու էր. (տճ. փոխանակ եէրէ:)

289. Առջեւ, Ետեւ բառերուն տեղ կը գործածուին նաեւ Առջի, Ետի, բայց միշտ յօդով. այսպէս. Վկայից առջին. Պարսպին առջին. Քու առջիդ: Ծառերուն ետին. Գլխուս ետին. Քու ետիդ:

290. Նախադրութիւն ձեւացընող գոյականներն Ա հոլովման տակ են, եւ ամէն հոլով ունին եզակի ու յոգնակի. այսպէս.

Ո. Հ. Քաղքին առջեւը, (չէզոքէն էօնիւ, էօնիւնիւ, էօնիւնէ, էօնիւնտէ. տես 62:)
Սեռ. Քաղքին առջեւի, (չէզոքէն էօնիւնիւն կամ էօնիւնտէքի: Ածական է. տես 169, 170:)
Բաց. Քաղքին առջեւէն:
Գործ. Քաղքին առջեւովը:
Յոգն. Քաղքին առջեւները, առջեւներուն, առջեւներէն, առջեւներովը:

Այսպէս կ'ըսուի նաեւ Դրան ետեւը: Ծառին քովէ կողովը: Դրան ետեւի կամ ետի երկաթը: Պարսպին վրայէն իջան: Գեղին մէջէն անցէք: Ձեռքին վրայովը դպչիլ: Թրին քովովը զարկաւ:

Նոյնպէս ասոնց յոգնակին. Անտառին մէջերը, ետեւները, մէջերէն, քովերէն եւայլն:



Numérisé par CDMF (PP) - 2011

291. Անհոլով են վերէ—, ներքե—, բայց ստացական յօդով կը բանին։

292. Գոյականէ առնուած նախադրութիւնները դիմորոշ կամ ստացական յօդ ալ կ'առնուն. Դէմս. քովդ. առջևը. վերևս. քովերնիս. մէջերնին. առջևնիս. քովս. առջևէդ. մէջերնէդ, եւայլն։

293. Այս նախադրութեանց եղակի սեռականէն վրանին որոշեալ յօդ դնելով ստացականներ կ'ելլեն (169, 170.) որ դարձեալ կը հոլովին եղակի ու յոգնակի. այսպէս. Տանը վրայինը, վրայինին, վրայինէն. վրայինները, վրայիններուն, եւայլն։ Նոյնպէս՝ Եղբօրդ քովինը. Պարտէզին մէջինը. Տանս առջևինէն. Ծովուն տակիններուն, եւայլն։ — Կամ պարզ ստացական յօդով. Առջևինս, քովինդ. մէջինը. վրայիններնուդ, եւայլն։ (Ըսինք, 170. թէ չըսուիր մէկ յօդով՝ առջևէ-ս. քովէ-դ։)

---

## §. 3. Մակբայէ նախադրութիւններ։

294. Մակբայներէ առնուած նախադրութիւններն իրենցմէ յառաջ բացառական հոլով կ'առնուն։

Դռնէն ներս մտիր։ Բոյնէն դուրս մնաց։
Լեռնէն վար թռաւ։ Ծառերէն վեր մագլելով։
Գլխէս է վեր։ Մէջքէն է վար։
Բլրակէն անդին։ Պատնէշէն ասդին։
Քեզմէ յառաջ հասայ. (էվվէլ։) Անոնցմէ առաջ անցայ. (էօնճէ։)
Մեզմէ ետեւ մնաց. (կէրի։) Կերակրէն ետեւ հանգչէ. (սօնրա։)
Զքեզ տեսնելէն ետքը.
Ամէն վտանգէ հեռու։
Մօրմէն գաղտուկ ճամբայ ելաւ։

295. Այս կարգի նախադրութիւններն ալ յօդ կ'առնուն եւ կը հոլովին. բայց այն ատեն բացառականի տեղ սեռական հոլով կ'ուզեն. այսպէս. Անտառին ներսերն ապաւինած։ Բանակին դուրսերն ի ժուռ կու գան։ Լեռան անդիի կողմը։

Numérisé par CDMF (PP) - 2011

296. Մօտ եւ հետ մակբայներն ալ իբր նախադրութիւն կը գործածուին տրական հոլովով.
Մեզի մօտ բանակեր էին։ Ջրի մօտ բուսած ըլլալ։
Ինծի հետ տեսնուեցան։ Որսորդներուն հետ ճամբայ ելանք։

297. Մօտ եւ հետ երբեմն սեռականով ալ կը գործածուին. Մեր մօտը. Իր հետը. Որսորդներուն հետը։ Բայց աւելի յաճախ՝ ստացական յօդով առանց դերանուան. Հետս եկուր. Հետերնին կու գայ։

---

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՇԱՂԿԱՊ

298. Շաղկապ կ'ըսուի այն անփոփոխ մասն-բանի (12) որ խօսք խօսքի կամ բառ բառի հետ կը կապէ. Արտօրաց, բայց չհասաւ. — ուր բայց շաղկապը՝ արտօրաց եւ չհասաւ բառերն իրարու հետ կը կապէ։

299. Ահաւասիկ գործածական շաղկապները.

Եւ. Ու. — Նա եւ եղբայրս. Գառն ու գայլը։
Նաեւ. Այլ եւ. — Ոչ ես միայն, այլ եւ ընկերներս։
Միանգամայն. — Նա ալ միանգամայն մտածելու էր։
Ալ, միշտ յետադաս. — Դուն ալ չիմացար։ Ձայնն ալ կտրեցաւ։ Տեսայ ալ կերայ ալ։
Կամ, կամ թէ. — Աչքը կամ ականջը։ Չկրցաւ կամ թէ չուզեց։ Կա՛մ զօրքը կա՛մ զօրավարը։
Թէ . . . թէ. — Թէ խոստացաւ եւ թէ կատարեց։
Թէ. — Հասա՞ւ թէ չհասաւ։ Տեսա՞ր թէ չէ։ Ի՞նք թէ ուրիշը։ (Ասոր տեղ կ'ըսուի ռամկօրէն՝ չէ նէ։)
Թէ. Եթէ. / Թէ որ, Եթէ որ. — Եթէ արգելեալ է, կը հրաժարիմ։ Պատմեցէք թէ գիտէք։
Թէ, նախադաս. — Թէ կը հաւնի՝ ան չեմ գիտեր։
Թէ, յետադաս. — Վճռեց թէ անարժան է։
Որ. — Հրամայեց որ սպաննեն։ Այնչափ շփոթեր էր՝ որ չլսեց։
Որ, (եթէ, երբ որ.) — Դուրս որ ելլես։ Աս որ եղաւ։
Նէ. — Հասաւ նէ. (տես 254։)

Numérisé par CDMF (PP) - 2011

Որ շաղկապով շատ ուրիշ բառեր կը ձեւանան. Ով որ. որն որ, որը որ, դերանուն (173, 174.) — Քանի որ, երբ որ, ուր որ, մինչդեռ որ, մինչեւ որ, փոխանակ որ, երա-որ, եւայլն. մակբայ (281.) — Մանաւանդ որ, բաւական որ, ինչու որ, թէ որ, եթէ որ, չէ՞ որ. շաղկապ:

Բայց. Սակայն. — Կը ծռի, բայց չի կոտրիր: Սակայն ինքն ալ ապահով չէր:

Եւ սակայն. Բայց եւ այնպէս.
Սակայն եւ այնպէս.
Ի վերայ այսր ամենայնի.
Այսու ամենայնիւ. } ([illegible])

Թէեւ. Թէպէտ, Թէպէտ եւ. — Թէեւ գիտնայ, յայտնի չ՚ըներ:

Ոչ թէ. Չէ թէ. — Չէ թէ գողնալ՝ այլ կողոպտել:

Ոչ միայն. — Ոչ միայն անօգուտ, այլ եւ վնասակար:

Չէ՞ որ. Ո՞չ ապաքէն. — Չէ՞ որ զմեզ զրպարտեցին:

Այլ. Հապա. — Դուն չես յանցաւորն, այլ քու կիրքդ:

Քան. Քան թէ. — Աւելի լայն է, քան թէ երկայն:

Մանաւանդ. Առաւել եւս. — Մարդու հետ մի թշնամանար, մանաւանդ բարեկամի հետ: Ծաղիկները քաղեցէք, մանաւանդ շուշանները. ([illegible])

Մանաւանդ որ. — Սիրով ծանօթութիւն ըրի, մանաւանդ որ բարի անունն ալ լսած էի. ([illegible])

Մանաւանդ թէ. — Մի ժողովէք, մանաւանդ թէ ցրուեցէք. ([illegible])

Իսկ, Նախադաս. — Իսկ ես ինչ ընեմ: Իսկ անոնք կարգէ դուրս մարդիկ են. ([illegible])

Եւ ոչ, Եւ ոչ իսկ. — Եւ ոչ երեսը տեսայ: Եւ ոչ իսկ երկրպագական:

Անգամ, Իսկ, միշտ յետադաս. }
Նոյն իսկ, միշտ նախադաս. } Թշնամեացն անգամ յարգելի: Դատաւորն իսկ զարմացաւ: Նոյն իսկ ծնողքը թողուցին փախան:

Արդ. Ուստի. }
Իսկ արդ, Նախադաս, } — Ճանչցէք արդ ձեր բարերարները: Իսկ արդ ո՞ւր են այնչափ պարծեցողները:

Ուրեմն. }
Ապա ուրեմն. } — Ո՞վ ուրեմն զձեզ վհատեցուց: Որդիք են, արդ ուրեմն ժառանգ ալ են:

Որպէսզի. — Որպէսզի համոզուին:

Numérisé par CDMF (PP) - 2011

Վասնզի. Ինչու որ. — Շնորհելու է, վասնզի շատ աղաչեց:
Որովհետեւ. — Որովհետեւ անփորձ է՝ սորվելու չէ:
Հապա, հարցանելով. — Հապա մեր բանա՞կն ուր էր: Հապա ո՞վ էր:
Ապա թէ. — Ապա թէ կարելի չէ՝ ձգեցէք:
Թէ ոչ. Թէ չէ. Ապա թէ ոչ. — Ապա թէ ոչ ամէնքս թրէ պիտի անցընէր:
Թող թէ. — Եւ ոչ բերան բացաւ, թող թէ շաղակրատէր.
Իբր թէ. Իբրեւ թէ. Որպէս թէ. Կարծես թէ. — Իբր թէ չէր տեսներ:
Գրեթէ. — Գրեթէ լեցուն էր:
Այսինքն. Այս է:
Գոնէ. Գէթ. — Անարգեց, թշնամանեց. բայց գոնէ չվիրաւորեր:
Զորօրինակ. Օրինակի աղագաւ. — Լեռներ կան միշտ ձիւնապատ, զորօրինակ Չիմպորասոյ:

---

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

300. *Միջարկութիւն կամ Ձայնարկութիւն* կ'ըսուի այն անփոփոխ մասն-բանի (12), որ մարդուն այլեւայլ կիրքն ու զգածմունքը կը յայտնէ, ինչպէս ցաւ, զարմանք, եւայլն:

301. Միջարկութիւններն իրենց յայտնած զգածմանցն համեմատ այլեւայլ տեսակ կը բաժնուին, եւ են.

Ուրախութեան. Ո՛հ. ա՛հ. — Ո՜հ, ա՛լ երջանիկ եմ ես:
Ցաւի եւ զղջման. Վա՜խ. վա՜յ. վա՜հ. ա՜հ. ո՜հ. ա՜խ. ափսո՜ս. աւա՜ղ. մե՜ղք. բա՜բէ. եղո՜ւկ. մեղա՜յ. — Վա՜հ սիրելի՜: Վա՜յ ինծի. Մե՜ղք քրտանցս որ թափեցի: Մե՜ղք որ, կամ Ափսոս որ չճանչցայ:
Բողոքանաց. Երանի՜ թէ. Ո՞ւր է թէ. Աստուած տայ կամ տար: — Երանի՜ թէ ստուգուէր: Ո՜ւր է թէ տեսնէի մէկ մը:

Numérisé par CDMF (PP) - 2011

Երանելու. Երանի՜. երնե՛կ. — Երանի՜ համբերողաց։ Երնե՜կ քեզի։ Երանի՜ է ձեզի։

Անիծելու. Վա՜յ։ — Վա՜յ ձեզ ապստամբներ։ Վա՜յ է գլխուն անզգամին։

Կոչական կամ կանչելու. Ո՛. ո՛վ. ա՛յ. է. հէ։ — Ո՛վ թագաւոր։ Ա՛յ անդէորդք։

Ցուցական. Ահա՛։ Ահաւասիկ. ահաւադիկ։ Աւասիկ. աւադիկ։ — Ահա՛ տեսէք։ Ահաւասիկ հասանք։ Ահաւադիկ սուտ խօսեցար։

Զարմացական. Բա՛րէ. զարմա՛նք. հա՛պա։

Խրախուսելու. Հա՛. ո՛ղէ. վա՛շ. քա՛ջ. կեցցես. ապրիս։ — Հա՛ մօտեցէք, հա՛ հասէք։ Կեցցէ՛ որդեակ, ապրի՛ [illegible]։

Ողջունելու. Բարե՛ւ. բարե՛ւ ձեզ. ողջո՛յն։

Զզուելու. Ո՛հ. գա՛րշ. պի՛ղծ. էհ։

Բարկութեան. Ա՛յ. հա՛յ։ — Ա՛յ անօպայ։ Հա՛յ չարասիրտ։

Philippe PILIBOSSIAN
1 avenue Houette
93160 NOISY-LE-GRAND

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԽՕՍՔ — ԿԱՄ ԲԱՌԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ կազմութիւնը, կամ բառերուն զատ զատ ինչպէս շինուիլը գիտնալէն ետքը՝ հարկ է գիտնալ նաեւ թէ ինչ օրէնքով զանոնք իրարու կապելու կամ համաձայնցընելու է որ խօսք մը ըլլէ։

302. Մասանց-բանի օրինաւոր գործածութիւնը կամ իրարու քով գալ կապուիլը՝ Շարադրութիւն կամ Մասանց-բանի համաձայնութիւն կ'անուանուի։

303. Այս մասանց-բանի (ընդհանուր) համաձայնութիւնը կամ Շարադրութիւնն երեք գլխաւոր մաս ունի։

Ա. Բուն համաձայնութիւն, այսինքն թէ ինչպէս երկու բառ իրարու հետ պիտի յարմարին, կամ (քերականական լեզուաւ՝ պիտի համաձայնին։

Բ. Խնդրառութիւն, այսինքն թէ որ բառ ինչ հոլով կ'ուզէ. եւ այս հոլովը խնդիր կը կոչուի։

Գ. Կիրառութիւն, այսինքն թէ այլեւայլ մասունք-բանի ինչ կերպով գործածելու է. զորօրինակ իրենց շարքը, հոլովները, ժամանակները, եւայլն։

304. Խօսքը, որ Նախադասութիւն ալ կը կոչուի, երեք գլխաւոր մաս ունի. 1. Անուն-բայի, 2. Խնդիր եւ 3. Բայ։

305. Անուն-բայի կ'ըսուի ան որ կ'ընէ կամ կ'ըլլայ։

306. Խնդիր ան է՝ ինչ որ անուն-բային կ'ընէ կամ կ'ըլլայ։

307. Իսկ բայ՝ ըրած կամ եղած գործողութիւնն է։ Զորօրինակ այս խօսքին մէջ. Յովսէփ երազ տեսաւ, — Յովսէփ անուն-բայի է. երազ՝ խնդիր, եւ տեսաւ՝ բայ։ Նմանապէս՝ Լեւոն թագաւոր եղաւ, — Լեւոն՝ անուն-բայի. թագաւոր՝ խնդիր, եղաւ՝ բայ։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

308. Համաձայնութիւն երկու տեսակ է. 1. Անուան մը իր բային հետ, եւ 2. Անուան մը ուրիշ անուան հետ համաձայնիլը։

Անուն ըսելով հոս դերանունն ալ մէկտեղ կ'առնունք, եւ ուրիշ ամէն մասն-բանի որ գոյականաբար գործածուած է։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

## ԱՆՈՒՆ՝ ԲԱՅԻ ՀԵՏ

309. Անուն մը կրնայ բայի հետ երկու եղանակաւ կապուիլ. 1. իբրեւ Անուն-բայի եւ Բայ, եւ 2. իբրեւ Բայ եւ Խնդիր։ — Այս երկրորդ բաժանումս (իբրեւ բայ եւ խնդիր) ընդհանուր համաձայնութեան մէջ զատ գլուխ մը կը կազմէ։

Վերը (305, 306.) նշանակեցինք թէ որն է անուն-բայի եւ որն է խնդիր։ Այս յօդուածիս մէջ կը ճառենք միայն բային՝ անուան-բայի հետ համաձայնութեան վրայ. իսկ բային եւ իր խնդրոյն կամ խնդրառութեան վրայ յաջորդ գլխոյն մէջ կը խօսինք։

Անուն-բային՝ բային խնդրէն որոշելու համար՝ բաւական է բային քովը ո՞վ հարցումը աւելցընել. — ո՛ր բառն որ նոյն հարցման կը պատասխանէ՝ ան է անուն-բայի։ Այսպէս. Եղբայրս օգտակար գրքեր ունի. — հարցուր, ո՞վ ունի. — պատասխան, եղբայրս. — ուրեմն եղբայրս անուն-բայի է. օգտակար գրքեր՝ խնդիր։

310. Անուն-բային միշտ ուղղական հոլով դրուելու է. ինչպէս. Ջրի մէջ ձուկեր կը լողան։ Տերեւները հովէն կը շարժին։ Տիգրան զԱժդահակ սպաննեց։ — Ուղղական են՝ ձուկեր, տերեւները, Տիգրան։

Իսկ բայն անուն-բայիին հետ համաձայնցընելու համար՝ հետեւեալ կանոնները միտք առնելու է։

311. — Ա. Բայն անուն-բայիին հետ դէմքով պիտի համաձայնի. այսինքն՝ եթէ անուն-բային առաջին դէմք է, բայն ալ առաջին դէմք դրուելու է. եթէ երկրորդ կամ երրորդ, նոյնպէս բայն ալ՝ երկրորդ

Numérisé par CDMF (PP) - 2011

կամ Երրորդ դէմք դրուելու է. այսպէս. Ես ունիմ. Դուն գտար. Ինք առնէ. Մենք մտնէինք. Դուք ողջ էք. Անոնք լսեցին։ (Չ'ըսուիր՝ Ես ունիս, դուն գտաւ, եւայլն։)

312. — Բ. Բայն անուն-բայիին հետ թուով պիտի համաձայնի, այսինքն՝ եթէ անուն-բային եզակի է՝ իւր բայն ալ եզակի դրուելու է. իսկ եթէ յոգնակի է՝ յոգնակի. այսպէս. Ես տեսայ. Դուն մտնես. Մենք խօսինք. Դուք լսէք. Անոնք լսեն։ Թշնամին յաղթուեցաւ. Թշնամիք յաղթուեցան։ (Չ'ըսուիր՝ Ես տեսանք. դուք մտնես, եւայլն։)

313. Բայց թէ որ շատ եզակիներ մէկ բայի անուն-բայի ըլլան՝ այն ատեն բայը յոգնակի կը դրուի. Դատաւորն ու խորհրդականը ծանր պաշտօն մ'ունէին։ Հայրս եւ եղբայրս գիւղ կը փնտռէին։

314. Ընտանեկան ոճով կ'ըսուի ներքեւի՝ Հայրս մայրս մեռան, եւ ես որբ մնացի։ Կը գտնուի նաեւ ընտիր գրուածոց մէջ՝ Ալ անկէ ետեւ ի սպառ փոփոխեցաւ Հրէից պատարագն ու քահանայութիւնը։ — Աւելի ամ. կը համարուի՝ յոգն. անուան-բայի եզակի բայ տալ. Բոցեր ելաւ։ Ծաղիկներ բուսեր է։

315. Եզակի անուն-բայի մը թէեւ շատ բան մէկէն ցուցընէ, բայն եզակի կը դրուի. ինչպէս. Ամ-ժողովուրդն որու՞ կը ծառայէ։ Մեր ընտանիքը պարըսպէն դուրս կը բնակէր։ Ամէն մարդ դուրս ելաւ։ Չորս օր մնացած էր մեռնելուն։ Երկու ժամ անցաւ։ Հինգ հոգի աղօթեցաւ։

316. — Գ. Երբ որ բայ մը այլեւայլ դէմքի անուն-բայիներ ունենայ, — եթէ անոնցմէ մէկն առաջին դէմքի է՝ բայը միշտ առաջին դէմք կը դրուի. Ես եւ դուն կրնանք այս ճշմարտութեան վկայել։ Մենք, դուք եւ Յովսէփ բերդին մէջն էինք։

317. Իսկ եթէ երկրորդ եւ երրորդ դէմքի անուն-բայիներ մէկտեղ գտնուին, բայը միշտ երկրորդ դէմք կը դրուի. Դուք, Մուշեղն ու Վարդանն որսի ելած էիք։ Կամ դուն կամ աղջիկդ կախաղան պիտոր ելլէք։

Numérisé par CDMF (PP) - 2011

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԱՆՈՒՆ՝ ԱՆՈՒԱՆ ՀԵՏ

318. *Անուան մը ուրիշ անուան հետ համաձայնութիւնը կրկին է. 1. Գոյական գոյականի հետ, եւ 2. Ածական՝ գոյականի հետ համաձայնած:*

---

### §. 1. *Գոյական՝ Գոյականի հետ:*

319. *Գոյական անուն մը երկու կերպով կրնայ ուրիշ գոյականի վրայ իյնալ. Ա. իբրեւ բացայայտիչ եւ բացայայտեալ, Բ. իբրեւ Յատկացուցիչ եւ Յատկացեալ:*

### Ա.

### ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

320. ***Բացայայտիչ*** *կ'ըսուի այն գոյականն որ ուրիշ գոյականի մը որն ըլլալը կը բացայայտէ կամ կ'որոշէ. անոր համար ալ այն միւս գոյականը կը կոչուի* ***Բացայայտեալ****. այսպէս՝ Զինուոր մարդ. Եփրատ գետ. Հռոմ քաղաք. ուր՝ Զինուոր, Եփրատ եւ Հռոմ բացայայտիչ են, եւ կը ցուցընեն՝ ինչ մարդ, ո՞ր գետ, ո՞ր քաղաք. իսկ մարդ, գետ, քաղաք բացայայտեալ են: Այսպէս ալ կ'ըսուի՝ Ձմեռ ժամանակ. Գիշեր ատեն. Կնիկ մարդ. Վիշապ օձ. Իշխան եպիսկոպոս. եւ մանաւանդ յատուկ անունները, Դաւիթ թագաւոր. Ամովս մարգարէ. Մուշեղ սպարապետ. Հերովդէս Գալիլեոյ կուսակալ. Յազկերտ Պարսից թագաւորը, կամ Պարսից Յազկերտ թագաւորը:*

321. *Բացայայտիչը բացայայտեալէն յառաջ կը դրուի, եւ հոլովելու ատեն ինք անփոփոխ կը մնայ, յօդ ալ չ'առնուր.* (տես 89 — 91.) *այսպէս. Զինուոր մարդու հետ կենակից չեմ եղած: Կնիկ մարդիկ: Եփրատ գետէն անցան: Անի քաղաքին պարիսպները: Նոյեմբեր ամսոյն մէջերը:*

322. Երբեմն յատուկ անուն բացայայտիչները գրաբարի ձեւով միատեղ ալ կը հոլովին բացայայտեալին հետ. Աստուած Ամովսայ մարգարէին բերնովը զԻսրայէլ յանդիմանեց:

Numérisé par CDMF (PP) - 2011

323. Գրաբար ոճով կ'ըսուի նաեւ յետադաս՝ Մարգարէն Ամովս, մարգարէին Ամովսայ։ Եկան հասան մինչեւ ի գետն Եփրատ։ — Ինչպէս կը տեսնես՝ յօդը միշտ նախադաս բառին վրայ կ'իյնայ։

## Թ.

## ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

324. Յատկացուցիչ կ'ըսուի այն սեռական հոլովն որ գոյականի մը որուն ըլլալը կը ցուցընէ. անոր համար ալ այն քովի գոյականն իրեն Յատկացեալը կ'անուանուի. զորօրինակ՝ Թռչնոյ ձայն. Ծովու եզերք. Թագաւորին բնակարանը. Հովուաց վրանները, եւայլն։ Մարդոց կեանքն ստուերի նման կ'անցնի։

325. — Ա. Յատկացուցիչն իւր յատկացեալէն յառաջ կը դրուի, միշտ անփոփոխ մնալով. այսպէս. Ծառի տերեւ. ծառի տերեւով. ծառի տերեւներ. — Թագաւորին հրամանը. Թագաւորին հրամանէն. Թագաւորին հրամաններուն, եւայլն։

326. Գրաբար ոճով սովորութիւն եղած է յատկացուցիչը յետադաս ընել. այսպէս. Փրկիչն աշխարհի. Արքայութիւն երկնից. Թագաւոր [illegible]. Որդիք աշխարհի. Որդիք Աստուծոյ. ու մէկտեղ հոլովել. Փրկչին աշխարհի. Թագաւորին Թագաւորաց։ Սրբոյն Իսրայէլի պատգամներն հնչեցուցէք լսելի. (այսինքն՝ Իսրայէլի Սրբոյն պատգամները։)

327. — Բ. Եթէ յատկացուցիչն որոշեալ է (յօդով կամ ուրիշ կերպով.) յատկացեալոյն վրայ ալ պէտք է ստացական յօդ դրուիլ. ինչպէս. Թագաւորին պատուէրը. Թռչնոյն բոյնը. Մեր ձեռքը. Եղբօրս որդին. Ծովուն եզերքը։ — Թռչնոյն բոյնէն. Եղբօրս որդւոյն. Ծովուն եզերքէն. եւայլն։ (Չ'ըսուիր առանց յօդի՝ Թագաւորին պատուէր. Թռչնոյն բոյն. եղբօրս որդի. քաղքին պահապաններ. — կամ անորոշ յօդով՝ Թագաւորին հրաման մը. Թռչնոյն բոյն մը. ծովուն խորշէ մը. գահերիցուն նամակով մը, եւայլն. ապա թէ ոչ՝ յատկացուցիչ սեռականը տրականի նշանակութիւն կ'առնու։) Ուստի՝

Numérisé par CDMF (PP) - 2011

328. Եթէ որոշեալ յատկացուցչի մ'առջեւ հարկ ըլլայ անորոշ յատկացեալ դնել, այսպէս դարձնելու է. Ծովուն մէկ խորշէն. Գահերիցուն մէկ նամակովը, կամ պարզապէս՝ Գահերիցուն նամակովը։

Սեռական հոլովը տրականէն զանազանելու դիւրին կերպն աս է. — եթէ գոյականի վրայ ինկած է՝ սեռական է, իսկ եթէ բայի վրայ՝ տրական է։ Այսպէս սեռական է՝ Ոսկւոյ նմանութիւն. Բարեկամի մը յանձնարարութիւն. տրական է՝ Ոսկւոյ նմանիլ. Բարեկամի մը յանձնեցի։ Այս կանոնէս դուրս կը մնան միայն երկու դիպուածներն որ վարը (357, 358) պիտի տեսնենք։

329. Եթէ յատկացուցիչն անորոշ է, յատկացեալին վրայ որոշիչ յօդ կրնայ դրուիլ ու չդրուիլ՝ բուն իմաստին պահանջելուն. ինչպէս. Թագաւորի հրաման կամ Թագաւորի հրամանը. Թռչնոյ բոյն կամ բոյնը. Քաղքի դռնապանները. Թշնամւոյ յետեւէ կամ յետեւէն։ — Բայց աղէկ դիտելու է որ Թռչնոյ բոյնը որոշիչ յօդով է, իսկ Թռչնոյն բոյնը՝ ստացական յօդով է։

Ըսած ենք (82) թէ գրաբար հոլովները՝ թէեւ յօդ չունենան՝ որոշեալ կրնան համարուիլ. ասոնց յատկացեալը հարկաւ յօդ կ'ուզէ (եթէ անորոշ միտք դրուած չըլլան.) այսպէս կ'ըսենք՝ Հայոց գնդերուն դրօշներն արեւուն դիմաց կը ծփէին։ Թշնամեաց երթեւեկներն սկսան յաճախել։ Գինւոյ բաժակը ձեռքն առնուլ։ Մասեաց սարքը։ Երասխայ ափունքը։

330. — Գ. Յատկացուցիչը կրնայ վայելուչ կերպով իւր յատկացեալէն ետքը դրուիլ՝ երբ մէջերնին ուրիշ մասն-բանի մտած ըլլայ. այսպէս. Ձեռուրնին մէջ մէկ սուր առած յիսնենոյ՝ բազմութեամբ դէմ ելան յաղթողին։ Ճորն է հատեր խեղճերուն, եւ օգնող չկայ։ Զատ տեղոյ մ'ալ կայ յափշտակութեան։ Ձայն մը բերնին անոյշ ելէ։

331. Յետադաս յատկացելոյն նախդիրը յատկացուցչին վրայ կը դրուի. այսպէս. Մեր գնդերն ըթշնամեաց բանակը ճեղքեցին անցան։ Կամբիւսի ու Եթովպացւոց Բոֆտոսըն ըրած պատգամաւորութիւնն անպատուեցաւ։ (Այսինքն՝ զբանակը. ու Բոֆտոսըն։)

—

Numérisé par CDMF (PP) - 2011

## §. 2. Ածական Գոյականի հետ:

332. Ածականը միշտ իր գոյականէն յառաջ կը դրուի, եւ անփոփոխ կը մնայ թէ թուով եւ թէ հոլովով. Բարձր աշտարակ. Ազնիւ գինին. Ազնիւ գինւոյն. Անոյշ ջուր. Անոյշ ջրեր, եւայլն: (Տես 89.)

333. Ուրիշ դէպքերու մէջ ալ՝ ածականը թէեւ գոյականէն բաժնուած ալ ըլլայ, միշտ անփոփոխ է. Այդ քարերը շատ ծանր պիտի ըլլան: Ինչու մեծամեծ աստղներն այդչափ մանրիկ երեւան: (Տես Ուղղական խնդիր. երես 99:)

334. Միայն յոքնակի կը դրուի ածական մը՝ երբ առանց գոյականի մնացած ըլլայ. զորօրինակ. Ընտանի անասունները միշտ մեր հետն են, իսկ վայրենիները Արարիչը մեզմէ զատեր է: Պտղոյ կողովին մէջը փտածներ ալ կային:

335. Գրաբար ոճով՝ քանի մը տեղ ածականը գոյականէն ետ կը մնայ. Աշխարհ ամենայն. Փրկիչն մեր. Եղբայր սիրելի. Աղեքսանդր Մեծն. Ներսէսն սուրբ. Ադամ գետնածին, եւայլն: Նոյնպէս Յակոբ Շմաւոնեան. Սահակ Պետրոսեան. Դաւիթ Ճերմակեան. եւ կը հոլովի՝ Յակոբայ Շմաւոնեան. Սահակայ Պետրոսեան, եւայլն:

Ասկէ զատ կ'ըսուի՝ Այր մը տեսայ ձեան պէս ճերմակ: Ճամբու վրայ սայլեր գտանք յարդով լի: Սեղան մը թագաւորի արժանի:

Այսպէս կ'ըսուի՝ Վեց ժամ ամբողջ. Գաւաթ մը լեցուն:

336. Քանի մը տեղ գրաբար ոճով ածականն իր գոյականին հետ մէկտեղ կը հոլովի՝ նախադաս կամ յետադաս. այսպէս. Մարգարէք հոգւով սրբով խօսեցան: Մեծին Ներսիսի օրերն Հայաստան բարեկարգ էր: Ամպարշտին Անտիոքոսի արիւնը շները լափեցին:

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

337. *Խնդրառութիւն* կ'ըսուի ընդհանուր համաձայնութեան այն մասն որ կը սորվեցընէ թէ որ բառն ինչ խնդիր կ'ուզէ։

338. *Խնդիր* կ'ըսուի այն հոլովն որ գլխաւոր խօսքին կիսկատար միտքը կ'ամբողջացընէ. (տես վերը 306։) զորօրինակ, թէ որ ըսեմ՝ Ես լսեցի, դուն մնար, — դեռ անկատար միտք մը կու տայ՝ որ իր խնդրովը պիտի ամբողջանայ. այսպէս՝ Ես ձայն լսեցի. դուն պարտէզ մնար. — Հոս ձայն եւ պարտէզ խնդիր են։

Խնդիրը, ինչպէս նաեւ անուն-բային եւ բայը, խօսքին էական գլխաւոր մասն է. բայց թէ՛ բայը եւ թէ նոյն իսկ գլխաւոր խնդիրն երկրորդական խնդիրներ ալ կ'ունենան՝ իմաստն աւելի ամբողջացընելու համար. զորօրինակ եթէ վերի օրինակներուն վրայ աւելցընեմ՝ Ես երէկուց ձայնը լսեցի. դուն մեծ տանէն դրացւոյն պարտէզը մնար, — երէկուց երկրորդական խնդիր է ձայն գլխաւոր խնդրոյն. մեծ տանէն երկրորդական խնդիր է մնար բային, եւ դրացւոյն երկրորդական խնդիր է պարտէզ գլխաւոր խնդրոյն։ — Ասկէ կ'իմանաս որ յատկացուցիչն ալ իր յատկացելոյն խնդիրն է, ինչպէս բացայայտիչը բացայայտելոյն, եւ ածականը գոյականին ամբողջացուցիչ։ — Ուստի՝

339. Խնդիր կրնան առնուլ

1. Բայերն ու 2. Դերբայները, որ հիմայ պիտի տեսնենք. (Յօդ. Ա եւ Բ։)

3. Գոյականները. (տես Բացայայտիչ եւ Յատկացուցիչ, 320 եւ 324։)

4. Ածականները, որ այս գլխոյս մէջ (Յօդ. Գ.) կը տեսնենք, եւ

5. Նախադրութիւնները, որոնց խնդրառութիւնն Ա մասին մէջ տեսանք։

Numérisé par CDMF (PP) - 2011

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ԲԱՅԵՐՈՒ ԽՆԴԻՐ

340. Բայերու խնդիր գլխաւորաբար երկու տեսակ է. 1. խնդիր-սեռի եւ 2. խնդիր-բնութեան։

341. — Ա. *Խնդիր-սեռի* այն բնական խնդիրն է՝ որն որ ներգործական կամ կրաւորական բայ մը ուղղակի եւ ի հարկէ կ'ուզէ. ինչպէս՝

Ներգրծ. խնդիր-սեռի. — Կայէն զԱբէլ սպաննեց։
Կրաւոր. խնդիր-սեռի. — Աբէլ Կայէնէն սպաննուեցաւ։

Օրինակէս կը տեսնես որ խնդիր-սեռին նախադասութեան գլխաւոր եւ էական մասն է։

342. — Բ. *Խնդիր-բնութեան* այն պարագական խնդիրն է՝ որ անուղղակի հայեցում մ'ունի իւր բային, եւ խօսքին իմաստին համեմատ որեւիցէ հոլով կրնայ դրուիլ. ինչպէս Կայէն զԱբէլ փայտով կամ քարով սպաննեց։ — Կայէն զԱբէլ իւր նախանձէն սպաննեց։ — Կայէն զԱբէլ դաշտի վրայ սպաննեց։ Ես այդ մատանին ոսկիով գնեցի։ — Ես այդ մատանին եղբօրմէդ գնեցի, եւայլն։

—

### §. 1. Խնդիր-սեռի։

343. Խնդիր-սեռի կ'առնուն ներգործական եւ կրաւորական բայերը։

344. Ներգործական բայերուն խնդիր-սեռին հայցական է. Հռոմայեցիք զԿարթագէն առին։ Մրրիկը շատ ծառեր փրցուց։ Հրեայք զՅիսուս խաչեցին։ Զօրավարդ Արտաշէս անիծեց։

345. Կրաւորական բայերուն խնդիր-սեռին բացառական է. Երուսաղէմ Հռոմայեցւոցմէ առնուեցաւ։ Շատ ծառեր մրրկէն փրցուեցան (կամ փրթան։) Յիսուս Հրէիցմէ խաչուեցաւ. Արտաւազդ Արտաշէսէն անիծուեցաւ։

346. Օրինակներէս կը տեսնես որ եթէ ներգործական բայ մը կրաւորականի դառնայ, ներգործականին անուն-բային՝ կրաւորականին բացառական



Numérisé par CDMF (PP) - 2011

խնդիր-սեռի կ'ըլլայ. եւ ներգործականին հայցական խնդիր-սեռին՝ կ'ըլլայ կրաւորականին անուն-բայի։

Իմանալու համար թէ արդեօք բացառական մը խնդիր-սեռի է թէ խնդիր-բնութեան՝ այս կանոնը միայն առնելու է։ — Եթէ կրաւոր բային բացառականը ներգործականի մէջ անուն-բայի եր, ըսել է թէ խնդիր-սեռի է. իսկ եթէ չէ՝ խնդիր-բնութեան է։ Զօրօրինակ. Երուսաղէմ Հռոմայեցւոց առնուեցաւ. հոս Հռոմայեցւոց խնդիր-սեռի է առնուեցաւ բային, (որովհետեւ ներգործականին մէջ անուն-բայի եր. Հռոմայեցիք զԵրուսաղէմ առին։) — Ասոր հակառակ երբ որ ըսէի՝ Երուսաղէմ Հռոմայեցւոց ձեռքէն առնուեցաւ, նոյն բացառականը յանկարծ կը դադրէր խնդիր-սեռի ըլլալէն, եւ կ'ըլլար խնդիր-բնութեան. (վասնզի ներգործականին մէջն ալ նոյնպէս բացառական եր. ԶԵրուսաղէմ Հռոմայեցւոց առին։)

Բայց կան քերականներ որ միայն ներգործականին հայցականը խնդիր-սեռի կ'անուանեն, իսկ ուրիշ ամէն հոլովները կը կոչեն խնդիր-բնութեան։

347. Քանի մը ներգործական բայեր հայցականի տեղ տրական հոլով խնդիր-սեռի կ'առնուն. եւ են՝ յաղթել, աղօթել, օգնել, ողորմիլ, դիմել, խնայել, հետեւիլ, զարնել, նայիլ, եւայլն. այսպէս. Աղեքսանդր Պորոսին յաղթեց։ Ճպուռը կ'աղաչէր մրջիւնին որ ցորեն փոխ տայ։ Կ'ուզէ՞ք որ ձեզի օգնեմ։ Հինգ ամիս իրեն սպասեցինք։ Բաղաամ կը զարնէր էշուն՝ թէ ինչու չես քալեր։

348. Երբեմն չէզոք բայերն ալ հայցական խնդիր-սեռի կ'առնուն — հասարակօրէն նոյն բային արմատը կամ բայանունը. Անկում մ'ինկաւ՝ որ տիեզերք սասանեցուց։ Լացք մը լացաւ՝ որ աշխարհ արիւն լացուց։ Ալ հիմայ յաւիտենական քունը կը քնանայ։ Նոյնպէս կ'ըսուի՝ Ձեզի կու լամ եւ քու յանցանքներուդ։ (ժամը) ութը հինգ րոպէ անցեր է. (տե՛ս. ահեկին դէմ կեցիր։) Շատ բան պարտական եմ քեզի։ Նոյն իսկ կեանքս իրեն պարտական եմ։ Եթէ հիւանդ է, միրգ ու հաց կերակրէ։

Արիւն քրտնիլ. Ես ճամբաս կ'երթամ.
Արագ շնչել. Ծովեր անցնիլ.
Երկայն ճամբայ քալել. Զքեզ անցանք։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

## § 2. ԽՆԴԻՐ-ԲՆՈՒԹԵԱՆ:

349. Խնդիր-բնութեան ամէն հոլով կրնայ դրուիլ՝ իմաստին համեմատ. (342.)

350. Ամէն տեսակ բայ (ներգործ. կրաւոր. կամ չէզոք.) կրնայ մէկ կամ աւելի խնդիր-բնութեան առնուլ՝ այլեւայլ հոլովով:

ՈՒՂՂԱԿԱՆ խնդիր-բնութեան կ'առնուն՝

351. — Ա. Էական բայերը: Մարդս մահկանացու է: Ճամբաները փոշեթաթաւ էին: Ռուբէն Նախարար եղաւ: Նախանձոտն ամէնուն ատելի կ'ըլլայ:

Այս ուղղական խնդիրն անուն-բայէն զանազանելու համար ոմանք Երկրորդ ուղղական կոչած են:

352. — Բ. Ըլլալ, կոչուիլ, կարծուիլ, ճանչցուիլ, դրուիլ, ընտրուիլ եւ ուրիշ կրաւորականներ: Երկրիս ամէնէն մեծաւոր աստղն արեգակ կը կոչուի: Շատերն որ Եւրոպիոյ կը կարծուէին եւ մեզի օգնական տրուեցան, մեր առաջին մատնիչներն եղան: Այսպէս ալ՝

| | |
|---|---|
| Թագաւոր դրուիլ. | Հովիւ ընտրուիլ. |
| Բարերար ճանչցուիլ. | Զինուոր գրուիլ: |

353. — Գ. Շատ չէզոք բայեր: Յիսուս, ամէն զանձուց արարիչը՝ աղքատ ծնաւ: Աբրահամ ծեր մեռաւ: Աւազակաց ձեռքէն մերկ փախան: Զաքարիա ինն ամիս համր մնաց: Ողջ գերի գնաց, կամ գերի ընկաւ: Վտանգաւոր պատերազմէն յաղթող ելաւ: Այն երկրին մարդիկը զինաւոր կը ծնանին: Նոյնպէս ալ

| | |
|---|---|
| Արատ կտրիլ. | Ծաղիկ կը հատի. |
| Պզտիկ կենալ. | Զօրս տրամ կու գայ. |
| Կաղ մնալ. | Խօսքդ ծանր կու գայ: |

354. Ուղղական խնդիրն՝ եթէ ածական է, միշտ եզակի կը մնայ, (տես 333.) եթէ ոչ մասնաւոր կերպով մը որոշուած ըլլայ. զորօրինակ. Որո՞նք են անարժան: Իսկ եթէ գոյական է, երբեմն եզակի կը դրուի, եւ երբեմն յոգնակի՝ ըստ իմաստին պահանջելուն. Աս սեւ մարդիկն որ կը տեսնես աւազակ են: Այդ խօսած



Numérisé par CDMF (PP) - 2011

ներբողներդ աւելի գողտր են քան թէ գովեստ։ Առաքեալներն եկեղեցւոյ հիմունքն եղան։ Այսպիսի դիւցազունք էին մեր նախահայրերը։ Այն տեսածներդ Սիբերիոյ ողջեր են։

355. ՀԱՅՑԱԿԱՆ խնդիր-բնութեան միայն այն բայերը կ՚առնուն՝ որոնց կրաւորականն ուղղական խնդիր-բնութեան կ՚ուզէ բոլինք. (352.) այսինքն՝ ըլլալ, անուանել, ընտրել, դնել, տալ, եւ այլն։ Մէջերնէն ծերագոյնն իրենց իշխան կ՚ընտրէին։ Դուն քու եղբայրդ հէքիմո՞ն անուաներ ես։ Զիս իրենց պատուաւոր կ՚ուզէին դնել։ Վաթսունուիրեք ձիաւոր գերի բռնեցին։ — Օրինակներուս մէջ բացայայտ կը տեսնես որ ծերագոյնը, եղբայրդ, զիս, ձիաւոր, եւայլն, հայցական խնդիր-սեռի են. իսկ իշխան, հէքիմոն, պատուաւոր, գերի, եւայլն՝ հայցական խնդիր-բնութեան։ Նոյնպէս կ՚ըսուի՝ Թագաւոր դնել. Մերկ փախցընել. Թշնամի կարծել։ Այսպէս ալ հետեւեալ ոճերը. (փակագծի-ւորոշեալները խնդիր-սեռի են։)

(Մէկը) խաղք ընել.
(Խօսքը) կարճ կտրել.
(Ոչխար) ընծայ տանիլ.
(Շատ ստակ) ծախք ընել.
Յանձնեցիր հանել, կամ
Ցիրուցան ընել.

(Բան մը) ջղակոտոր հանել.
(Բան մը) մէկուն շնորհք ընել.
(Ջուրը) պաղ խմելու է.
(Ի՞նչչափ բան) պարտք ունիս։

Ասոնց նման են հետեւեալ անորոշ հայցականներն ալ. Տես սա տղան որ գինոտոր են հագուցեր։ Այդ կտաւն երեք շաբթ ջուր լուալու է որ ճերմկի։

Լատիններէս յայտնի է թէ երբ որ բայը չէզոքի կամ կրաւորականի դառնայ՝ հայցականը կ՚ըլլայ ուղղական խնդիր-բնութեան, այսպէս. Ընծայ երթալ կամ տարուիլ. Ցիրուցան ըլլալ. Ջղակոտոր ելլել։

356. Հայցական խնդիր-բնութեան միշտ անորոշ կը մնայ, այսինքն առանց որոշեալ յօդի. բայց կարծել, ենթադրել բայերուն քով երբեմն հարկ կ՚ըլլայ յօդ ալ դնել, մանաւանդ ստացական. այսպէս. Զինքն իւր խօսքերէն դատելով՝ թշնամի կարծեցի։ Զքեզ

Numérisé par CDMF (PP) - 2011

ալ իրենց ծառան կարծեր են։ Զիս նոյն առտուընէ կարծեր են՝ որ զմեզ լաւ հալածեց։

ՍԵՌԱԿԱՆ հոլովը բայի խնդիր չէ՝ այլ անուան, (տես 328, ծան.) բայց երկու դէպքի մէջ (հասարակօրէն էական բայի) խնդիր բնութեան կրնայ ըլլալ։

357. — Ա. Մէկուն ըլլալ կամ վերաբերիլ ցուցնելով։ Բոլոր իր ստացուածքը թերբոլինեան եղաւ։ Այս կողմը կը պահանջէր որ իշխանութիւնը ամէնուն ըլլայ։ Հօրն ունեցածն որդւոյը կը համարուի։

Անձնական դերանուանց սեռականը ստացական յօդ կ'առնու. իմս էր. մերն է. քուկդ ըլլայ. ձերը կ'ըլլար. որո՞ւնն էր։ — Բայց ասոնք ստացական ուղղական են, կամ սեռականէ-ուղղական՝ որ յաճախ տեսանք։

Կ'ըսուի նաև տրականով՝ ինծի կ'ըլլայ. մեզի ըլլայ. անոնց եղաւ։ Բովանդակ ժառանգութիւնը մեզի պիտի ըլլար։ Յովսէփին պիտի ըլլայ։

Բայց ռամկական ձև է ստացական յօդով՝ Եղբօրս մէկ որդին կայ. շատ գրքերը կայ. Մեր ալ մէկ կառքը կայ. փոխանակ՝ Եղբօրս որդի մ'ունի. շատ գրքեր ունի. մենք ալ կառք մ'ունինք։

358. — Բ. Տարիք ցուցնելու համար։ Տասնևերկուտարեան էր Սողոմոն՝ երբ գահն ելաւ։ Իր որբերէն մէկը հինգ տարեան է, մէկալը հազիւ երկու ամսական։

ՏՐԱԿԱՆ խնդիր-բնութեան կ'առնուն բայերը։

359. — Ա. Երբ հարցուի թէ որո՞ւ, ի՞նչ բանի. (տճկ. քիմէ՞, նէյէ՞։) Ներեցէք անոնց որ զձեզ վշտացուցեր են։ Որո՞ւ բարկացար կամ զո՞վ բարկացուցիր։ Կիւրոս մեծ բարերարութիւն ըրաւ Հրէից, և իրենց ազատիչ եղաւ. (սեռական կ'ըլլար՝ իրենց ազատիչն եղաւ։) Ըսէք ինծի, որո՞ւն վկայ ըլլամ։

360. — Բ. Այս ընդհանուր կանոնիս տակն են ամէն շարժում ցուցընող բայերը՝ երբ որ մէկու մը կամ բանի մը երթալ, գալ, մօտենալ, խրկել, կանչել և այլն ցուցընեն*. (տես վարը 364, տեղ մը երթալ, գալ.) զորօրինակ. Նահապետներն եկան Յովսէփայ, և պատմեցին թէ Յովսէփ կենդանի է և զինքը իրեն կը կանչէ։ Փարաւոն զեգիպտացիքն Յովսէփայ խրկեց որ հաց տանեն: Գայլը մօտեցաւ գառնուկին, երբ դեռ

Numérisé par CDMF (PP) - 2011

անմեղը խոնարհած ջուր կը խմէր։ Ինծի եկէք, եւ մի երթաք այդ անծանօթ օտարականներուն։

* Շարժում ցուցընող բայերուն համար տես նաեւ (286) րդ նախադրութիւնը։

361. Այսպէս ալ աներեւութի տրականը. Այն ահաւոր երեւոյթը տեսնելու գնացեր էի։ Լսելու եկեր է։ Իւր որդւոցմէ մէկը՝ բանակին մէջ ծառայելու խրկեց։

362. Ըսել բային (երբ անուանել կը նշանակէ՝) հայցական խնդիր-սեռի տալու տեղ հասարակօրէն տրական խնդիր-բնութեան կը տրուի. ինչպէս. Ասոր ի՞նչ կ՚ըսեն. (այսինքն՝ Զասիկայ ի՞նչ կ՚անուանեն։) Գեղ մը հասանք՝ որուն տեղացիք Գոմկունք կ՚ըսեն։ Այդ տեսակ շողոքորթեան յափշտակութիւն կ՚ըսենք։ Ահա ասոր խելացութիւն կ՚ըսեն։

363. Քանի մը բայեր (մանաւանդ գնել, վաճառել,) յատուկ կերպով տրական հոլով խնդիր-բնութեան կ՚առնուն. Հինգ դահեկանի վաճառել։ Քսան դահեկանի կու տային։ Հարիւր դահեկանի գնեցի։ Ասոր գինը յիսունի կը զարնէ։

364. ԱՆՆԱԽԴԻՐ ՏՐԱԿԱՆ խնդիր-բնութեան կ՚առնուն շարժում ցուցընող բայերն՝ երբ որ տեղ մը երթալ, գալ եւայլն նշանակեն. զորօրինակ. Իսահակ իրիկուան դէմ դաշտ ելաւ որ զբօսնու։ Այս խօսքը զօրաց ուղղելէն ետքը՝ դարձաւ իւր վրանը մտաւ։ Կը սպասէին որ վիշապն իւր բոյնը քաշուի. (այսինքն՝ ի դաշտ. յիւր վրանն։) Այսպէս ալ՝ Տուն դառնալ. Քաղաք մտնել. Աջ կամ ձախ դառնալ. Ծով իյնալ. Տուն հրաւիրել, եւայլն։

365. Աննախդիր տրական են հետեւեալ խնդիր-բնութեանները. Զմանուկն տաքը զարկաւ տարաւ։ Դեռ խօսք մը չէր բերանը առած։ Ձեռքը ձիթենւոյ ոստ մը տուին։ Գլուխը կտաւ մ՚առած։ Մատը մատանի անցուցին։ Աջ նայէ ու կը գտնես։ Բոլոր երկրին բնակիչները չորս ցեղ կը բաժնուին։ Երկու մաս բաժնուեցան։

Նոյնպէս հետեւեալ ոճերը.

Ձեռք ձգել, բերել. Ցոյց տալ. (ցուցընել.)
Ձի կամ կառք հեծնալ. Կուլ տալ. (կլլել.)

Numérisé par CDMF (PP) - 2011

Եփ ելլել, եփ հանել.
Երեւան ելլել, հանել.
(Արեւը) մարը մտնել,
կամ մարը դառնալ.
Բերան առնուլ.
Միտք առնուլ.
Ձեռք տալ. (մատնել.)
Ձեռք առնուլ.
Ոտք ելլել, ոտք հանել.
Գլուխ ելլել. (լմննալ.)
Գլուխ հանել. (լմնցնել.)
Փոխ առնուլ, փոխ տալ։

Ցանկ. ոճ է ատացական յօդով՝ Դժուարը (դժարը) գալ. Դժուարս կու գայ. (Կ-Պ-Մ Նէէ։)

366. Նմանութիւն ցուցընող բայերը երբեմն աննախդիր տրական խնդիր կ՚առնուն։ Այսպէս. Մօմ կը նմանի. Թագաւոր կը նմանի. Տղայ մ՚որ խոզէն կը նմանի. (փոխանակ՝ մօմի, խոզի,) Պաղէն սառեր քար է դարձեր։

367. ԱՆՆԱԽԴԻՐ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ խնդիր-բնութեան կ՚առնուն բայերը՝ երբ հարցուի թէ ո՞ւր, ի՞նչ բանի մէջ, (տճ. նէրէտէ, նէտէ՞.) կամ ե՞րբ, ի՞նչ ատեն, (տճ. նէ՞ զաման։) Սաբինացիք Լատինի կողմերը կը բնակէին։ Ամենէն զարհուրելի գազաններն Ափրիկէի անապատները կը գտնուին։ Սկսած շէնքս յուսամ որ այս տարի կը լմննայ։ Նոյն օրերը Հրէաստան մարգարէ մը կար Յովնան։ Այսպէս ալ՝ Մէջքը գօտի ունէր։ Ճակատը նիշ մ՚ունի։ Ձեռքը ցուպ կը կրէր։

368. Բայց շատ անգամ խօսքն աւելի որոշ կ՚ըլլայ մէջ կամ վրայ նախադրութիւններով։ Մանուկն Յիսուս Երուսաղէմ՝ տաճարին մէջ գտնուեցաւ։ Աղեքսանդր Բաբելոնի մէջ մեռաւ։ Քաղքին մէջ փակուած մնացինք։ Ճակտին վրայ նիշ մ՚ունի։ Գետնի վրայ նստիլ։
Նոյնն իմացիր Աննախդիր տրականի վրայ ալ. Ծուղակի մէջ մտնել։ Ծառի վրայ ելլել. (փխկ. ծուղակ մտնել. ծառ ելլել։)

369. ԲԱՑԱՌԱԿԱՆ խնդիր-բնութեան կ՚առնուն բայերն՝ երբ հարցուի թէ որմէ՞, ի՞նչ բանէ, ո՞ր տեղէ. (տճ. քիմտէ՞ն. նէտէ՞ն. նէ՞րէտէն։) Եգիպտոսէն ելեր։ Ձեռմէ առինք։ Թշնամւոյ ձեռքէն փրծար։ Տանիքէն ինկեր է։ Բանտէ փախեր էին։

Այս բացառականը շփոթելու չէ խնդիր-սեռի բացառականին հետ, որ վերը (346. ծան.) տեսանք։ Աւասիկ մէկ երկու օրինակ ալ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Խնդ. եզակ. Բորոտը Քրիստոսէն բժշկուեցաւ։
Խնդ. յոգն. Բորոտներ Քրիստոսէն բժշկուեցան։
Խն. ա. Զաւակս կը ճանչնայ եւ անկէ կը ճանչցուի։
Խն. բ. Խաբեբայ ըլլալը անկէ կը ճանչցուի։

370. Բացառական հոլով խնդիր-բնութեան կ'առնուն փախչիլ, զատուիլ, խոտորիլ, ազատիլ, յառաջանալ, եւայլն։ Ով որ կրնար զիրենք այնպէս չարաչար ծեծկռտելէն խափանել։ Աշխարհքէնէ կամ Աշխարհէն մի ձանձրանար. Այսպէս ալ՝ Պօղոսէն հրաժարիլ։ Գերութենէ ազատիլ։ Մսէ ու գինիէ ժուժկալել.

371. ԳՈՐԾԻԱԿԱՆ հոլով խնդիր-բնութեան կ'առնուն բայերն երբ հարցուի թէ ինչո՞վ. (տճ. նէ՞ իլէ։) Ինք իր բերնովը խոստովանեցաւ թէ մահապարտ է։ Հրացանով զարկաւ մեռցուց։ Օտարին ստակովը ծախք ընել։

Մարդու եւ անձանց կամ շարժում ունեցող իրաց գործիականին համար հետեւեալ կանոնները միտք առնելու է։

372. — Ա. Եթէ անձը գործողութեան գործիքն է, (այսինքն՝ երբ գործողութիւնն անոր ձեռօքը կ'ըլլայ,) միշտ այն ատեն գործիական հոլով կը դրուի։ զորօրինակ. Թարգմանով խօսեցայ։ Ծառայով խաւրեցէք։ Զօրքով կը պարծի հայրենիքը։

373. — Բ. Իսկ եթէ անձը գործողութեան ընկերն է կամ գործակից, (այսինքն եթէ ան ալ միեւնոյն ատեն նոյն գործողութիւնը կը կատարէ,) այն ատեն տրականով հետ նախադրութիւնը դնելու է. Թարգմանին հետ խօսեցայ։ Ծառային հետ մշակներն ալ ճամբայ դրի։ Ձեզի հետ ես ալ կը պարծիմ։

Այսպէս՝ զատ իմաստ կու տայ Նաւով երթալ. եւ Նաւուն հետ (քովէն) երթալ. Ձիով կամ կառքով երթալ, եւ Ձիուն հետ, կառքին հետ երթալ։ — Ահագին դելփիններու բազմութիւն մը մեր Նաւուն հետ կ'երթար։ Հարիւրաւոր թռչուններ կառքին հետ մինչեւ առաջին օթեվանն հասան։ — Երկուքը մէկտեղ կը տեսնես յաջորդ օրինակներուս մէջ. Յովսէփ իր եղբօրը հետ Թարգմանով կը խօսէր։ Գայլերու հետ շներով կռուեցանք շատ ժամ ամբողջ։ Ժամանակաւ ամէն բան կը փոխուի. մենք ալ ժամանակին հետ։
Տաճկերէն լեզուն այս զանազանութիւնը չունի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Հոլովներուն ուրիշ գիտելիքները տես վարը Գլ. Գ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒ ԽՆԴԻՐ

374. Դերբայները նոյն հոլով խնդիր կ'առնուն ինչ որ իրենց բայը կը պահանջէ. այսպէս. Թռչուն որսալ. Թռչուն որսացող: Ներում ուզել. ներում ուզող: Պատուոյ բաղձալ. պատուոյ բաղձացող: Բանտէ փախչիլ. բանտէ փախած մարդ: Նոյնպէս կ'ըսենք՝ Պտուղ բերող ծառ. Աշխարհէ տեսած մարդ. Դերձակին խրկուելու հաշիւները. Քեզի գալու թղթերը: Ձեզմէ առնելիք չունէի: Ձեզ տեսնելիքս եկաւ:

375. Ընդունելութիւն-ներկան եթէ իբրեւ բայ առնուի՝ իրեն բնական հոլովը խնդիր կ'ուզէ. իսկ եթէ իբրեւ գոյական անուն առնուի՝ խնդիրը կ'ըլլայ սեռական հոլով յատկացուցիչ, եւ ինքն անոր յատկացեալը կ'ըլլայ. այսպէս.

Ընդուն. իբրեւ բայ. — Զտիեզերս ստեղծողը. Զմեզ փրկողը. Ինծի հետեւողները:

Ընդուն. իբրեւ անուն. — Տիեզերաց ստեղծողը. Մեր փրկողը. Իմ հետեւողներս:

Օրինակներէս կը տեսնուի որ այս դէպքիս մէջ ընդունելութիւնը յօդով է

376. Ըսինք՝ իբրեւ գոյական գործածուելով. վասնզի եթէ իբրեւ ածական առնուի ընդունելութիւնը՝ իրմէ ետքը գոյական մ'ունենալով, (260.) այն ատեն նախընթաց խնդիրը հայցական կը մնայ. ինչպէս. Ագարակու ոչխարը լափող շները. (եւ ոչ՝ ոչխարին լափող:) Անտառին մէջ փայտ կտրող գեղացւոյն հանդիպեցանք. (եւ ոչ՝ փայտի կտրող:) Պտուղ բերող ծառ. (եւ ոչ՝ պտղոյ:)

Բայց ասկէ՝ երբեմն հայցական խնդիր վայելուչ կ'ըլլայ եւ երբեմն սեռական, որ միայն վարժութեամբ կրնայ սորվուիլ:

---

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ, ԵՒ ԹՈՒԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

---

### §. 1. Ածական անուններ:

377. ՈՒՂՂԱԿԱՆ հոլով խնդիր կ'առնու ամէն տեսակ ածական՝ երբ անոր չափը կամ աստիճանը ցուցընող գոյական մը հետն ունի. ինչպէս. Նաբուքոդոնոսոր Թագաւորն արձան մը կանգնել տուաւ՝ վաթսուն կանգուն բարձր: Հինգ հինգ կանգուն երկայն ձողեր տնկեր էին: Միլոն մը հեռու: Քսան դրամ ծանր: Ի՞նչ աստիճան նեղ են եղեր անցքերը: — Հոս ուղղական խնդիր են՝ վաթսուն կանգուն. միլոն մը, եւայլն:

378. ՏՐԱԿԱՆ հոլով խնդիր կ'առնուն՝ Արժանի. օգտակար. վնասակար. նման. մօտ. խորթ. ծարաւի եւայլն:

Թշնամեաց ահարկու.
Աշխարհի վնասակար.
Ամենայնի կարող.
Քեզի նմանները*.
Տեսնելու արժանի.

Արեան ծարաւի.
Զորս հոգւոյ բաւական.
Շատերու ատելի.
Ամենուն բաղձալի, սիրելի, եւայլն:

Եւ ընդհանրապէս ալ, եւ ածական դերբայները, ինչպէս են՝ Նախանձելի. սոսկալի, եւայլն:

* Կ'ըսուի նաեւ Քու նմաններդ. բայց այն ատեն նման գոյականաբար առնուած կը համարուի:

379. ԲԱՑԱՌԱԿԱՆ հոլով խնդիր կ'առնուն՝ Հեռու. զուրկ. տարբեր. ազատ. անյոյս. անգէտ. աներեւոյթ. եւայլն:

Բլրէն հեռու.
Ամէն շնորհէ անմասն.
Ասկէ տարբեր.
Լամբէս տարբեր.

Փրկութենէ անյոյս.
Մեզմէ անծանօթ.
Աչքէ աներեւոյթ.
Մահկանացուներէ անտես:

380. Բայց Անգէտ, անծանօթ, անըմբռնելի, եւայլն. աւելի վայելուչ կերպով տրական խնդիր կ'առնուն փոխանակ բացառականի. Մեզի անծանօթ. աչաց աներեւոյթ. մտաց անըմբռնելի:

Numérisé par CDMF (PP) - 2011

381. ԳՈՐԾԻԱԿԱՆ հոլով խնդիր կ'առնուն լի կամ լեց. լեցուն. կուշտ. ներհուն, եւայլն ածականները։

Շնորհօք լի. Հացով ջրով կուշտ.
Պտղով լեցուն կողով. Քաջութեամբ նշանաւոր։

382. Ածականի խնդիր կը դրուի նաեւ ստացական յօդով գոյական մը. օրինակ. Մէջը-պարապ սնտուկ մը։ Ձայնը-տկար երգիչ մը։ Ձեռքերնին-անզէն պահապաններ։ Մորթը-ճեղքուած մէկը։ Տերեւը-թափած տունկ։ Ձեռքը-կտրած զինուոր։ Դուն աւադիկ հոգին-ելած մարմին մըն ես։ (Այս ոճը տաճկերէնէն մտած է. որուն տեղ հասարակօրէն բարդ ածական մը կը գործածենք. Տերեւաթափ, տկարաձայն, ձեռնբեկ, եւայլն։)

383. Բաղդատական ածականները կամ բացառական խնդիր կ'առնուն, եւ կամ քան զ նախադրութեամբ հայցական. օրինակ.
Մեզմէ աւելի երջանիկ, կամ քան զմեզ աւելի երջանիկ։
Մեզմէ երջանկագոյն, կամ քան զմեզ երջանկագոյն։

384. Նոյն խնդրառութեամբ դրականն ալ բաղդատականի տեղ կ'անցնի. այսպէս. Մեզմէ երջանիկ կամ քան զմեզ երջանիկ.
Ծաղիկը ոսկիէն գեղեցիկ է, կամ Ծաղիկը քան զոսկի գեղեցիկ է.
Պտուղը ծաղիկէն (աւելի) աղէկ է, կամ Պտուղը քան զծաղիկն աղէկ է։

385. Գերադրական ածականը երբեք խնդիր չ'առնուր, եւ կ'ըլլայ Ամենապարզ խօսուածք. Ամենաստորին բացատրութիւններ. Ամենասիրելի բարեկամ. Ամենասուրբ Կոյս, եւայլն։ Բայց

386. կայ համեմատութեամբ-գերադրական մ'ալ որ կը շինուի հասարակ բաղդատականին վրայ ստացական յօդ դնելով, եւ ամէնէն կամ քան զամէնը խնդիր տալով. այսպէս.
Ամէնէն ծերագոյնը. Ամէնէն ընտիրը.
Ամէնէդ աղքատը, կամ Ամէնէն աղքատնիդ.
Ամէնէս արժանաւորը, կամ Ամէնէն արժանաւորնիս։

Numérisé par CDMF (PP) - 2011

387. Վերջին, յետին, կրտսեր, հեռաւոր ածականները համեմատութեամբ-գերադրական կ'ըլլան ամենէն մակբայով, այսպէս. Ամենէն վերջին օրը։ Երիցագոյն եղբօրմէն մինչեւ ամենէն կրտսերը։ Ամենէն հեռաւոր աստղերն աչքի աներեւոյթ են։

Զուտ տաճկերէն է ին մասնիկն ալ որ ոմանք գրոց մէջ կը գործածեն. ին նմանը. ին յառաջները. ին ներսը. որուն տեղ շատ անգամ վայելուչ է ըսել՝ բուն նմանը, բուն յառաջները, բուն ներսը։

§. 2. *Թուական եւ մասնական անուններ*:

388. Մասնական անունները բացառական հոլով խնդիր կ'առնուն. Ձեզմէ եւ ոչ մէկուն կրնամ վստահիլ։ Անոնցմէ ոմանք ուշ եկան կեցան։ Մէջերնէն քանի մը հոգի լրտես էր։

389. Ուրիշ ածականներ ալ, մանաւանդ թուականները, եւ ուրիշ՝ մասնական բան մը կամ բաժին ցուցընող բառերը բացառական հոլով խնդիր կ'առնուն։ Բանուորներէն շատերը (կամ շատը) հազիւ կէսօրուան մօտ կը սկսին գործելու։ Ճամբորդներէն երկուքը մօտ տեղ մը քաշուած էին։ Այդ ընծայուածէն մաս մ'ալ մեզի բաժին հանեց։

390. Բայց շատ անգամ բացառականի տեղ սեռական խնդիր կ'առնուն. Ձեր եւ ոչ մէկուն կրնամ վստահիլ։ Ճամբորդներուն երկուքը։

391. Երբեմն ալ սեռական խնդրոյ տեղ մասնականները, թուականները, եւայլն, ստացական ձեւով կը գործածուին. (Դուք) Ամէնքդ հոս էիք։ Շատերնիս անխռով մնացինք։ Մէկերնիդ դուրս ելլէ տեսնեմ։ Ամէն մէկերնիս մէյ մէկ խորշ քաշուած պահուած էինք։

392. Շատ հեղ մասնական անունը կամ քիչ մը, մաս մը եւայլն բառերը զօրութեամբ կ'իմացուին, եւ բացառական հոլովը բային քով մինակ կը մնայ. օրինակ. Սա հացէդ տուր աղքատին ալ։ Այդ գինիէն ես ալ ունիմ։ Պարտէզին ծաղիկներէն քաղեց բերաւ։ Այն վաճառքէն չմնաց մեր հրապարակը. — Եւ կ'իմացուի՝ Սա հացէդ մաս մը, այն վաճառքէն քիչ մը։

Numérisé par CDMF (PP) - 2011

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ

393. Մասանց-բանի կիրառութիւնը կը սորվեցընէ թէ բառերն այլեւայլ դէպքի մէջ ինչ գործածութիւն կ'առնուն. անուանց թիւը, հոլովները, բայերու ժամանակները եւայլն երբ եւ ինչպէս կը գործածուին։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ԱՆՈՒՆ

394. Անուան թուոյն, հոլովներուն եւայլն կիրառութեան կանոնները ճանչնալէն յառաջ՝ հարկ է գիտնալ ընդհանրապէս որ Անուն ըսելով հօս երբեմն ուրիշ մասունք-բանի ալ կրնայ իմացուիլ. վասնզի Որեւիցէ մասն-բանի կրնայ իբրեւ գոյական անուն գործածուիլ, յոքնակի ըլլալ, յօդ առնուլ, եւայլն։

---

### §. 1. Անուան թուոյն կիրառութիւնը:

395. Թուական անուանց առջեւ հասարակօրէն եզակի կը մնայ գոյականը. թէպէտ կրնայ ըսուիլ նաեւ՝ խնդրոյն որոշումն երկու փաստաբաններու յանձնուեցաւ։ — Իսկ եթէ որոշեալ են՝ յոքն. կը դրուին. ինչպէս. Երկու տղաներն առջեւնիս կայնած տեսանք։ Այն չորս զօրավարները վրանի մը տակ խորհրդի նստեր էին։ (Ռամկօրէն կը համարուի՝ Չորս զօրավարը, եւայլն։)

396. Բայց քանի մը դէպքի մէջ երբեք յոքնակի չի կրնար դրուիլ. ինչպէս. Երեսուն հոգի. Վեց անգամ. Չորս հեղ. Երկու գաւաթ գինի. Ութ ժամ տեւեց։

---

### §. 2. Հոլովներուն գործածութիւնը:

397. ՈՒՂՂԱԿԱՆ հոլովը կամ ան է որն որ կ'ընէ կամ որն որ կ'ըլլայ, (անուն-բայի.) եւ կամ ան է ինչ որ անուն-բային կ'ըլլայ. (խնդիր-բնութեան։)

398. ՀԱՅՑԱԿԱՆԸ կամ ան է զորն որ անուն-բային

Numérisé par CDMF (PP) - 2011

կ'ընէ. (խնդիր-սեռի.) եւ կամ ան՝ ինչ որ խնդիր-սեռին կ'ըլլայ. (հայցական խնդիր-բնութեան։)

399. Աննախդիր հոլովներէն՝ **ԱՆՆԱԽԴԻՐ ՏՐԱԿԱՆԸ** դէպ ի տեղ մը շարժում կը ցուցընէ. իսկ **ՆԵՐԳՈՅԱԿԱՆԸ** (տեղւոյ մը) մէջ կամ վրայ դադարում կը ցուցընէ։ Զորօրինակ՝ Պարտէզ մտայ. Պարտէզը մնացի։ Գեղ գացինք. Գեղը մնացինք։

400. Աննախդիր տրականը, (ինչպէս նախընթաց օրինակներէն կը տեսնես,) կրնայ առանց յօդի մնալ. բայց աննախդիր ներգոյականը սովորաբար յօդով կը բանի, եթէ յատուկ անուն չէ։ — Այսպէս կազմուած են տեղական մակբայներն ալ. (272.) Վեր ելաւ. Վերը մնաց։ Ներս նայեցան. Ներսը կռուեցան։

401. Երկրորդ տեսակ ներգոյական մ'ալ կայ՝ գլխաւորաբար ժամանակ ցուցընելու համար. (տես 63, 4։) Ոչ ոք յոյս ունէր, բայց ինք դարձեալ ժամանակին եկաւ հասաւ անվրէպ։ Մօրեղբայրդ անցեալ տարին մեռաւ։ Կէս գիշերին դուրս ելաւ։ Ատէնին չի գար։ Ձմեռկին ճամբայ կ'ելլէք։ Նոյեմբերի վերջին հրատարակուեցաւ։ Ժամը վեցին կ'արթըննայ։ Այսպէս ալ կ'ըսենք՝ նոյն միջոցին, (միայն ժամանակ ցուցընելու համար։) Գալ հեղու։ Այս անգամուս։

Չ'ըսուիր տրականով՝ ժամանակաւ հասաւ. Այս շաբթուան կամ Ամսուան չեկաւ։

402. Այս կանոնով կը ձեւանան նաեւ աներեւութի ներգոյականն ու քանի մը ուրիշ ներգոյականներ. ինչպէս. Առաջին նայելուս ճանչցայ։ Կանուխ հաւլուան գեղ հասանք։ Ամառուան տօթին ճամբայ քալել։ Մթան դէմն ելաւ ու սոսկացի։

Այս կերպ օրինակներն առանց յօդի չեն գործածուիր։

403. Ներգոյական հոլովի տեղ շատ անգամ հետ, վրայ, մէջ նախադրութիւնները կը գործածուին։ Այսպէս կ'ըսուի՝ Աղօթքի հետ ելլէք, որդեակք։ Կերուխումի, զբօսանքի հետ ըլլալ։ Ահուդողի մէջ էին։

**ՑԵՂՕԿԱՆ** հոլովին քանի մը գործածութիւնը տեսանք։ Հիմայ տեսնենք Սեռական-տրական։

Numérisé par CDMF (PP) - 2011

404. Գոյական անուանց առանց յօդի սեռականէն ածականներ կը կազմուին՝ աստիճան, արժէք, չափ, տարիք եւայլն ցուցընելու համար։ Վեցամսեան հիւանդութենէ դեռ նոր ազատած էր։ Տասն'ութն աստիճանի տաք խուց մը։ Եօթներորդ գծի ազգակցութիւն։ Բարձրագոյն կարգի ուսումնարաններ։ Վերջին աստիճանի անմտութիւն։ Քսան տարուան երիտասարդ մը։ Մովսէս հարիւր տասն տարուան մեռաւ։ Զոյգ մը ապարանջան՝ հինգհարիւր դահեկանի։

Օրինակներէս կը տեսնուի որ այդ սեռական գոյականներն իրենցմէ յառաջ հարկաւ ածական մը կ'ունենան։

ԲԱՑԱՌԱԿԱՆ հոլովն որ տեսանք քանի մը նախադրութեանց եւ բայերու խնդիր, կը գործածուի դարձեալ

405. Գործքի մը պատճառը ցուցընելու համար. այսպէս. Զարմանքէն քար դարձաւ։ Սրտիս նեղութենէն լեզուս կարկեցաւ։ Շատ կարդալէն կուրացեր է։

406. Նիւթոյ անուանց եւ. բացառականն իբրեւ ածական կը գործածուի. այսպէս.

| | |
|---|---|
| Արծըթէ ժամացոյց. | Բամբակէ լաթեր. |
| Կապարէ գնտակներ. | Գաճէ արձաններ. |
| Կտաւէ հագուստ մը. | Հողէ ամաններ. |
| Փայտէ դգալ. | Գարիէ հաց։ |

407. Տրականի ձեւ. Աննախդիր բացառականը (տես 63, 5.) հասարակօրէն ստացական յօդով աներեւոյթներու եւ ուրիշ ստացական վերջով յոքնակիներու վրայ կը բանի. Ընկերը չգիտնալուն՝ սկսաւ դանդաչել։ Սաստիկ զբօսասէր ըլլալնուն՝ օրերնին որսով կ'անցընէին։ Այնպիսի նենգութիւն մտքերնուն ալ չէր անցներ։ (Այսինքն՝ Չգիտնալէն. ըլլալնէն. մտքերնէս, եւայլն։)

ԳՈՐԾԻԱԿԱՆ հոլովը բաց ի ածականի եւ բայի խնդիր ըլլալէն (371, եւ 381.) ուրիշ այլեւայլ գործածութիւններ ալ ունի։

Numérisé par CDMF (PP) - 2011

408. — Յ. Ամբողջ եւ բոլորը մէկանց նշանակելու. ինչպէս. Քաղաքին առնուելէն ետքը՝ իրենք ալ տնով տեղով ջնջուեցան։ Ատոնք տնով տեղով աղուաշ են։ Հրեայք ողջովին նենգաւոր են եւ խորամանկ։

409. — Բ. Որոշ ժամանակ մը ցուցընելու համար եզ. գործիական կը դրուի. Սողոմոնի օրով՝ կ'ըսեն թէ ոսկին ու արծաթը խոտանի բան մըն էր։ — Այսպէս ալ Առտուն, ժամանակաւ մակբայակերպները։

410. — Գ. Գոյականներու գործիականն իբր ածական անուն կը բանի, եւ կը նշանակէ ունեցող. ինչպէս. Վեց պատուհանով ընդարձակ սենեակ մը։ Երկաշտարակով եկեղեցի մը։ Ջեռուններ կան սանդրէ յետով։ Անոյշ հոտով պտուղներ. (անուշահոտ։) Աղեքսանդր Մեծն ձի մ'ունէր ցուլագլխի ձեւով։ Գորշոյլ անունով մէկը։ Լեռ մը կար Ցլու-գլուխ անունով։

Այս կանոնով ձեւացած են ածականներս. Գինով. ուժով. համով. խելօք. շնորհօք. մօրուօք. տարուօք։

Տաճկերէնէ մնացած խորթ բառածք մըն է՝ եւ. ու շաղկապի տեղ գործիական հոլով բանեցընել. այսպէս. Պետրոսով Թովմասը ներսը մնացին. փոխանակ՝ Պետրոսն ու Թովմասը։

---

Հոլովներուն պարտուպատշաճ կիրառութիւնը գիտնալու համար՝ պէտք է զանոնք իրարմէ աղէկ զանազանել, մանաւանդ իրարու նմանները, ինչպէս են՝ ուղղականը, հայցականը եւ անձնախնդիր հոլովները. որուն դիւրութեանն համար կ'աւելցընենք յաջորդ

## ՀՈԼՈՎՈՑ ԶՈՒԳԸԿՑԻԹԸ

| | | |
|---|---|---|
| Ուղղական. | Անուն բայի. | — Քաղաք շինուեցաւ. Արձան կանգնուեցաւ։ |
| " | Խնդ.-բնութ. | — Քաղաք անուանեցաւ. Արձան կարծուեցաւ։ |
| Հայցական. | Խնդ.-սեռի. | — Քաղաք շինեց. Արձան կանգնեցին։ Ձեր երգածը չիմացանք։ |
| " | Խնդ.-բնութ. | — Քաղաք անուանեցին. Արձան կարծեցինք։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

Ներգոյակ. ուղղականի ձևով. — Քաղաքը մնացէք։ Այս շաբթու էք դուք ալ. (յայս կարգս։)
" ստականի ձևով. — Նոյն միջոցին կռիւ բացուեցաւ։ Ամէն ընկերս կը զարհուրիմ։
Տրական. անանձնական. — Քաղաք հասանք։ Մինչեւ ձեր գալը։
" բուն կամ վերջաւորով. — Քաղքին մօտեցայ։ Այնպէս քաղքէն զարմացանք։
Սեռական. նոյն ձևով. — Քաղքին պարիսպը։ Քաղաքին աղքատութիւնը։
Բացառական. նոյն ձևով. — Տեղոյս չշարժեցաւ։ Շատ քաղաքէն յոգներ է։
" խնդ.-անոր. — Քաղքէն ընդունեցաւ. (քաղաքը զինքն ընդունեցաւ։)
" խնդ.-ջնոյթ. — Քաղքէն ընդունեցաւ. (քաղաքացւոց ձեռքէն ընդունեցան։)

---

Հոլովներուն գլխաւոր մէկ պաշտօնն ալ է ժամանակ ցուցնել։

411. — Ա. Ժամանակի հարցումներուն՝ մէկանց անմիջական հոլովով պատասխան կը տրուի. — յօդով եթէ որոշեալ ժամանակ է, և եթէ անորոշ է առանց յօդի։ Ասոնք օրինակներն։

1. Ե՞րբ։ — Վեցերորդ օրը մի գործեր։ Գերութեան երեսներորդ տարին շէնքը լմնցաւ։ Նոյն տարիները սաստիկ հալածում մ՚ելաւ։ Գիշերները պանծանութիւն կ՚ընէինք։ — Ամէն գիշեր հրդեհի լուր կը կրէինք։ Քանի մը գիշեր անքուն մնացի։

2. Ո՞րչափ ատեն։ — Բոլոր տարին հողով ու մանուքով տանջուեցանք։ — Քառասուն օր և քառասուն գիշեր անդադար անձրեւեց։ Մէջ տարի սով եղաւ։ Այսչափ ժամանակ հեռուներնիդ եմ։

3. Քանի՞ անգամ։ — Չորս անգամ հարցուցի, չորս անգամն ալ անպատասխանի մնացի։ — Իննը անգամ իրարու վրայ յարձակեցան։

Նոյնպէս կ՚ըսուի՝ Օր մը սիրով են, օր մը թշնամութեամբ։ Ժամ մը քուն, ժամ մը արթուն։



Numérisé par CDMF (PP) - 2011

412. — Բ. Մէջ նախադրութեամբ սեռական կը դրուի, երբ սկիզբէն մինչեւ վերջն եղած միջոցը ցուցընել ուզուի, ինչպէս. Ցիսուն օրուան մէջ երեք անգամ անձրեւ եկաւ։ Երկրորդ տաճարը քառասունուվեց տարուան մէջ շինուեցաւ։

Ժամանակ ցուցընող հոլովներու վրայ տես դարձեալ 409։

413. Զանազան հոլովներով այլեւայլ մակբայներ եւ մակբայակերպներ ալ կը ձեւանան, ինչպէս Ա մասին մէջ տեսանք։ Այսպէս կ'ըսուի՝ Ապշեցան շուարեցան՝ թէ ինչպէս գոց դռներով որահին մէջ մտաւ։ Դուռ դուռ պտըտեցայ մուրացի։ Ամէնքս զարհուրեցանք երբ յետոյ ոտք եկաւ մէջերնիս մտաւ։ Մօտանէն մօտը՝ անցաւ նստաւ։ Մարդ գլուխ վեց վեց դահեկան բաշխուեցաւ։

---

§. 3. Ածական եւ Գոյական:

414. Գոյական անուններ կան որ միանգամայն ածական ալ են. ինչպէս՝ Սուտ. մութ. ծակ. ցուրտ. հանգիստ։ Այսպէս կ'ըսուի՝ Սատրիկ տարափէն պատսպարուելու համար մութ քարանձաւ մը մտանք։ Նոյնպէս յաջորդներն ալ.

| | |
|---|---|
| Սուտ վկայութիւն. | Ծակ աման մը. |
| Մութ ատեն. | Մշուշ օդ. |
| Շուք տեղուանք. | Հանգիստ կեանք անցընել։ |

415. Երբեմն գոյական անուններ ածականի տեղ կը գործածուին.

Ա. Բանի մը նիւթը ցուցընելու համար. (տես նաեւ 406։)

| | |
|---|---|
| Ոսկի աշտանակ մը. | Կաշի գօտի. |
| Արծաթ դգալներ. | Ցախ աւել։ |

Բ. Չափ ցուցընելու համար՝ թուականով մը.

| | |
|---|---|
| Կաթիլ մ'արիւն. | Գունդ մը զօրք. |
| Գաւաթ մը ջուր. | Քանի մը տող գիր. |
| Երկու կողով խաղող. | Բոպէ մը ժամանակ։ |

Numérisé par CDMF (PP) - 2011

Գ. Նմանութեամբ, ինչպէս՝ Քար սիրտ. (սիրտ մ'որ քարի կը նմանի.)

| | |
|---|---|
| Ցից ժայռեր. | Գլխացաւ մէկը. |
| Ապառաժ քար. | Ծաղիկ հասակի մէջ վախ- |
| Ցուցանք մարդ մը. | ճանիլ: |

Դ. Ժամանակ ցուցընող գոյականներն իրարու վրայ կ'իյնան իբրեւ ածական եւ գոյական.

| | |
|---|---|
| Երէկ գիշեր. | Վաղը կէսօր. |
| Երէկ իրիկուն. | Շաբաթ առտու. |
| Վաղն առտու. | Ուրբաթ իրիկուն: |

416. Այս եղանակաւ ածականի պէս գործածուած գոյականներն իրենց գլխաւոր գոյականէն յառաջ անփոփոխ կը մնան, եւ միայն հետեւորդը կը հոլովի կամ յօդ կ'առնու. այսպէս. Կաշի գօտւոյ: Արիւն արտասուքով: Երէկ իրիկուանը: Կաթիլ մը արեան արժէքը:

417. Այս կերպով կը գործածուին Տեսակ, ձեւ, եղանակ, աստիճան, անուն գոյականները՝ մը յօդով կամ վերադրով մը մէկտեղ. ինչպէս. Կադմոս անուն մէկը կ'ըսուի թէ Փիւնիկեցւոց գիրը Յունաստան բերած է: Այն ինչ տեսակ կատարելութիւն էր:

| | |
|---|---|
| Մարդ մը Սիմոն անուն. | Ուրիշ կերպ բացատրու- |
| Նոր տեսակ հրացան. | թիւն. |
| Այս եղանակ վարմունքը. | Հին ձեւ հագուստներ. |
| Տեսակ մը մատնութիւն. | Վարդի գոյն շղարշ մը: |

418. Ածականներ ալ կան որ իբր գոյական կը բանին. այսպէս. Այս գիշերուան ցուրտը՝ կ'ըսեն թէ ծաղիկները զարկեր է: Ամառուան տաքը: Զաւկին կարօտը կը մաշէր: Քարայրին խորունկէն դղրդիւն լսուեցաւ:

419. Առանց գոյականի մնացած ածականն ալ՝ հասարակօրէն յօդով մէկտեղ՝ գոյական եղած կ'ըլլայ. Կարմիրը կրակի նմանութիւն է: Կլորը կամ Բոլորակը բնութեան սիրական ձեւն է: Կանաչը դեղնի եւ կապոյտի բաղադրութիւն է:

Այսպէս ստացականներն ալ յօդ առնելով



Numérisé par CDMF (PP) - 2011

գոյական կ'ըլլան. Խմ. քուկդ. իրենցը. ձեռքինդ. վրայինս. մարդունը. Մեսրոպինը. երեկուանը. գիշերուանները, եւայլն։

420. Սեռական գոյականի մ'առջին յօդով ածական մը կը դրուի, որ կը նշանակէ նոյն գոյականին այս կամ այն տեսակը. ինչպէս. Ջրին տաքը չի խմուիր. (այսինքն՝ տաք տեսակ ջուրը։) Վաղարշակ Հայոց քաջերը ժողվեց եւ Մակեդոնացւոց վրայ արշաւեց։ Մարգարտին խոշորը յարգի է։ Վիրաբուժին անփորձը զարհուրելի է։

421. Գալ բառն իբրեւ ածական կը դրուի ժամանակի անուանց վրայ՝ փոխանակ գալոց կամ առաջիկայ ածականին. այսպէս. Գալ ամիս. Գալ շաբաթ. Գալ չորեքշաբթի. Գալ անգամուն. Գալ զատկին. Գալ շաբթու. Գալ աշնան։ Գալ թղթաբերաւ նամակ մը կը սպասեմ։

## §. 4. Յօդերու գործածութիւնը։

Որոշեալ յօդին կիրառութեանը վրայօք գիտնալու քանի մը բան կայ, որոնց հետ մէկտեղ կ'աւանդենք ստացական յօդինն ալ, որ հասարակօրէն միեւնոյն կանոնաց տակ են. (մասնաւոր գիտելիքները տես դերանուանց կիրառութեանը մէջ. Յօդ. Բ. §. 2։)

422. Հասարակ անուններէն Աստուած բառը երբեք յօդ չ'առներ. նոյնպէս հասարակօրէն Տէր բառն՝ Աստուած նշանակութեամբ. եւ կ'ըսուի. Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը։ Աստուծոյ պատգամները։ Աստուծմէ վախնալ։ Տեսնէ Տէր եւ ողորմի։

423. Շատ անգամ Երկինք. երկիր. եւայլն. առանց յօդի կը գործածուին։ Երկինք, երկիր, ծով եւ ցամաք Աստուծոյ հրամանին հնազանդ են։ Երկիրէ երկինք անբաւ հեռաւորութիւն կայ։

Ուղղականէն զանազանելու համար երբեմն հայցականը ն կամ ը յօդով կը դրուի։ Նոյնն իմացիր քանի մը ուրիշ անուանց վրայ ալ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Գոյական յատուկ անուանց եզակին՝

424. — Ա. Ուղղականի մէջ առանց յօդի կը գործածուի։ Աղեքսանդր մեծամեծ աշխարհակալութիւններ ըրաւ։ Ներոն Հռոմ այրեց եւ իր մայրն սպաննեց։ Աթէնք իմաստութեան մայրաքաղաք էր։ Եփրատ ու Տիգրիս՝ Միջագետաց սահմաններն են։

425. — Բ. Հայցական հոլովը լաւագոյն է առանց յօդի զ՚նախդրիւ գործածել։ Ժողովուրդն զՍոկրատ մերժեց։ ԶՅովսէփ իր եղբարքը վաճառեցին։ — Բայց կ՚ըսուի նաեւ՝ Սպարտացիք Ամփիոն առին եւ բնակիչքը թրէ անցուցին։ Կ՚ըսեն թէ Վարազդատ մէկ ցատքելով Նեղոսն անցաւ։

426. — Գ. Սեռականի ու տրականի մէջ՝ կայ որ յօդ կ՚առնուն, կայ որ չեն առնուր. զորօրինակ. Արտաշէսի զօրքը։ Ափրիկէի անապատները։ Դաւիթին կամ Դաւիթայ անյիշաչարութիւնը։ Նեղոսի ակունքը Նուբիոյ մէջ կը կարծուի։

427. — Դ. Բացառականը սովորաբար յօդով կը գործածուի։ Աբեսողոմ Դաւիթէն ապստամբեցաւ։ Իսրայելացիք Յորդանանէն անցան։ Հերովդէս Յովհաննէսէն կ՚ակնածէր։

Ե. Գործիական հոլովին ըսած ենք թէ երբեք յօդ չ՚առնուր. (83։)

Մինչեւ հիմայ տրուած կանոններէն կը խոտորին հետեւեալները.

428. —. Ա. Յօդ չառնող բառերը, թէ յատուկ անուն ըլլան՝ թէ հասարակ, երբ քովերնին յատկացուցիչ կամ ածական մ՚ունին՝ յօդ կ՚առնուն. Իսրայէլի Աստուածը. Այն Աստուածն որ կը պաշտէի։ Քաղդէաստանի Երկինքը միշտ պայծառ ըլլալուն՝ աստեղագիտութիւնը հոն շուտ ծաղկեցաւ։ Եփեսացւոց Արտեմիսը։ Գանովայի Թեսէոսը։ Ցաւալին Նիոբէն։ Մարդասպանաց Սեստոսը։ Խնկաբեր Արաբիան։ Պերսինի (քարոզած) Քրիստոսը։ Նոյնպէս յոգնակին. Երկու Ներոնները։

Հետերնին ածական մ՚ունեցած ատեններնին՝ ն յօդն ածականին վրայ կը դրուի՝ գրաբար ձեւով. Մեծն

Numérisé par CDMF (PP) - 2011

Աղեքսանդր․ կամ Աղեքսանդր Մեծն։ Սքանչելին Հոմերոս։ Գեղեցիկն Արայ․ (նաեւ Արայն գեղեցիկ։) Արին Արամազդ։ Ազատն Մասիս։ — Սեռական՝ Մեծին Աղեքսանդրի․ Արւոյն Արամազդայ մեհեանը․ կամ այսպէս՝ Մեծն Ներսէսի օրերը․ Ազատն Մասեաց։

429․ Յետադաս վերադիր ունեցող յատուկ անուանց յօդը նոյն վերադրին վրայ կը դրուի․ այսպէս․ Յովսէփ Գեղեցիկը․ Աշոտ Երկաթը․ եւ կը հոլովին՝ Յովսէփ Գեղեցկին․ Յոբ Երանելւոյն․ Աշոտ Երկաթին․ Լեւոն Զօրաւորին ժամանակները․ Տիգրան Երկրորդին եղբայրը։

430․ — Բ․ Ընտանեկան լեզուի մէջ մարդու յատուկ անունները սովորաբար միշտ յօդով կը բանին․ այսպէս կ'ըսենք․ Պետրոսը գնաց։ Մարիամն առի։ Միհրանին տուի։ Գրիգորը տեսայ։ Թովմասին հանդիպեցանք։

431․ Յատուկ անուանց յոքնակիներն ըստ ամենայնի հասարակ գոյական անուանց կանոնին կը հետեւին․ ըստ այսմ նաեւ յօդով կամ առանց յօդի կը գործածուին։

432․ Եօթը, ութը, ինը եւ տասը թուականներուն վրայ յօդ չ'աւելցուիր․ այլ իրենց բնական ը (կամ ձայնաւորէ յառաջ ն) վերջաւորութիւնը յօդի տեղ կ'անցնի․ այսպէս․ Վեցն ու եօթը հինգէն աւելի են։ Ութը չորսին կրկինն է։ Անոնցմէ եօթը կամ եօթն այլազգի են․ (տճ․ եէտիսի։) Ինը քառորդ անցեր է․ (տճ․ տօգուզու։) — Աւելի աղէկ որոշելու համար կ'ըսուի շատ անգամ՝ Եօթը հոգը․ Ինը հոգին։

433․ Մարդ բառը՝ երբ անորոշ կերպով, այսինքն իբրեւ մասնական անուն կը գործածուի, ուղղականի մէջ առանց յօդի կը մնայ, եւ միշտ անուն-բայի է․ այսպէս․ Մարդ կը սոսկայ այնպիսի խօսք բերան առնելու։ Մարդ կը շուարի կը մնայ թէ ինչ ըսէ*։ — Իսկ հոլովածը միշտ յօդով է․ հյց․ Մարդը կը գոհացընէ այդ մտածմունքը։ Սեռ․ Մարդուն ձեռքը յառաջ չ'երթար դպչելու։ Տրակ․ Մարդուն զարհուրանք կու գայ, երբ ․ ․ ․ ։

Numérisé par CDMF (PP) - 2011

* Զատ է՝ Մուշտօ ակար է. Մուշտօն երբեք չէ տեսած, որ իբրեւ մականական անուն չի գործածուիր. (տես վարը. 472։)

434. Միւս եւ Մեկալ միշտ յօդով կը բանին. եւ եթէ գլխական ունին, յօդը նոյն գլխականին վրայ կը դրուի. Տեսանենք միւսն ալ, մեկալն ալ։ Միւս ընկերն իրեն կը սպասէր։

435. Ժամանակ ցուցընող անունները, (մանաւանդ այս եւ մէկ ածականով,) թէեւ որոշեալ ըլլան, սովորաբար առանց յօդի կը մնան. Այս տարի. Այս ամիս. Այս շաբաթ. Այս օր, (որ կը գրուի այսօր.) Այս առտու. Այն ատեն. Անցեալ տարի. Անցած օր. Միւս ձմեռ. Մեկալ գիշեր. Գալ անգամ. Գալ տարի։ Իսկ հեղ բառը գրեթէ երբեք յօդ չ'առնուր։

436. Աստանկանեղեր որոշեալն յօդը յատուկ գործածութիւն մ'ունի. — ածականին վրայ դրուելով, կամ միանգամայն գլխականին վրայ ալ կրկնուելով. այսպէս.

Մեկալն օր. Ուրբաթն օրը.
Անցածն օր. Անցածն օրերը.
Կիրակին առտու. Շաբաթն իրիկուն։

437. Սեռականէ առաջականները (169) եւ մանաւանդ քով, առջեւ, մէջ, վրայ եւայլն (293) ածականներն երբ հետեւրնին գլխական մ'ունին, նոյն գլխականն սասյական յօդ կ'առնու, իսկ իրենք առանց յօդի կը մնան։ Ծառին վրայի թռչունը. Քովի տուները. Առջեւի սեղանը. Ձեռքի գաւազանը. ([illegible]) Չ'ըսուիր՝ Առջեւիս սեղան, եւ ոչ Ծառին վրային թռչունը։

438. Երբ երկու նոյնահոլով բառ մէկ բառի տեղ առնուած ըլլան՝ առանց ու շաղկապի, յօդը բաւական է միայն վերջնոյն վրայ դնել. ինչպէս. Վեր ի վերոյ կը նայէին, ասելի պակասը չեն հաշուեր։ Անցնէլ երթալ մը ձեւացուց։ Երթալ գալը դիտեր են։ Նոյնպէս մէկտեղ կը հոլովին. Մինչեւ ձեր գալ մնալուն ժամը։ (Փոխանակ՝ Աւելին պակասը. կամ Աւելին ու պակասը. Երթալը գալը։ Գալուն մնալուն։)

Numérisé par CDMF (PP) - 2011

Առաջին մասին մէջ ըսինք (78.) թէ ն յօդը ձայնաւորով վերջաւորած բառերուն է, եւ ը յօդը՝ բաղաձայնով վերջաւորածներուն. — սակայն՝

439. Ն յօդը բաղաձայնով վերջաւորած բառի մը ծայրն ալ կը դրուի՝ երբ յաջորդ բառն ըլլայ էմ եւ ալ, եւ կամ որեւիցէ ձայնաւորով սկսած բառ. զորօրինակ. Ինծի Լիբանանու մայրերն ընկան, ակար եղէգներն ինչ բանի վստահացեր են։ Մայրն ալ կը հասնի։ Շունչն ալ հատաւ, սիրտն ալ։ Քարն ու փայտը։ Եղբայրն էմ իրեն։ Ամէնքս վարն էինք։ Դուռն էր կեցեր։ (Չըսուիր՝ Մայրը ալ. դուռը էր. եղբայրը էմ։)

Ճիշդ խօսելով այս կանոնը միայն էմ եւ ալ բառերուն համար է. (տես 87։) Վասնզի ատոնք նախընթաց բառին հետ միկնեղ կ'արտաբերուին. աստի եթէ ը յօդ դնես՝ սխալ կ'ըլլայ։ Բայց սխալ չ'ըլլար, եթէ ըսես՝ չեմ փախած որը աջ որը ձախ։ Մայրը որդիքն առջեւն առած, կամ որդիքը առջեւն առած կը խրատէր։

Բայց հիմայ ն յօդը շատ յաճախ կը բանեցուի։

440. Իսկ երբեմն խօսքին աւելի որոշութիւն տալու համար՝ էմ եւ ալ բառերէն անմիջապէս յառաջ ալ ը կրնայ մնալ. այսպէս. Այն ատենը՝ էր ատեն մը հարուստ եւ երջանիկ, որ հիմայ չէ։ Պարտէզը ալ ծաղիկ չմնաց։

Վասնզի էմ բայն եւ ալ մակբայը (որ հոս անկէ ետքը կը նշանակէ.) յաջորդ բառին հետ կապուած են եւ ոչ նախընթացին։

Անորոշ յօդը յայտնի է որ միայն եզակի գոյականի համար է. — սակայն

441. — Ա. Ցուցական գոյականի վրայ ալ երբեմն կը դրուի. այսպէս. Այն պղտոր օդոյն մէջ՝ հալածեալ թռչնոց նման բաներ մը կը տեսնուէին։ Խրճթին մէջէն ամէն օր ձայներ կանչեր մը կը լսուէին։

442. — Բ. Երբեմն նաեւ ածականի վրայ ալ կ'աւելցուի. այսպէս. Ամենուն աչքին զարմանալի մը կ'երեւար։ Իր խօսքերն ու գրուածքը անոյշ մըն են։ Նոյնպէս սեռական ածականի վրայ. Սա երիտասարդը տան տղայ մը կամ տան տղան մը կայ. (404։)

443. — Գ. Քանի մը չափ եւ քանակութիւն

Numérisé par CDMF (PP) - 2011

ցուցընող ածականներ ալ մը յօդ կ'առնուն. այսպէս. Քէլ մը գինի. Քէլ մը համբերութիւն։ Շոփ մը ցուրտ ջատագովութիւններ։

Առանց որոշեալ եւ անորոշ յօդի կը դրուին դարձեալ՝

444. — Ա. Գրոց գլուխներն ու գլխաւոր մասերուն անունները. այսպէս. Գլուխ չորրորդ. Հատուած վեցերորդ։ Միջին դարու պատմութիւն։ Յառաջաբան։ Վերիպակը, եւայլն։

445. — Բ. Երբ բանի մը մասերը կամ բաժանմունքը բացատրուի, — մանաւանդ ուսումնական լեզուաւ. Հիւսիսային կիսագունդն երեք գլխաւոր ծով ունի. Սառուցեալ ծով, Ատլանտեան ովկիանոս եւ Խաղաղական ովկիանոս։ Մարդս հոգիէ եւ մարմնէ բաղադրեալ է։

446. — Գ. Առակաւոր եւ ոճական խօսքերու մէջ շատ բան առանց յօդի կը դրուի. այսպէս. Խրատ եւ յանդիմանութիւն՝ իմաստնոյ համար են, գաւազան եւ պատիժ՝ անմտի համար։ Աշխարհ՝ ամէն մարդու է։

---

## §. 5. Թուական եւ Մասնական անուանց գործածութիւնը։

447. Մէկ թուական անունը՝ եթէ շատին մէջէն հատ մը ցուցընէ, կը հոլովի սեռական՝ Մէկու։ Այսպէս. Մէկուն* կրած վիշտը շատերուն ազդելի կ'ըլլայ։ Վիշապներէն մէկուն մօտեցաւ։ Աղաւնին այն ծառերէն մէկուն վրայ թառած էր։ — Իսկ եթէ վերացեալ կերպով մէկ մը ցուցընէ, (եւ ոչ շատին մէջէն մէկը,) կամ թէ 1 թուանշանակէ, կը հոլովէ Մէկի։ — Մէկին վրայ զրոյ մ'որ դնես՝ կ'ըլլայ տասը. (չ'ըսուիր՝ Մէկուն վրայ։) Գալ ամսոյն մէկին հաշիւնիս կը տեսնենք։ (Ժամը) մէկին քառորդ կայ։

* Կայ ըսող ալ Մէկին կրած վիշտը։

448. Բարդութեանց մէջ մէկ միշտ կը հոլովի մէկի։ — Ժողովականաց տասն-մէկին քուէն բացասական եղաւ։ Տասն-մէկին կէսն է հինգ ու կէս։

Numérisé par CDMF (PP) - 2011

449. Մէկ թուականն որոշեալ յօդով՝ կ՚ըլլայ գոյական մասնական անուն. (ինչ գրաբար Ոմն, մի ոմն) — Մէկը պատասխան տուաւ: Եւ ոչ մէկը կրցաւ գուշակել: — Կամ ստացական յօդով՝ Մէկերնիդ նաւ մտնէ ու հասնի ետեւէն:

450. Իսկ մը յօդով մէկ թուականը կը հոլովի՝ հայց. Մէյ մը (փխ. մէկ մը.) սեռ. տր. Մէկու մը. բցռ. Մէկէ մը. (ուղղական չունի:) — Առի մէյ մը, մէյ մ՚ալ կ՚ուզէի. (այսինքն՝ առի հատ մը, հատ մ՚ալ կ՚ուզէի) Այնպիսի մէկու մը յանձնէ՝ որ վրան վստահ ըլլաս:) Իսկ ուղղական եթէ պէտք ըլլայ՝ միշտ կը գործածուի Մէկը:

451. Որովհետեւ գոյական եղած է Մէկը, մէկու մը, մէկէ մը, կրնայ իրմէ յառաջ ածական մը կամ բացայայտիչ մ՚առնուլ. Ռիչարդ անուն մէկը: Միամիտ մէկն էր որ հաւատացեր ու պատմեր է: Սրամիտ մէկու մը կը նմանի: Հաւատարիմ մէկէ մը լսեցի: — Բայց չ՚ըսուիր սեռականով՝ Անոնց մէկէ մը. այլ՝ Անոնց մէկէն կամ Անոնցմէ մէկէն:

452. Քանի մը տեղ սովորութիւն է մէկ կամ մը թուականը զեղչել. եւ ըսել. Օր յառաջ. (փխ. Օր մը յառաջ, կամ Մէկ օր յառաջ:) Ամիս ու կէս. (փխ. Մէկ ու կէս ամիս, կամ Ամիս, մ՚ու կէս:) Տարի ու կէս: Կանգուն ու կէս: Մարդ մարդու օգնական է:

453. Մէյմէկ բաշխականը շատ անգամ յոգնակի գոյականէ առջը կը գործածուի, երբ խօսքին մէջ իւրաքանչիւր, ամէն մէկը եւայլն ներգործութեամբ կամ զօրութեամբ դրուած ըլլայ. Ասոնք մէյմէկ գաւազան են: Առած լրերս՝ մէյմէկ դաշոյնի հարուած եղան խռովեալ սրտիս: (Զօրութեամբ կ՚իմացուի՝ ամէն մէկը, իւրաքանչիւրը մէյմէկ:)

454. Ը վերջաւորած թուականներուն ը գիրը ձայնաւորէ մը յառաջ նուի կը դառնայ նոյն կանոնով՝ որ վերը (439) աւանդեցինք ը կամ ն յօդ գործածելու վրայ: Այսպէս կ՚ըսենք՝ Եօթն անգամ. Ինն ալ հասան ժամանակին: Իսկ հաստատուն կանոնով կը գրուի եւ կ՚ըսուի միշտ՝ Ինն ու կէս. Տասնումէկ.

Numérisé par CDMF (PP) - 2011

*Տասնուչորս, եւայլն. Եւ ոչ երբեք՝ Ինը ու կէս կամ տասը ու մէկ։*

455. *Բացարձակ թուականներուն վրայ ՚ն ստացական յօդ եւ ալ կ՚աւելցուի. եւ այն ատեն կը նշանակեն՝ բոլորը մէկանց. Ինչպէս. Երկուքն ալ. Երեքն ալ. Չորսէն ալ։ Տասուերկուքն միեւնոյն օրուան մէջ գլխատուեցան։ Երկուքնիս ալ կամ Երկուքս ալ զարկուեցանք։ Հինգերնիդ ալ հրաւիրեալ էք։*

456. *Բացասական թուերու տեղ կը գործածուին Մէկը, մարդ, բան մը կամ բան՝ փոխ. Եւ ոչ մէկը, ոչ ոք եւ Եւ ոչ բան մը, որնոց մասնական անուններով հաստատական բայ դնելու. զորօրինակ. Այն աղաղակին եւ խռովութեան մէջ՝ մէկը չիմացաւ կամրջին խախտիլն ու երերալը։ Ամենալէն բան չկրցաւ խօսիլ։ Բան մ՚ալ չէր անանուեր մնուչին պատճառաւը։ Մարդ չտեսաւ։ (Աւելի ընտիր եւ որոշ է՝ Ոչ ոք իմացաւ. կամ՝ Եւ ոչ մէկն իմացաւ։*

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԴԵՐԱՆՈՒԱՆՑ ԴԵՐԱՆՈՒՆԱԿԱՆ ՅՕԴԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

---

### §. 1. *Դերանուններ։*

457. *Անձնական դերանուանց ինծ, քեզ, մեզ, ձեզ գրաբար տրականները սովորաբար միջարկութեանց հետ կը բանին. այսպէս. Վայ ինծ. Երանի է քեզ. Բարեւ ձեզ. Բարի լոյս ձեզ, եւայլն։*

458. *Թէպէտ ինք, իւր կրնայ երբեմն ան, անոր, դերանուան տեղ դրուիլ. բայց շփոթութենէ խորշելու համար միտ դնելու է որ ինք, իւր՝ խօսքին գլխաւոր անձը կը ցուցընէ, (զորօրինակ անուն-բային), իսկ ան, անոր՝ երկրորդական անձ մը. ինչպէս այս խօսքին մէջ. Տեսաւ հեռուանց իւր Պոմէտ եղբայրն ու անոր որդիքը։ Իսկ դատախազներն որ դաւաճաններուն ամէն բանը կը գիտէին, անոնց քանի մը խօսքէն գուշակեցին թէ արդէն իրենք վտանգի մէջ են. (այսինքն՝*

Numérisé par CDMF (PP) - 2011

դաւաճաններուն խօսքէն, դատախազները վտանգի մէջ են։) — Շփոթ կ'ըլլար խօսքն՝ եթէ ըսուէր. Իրենց քանի մը խօսքէն գուշակեցին թէ իրենք վտանգի...։

459. Ըսած ենք (171) թէ յարաբերականը հարկաւ ուրիշ խօսքի մը հետ կապուած է՝ զորն որ կը յարաբերէ, այսինքն յառաջ կը բերէ։ Արդ այն առաջին մասը զորն որ յարաբերական դերանունը կը յարաբերէ (դերանուն մը կամ գոյական), կը կոչուի Յարաբերեալ. ինչպէս օրինակիս մէջ. Հօտն որ հովիւ չունի՝ գայլերու ճարակ կ'ըլլայ։ — Հօտ՝ յարաբերեալ. որ՝ յարաբերական դերանուն։

Յայտնի է որ յարաբերական խօսք մը երկու բայ, ուստի եւ երկու նախադասութիւն կ'ունենայ. 1. Հօտը գայլերու ճարակ կ'ըլլայ. 2. որն որ հովիւ չունի։

460. Յարաբերական դերանունը միշտ իր յարաբերեալէն յետադաս է. Մեղուն ու մրջիւնն որ չնչին անասուններ են՝ աշխատասիրութեան օրինակ եղած են։

461. Յարաբերական դերանունը միշտ իր բայէն կամ խնդրէն նախադաս է. Քանի՛ խիստ դարմաններ որոնցմէ կը սոսկայինք, մեր կեանքը պարգեւած են մեզի։ Կաղնի մ'որուն ստուերն անթիւ թռչնոց դադար եղած է։

462. Յարաբերական դերանուան եղակին՝ ուղղական եւ հայցական հոլովներուն մէջ շատ վայելուչ կերպով յոգնակիի տեղ կը գործածուի, — երբ իր յարաբերեալը յօդութեամբ դրուած չէ. զորօրինակ. Ախտերն ու դաւանութիւններն որ մինչեւ գերեզման մարդուս կ'ընկերանան, ոմանց նաեւ դժբախտ յաւիտենականութեան մը նախաճաշակն են։ Այն տգեղ կապիկներն որ տեսար, Ափրիկէի կապիկներ են։ — փոխանակ ըսելու՝ Դաւանութիւններն որոնք կ'ընկերանան. կամ Կապիկները զորոնք տեսար։

Ընտրելի է՝ Ես որն որ. դուն որն որ. եւ մանաւանդ յայտնի սխալ է յոգնականի քով՝ Մենք որն որ. անոնք որն որ։

Այսպիսի տեղեր բաւական է եւ բնական է պարզապէս որ դերանուն։

Numérisé par CDMF (PP) - 2011

463. Իսկ երբ որ յարաբերեալը զօրութեամբ դրուած է, միշտ կը գործածուի որ շաղկապ՝ եղակիի մէջ նախընթաց ն յօդով. Որն որ. որուն որ. յոգ. աւանց յօդի՝ որոնք որ. որոնց որ, եւայլն։ Ընտրէ՛ առ որն որ կամքդ կ'ախորժէ։ Տերեւախիտ ծառերն անձրեւի կաթիլներով ծանրացած են, որուն որ մերձենաս՝ կ'ողողէ գլուխդ ջրով։ — Այսպիսի տեղեր՝ որն որ, որուն որ կը նշանակէ տճկ. հանկիսը քի։ (Կ'ըսուի նաեւ՝ որը որ։)

464. Բայց կ'ըսուի Ով որ, փոխանակ ըսելու՝ այն մարդն որ, որ մարդն որ. յոգն. Որոնք որ. — նոյնպէս Ինչ որ. փխկ. այն բանն որ, որ բանն որ ըսելու։ Աստուծոյ փոխ տուած կ'ըլլայ՝ ով որ աղքատին ողորմութիւն կ'ընէ։ Որոնք որ անսովոր լաւութիւն մը սկսան պահել, կասկածելի եղան։ (Ինչ որ՝ սովորաբար կը հոլովի սեռ. տր. եւ բցռ. ինչ բանի որ. ինչ բանէ որ։)

465. Զգուշալի է յաճախել Որ անոր, որ անոնցմէ, որ իրեն՝ տաճկ. ձեւով հոլովումը, փոխանակ՝ որուն, որոնցմէ եւայլն ըսելու։ (Վասնզի տաճկ. լեզուն իւր յարաբերականը միայն այս կերպով կրնայ հոլովել։) Որ այն առեն. (այսինքն՝ Որ առենն որ։) Շատեր կան՝ որ քիչ տրուեր է անոնց խելք ու հանճար։ Սեղանաւոր մը գիտեմ՝ որ անկէ իշխաններն փոխ կ'առնուն։ Ան որ ամէնքն իրմէ կը դողան։ Աւասիկ երկու տղայքն որ ծնողքն անոնցմով կը պարծին։

466. Աւելի գործածական է այդ ոճը՝ երբ յաջորդ դերանուան տեղ ստացական յօդ դրուի. ինչպէս. Մարդ կայ որ հետը չի խօսուիր։ Զինուորներ որ ձեռքերնին զէնք չկայ։ Ճարտար մէկն որ ձեռքը կտրուած է։ Աղքատ մ'որ պատռուած են զգեստները։ Այնպիսի մէկու մը յանձնէ որդեակդ՝ որ վրան վստահ ըլլաս։

467. Որ դերանուան եզակի ուղղականն ու հայցականը ստացական յօդով կրկնուած՝ կը նշանակէ մէկը (այսօղէս) մէկը (այնօղէս). կամ օմանք (այսօղէս) օմանք (այնօղէս.) զորօրինակ. Արտօրնոք հեծան փախան որը աջ որը ձախ։ Որը շատ է կ'ըսէր, որը քիչ։ Անդադար մտնել ելլել մըն էր, որը ներս որը դուրս։

Numérisé par CDMF (PP) - 2011

Այս հոլովածը սովորաբար մէկ բառով կ՚ըլլայ. ինչպէս՝ Մէկէն չորս կ՚առնու մէկէն քառասուն. (փխկ. Որմէ չորս որմէ քառասուն։)

468. Յարաբերեալը միշտ գոյական անուն մըն է կամ դերանուն. (տես 459։) Բայց երբեմն որ դերանունին ամբողջ խօսք մ՚ալ յառաջ կը բերէ. զորօրինակ. Լեզուն արձակեց սկսաւ զթագն ու թագաւորը թշնամանել. որ ամենուս սարսափ պատճառեց. որուն համար ինքն ալ ծանր բանտարկութեան դատապարտուեցաւ։ Եկան աւետեցին մեզի թէ մօտեցանք Հայրենեաց. որով յանկարծ երկայնժամանակեայ վշտերնիս մոռցանք։

—

## §. 2. Դերանունական յօդեր:

469. Դերանունական կամ Դիմորոշ յօդերն երեք կերպ գործածութիւն ունին. 1. Անձնական դերանուան տեղ. 2. Ցուցական դերանուան տեղ, եւ 3. (որ սակաւ տեսանք,) Ստացական դերանուան տեղ։

470. Դերանունական յօդերն՝ անձնական եւ ցուցական դերանուանց տեղ գործածուին նէ, անուանց վրայ պարզապէս կ՚աւելցուին՝ առանց յօդնական մասնիկներու։

471. — Ա. Անձնական դերանուան տեղ ս, դ, ն դիմորոշները կ՚աւելցուին անուանց վերջին ծայրը. Չենք կրնար արարածքս Արարչին մեծութիւնը ճանչել. (այսինքն՝ մենք արարածքս) Ես զօրապետս ահա ճակատուն առաջին շարքը, եւ ո՞ւր էք (դուք) լքեալ զինուորքդ։ — Այսպէս մանաւանդ կոչականի վրայ. Արարիչդ եւ փրկիչ։ Քո՛յրդ եւ սեգ Տրդատ։ Ա՜յ դիւցազունքդ։

472. — Բ. Ցուցական դերանուան տեղ՝ անուանց վերջին ծայրը։ Օրինակներդ բաւական ըլլան զքեզ հաւանեցընելու։ Ո՞վ չի տեսներ թէ կեանքս անցաւոր է։ Աշխարհիս մեծութիւնը պատրանք մըն է։ Տարւոյս հունձքը շատ առատ կ՚երեւայ։ Նոյնպէս յաջորդները.

Numérisé par CDMF (PP) - 2011

Այսօրուան օրս․ Շաբթուս մէջ․
Ամսոյս վերջերը․ Օրէս ի վեր․ (այսօրուընէ սկսեալ։)
Հիմակուան տունս․

Առանձին կերպով մը մարդ բառին եզակին ս յօդով կը գործածուի․ Մարդս, մարդուս․ փոխանակ՝ մարդը, մարդիկ կամ մարդկային բնութիւնն ըսելու։ Մարդուս սիրտը խոր ծով մըն է, կ'ըսէ իմաստունը։ Մարդս տկար է։ (Զատ է ուղղ․ մարդ անյօդ․ սեռ․ մարդուն յօդով, երբ մասնական անուն․ տես 433։)

473․ — Գ․ Ստացական յօդերը քանի մը դէպքի մէջ սովորութիւն եղած է յատկացեալին վրայ դնել՝ փոխանակ յատկացուցչին վրայ դնելու։ Այսպէս կ'ըսենք՝ Ձեռքի գաւազանս․ Երթալու տունդ․ (փխկ․ ձեռքիս գաւազանը․ երթալուդ տունը։) Տղայութեան օրերս, կամ Տղայութեանս օրերը։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ․

## ԲԱՅԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

---

### §․ 1․ Բայերու սեռը։

474․ Կրաւորական բայն որ ըստ ինքեան ուրիշէն կրել մը կը ցուցընէ, շատ անգամ պարզապէս չէզոքի տեղ կը գործածուի․ զորօրինակ․ Այդ մարդուն ընտանութիւնն հիմայ բոլորովին փոխուած է։ Ամէն խօսքի մէջ նետուիլ խոհեմութիւն չէ։ — Այսպէս ալ՝ Լուացուիլ․ սրբուիլ, ևայլն․ այսինքն՝ ինք զինքը լուալ, սրբել․ ինք զինքը նետել։

475․ Կրաւորականը կը գործածուի դարձեալ՝ իրարու մէջ փոխադարձ գործողութիւն ցուցընելու համար։ Երկու բանակներն (իրարու) զարնուեցան, և յաղթութիւնն երկար ատեն անորոշ մնաց։ Առաջին տեսնուելնուս՝ մէկը զմէկ չճանչցանք։

Միադիմի կամ դիմազուրկ բայերը կը գործածուին՝

476․ — Ա․ Դիմաւոր ստորադասական բայով․ ինչպէս․ Հարկ է որ երթամ ես Հռոմ ալ տեսնեմ, ըստ

Numérisé par CDMF (PP) - 2011

Առաքեալ։ Ամօթ է որ հեթանոս մարդիկ քան զմեզ աւելի առաքինի ըլլան։

477. — Բ. Աներեւոյթ դերբայով. որ այն ատեն անուն-բային տրականի կը դառնայ. այսպէս. Հարկ է **ինծի՝ երթալ հօրս ալ տեսնել։ Վայել է երիտասարդաց ծերերուն մեծ դնել։**

Կամ առանց անձ ցուցընելու, (առանց տրականի.) Ամօթ է **Աթէնք երթալ** եւ պարապ (բան չսորված) ետ դառնալ, կ՚ըսէին նախնիք։ Ի զուր է **խօսիլ՝** ուր մտիկ ընող չկայ։

---

## §. 2. Բայերուն եղանակներն ու ժամանակները։

478. Սահմանական ներկայ ժամանակն որոշուած է հիմակուան գործողութիւնը կամ սովորութիւնը եւ կամ իրին բնութիւնը յայտնելու. զորօրինակ. Տղաք **կը խաղան։** — Տարուան մէջ ամիս մը ծոմ **կը բռնեն։** — Խաղաղասէրը սիրելի **կ՚ըլլայ։ Ծառերը** գարնան **կը ծաղկին։**

479. Սահմանական անկատարը քանի մը դէպքի մէջ՝ քաղաքավարական կամ մեղմական բացատրութիւն մ՚եղած է ներկայի տեղ գործածել. այսպէս. **Կը բաղձայի** որ այս պատմութիւնս երրորդի մ՚ալ չհաղորդուէր. (այսինքն՝ **Կը բաղձամ** որ ուրիշի մը **չհաղորդուի։**) **Կը խնդրէի՝** որ եթէ հնար է՝ ժամանակին անյապաղ հասնուի։ Ես այդ կարծիքը **չէի պաշտպաներ։**

480. Թէական կամ պայմանական խօսքերու մէջ, որ հարկաւ երկու նախադասութենէ կազմուած են, առաջին նախադասութիւնը երբեմն սահմանական եղանակ կը դրուի, եւ երբեմն ստորադասական. իսկ երկրորդը միշտ սահմանական*։ **Եթէ կը լսէի,** հապա ինչու **չէի պատասխաներ։ Եթէ** հոս **մնաս,** դուն ալ **կը տեսնես։ Եթէ** ամէն արկածի պատրաստ **ըլլայինք չէինք** ամէն անգամուն այնչափ **խռովեր։**

* **Երկրորդ** նախադասութիւնն եթէ հարցական է, երբեմն ստորադասական ալ կը դրուի. **Եթէ** անակնկալ բան **չէր,** ինչու **զարմանայի։ Եթէ** մէկհատիկ զաւակս ալ **յափշտակէին,** ալ ես ինչո՞վ **մխիթարուէի։**

Numérisé par CDMF (PP) - 2011

481. Եթէ, երբ, մինչեւ որ, թէպէտ որ, քանի որ, միայն թէ, իբր թէ եւայլն բառերէն ետքը սովորաբար ստորադասական եղանակ կու գայ. ինչպէս. Եթէ այսպէս մէկը զմէկ խօսողէ, տեսէք՝ չըլլայ թէ օր մ'ալ իրարմէ ստանք։ Ով որ զիս տեսնէ, պիտի զարնէ մեռցնէ։

482. Պարզ ստորադասական ժամանակ մը բաւական կ'ըլլայ երբեմն թէական նախադասութիւն մը կազմելու՝ առանց Եթէ, երբ, նէ աւելցնելու. զորօրինակ. Տեսնէն որ մեռնելու վրայ է, կը թողուն կ'երթան։ Մեռնելիքս գիտնամ, զքեզ չեմ լքաներ։ Թշնամւոյդ տունն այրած ըլլայ՝ կ'ուրախանայի՞ր արդեօք։

483. Ցանկական ոճ է՝ ստորադաս. ներկայի տեղ սահմ. յարակատար գործածել կրկնութեամբ։ Ծանօթ եղեր է՝ օտար եղեր է՝ անխտիր կը մտնէ կը տեսնուի։ Եթէ վտանգի առեն եկեղեցական չգտնուի, դպրեակն է եղեր կամ ուրիշ մը, պէտք է երախայն մկրտել։ Տեսեր է չէ տեսած՝ հոգ չէ։ Փոխանակ ըսելու՝ Եթէ ծանօթ ըլլայ՝ թէ օտար, անխտիր կը մտնէ։ Դպրեակն ըլլայ՝ կամ ուրիշ մէկը։ Դպրեակն ըլլայ թէ ուրիշ մէկը։ Տեսնէ թէ չտեսնէ, հոգ չէ։

484. Ճիշդ խօսելով՝ պէտք էր ստորադաս. անկատարով ըսուիլ, Կը սպասէր որ ընկերը գայ. Խնդրեցի որ իրենք քիչ մը հեռանային. բայց սովորութիւնն ատոր հակառակ կ'ուզէ որ երկրորդ անկատարին տեղ ներկայ դրուի. այսպէս. Խնդրեցի որ իրենք քիչ մը հեռանան։ Քրմին դողդողալէն եւ դանդաչելէն ենթադրեցին թէ բան մը գիտեր է։ Կը վախնար, որ չըլլայ թէ հայրը լսէ եղածն եւ զինքը խրատէ եւ իւր չար կամացն արգելք ըլլայ։

485. Ստորադասական կը գործածուի՝ հրամայականին նաեւ Ա եւ Գ դէմքերուն տեղ. (յայտնի է որ հրամայականը միայն Բ դէմք ունի։) Թշնամիք հասեր են. Եկէք փնտռենք ուր են. զարնենք խորտակենք եւ քնոջ ջինջ ընենք սա վատերուն բանակը։ Զինուորին երթայ իմացընէ մեր գալուստը։ Գան հոս եւ խնդիրքնին հասկըցընեն։ Այս իրիկուն երթան անպատճառ։


Numérisé par CDMF (PP) - 2011

Նոյնպէս ստորադաս. անկատարն ու գերակատարը իբրեւ հրամայական՝ անցած ժամանակի համար. Երթային տեսնէին. (տճկ. կէօրէ էտիլէր։) Տե՛ս (255) Թող շաղկապն որ այս դէպքիս մէջ կ'աւելցուի։

486. Ստորադասականով ձեւացած արգելականը մի չ'առնուր. այլ կ'ըսուի Չերթաս. չերթայիր. Թող չսպանեն։

Ասկէ կը տեսնես որ մի շաղկապն արդի հայերէնի մէջ Բ դէմքէ դուրս չի գործածուիր։

487. Այս տեսակ արգելականը հարցմամբ ալ կը բանի ներկայ եւ անկատար.
Չըսե՞ս. (տճկ. տէմէ՞ն նէ.) յոգն. Չըսէ՞ք. (տէմէնի՞զ նէ.) Չըսէի՞ր. (տէմէ՞ն նէ իտի.) Չըսէի՞ք. (տէմէնի՞զ նէ իտի.) բայց նշանակութիւնն արգելական չէ. այլ ըսել կ'ուզէ՝ ինչո՞ւ չես ըսեր. ինչո՞ւ չըսիր։ — Կը տեսնես որ այս դէպքիս մէջ ստորադաս. անկատարը սահմ. կատարեալի տեղ կը գործածուի։

488. Բուն արգելական բայերու վրայ (թէեւ Բ դէմքի ըլլայ,) մի չի դրուիր այլ պարզապէս ոչ, երբ իրարու կապուած իրար յաջորդեն. այսպէս. Ոչ լսէ զբամբասողը, եւ ոչ խօսէ բամբասողին։ Ոչ գացէք ոչ ալ գիտցէք։

489. Ընդհանրապէս բացասական եւ արգելական խօսքերու մէջ՝ երբ երկու միեւնոյն դէմքով եւ թուով բայ ետեւէ ետեւ գան, միայն առաջնոյն վրայ կը դրուի չ կամ մի, որ երկրորդին վրայ զօրութեամբ կ'իմացուի. այսպէս. Մանուկ հովիւ, չե՞ս ոչխարներդ ժողվեր։ Մինչեւ ցե՞րբ չէք իջնար գործքերնիդ տեսնէք։ Մի՛ իրար խոցնէք կծու խօսքերով ու նախատէք։ Չեմ երթար տեսներ. (փոխանակ՝ Չեմ երթար չեմ տեսներ։) Մի՛ երթար տեսներ. փխկ. Մի՛ երթար մի տեսներ։)

Այսպէս ալ՝ Չերթաս տեսնես. Չիյնաս մարիս. (այսինքն՝ Չըլլայ թէ երթաս տեսնես, կամ իյնաս մարիս։)

Այս ոճն հայերէնի յատկութիւններէն է։

490. Տճկական զլուցուածք է՝ միեւնոյն բայը

Numérisé par CDMF (PP) - 2011

հաստատական եւ բացասական քովէ քով բերել կապել. ինչպէս. Ըրա՜ չըրա՜՝ միաքը դրածն յաջողցուց. (այսինքն՝ ամէն ջանք ըրաւ.) Որդին գերութենէ փըրկելու համար ունեցածը չունեցածը կու տար. (բովանդակ ստացուածքը.) Լսեց չլսեց՝ փախաւ գնաց. Լսած չլսած՝ չեմ ուզեր պոռաց. — Աւելի հայերէն է՝ Լսեց ու չէ՝ փախաւ. Հազիւ թէ լսած՝ պոռաց թէ չեմ ուզեր.

Բաղադրեալ ժամանակներու գործածութիւնն իրենց նշանակութենէն յայտնի է. (տես 243.) Միայն գիտնալու է որ

491. Բաղադրեալ ժամանակներն երբ ետեւէ ետեւ իրար յաջորդեն՝ հասարակօրէն էական բայը եւ ապառնոյն պիտի բառը չի կրկնուիր. Պիտի լսեն ու տեսնեն. Յափշտակեր պիտի եւ տանէր եղեր. Շատ բան խօսած էր եւ շատ պատիժ սպառնացած. — կամ Շատ բան խօսած եւ շատ պատիժ սպառնացած էր. Գացեր ամէն բան պատմեր է տեղն ի տեղը.

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

492. Դերբայներն ոչ միայն իբրեւ բայ, այլ եւ իբր ածական կամ գոյական ալ գործածուելով շատ անգամ անուն-բայի եւ խնդիր կ'առնուն.

I. ԱՆՈՒՆ-ԲԱՅԻ.

493. — Ա. Աներեւութի անուն-բային հասարակօրէն անորոշ առանց յօդի է. բայց ինքն աներեւոյթը սովորաբար յօդով կամ հոլոված. ինչպէս. Լուսնոյ վրայ ջուր գտնուիլը շատ երկբայական է. Փոխանակ ինծի ձեռքի օգնելու, լաւ է որ դուք ամաչէք. Ծովը սաստիկ հով փչելէն կ'ուռէր ու կ'ալեկոծէր. Զանգակ զարնուելէն յառաջ. Ժամանակ անցնելէն ետքը. (փոխ. սեռականի՝ Հովին փչելէն. զանգակին զարնուելէն յառաջ.)

494. — Բ. Միւս դերբայները գրեթէ նոյն կերպով նախընթաց անուն-բայի կ'առնուն. ինչպէս օրինակներս կը ցուցընեն. Բերնէն ելած նախատող մոլեգին



Numérisé par CDMF (PP) - 2011

միջատը։ Արտերը ջուր խմած մեծատունը։ Այգիէն խաղող փրցուած գիւղացւոյն բողոքները։ Արջափանջ լուալու հովիտներ։ Հաշտութեան պէտքական համեղէն անյայտ է դեռ։

2. ԽՆԴԻՐ.

495. Ած անցեալն եւ լու ապառնին՝ որ գոյականի քով իբր ածական կը բանին, (տես Յոգնած մարդ, 261.) կրնան նաեւ խնդիր-սեռի հայցական հոլով առնուլ, երբ ներգործական նշանակութիւն ունին. այսպէս. Թոյն տուած մարդ մը։ Ծեծ կերած տղայ մը։ Գործ գործելու մարդիկ։

496. Դերբայները միշտ համառօտ խօսուածք մը կը կազմեն՝ թէական կամ մանաւանդ յարաբերական նախադասութեան մը տեղ. այսպէս կ'ըսենք՝ Եկող մարդիկ. այսինքն՝ մարդիկ որ կու գան. Եկած մարդիկ. մարդիկ որ եկան կամ եկած են. Գալու մարդիկ. մարդիկ որ պիտի գան կամ պիտի գային, եւայլն։ Ուստի դերբայներու զօրութեանը քով թափանցելու համար՝ պէտք է զանոնք որ յարաբերական դերանուամբ, կամ՝ թէ, որ, որպէսզի շաղկապներով դիմաւոր բայի լուծել։

497. Ըսած ենք թէ հասարակ ածականի մը նախադաս գոյական մը կը տրուի՝ ստացական յօդով. (382.) Նոյն գործածութիւնը շատ յաճախ է դերբայներու քով։ — Յարաբերական դերանուան յատկացեալը՝ նոյն կերպով դերբայէ մը յառաջ կը դրուի՝ երբ նոյն խօսքը դերբայով ամփոփուած ըլլայ։ — Այսպէս այլեւայլ հոլովով եւ ստացական յօդով կը դրուի նախադաս յատկացեալը.

*Ուղղական.* Տերեւները թափող ծառ մը. (ծառ մ'որուն տերեւները կը թափին։) Գլուխը ցաւողն իրեն կը դիմէ։ — Տերեւները թափուած կամ թափած ծառ մը. (ծառ մ'որուն տերեւները թափուած են։) Խօսքը չըլլալու իրողութիւններ։ Զօրավիգները չօգտողն ետ քաշուեցաւ.

*Հայցական.* Ոստերը կտրած ձիթենին. (ձիթենին

Numérisé par CDMF (PP) - 2011

որուն տողերը կարդացիր։) Թուղթերը համրած գիրքս։ Թուղթերը համրելու գիրքս. (գիրքն որուն թղթերը պիտի համրեմ։

*Սեռական*. Տունը մէջէն կրակ ելած դրացին. (դրացին որուն տան մէջէն կրակ ելաւ։)

*Տրական*. Ախոռին դարման չըլլալու հիւանդ. (որուն ախոռին դարման չ'ըլլար։)

*Բացառական*. Քովէն ճամբայ բացուելու գետերը. (այն գետերն որոնց քովէն ճամբայ պիտի բացուի։) Մէջէն դրամ վերցուած արկղ։

*Գործիական*. Խօսքովը խաբուած նենգաւորդ. (նենգաւորն որուն խօսքովը խաբուեցար։)

*Ներգոյական*. Ձի չէր մնացեր վրան հեծնելու. (որուն վրայ հեծնուի։) Անկողինը գոյժ հասած մօրն անպատմելի էր սուգը։ Մէջը ձուկ որսալու կամ որսացուելու լիճ։ Գրիչդ վրան մնացած սեղանը. (սեղանին որուն վրայ գրիչդ մնաց։)

Այս նախադասութիւններով կը մեկնուին այն կերպ կերպ գործածութիւններն որ հետեւեալ օրինակներուն մէջ պիտի տեսնենք։

---

## §. 1. *Դիմաւոր Աներեւոյթ*։

498. Աներեւոյթը կը գտնենք իբրեւ բայ եւ իբրեւ գոյական։ — Գոյական է երբ յօդ ունի, կամ անուանբայի, խնդիր եւ յատկացեալ եղած է։ Այսպէս յաջորդ օրինակներուս մէջ։

Բայ. Ես յանցաւոր ելլելով՝ դուն այնչափ խռովեցար։
Գոյ. Իմ յանցաւոր ելլելս՝ դուն այնչափ խռովեցար։

Բայ. Դուն եւս տղոցմէդ՝ պատիւդ չճանչնալ է։
Գոյ. Քու եւս տղոցմէդ՝ պատիւդ չճանչնալ է։

Բայ. Ներս մտնելու վախցայ։ Մօտենալու կ'ամչնամ։
Գոյ. Ներս մտնելէն աչքս վախցաւ։ Մօտենալէ կ'ամչնամ։

Բայ. Ճշմարիտը խօսելու համար ներս կանչուեցաւ։
Գոյ. Ճշմարիտը խօսելուն համար ատելի եղաւ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Իսկ անորոշ սեռականն ու տրականը (ուտելու, գործելու եւայլն.) ըսած ենք թէ իբրեւ ածական կամ իբրեւ շարժում ցուցընող բայերու խնդիր կը բանի. (տես 265 եւ 361։)

## Ա. Աներեւոյթ բայ։

499. Գլխաւոր բայի տեղ երբեմն պարզապէս աներեւոյթ մը կը դրուի՝ անյօդ եւ անհոլով, առանց գլխաւոր բային խնդիրն ըլլալու. զորօրինակ. Կը մտածէր երթալ իւր բարեկամին տունն իջնալ եւ ներումն խնդրել։ Եւ այնպիսի մէկու մը առջեւ խոնարհիլ՝ այդ իրեն մահ է։ — Հասարակօրէն կ'ըսուի՝ Կը մտածէր որ երթայ։

Աւելի սովորական է յօդով եւ հոլոված աներեւոյթն որ վերը (493) տեսանք։

500. Գլխաւոր բայէ մը յառաջ նոյն բային աներեւոյթը կ'աւելցուի՝ խօսքին ոյժ տալու համար, — մանաւանդ երբ յաջորդ նախադասութիւնը Բայցով է։ Ինչպէս. Մեռնիլ ամէնքս պիտի մեռնինք։ Խոստանալ շատերը կը խոստանան, բայց ոչ ամէնքը կը կատարեն։ Ցաւիլ կը ցաւիմ, բայց չեմ ողբար։ Նոյնը (ստացական) յօդով. Խոստանալը կը խոստանայ, սակայն չի կատարեր։

501. Ուզել, կրնալ, գիտնալ, ձեւացընել, եւայլն բայերէն ետքը լոկ աներեւոյթ կու գայ, (որ գլխաւոր բային խնդիրը կրնայ ըսուիլ.) այսպէս. Ուզեցին վրայ հասնիլ բայց չկրցան։ Կը բաղձային այդ օտարականներուն հետ փախչիլ։ Կրնա՞ս երկնից աստղներն համրել կամ ծովուն աւազները։ Չգիտնալ ձեւացուց։ Կարդալ չէր գիտեր։ Երթալ ուզել։ Չկրնալ հասնիլ։

Մեծապէս մտի դնելու բան է որ այդ աներեւոյթն ամէն դիպուածի մէջ անփոփոխ պիտի մնայ, թէեւ գլխաւոր բայն ալ աներեւոյթ գրուած ըլլայ (ինչպէս վերջին օրինակներուն մէջ.) մանաւանդ հոլովուած աներեւոյթ կամ ընդունելութիւն։ Այսպէս՝ Երթալ ուզողները։ Չուզելով գերի ըլլալ։ Սորվիլ բաղձացողին. Հասնիլ չկրցողներէն։ Չկրնալով ըսել. եւ ոչ՝ Չկրցող հասնողներէն. Չկրնալ ըսելով, որ սխալ կ'ըլլայ։

Ռամիկն ուրիշ անտեղութիւն մ'ալ սովորած է

Numérisé par CDMF (PP) - 2011

կրնալ բայով. Չկրցայ գտնել զեզ. Չկրցինք իմացնել ե-լիք. փոխանակ՝ Չկրցայ տեսնել, եւայլն։
Դարձեալ բառական յաճախեալ վրիպակ մըն է՝ ասել. Չէր ուզեր մտնել. Չէին ուզեր մտնենար. Չեմ կրնար լսել. Ո՞վ կրնայ հասկընար։

502. Մտնալ, վախնալ, ամչնալ, փախչիլ, եւայլն. բայերուն քով աներեւութի տրականը կը դրուի. ինչպէս. Կարծես թէ կ'ամչնար իր ով ըլլալը յայտնելու։ Կը վախնամ հետս փնտռելու։ Նամակներն եղբօրս ղրկելու մոռցայ։

503. Քանի մը բայերու քով. ինչպէս Սկսիլ, համարձակիլ, յանդգնիլ, ստիպել, եւայլն, կրնայ թէ պարզ (ուղղական) աներեւոյթ եւ թէ տրական դրուիլ.

Գրելու սկսաւ. Խնդիրքդ մերժելու կը պարտաւորիմ.
Սկսաւ գրել։ Խնդիրքդ կը պարտաւորիմ մերժել։
Վերջապէս կամքերնիս կատարելու հաճեցաւ.
Վերջապէս հաճեցաւ կամքերնիս կատարել։

504. Աներեւութի քով՝ համար, փոխանակ կամ տեղ նախադրութիւնները զեղչուելով՝ կը մնայ պարզ տրական, — հասարակօրէն ստացական յօդով. ինչպէս. Քեզի տալուս՝ լաւ է որ աղքատի մը տամ. (այսինքն՝ փոխանակ քեզի տալուս։) Մոռնալուդ՝ գնա աշխատէ։

505. Աներեւութին գործիականն ալ իբրեւ բայ* կը գործածուի։ Տեսնելով վտանգին մեծութիւնը, համարձակող մը չգտնուեցաւ։ Ձեռածնիս շատ տարօրինակ բաներ ըսելով եւ ես չկրնալով հետաքրքրութիւնս զսպել, վերջապէս քանի մը հարցում ալ ըրի։

* Բայ ըլլալը կ'իմանաս քովի ուղղական անուն-բայէն. Ես տեսնելով. Անոնք չկրնալով։

## Բ. Աներեւոյթ գոյական։

506. Գոյական աներեւոյթը կրնայ անուն բայի ըլլալ, կամ խնդիր, կամ յատկացուցիչ. — հոլովեալ կամ անհոլով. յօդով կամ առանց յօդի։

Այսպէս՝ գոյական է աներեւոյթը՝ երբ ըսեմ.
Ուղղական. Պտըտիլը մարդկային տկարութեանց մէկ գլխաւորն է։ — Անուն-բայ։

Numérisé par CDMF (PP) - 2011

Իմ քաշուիլս՝ փախչելու պիտի համարուէր։ — Խնդ. բնութեան։

Հայցական. Ո՞վ է լսեր իմ գործենալը։ Նախատել կամ Նշաւակել չէր սիրեր ամենեւին։ — Խնդիր-սեռի։
Մեր լռութիւնը յաղթուիլ կարծեցին։ — Խնդ. բնու։

Սեռական. Հանգչելու օրերն անցան։ Յատկացուցիչ։
Խաղաղ կեանք անցընելու համար։ — Նախադ. խնդ։

Տրական. Տեսնելու արժանի։ — Ածականի խնդիր։
Այնպիսի արագութեամբ շարժելուն կը նայէինք։
Թղթաբերին հասնելուն կը սպասեմ։ — Բայի խնդիր։

Բացառական. Շատ մը բան խօսելէն ետեւ։ — Նախադրութեան խնդիր։
Քու այնչափ յանդգնելէդ իմ սիրտս ի գութ եկաւ։ — Խնդ. բնութեան։

Գործիական. Հրամայելով մը կը խօսի։ Սիրելովը սիրելի եղաւ։

507. Ուրախանալ, տրտմիլ, բարկանալ, զայրանալ եւ այլն բայերուն հետ (առաջական) յօդով աներեւոյթ տրական կը դրուի. զորօրինակ. Շատ տրտմեցայ զքեզ հոն չգտնելուս։ Այսպիսի պատեհ առիթ մը կորսուելուն շատ վշտացաւ սիրտս։ Հերովդէս սաստիկ այլայլեցաւ այնպէս հանդիսական երդում մ՚ըրած ըլլալուն։

508. Պէս եւ ընդ նախադրութեանց քով աներեւոյթ մը կը դրուի առաջական յօդով, եւ կը նշանակէ անմիջապէս. հազիւ թէ։ Տեսնելուս պէս, կամ Ընդ տեսնելս ճանչցայ։ Բանալուն պէս ցամքեցաւ։ Ընդ անունը լսելը՝ մարեցաւ մնաց։ (Տես նաեւ վարը 523. Տեսածիս պէս։)

## Գ. Աներեւոյթ ածական.

509. Աներեւութին տրականը հասարակ ածականի պէս կը գործածուի. եւ կը ցուցնէ՝ կարելի, արժանի, կամ կարող, ըլլալու, ընելու. Ներգործական եւ կրաւորական.

Ուտելու հաց. — Հաց զոր ուտես. կամ
Ուտուելու հաց. — Հաց որ կ՚ուտուի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Ուտելու տեղ. — տեղ ուր ուտես. (եւ ոչ՝ ուտուելու։)
Տեսնելու կամ Տեսնուելու բաներ։
Գործելու մարդիկ. — մարդիկ որ գործեն կամ կարենան գործել։
Խմելու գաւաթ. — գաւաթ որով խմես. (եւ ոչ՝ խմուելու։
Պտըտելու կամ պտըտուելու պարտէզներ. — պարտէզներ որոնց մէջ կրնաս պտըտիլ։

Նոյնը խնդրով մէկտեղ, կամ մակբայով եւայլն.
Ձուկ բռնելու լիճ. Հաց ուտելու տեղ. Գործ գործելու մարդ. Ցորեն ցանելու արտեր. Փայտ ջարդելու կացին. — կացին որով փայտ ջարդես։
Հեռուանց տեսնուելու նշան. Դուրս ելլելու վաճառքներ։

510. Օրինակներէս կը տեսնես որ այս ածական աներեւոյթ տրականը՝ 1. միշտ եզակի, 2. առանց յօդի կը մնայ, եւ 3. հասարակօրէն նախադաս է իր գոյականին։ Նոյնն իմացիր միւս դերբայներուն համար ալ։

Աներեւոյթ ածականին գոյական ալ կրնայ ընտականապէս ստացական յօդ առնուլ. ինչպէս. Ուտելու հացս գառն էր ինծի, եւ թոյն՝ խմելու ջուրս։

---

## §. 2. Ներկայ ընդունելութիւն (ներկայ):

511. Ընդունելութիւն ներկայ դերբայը միշտ ածական է. եւ միայն ըստ պատահման կրնայ գոյական ըլլալ, այսինքն յօդ առնելով կամ բուն գոյականէն բաժնուելով՝ ինչպէս հասարակ ածականները (419։) Քեզի խրատ տուող անձինք՝ քու ապագայ վիճակդ աչքերնուն առջին ունէին։ — Քեզի խրատ տուողները՝ քու բարւոյդ համար կը ջանան։

512. Քանի մը ող դերբայ՝ անցեալ դերբայի տեղ կը գործածուի՝ տաճկ. ըճըլ. զորօրինակ։ Մեռնողներուն համրանքը չկրցանք իմանալ։ Մեռնող թագաւորին եղբօրորդին. (փխկ. մեռածներուն. մեռած թագաւորին։) Երէկ իրիկուն հասնող թղթաբերը։

Numérisé par CDMF (PP) - 2011

Երբեմն կ՚ըսուի նաեւ (ընտանեկան լեզուի մէջ) Եկող շաբաթ, կամ նաեւ Եկած շաբաթ, փոխանակ՝ Գալ շաբաթ կամ Գալու (առաջիկայ) շաբաթ ըսելու։

513. Յատուկ ոճով կ՚ըսուի՝ Փոխըղը ֆոխըղէն եղան։ Վողող հողողէ կ՚ըլլար, կամ կ՚ըլլայրն։ Փընդուող ֆնդոողէ կ՚ըլլան. այսինքն՝ ամէնքը փախան տագնապաւ, եւայլն։)

---

## §. 3. Դերբայ անցեալ։

Անցեալն երեք ձեւ ունի, (ինչպէս Ա մասին մէջ տեսանք.) ած, եր եւ եալ. այսպէս. Ուրացած. ուրացեր. ուրացեալ։ — Սկսինք վերջիններէն։

514. — Ա. Եր անցեալն երբեմն սահմ. ներկայի եւ անկատարի քով նախադաս կը դրուի՝ առանց էական բայի. այսպէս. Սեցեր մեր շարժմունքը կը դիտէին։ Եչեր կը նայի։ Նստեր կու լար։ Ո՞ր դողջեր կ՚երթայ։ Գլուխն առեր կ՚երթայ։

515. — Բ. Եալ անցեալն ածական է. (տես 266.) բայց երբեմն նաեւ՝ իբրեւ բայ ալ կը գործածուի. զորօրինակ. Այնչափ երկարատեւ ճգնութեամբք ու աղքատութեամբ Նեղեալ եւ չարչարեալ՝ վերջապէս փոքրիկ յուսոյ նշոյլ մը կրցան տեսնել։ Վերջիններէն օլօեալ ամէն օր մէկ մէկ հոգւոյ կեանքը կը բառնար։ Հարիւրի չափ տան սպասաւորներ ունէր, ի բաց առեալ մշակները ու հովիւները։ (Այսինքն՝ Վերջիններէն օլօ-ըլէ. Մշակներն ի բաց առնելով։)

516. — Գ. Ած անցեալն երեք կերպ գործածութիւն ունի. 1. իբրեւ բայ, 2. իբրեւ գոյական, եւ 3. իբրեւ ածական։

### Ա. Անցեալ՝ բայ։

517. Ած անցեալը բայ է, մէկ մը՝ երբ ելած, առած անորոշ բայի տեղ դրուած է. ինչպէս. Թագուհին մեծ սրահէն անցած՝ նախարարները դիմաւորելու կ՚երթար։ Հայլու ջահերուն լոյսը փեռած՝ սկսան միաբերան աղաղակել թէ մատնութիւն է։ Ամէն իրի-

Numérisé par CDMF (PP) - 2011

կուն որդիքն հետ առած՝ ժուռ գալու կ՚ելլէ։ (Այսինքն՝ անցնելով. առնելով։)

518. Մէյ մ՚ալ՝ երբ ած ըլլալով կատարեալ աներեւութի տեղ դրուած է. ինչպէս. Քաղաքին երկար ատեն պատնէշներով պաշարուած եւ սաստիկ սովով նեղուած՝ վերջապէս դռները բանալու ստիպուեցաւ։ Մեռնելուն երեք օր անցած՝ զիս քովը կանչեց։ (Այսինքն՝ պաշարուած, նեղուած ըլլալով. անցած ըլլալով, կամ երբ երեք օր անցած էր։)

Այսպէս ալ ժամ եւ ժամանակ ցուցընող խօսքերու մէջ կ՚ըսուի. Տասնին քառորդ անցած։ Վեցը հինգ (րոպէ) անցած։ Զատկին երկու շաբաթ անցած. (տճկ. կէչէրէկ. գալարաք։)

519. Ած անցեալն բացասականին իբրեւ բայ գործածուելով՝ կը նշանակէ քանի որ դեռ չէ եղած. ինչպէս. Լոյսը չբացած՝ դռնէս դուրս չեմ ելլեր. (այսինքն՝ տեսնելէս յառաջ։) Այդ գործածութիւնն ալ անոնց կարգն է որոնք չծնած մեռան։ Զիս չտեսած՝ չերթաս։

Բ. Անցեալ՝ գոյական։

Ած անցեալն այլեւայլ կերպով իբրեւ գոյական կը գործածուի.

520. — Ա. Պարզապէս որոշեալ յօդ առնելով, ինչպէս որեւիցէ ածական անուն։ Եղածն ուրիշ բան չէր՝ եթէ ոչ օրըստօրական դէպք մը։ Ջրէն դուրս տեսնուածը ժայռի մը գագաթն է։ Ամէն օր պատահածները գրի կ՚առնուին։

521. — Բ. Ստացական յօդով կամ դերանուամբ՝ մէկուն ըրածը կը ցուցընէ. (իմ) տեսածս, ինչ որ (ես) տեսայ կամ կը տեսնեմ, կը տեսնէի եւայլն. Ունեցածներդ, ինչ որ ունիք կամ ունէիք։ Զորօրինակ. Մենք աւասիկ տեսածնիս կը պատմենք եւ լսածնիս կ՚աւանդենք հաւատարմութեամբ։ Շփոթելէն՝ ըսածը խօսածը չգիտցաւ։ Ուզածիս պէս յաջողեցաւ ամենայն ինչ։ Կրցածնուս չափ կ՚օգնենք ձեզի։ Ըրածներդ փոխարէն՝ ահա հատուցումն քեզի։

Numérisé par CDMF (PP) - 2011

Այս գոյական անցեալը չփոթելու չէ ածական անցեալին հետ՝ որ ստացական յօդին դիրքէն կ'որոշուին եւ իրարմէ տարբեր իմաստ կու տան, զորօրինակ.

Տեսածնիս կղզի է. — Ըրածդ նենգութիւն է.
Տեսած կղզինիս է: — Ըրած նենգութիւնդ է:

Տաճկերէն լեզուն այս զանազանութիւնը չունի:

522. Ած անցեալը գոյական աներեւոյթի տեղ կը գործածուի՝ նոյնպէս ստացական յօդով. այսպէս. Քու երբեք գործածդ չեմ տեսեր. (այսինքն՝ գործելդ:) Կեանքիս մէջ՝ սուտ խօսածս չեմ գիտեր. (այսինքն՝ չեմ գիտեր սուտ խօսած ըլլալս:) Ինչպէս ստոյգ է ծնածս՝ նոյնպէս եւ մեռնելիքս անտարակոյս է: Երբ հասածնիդ չիմացանք:

Նոյնպէս հոլովածն ալ. Ծնածէս ի վեր Աստուծոյ տեսչութիւնը զիս կը դարմանէ: Ասիկա հաղ եղածի նշան է. (այսինքն՝ հաղ եղած ըլլալու:)

523. Երբեմն ած անցեալն ալ աներեւոյթի պէս, (508) դէպ նախադրութեամբ կը գործածուի՝ անմիջապէս նշանակելու համար. այսպէս. Գեղ հասածիս պէս այդ գործերը կը հոգամ: Տեսածիդ պէս կը ճանչնաս:

Գ. Անցեալ ածական:

524. Ած անցեալն ածական է՝ երբ քովը գոյական անուն մը դրուած է կամ կրնայ դրուիլ: Ինչպէս Յօգնած ձիանք: — Ըստ այսմ եւս անցեալին հետ կը նոյնանայ. (տես 261:)

525. Շատ անգամ ած անցեալը խնդիր-բնութեան եղած կ'ըլլայ բայի մը. այսպէս. Եթէ թշնամիս վտանգի մէջ ընկած գտնեմ, ալ թշնամութիւնը չեմ յիշեր: Ես զինքը՝ ձեռքը սուր բռնած տեսայ, որ մօրը պաշտպանութիւն ընէ:

---

## §. 4. Դերբայ ապառնի:

Դերբայ ապառնի, ինչպէս տեսանք, կրկին է. լոց եւ լիք:

526. Լոց ապառնին աներեւոյթին հոլովածն է որ 1. բաղադրեալ ժամանակներ կը կազմէ. Տես-

Numérisé par CDMF (PP) - 2011

նելու եմ, (պէտք եմ առնել, կամ նաեւ՝ պիտի առնեմ։) Եւ 2. կը ցուցնէ ըլլալիքը. Տեսնելու քաղաքներս. (քաղաքներն որ պիտի տեսնեմ։) — Զատ է՝ Տեսնելու կամ տեսնուելու քաղաքներ։ (509։)

527. Լիք ապառնին կը գործածուի լու ապառնոյն տեղ.

528. — Ա. Երբ գոյականը զօրութեամբ դըրուած է. եւ կը ցուցնէ ըլլալու բան մը։ Այսպէս. Ըսելիքդ գուշակեցի. (ըսելու խօսքդ։) Ըլլալիքն իմացայ. (ըլլալու բանը։) Երթալիք, գալիք չկայ. (երթալու գալու մէկը։) Անոր ընելիք չկայ։ Ըլլալիք կար որ եղաւ։

529. — Բ. Երբ մէկուն ընելու գործողութիւնը կը ցուցնէ, շատ անգամ (ստացական) յօդով, եւ նաեւ հոլովուած։ Զորօրինակ. Այնչափ ուշ գալիքնիդ չէինք գիտեր։ Մէյ մ՚ալ զքեզ տեսնելիքս չէի յուսար։ — Այսպէս ալ ունիմ բայով՝ Ես զինքը տեսնելիք չունիմ։ Եթէ մինչեւ հիմայ չգրեց, ալ գրելիք չունի. կամ չունի գրելիք. (տես 264։)

Բայց զուտ բայանուն է, երբ ըսուի՝ Զինքը տեսնելիքս եկաւ։ Մարդուն գտնելիքս կու գայ։

---

Մինչեւ հիմայ տեսանք որ ածական դերբայները՝ այլեւայլ կերպով յարաբերական դերանուան (կամ մակբայի) գործ կը կատարեն մանաւանդ ած անցեալն եւ ապառնիները, որոնց ահաւասիկ կանոնները։

530. Ած անցեալն ու լու ապառնին իրենց գոյականովը մէկտեղ՝ յարաբերական նախադասութեան մը տեղը կը բռնեն. այսպէս. Իմ տեսած անտառս. (այն անտառն որ ես տեսայ։) Աղեքսանդրի ծնանելու գիշերը. (այն գիշերն որ Աղեքսանդր պիտի ծնանէր։) — Այս տեսակ խօսքերու մէջ՝

1. Դիմաւոր բայը կը փոխուի ածական (ած կամ լու) դերբայի։

2. Անուն-բային կ՚ըլլայ սեռական յատկացուցիչ կամ ստացական։

3. Բային խնդիրը կ՚ըլլայ յատկացեալ՝ ստացական յօդով։

Numérisé par CDMF (PP) - 2011

4. Իսկ եթէ յարաբեր. դերանունը զատ յատկացեալ ունէր, նոյն յատկացեալն ալ կը մնայ սեռականին եւ դերբային մէջ տեղ. (Տես վարը 535, Դ օրինակ։)

Այս կանոնով կ'ըսենք՝ Իմ տեսած անփոփոխս, կամ Իմ տեսնելու փողոցներս։

531. — Ա. Եթէ ներգծ. է դիմաւոր բայը որուն տեղ դերբայը դրուած է, կրնայ յատկացեալը ամէն հոլովի տեղ դրուիլ. (բաց ի անուն-բայէ.) ինչպէս վարի օրինակներէն կը տեսնես։

532. — Բ. Եթէ բայը չէզոք է, կրնայ յատկացեալն ամէն տեսակ խնդիր-ըն. կամ ամէն հոլովի տեղ դրուիլ՝ (բաց ի անուն-բայէ եւ խնդիր-սեռէ։)

533. — Գ. Եթէ բայը կրաւորական է՝ յատկացեալը կրնայ միայն խնդիր-ըն. ըլլալ. Կեսարու սպաննուելու առաւօտը. (այն առաւօտն որ* (որուն մէջ) Կեսար պիտի սպաննուէր։) Քու տարուելու պատգարակդ. (պատգարակը որով պիտի տարուիս։)

* Ուր շաղկապը յարաբեր. դերանուան ներգոյականին տեղ կը դրուի, փխկ. որուն մէջ ըսելու։ Ինչպէս նաեւ ուր մակբայը յարաբեր. դերանուան ներգոյականին եւ տրականին տեղ, եւ ուստի բացառականին տեղ։

534. Երբեմն աւելի համառօտի՝ խօսքին մէկ կամ մէկալ մասը զօրութեամբ կը դրուի. — անուն-բային կամ խնդիրը. զորօրինակ. Տեսած մարդս. Նորոգած տունդ։ (Այսինքն՝ իմ տեսած մարդս։) — Գիրը տեսած մարդս. Տանիքը նորոգած տունդ։ (Մարդը որուն գիրը տեսայ. Տունն որուն տանիքը նորոգեցիր. — այս խնդիրները յարաբերական դերանուան յատկացեալներն էին։) — (Իմ) տեսածս. Նորոգածդ. Երթալիքդ։ — Գիրը տեսածս. Տանիքը նորոգածդ. Հետն երթալիքդ. (որուն հետը պիտի երթաս.) Պատկերն առնելիքը. Պատկերն առնուածը. (որուն պատկերն առնուի պիտի. որուն պատկերն առնուած է։)

535. Բայց դարձեալ ուրիշ որեւիցէ խնդիր կամ մակբայ կ'աւելցուի դերբային քով՝ ըստ իմաստին պահանջելուն։ Միայն թէ ուղիղ եւ կանոնաւոր շարքը պահուի, որ հետեւեալն է.

Numérisé par CDMF (PP) - 2011

| | 1. | 2. | 3. | 4. | 5. |
|---|---|---|---|---|---|
| | Յատկացուցիչ (փխկ. ան.-բայի.) | Գերբային խնդիրը կամ մակբայ. | Գերբայ ածական. | Գլխաւոր գոյական. | Ստոր. յոդ. Բայ.* |
| Ա. | Դարեհի | անխոհեմութեամբ | ըրած | սպառնալիքներ-ը | շուտով լռեցին։ |
| Բ. | Իմ | քեզի հետ | ունեցած | բարեկամութիւն-ս | չճանչնան թող։ |
| Գ. | Ծեր զինուորին | իր ընտանեացը | խրկելու | ստակներ-ը | պակսեր են։ |
| Դ. | Իմ | ձեռքին մէջ | ոսկի դրած | աղքատ-ս | ծանօթ էր քեզի։ |
| Ե. | Զինուորին | վարի ըճէն | ձուկ որսացած | ժամանակէ-ն | հաշուեցաւ։ |
| Զ. | Աւազակին | դահճին երեսէն | դողացած | վայրկեան-ը | մինչեւ չեկլէր։ |
| Է. | Քու՝ | պատուիրաններն | արհամարհած | բռնաւորէ-դ | ամէնքս կը դողայինք։ |

Ը. Ամէնքս քու՝ պատուիրաններն արհամարհած բռնաւորէդ կը դողայինք։

* Վերջին տեղը կը դասենք բայն իր յարակիցներովը մէկտեղ, բայց առանց թուանշանի. վասնզի կրնայ բայը խօսքին սկիզբն ալ դրուիլ, կամ իր յարակիցներէն բաժնուիլ, ինչպէս Ը. օրինակը կը ցուցընէ։ Սակայն ոչ բայը եւ ոչ իր յարակիցները կրնան գերբայի շարքին մէջ մտնել։



Numérisé par CDMF (PP) - 2011

Դ. եւ Ե օրինակներէն կը տեսնես որ դերբայը հետը խնդիր-սեռի ալ կրնայ առած ըլլալ։ Բայց ասկէ զատ՝

536. Այս կերպ (ստացական յօդով) գործածուած դերբայներու մէջ երկու գլխաւոր բան կը մնայ դիտելու։ Նախ թէ Դերբայը դիմաւոր բային ո՛ր ժամանակին տեղ կը դրուի. եւ երկրորդ թէ յարաբերական դերանուան ո՛ր հոլովին տեղ։

Ած անցեալը կը դրուի Սահմ. ներկայի, անկատարի, կատարեալի, յարակատարի եւ գերակատարի տեղ։ — Իսկ լու (կամ առանց խնդրոյ՝ լէ) ապառնին՝ փոխանակ Սահմ. եղանակին ներկայ-ապառնւոյն եւ ապառնի-անկատարին։

Յարաբերականին հոլովները բաւական է օրինակներով ցուցընել, որ առաջիկայ պատկերին մէջ կը նշանակենք։

| Անցեալ. | Ապառնի. |
|---|---|
| *Հայցական.* | |
| Տեսած մարդս. (մարդը զոր կը տեսնեմ, տեսայ, եւայլն.) | Տեսնելու մարդս. (մարդը զոր պիտի տեսնեմ, պիտի տեսնէի։) |
| Բերած վաճառքներդ. (վաճառքներն որ բերած ես.) | Բերելու վաճառքներդ. (վաճառքներն որ պիտի բերես. |
| *Սեռական.* | |
| Թղթերը կարած գիրքդ. (գիրքն որուն թղթերը կարեցիր.) | Թղթերը կարելու գիրքդ. (այն գիրքն որուն թղթերը պիտի կարես.) |
| Ձեռքէն բռնած ծերունին. (ծերունին որուն ձեռքէն բռնեց.) | Ձեռքէն բռնելու ծերունին. (ծերունին որուն ձեռքէն պիտի բռնէ.) |
| *Տրական.* | |
| Զմեզ հրաւիրած տեղերնին. (այն տեղն ուր զմեզ հրաւիրեցին.) | Հրաւիրելու տեղը ընդարձակ էր. (այն տեղն ուր պիտի հրաւիրէի.) |

Numérisé par CDMF (PP) - 2011

| | |
|---|---|
| (Իրեն) ճամբայ ցուցըրցած մարդ. (այն մարդը որուն ճամբայ կը ցուցընես.) | ճամբայ ցուցընելու մարդ. (այն մարդը որուն ճամբայ պիտի ցուցընես.) |

*Բացառական.*

| | |
|---|---|
| Տար՝ առած տեղդ դիր. (այն տեղն ուսկից առիր.) | Ելլելու գիւղդ գիտե՞ս. (գիւղն ուսկից պիտի ելլես.) |
| Տղուն ինկած պատուհանը. (այն պատուհանը ուսկից տղան ինկաւ.) | Գող մտնելու ծակերը գոցել. (ծակերն ուսկից գող կրնայ մտնել.) |

*Գործիական.*

| | |
|---|---|
| Փայտ ջարդած կացինդ. (կացինը՝ որով փայտ կը ջարդես.) | Փայտ ջարդելու կացինդ. (կացինը՝ որով փայտ պիտի ջարդէիր.) |
| Տեսնուած մարդս չէ. (այնպիսի մարդ չէ որուն հետ տեսնուած ըլլամ.) | Տեսնուելու հիւրերս. (այն հիւրերն որոնց հետ պիտի տեսնուիմ.) |

*Ներգոյական.*

| | |
|---|---|
| Մեր բնակած տունը. Բնակած տներնիս. (տունն որուն մէջ կը բնակինք.) | Բնակելու տներնիս. (այն տունն որուն մէջ պիտի բնակինք.) |
| Աղեքսանդրի ծնած գիշերը. (այն գիշերն որ Աղեքսանդր ծնաւ.) | Յիսուսի ծնանելու գիշերը. (այն գիշերն որ Յիսուս պիտի ծնանէր.) |
| Կիպրոս հասած օրս. (այն օր որ Կիպրոս հասայ։) | Նաւէն ելլելու օրդ. (այն օրն որ Նաւէն պիտի ելլես, ելլէիր։) |

Նմանապէս ուրիշ հոլովներ ալ. Կասկած առած մարդս. (այն մարդն որուն վրայ կասկած առած եմ։)

537. Յարաբերականին հոլովը քովի խնդրէն կախում ունի. զորօրինակ երբ ըսեմ միեւնոյն ածանցելով.



Numérisé par CDMF (PP) - 2011

Հյց. Խմած ջուրդ. — այն ջուրը զոր խմեցիր, կը խմես.

Ներգ. Ջուր խմած ատենդ. — այն ատենն որ (որուն մէջ) ջուր խմեցիր:

Գործ. Ջուր խմած գաւաթդ. — այն գաւաթն որով ջուր խմեցիր:

Բաց. Ջուր խմած աղբիւրդ. — այն աղբիւրն ուսկից ջուր խմեցիր:

Նոյնն իմացիր դերբայ ապառնոյն համար ալ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Ժ.

### ԱՆՓՈՓՈԽ ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

538. Անփոփոխ մասանց-բանի ամէնուն մէկանց կ'աւանդենք կիրառութեան կանոնները, որովհետեւ անձուկ յարաբերութիւն կամ մեծ նմանութիւն ունին իրարու, մանաւանդ որ ոմանք հաւասարապէս թէ՛ մակբայ եւ թէ՛ շաղկապ, կամ թէ՛ մակբայ եւ թէ՛ նախադրութիւն եւայլն համարուած են:

Քանի մը բան յառաջ բերուած է Ա. մասին մէջ. սակայն հոն օրինակաւ միայն, իսկ հոս իրենց կանոնովն աւանդուած են:

---

### §. 1. Մակբայ:

539. Ոչ մակբայն ըստ ինքեան բացասական բայ շինելու չի ծառայեր, այլ միայն կը գործածուի հետեւեալ կերպով.

540. — Ա. Առանձին, ամբողջ նախադասութիւն ձեւացընելով: Խոստմունքդ կատարեցի՞ր ճշդիւ. Ոչ. կը ցաւիմ որ անկարելի եղաւ: Պատասխան տուի՝ թէ Ոչ:

541. — Բ. Կրկնութեամբ՝ որեւիցէ մասանց-բանի քով: Ոչ ես եւ ոչ դուք կրցանք ատոր համբերել: Ոչ հոս ոչ ուրիշ տեղ: Ո՛չ պարծենալու մաս մ'ունէիք յայդմ, եւ ոչ ամչնալու: Ոչ տեսայ եւ ոչ լսեցի:

Այս կանոնով է կրկնուած արգելականն ալ. (այսինքն ոչ փոխանակ մի՛. տես 488.

Numérisé par CDMF (PP) - 2011

542. Կրկնեալ ոչ մակբային բայը բնականապէս բացասական չի դրուիր. եւ կ'ըսուի՝ Ո՛չ երէկ կրցայ կարդալ եւ ոչ այսօր։ Բայց միշտ բացասական կը մնայ բայը՝ եթէ երկու ոչերէն ալ յառաջ դրուած է. այսպէս. Չկար յոյս ամենեւին, ոչ ազատութեան, եւ ոչ գոնէ օր մը հանգչելու։ Օտար եմ, եւ չունիմ՝ ոչ բարեկամ եւ ոչ թշնամի որ ճանչնամ զիս։

543. — Գ. Շատ անգամ առաջին նախադասութեան մէջ պարզ բացասական բայ, իսկ յաջորդին մէջ ոչ մակբայով է. զորօրինակ. Գիւղահար մը կը դեգերէր գերեզմաններու մէջ, որ չէր երբեք հագուստ հագած եւ ոչ տան մէջ բնակած։ Այսօր չեն հաներ, եւ ոչ դեռ վաղը։

Նոյնպէս նոյն կերպով արդելական. Մի՛ լար, եւ ոչ խօսէ հետը։

544. Ոչ մակբայն անուանց ալ սկիզբը կը յարի, անոնց՝ հակառակ նշանակութիւն տալու համար. զորօրինակ. Աղքատ բայց ոչ-խորթ մէկը՝ քան զթագաւորներն աւելի երջանիկ է։ Ի՞նչ կ'իմանայ ոչ-իմաստասէր մէկը տիեզերաց մեծագործ ճարտարապետութենէն։ Հայոց եւ ոչ-Հայոց հաւասարապէս բաղձալի։ Ազգային եւ ոչ-ազգային սովորութիւններ։ (Այսինքն՝ կարօտ չեղող, իմաստասէր չեղող, եւայլն։)

545. Ոչ մակբայն այս եւ քանի մ'ուրիշ կիրառութիւններն ու բաղադրութիւններն հետեւեալ օրինակներս կը ցուցընեն։

Ոչ ամէն գետին հաւասարապէս բարեբեր է։ Լսել պէտք է երիցագունի առջեւ, բայց ոչ թէ համր ըլլալ։ Գովել չեմ ուզեր անգովելին, բայց եւ ոչ նախատել։ Չընդունեցաւ, սակայն եւ ոչ ալ մերժեց բոլորովին։ — Տխրական, այլ ոչ յուսահատական լուր մ'ունիմ քեզի տալու։ Ծանր բեռ մը, թէեւ ոչ անտանելի, դժուարին է շարունակ կրել։

546. Տեղական մակբայներէն՝ ուր, հոս, հոն, եւայլն. տեղ բառին վրայ իբրեւ ածական կը դրուին. Հոս տեղս. Հոն տեղ. Ուր տեղ. փոխանակ՝ այս, այն տեղ. որ տեղ ըսելու։



Numérisé par CDMF (PP) - 2011

547. Նոյն տեղական մակբայները եթէ հարկ ըլլայ իբրեւ գոյական հոլովել՝ դարձեալ տեղ բառով կը հոլովին. Հոստեղաց, (կամ հոս տեղաց.) հոնտեղաց. հոնտեղէն. ուրտեղէն. (կամ լաւ եւս՝ Այս տեղաց. այն տեղէն. որ տեղէն:) — Որմէ դարձեալ ածական ալ կ'ածանցի՝ Հոստեղացի. հոնտեղացի:

Երբ ժամանակականն անհոլով է, եւ եթէ գոյականաբար առնել հոլովել հարկ ըլլայ՝ կ'ըսուի. Ո՞ր ատենուան. Ո՞րչափ ժամանակէ ի վեր: (Կայ ըսող ալ՝ Երբուա՞ն բան է. Երբէ՞ն ի վեր:)

548. Ուր եւ ուստի մակբայները յարաբերական դերանուանց հոլովներուն տեղ կը գործածուին՝ տեղ եւ ժամանակ ցուցընող անուանց առջեւ. ինչպէս. Արդէն երկուքն սանդուղն ուստի վար պիտի իջնայի, սկսած էր կրակ առնելու: Գտաւ կը կենայ այն վիմափոր բանտին՝ ուր մեծն Սոկրատ իւր անմահ հոգին փչեց. (այսինքն՝ որուն մէջ:)

Նոյնպէս երբեմն Երբ մակբայը՝ ժամանակ ցուցընող անուանց առջեւ. զորօրինակ. Ո՞ւր են այն անմեղական ուրախութեանց ոսկի դարերը, երբ հզօր առիւծներ մեզմէ կ'ակնածէին:

---

## §. 2. Նախադրութիւն:

549. Մինչեւ, (մինչուան,) եւ դէպ ի նախադրութեանց խնդիրն եթէ դերանուն է՝ տրական հոլով կը դրուի. (տես 284.) իսկ եթէ գոյական անուն է կամ. աներեւոյթ, աննախադիր տրական, (հայցականի ձեւով.) այսպէս. Զրկեալ գործաւորաց բողոքները մինչեւ երկինք կը բարձրանան: Մինչեւ պարտէզին դուռը հասան: Մինչեւ գիշեր կ'աշխատէինք: Մինչեւ Հռոմայեցւոց պետութեան կործանիլը: Մինչեւ իրենց տունը: Ջրհեղեղէն մինչեւ Գոռէքի հազար երեքհարիւր տարի կը հաշուի: Տեսէք, տեսէք, սպառազինեալ ամբոխ մը դէպ ի մեր տունը կը խուժէ: Անմեղ թռչնոյն սրտիկն ի դող կ'ելլէր՝ քանի որ կատուին կասկածելի թաթերը դէպ ի ձագուկին կ'երկընցնային:

550. Մինչեւ, դէպ ի կրնան մակբայ խնդիր ալ

Numérisé par CDMF (PP) - 2011

առնուլ. զորօրինակ. Մինչեւ ո՞ւր պիտի ձգուին ձեր նենգաւոր ծուղակները։ Ըսէք մեզի, դէպ ի ո՞ւր է մեր ճամբան։ Մինչեւ ե՞րբ համբերեմ։ Մինչեւ հօս անծանօթ զգեստներով եկան։ Անկէ դէպ ի ներս արշաւեցին։

Դէպ ի նախադրութիւնն արդէն ի նախդիրն իր վրայ կը կրէ. իսկ մինչեւ շատ անգամ ի եւ ց նախդիր ալ կ'առնու գրաբար ձեւով. այսպէս, Ջրհեղեղէն մինչեւ ի Դաւիթ։ Մինչեւ ի մահ, կամ մինչեւ ցմահ. կամ առանց նախադրութեան՝ Ցմահ թագաւորել. (կ'ըսուի նաեւ՝ Ցկեանս իշխան ընտրուիլ։) Մինչեւ յե՞րբ, մինչեւ ցե՞րբ. կամ լոկ՝ Ցե՞րբ լսենք։ Դեռ ցայսօր լուր մը չեկաւ։

551. Մինչեւ նախադրութիւնը դիմաւոր բայէ յառաջ ալ կը դրուի իբրեւ շաղկապ, եւ կը նշանակէ՝ մինչդեռ որ, մինչեւ որ. զորօրինակ. Զմայլեցան Լիկաւոնացիք առաքելոց վարդապետութեանը, մինչեւ կ'ըսէին թէ աստուածներ են երկնքէ իջած։ Օրերով անդադար մնաց, մինչեւ շատերը կը մտածէին թէ տանին թաղեն։ Մուշեղի դիակն որ տեսան ընտանիքը, սկսան խելագարել. մինչեւ անոր մարմինը, կոթողի վրայ հանեցին, որ Արալեզք իջնան ու լզեն։

552. Գոյականէ կամ (տեղական) մակբայէ առնուած նախադրութիւնները միշտ իրենցմէ յառաջ սեռական խնդիր մը կ'ուզեն, (որ իրենց յատկացուցիչն է.) — անոր համար ալ՝ երբ որ նոյն սեռական խնդիրն որոշեալ յօդ ունի կամ դերանուն է, նախադրութիւններն ալ յօդ կ'առնուն։ Այս պատճառաւ ըսինք՝ Վկայի առջեւ, (անորոշ.) տճ. չէհուտ էօնիւնտէ. եւ՝ Վկային առջեւը, (որոշեալ.) տճ. չէհուտըն էօնիւնտէ. (288.) — Բայց դարձեալ՝

553. Կրնայ միեւնոյն բառն որոշեալ խնդրոյ առջեւ ալ առանց յօդի դրուիլ. այսպէս. Ծառին տակ։ Մեր վրայ կասկած ունին եղեր։ Լրտեսի ձեռօք ամենայն ինչ դիտուեցաւ։ Ձեր առջեւ վկայեցին։

Ընտիր գրուածոց մէջ աւելի յաճախեալ է անյօդ. Ձեր վրայ. Տիրոջը տուն. Պարտիզին մէջ, եւայլն։

554. Ըսածնիս ն (ը) յօդի համար է։ Իսկ ս եւ դ յօդ միշտ եւ ամէն տեղ կը դրուի. Իմ վրաս. Քու քովդ. Իմ առջեւս, կամ առջիս։

Numérisé par CDMF (PP) - 2011

## §. 3. Շաղկապ:

555. Շաղկապներէն ոմանք, (ինչպէս Ա. մասին օրինակներէն տեսանք,) ետեւէ ետեւ իրար յաջորդող բառերուն վրայ կը կրկնուին: Այսպէս են՝ Ոչ, Թէ, Կամ, Եւ:

556. Ոչ եւ Թէ, ամէն բառի վրայ ալ պէտք է որ կրկնուին. Թէ վիշտ Թէ նեղութիւն, Թէ վայելք եւ Թէ ուրախութիւն՝ անխտրաբար սիրտը կ'այլայլեն: — Իսկ Եւ, Կամ սովորաբար վերջին բառին վրայ կը դրուին. Լեռ, ձոր, դաշտ Եւ անտառ՝ մեծատարած բանակներով ծածկուեցան:

Բայց երբեմն խօսքին սաստկութիւն կամ վայելչութիւն տալու համար՝ ամէն բառի վրայ ալ Եւ կը կրկնուի:

557. Եւ, ու շաղկապներն ընդհանրապէս նոյնանշան են, եւ միշտ նախադաս՝ թէ բառ բառի հետ եւ թէ խօսք խօսքի հետ կապելու ատեն: Սակայն (գոնէ ընտիր գրուածոց մէջ) սովորականն է մանաւանդ Եւ:

Աւելի զգուշանալու է ու շաղկապ գործածելէն երբ իրմէ յառաջ եւ ետքը դարձեալ ու կամ ուրիշ ձայնաւոր հանդիպի. օրինակ եթէ ըսես. Ջանալու ու աշխատելու: Խմելու ու ուտելու համար: Արի ու ընտիր զօրք:

558. Եւ շաղկապը Բայց եւ Այլ շաղկապներէն միշտ յետադաս է. երբեմն նաեւ Որ յարաբերականէն: Բայց Եւ ինքն ալ վտանգի մէջ էր: Ոչ նախարարները միայն, այլ Եւ նոյն իսկ թագաւորը: Արիմաթեացին՝ որ մեծատուն իշխան մըն էր, որ Եւ Փրկչին հետ յարաբերութեան մէջ էր, յաղթեց վերջապէս մարդկային երկիւղին:

559. Կրկնուած շաղկապներու համառօտօրէն երկրորդին կամ վերջնոյն վրայ Եւ մ'ալ կ'աւելցուի. այսպէս. Կամ իրաւացի խօսելու է, Եւ կամ ի սպառ լռելու: Թէ տեսած ըլլաս Եւ թէ լսած, հարկ է որ անգէտ ձեւանաս: Ոչ ես Եւ ոչ դուք. (կամ Ոչ ես, ոչ ալ դուք:) — Երբեմն կրկնուած յարաբերական դերանուան ալ վրայ. Հերոդոտոս՝ որ ուրիշներէն

Numérisé par CDMF (PP) - 2011

տարբեր կը խօսի, եւ որոնց մատեաններն առասպելք լի են, դեռ թագաւոր է պատմագրաց։

560. Ու շաղկապը կրկնութեամբ կը գործածուի գրաբար ձեւով՝ փոխանակ թէի։ Ե՛ւ տեսանք, ե՛ւ ստացանք, ե՛ւ վայելեցինք, բայց ի՞նչ մնաց հիմայ ձեռքերնիս. (այսինքն՝ թէ՛ տեսանք, թէ՛ ստացանք։)

Այս վերջին երեք (558, 559, 560.) թուահամարներուս եւին տեղ՝ ու չի գործածուիր։

561. Ու շաղկապ կը գործածուի միեւնոյն խօսքին մէջ բառ բառի հետ կապելու համար, ուր որ նախընթաց եւ մը խօսք խօսքի հետ կապելու գործածուած է. զորօրինակ այս խօսքիս մէջ. Ալ խաղաղութեան սպիտակ դրօշը կը ծփայ հրապարակին մէջ, եւ բարեկամ ու թշնամի հոն կու գան կը միանան գրկախառն։ Կը հասնի վերջապէս ցուրտ տխուր ձմեռ մը, եւ լեռ ու ձոր առհասարակ սգոյ զգեստով կը ծածկուին։ — Ուր եւ շաղկապը երկու խօսք իսկ ու շաղկապն երկու բառ իրարու կապեց։

562. Յատուկ ոճով մը ու շաղկապը միեւնոյն բայի կրկնութեան կը ծառայէ՝ գործողութեան կըրկնութիւն կամ շարունակութիւն ցուցնելու համար. այսպէս. Տես սա մեր դրացի մրջիւնն որ ամբարըն է մտեր, հոն կ'ուտէ ու կ'ուտէ։ Թողէք՝ խօսէ ու խօսէ որչափ որ կ'ուզէ։ Խմեց ու խմեց, մինչեւ անզգայ մնաց թմրեալ։ Ինչ որ գտաւ՝ կերեց իւր ծախին ու կերեց։

563. Շատ անգամ նոյնանշան են թէ եւ ոչ շաղկապները. ինչպէս. Ըսաւ թէ պատրաստ է. Ըսաւ ոչ պատրաստ է։ — Չըլլայ թէ թողնաս. Չըլլայ ոչ թողնաս։

Ընտիր գրուածոց մէջ երկուքն ալ կրնան վայելչապէս գործածուիլ. բայց կայ ռամկական ոճ մը՝ որ թէ շաղկապն ի սպառ լքեցուած է։

Դարձեալ տեսանք (Ա մասին օրինակներէն) որ այս երկու շաղկապներս իրարմէ տարբեր նշանակութիւններ ալ ունին, եւ չեն կրնար միշտ իրարու տեղ դրուիլ։

564. Եւ, ալ շաղկապներէն ետքը, (ուր որ բայը զօրութեամբ կրկնուած է,) միայն թէ շաղկապ կրնայ

Numérisé par CDMF (PP) - 2011

դրուիլ, Թէեւ խօսքը որ շաղկապով սկսած ըլլայ. զորօրինակ. Չըսի որ երթաս գիտես, այլ թէ՝ երթաս գործես. (այսինքն՝ Այլ ըսի որ երթաս գործես:) — Կը տեսնէք որ ինքն այդպիսի ձեռնարկութեան մ'ան-յաջող է եւ թէ միշտ բախտին վրայ տրտունջ ունի: (Այսինքն՝ Կը տեսնէք որ միշտ . . . :)

565. կամ, քանզի, հապա, այսինքն, եւայլն բառե-րէն ետքն իբրեւ դարձ կ'աւելցուի թէ շաղկապ. այս-պէս. Հարցուց տեղեկացաւ, կամ թէ յառաջ ալ լսեր էր: Գուցէ թէ յոյսերնիս ի դերեւ ելլէ: Տարւոյն սկիզբները, այսինքն թէ՝ յունուարի տասնուչորսին: — Հոս թէ շաղկապն յաւելուած է միայն:

Այս երկու (564, 565) դէպքերուս մէջ որ շաղկապ չի գործածուիր:

566. Որ շաղկապ միջանկեալ՝ երբ շաղկապի կամ երբ մակբայի նշանակութիւն կ'առնու. Ծառն որ ծուռ բուսնի, հոգ չէ՝ կ'ուղղուի. բայց եթէ ծուռ մեծնայ, ճար չըլլար: Աս որ եղաւ, ամէնքը ներս գի-մեցին: — Այդ դարձուածքը միայն առաջին նախա-դասութեան մը մէջ կ'ըլլայ, եւ որ շաղկապն իրմէ յառաջ անուն մը կամ մակբայ մը կ'ուզէ, (որուն համար ալ կը կոչենք՝ Որ շաղկապ միջանկեալ:)

567. Որ շաղկապ կը գործածուի դարձեալ՝ հար-ցական կամ բացառական նախադասութեան մը յա-ջորդ խօսքին հետ պատշաճութիւնը կամ կարեւորու-թիւնը ցուցընելու համար. զորօրինակ. Զինեալ չէն՝ որ վախնամ: Ինչ լաւ չէր՝ որ քեզի ալ իմացընէր: Ա՞նչափ յիմար էի՝ որ ատոր հաւատացի: Ձմե՞ռ է՝ որ մնիս:

Կրնայ այսպիսի տեղեր յարաբերական դերանուն ալ դրուած ըլլալ, որ շաղկապի հետ չփոթելու չէ: Այսպէս ըստ այլեւայլ տեսութեան՝
Շաղկապ է. — Մարդ չկայ՝ որ գետինները մշակուին:
Դերանուն. — Մարդ չկայ՝ որ գետինները մշակէ:

568. Ասկէ զատ որ շաղկապը շատ անգամ այլ-եւայլ ուրիշ բառերու տեղ կը դրուի. (ինչպէս նաեւ յարաբերական դերանունն որ տեսանք, 459.) զորօ-րինակ՝ երբ կամ ուր կամ քանզի ցուցընելու համար:

Numérisé par CDMF (PP) - 2011

Ահա հասաւ ժամանակն՝ որ վերջապէս իրարմէ բաժնուինք։ Այն գիշերն որ ճամբայ պիտի ելլէինք, լուր հասաւ թէ լեռներն աւազակներով լցուեր են։ Իսկ հիմայ՝ որ ձեռքն ի ծնօտի՝ նստած կը մտածես, մտածէ թէ սերմանածդ կը հնձես։ Շատ ապրիս, որ այսպիսի հնարք մը ճարեցիր մեզի։ Զմեզ իրենց վրանը մնացուցին, որ պիտի սառէինք բաց դաշտի վրայ։

569. Որեւիցէ հարցական բառի վրայ որ շաղկապ կ'աւելցուի, եւ կը նշանակէ՝ հոգ չէ թէ ով կամ ուր կամ ինչպէս, եւայլն։ Ինչ որ խնդրեցիր՝ չգլացուեցաւ մինչեւ հիմայ։ Ով որ լսեց՝ զարմացաւ։ Քանի որ ներսն է։ Ուր որ դառն՝ պատրաստ կը գտնեն։ Որն որ կ'ուզես, կամ Որը որ կը բաղձաս. (463։) Ինչպէս որ գուշակած էր, նոյնպէս ալ կատարեցաւ։

Բայց աններելի խորթ են՝ Ո՛րնոր որ. ո՛վոր որ. Երբոր որ։

Նոյն կերպով կազմուած է բաղադրեալ շաղկապս ալ՝ Ինչու որ, (վասնզի.) — տես նաեւ Ա մասն, երես 86 ծան։

570. Որ շաղկապէն յառաջ շատ անգամ էական բայը կը զեղչուի. եւ դիմորոշ խօսք մը կը ձեւանայ. այսպէս. Գովութեան արժանի էր ընթացքդ, բայց ափսոս որ յանկարծ կանգ առիր։ Մեղք որ յառաջուց չհեռացանք վտանգէն։ Զարմանք որ ինքն ալ չկրցաւ բերան բանալ։ Ի՞նչ զարմանք որ ես ալ խաբուած ըլլամ։ Իրաւ որ չէի լսած։ Աղէկ որ դու ալ եկար։

571. Դարձեալ բայեր կան որոնց առջեւ որ շաղկապ կը դրուի, եւ ոչ՝ Թէ. ինչպէս են՝ Բաղձալ. Ջանալ. Պատրաստուիլ. Զգուշիլ. եւայլն։ Ընդհանրապէս որ շաղկապ կը դրուի այն բայերուն առջեւ՝ որոնք աներեւոյթ խնդիր ալ կրնան առնուլ. այսպէս. Կը բաղձայ փեսանալ, կամ Կը բաղձայ որ ամուսնանայ։ Ջանայ հասնելու, կամ Ջանայ որ հասնի։ (Չ'ըսուիր՝ Ջանայ թէ հասնի։)

572. Ալ շաղկապ Թուական եւ մասնական անուանց վրայ՝ տես 455. Երկուքն ալ. Ամէնն ալ. Երեքին ալ. եւայլն։

Numérisé par CDMF (PP) - 2011

Սակայն այս կերպ գործածուած ալ եւ ոչ (569) շաղկապներուն համար գիտնալու է՝ որ եթէ թուական կամ մասնական անունը գոյական մը հետն ունի, այն ատեն ալ եւ ոչ շաղկապները, ինչպէս նաեւ յօդը, նոյն գոյականէն ետքը կը մնան. — Եթէ գոյականները շատ են՝ յօդն ամէնուն վրայ, իսկ շաղկապը մի անգամ միայն դրուելով: Այսպէս. Երկու ծայրն ալ վտանգ է. որ դին ալ դառնաս՝ զգուշութիւն պէտք է: Որ դեղը, որ դարմանն ալ ընես, ի զուր է: Գաւառին ամէն կողմն ալ խառնակած էր անկէ ետեւ: Քանի անգամ ալ բողոքեցինք, չլսուեցաւ ձայներնիս:

573. Ալ միշտ յետադաս շաղկապը կրկնութեամբ ալ կը գործածուի, (Թէ շաղկապին պէս.) զորօրինակ. Տեսայ ալ, առի ալ: Խօսքն ալ հասաւ խեղճին, ձայնն ալ, շունչն ալ:

---

Միջարկութեանց կիրառութեանը սակաւաւոր եւ աննշան կանոններն Ա. մասին մէջ բառաձներէն եւ բերուած օրինակներէն լաւ կ'իմացուին:

---

## ՅՕԴՈՒԱԾ Զ.

### ԲԱՌԵՐՈՒ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ

Մասանց-բանի կիրառութեանը մէջ առանձին գլուխ մը կը կազմեն Կրկնական մասունք-բանի:

574. Կրկնեալ կամ Կրկնաւոր կը կոչենք բառ մը՝ որ երկու անգամ գրուած է անմիջապէս կից կամ քովէ քով*. ինչպէս Տեսակ տեսակ. ծանր ծանր, եւ այլն. որով երբեմն նշանակութեան փոփոխութիւն ալ մէջ կը մտնէ:

* Այս Կրկնականներուս կարգը չենք համարիր այն կրկնութիւններն որ կից չեն. ինչպէս. Ոչ ես կրցայ եւ ոչ դուն. — եւ ոչ անոնք որ նոյնաձեւ չեն. զորօրինակ. Տուր տուէք բայց առնող չկար:

Ձենք խօսիր հոս բառերու ճարտասանական կրկնութեան վրայ՝ որ խօսքին զօրութիւն եւ սաստկութիւն աւելցնելու կը ծառայեն. ինչպէս. Տեսէ՛ք տեսէ՛ք ինչ աղէտք սահմանուած էր մեզի: Հիմա՛յ, հիմա՛յ եւ ոչ վաղը: Քանի՜ քանի՜ անմեղաց արիւն: Այս այն եւ այլն:

Numérisé par CDMF (PP) - 2011

575. Կրկնեալ բառերն եթէ անուն են՝ միշտ եզակի թուով կը գործածուին, եւ ոչ յոգնակի. զոր օրինակ. Ցեղ ցեղ բաժնուած են. (եւ ոչ՝ ցեղեր ցեղեր։)

576. Կրկնութեամբ գործածուած բառերն են գլխաւորաբար Գոյական եւ Ածական անուններն ու Մակբայները. — քիչ տեղ ալ Դերանուններն ու Բայերը։

## Ա. Գոյական անուն։

Գոյական անուանք կրկնութեամբ կը բանին՝

577. — Ա. Իբրեւ խնդիր-բնութեան, բանի մը մասերը ցուցընելով։ Զորօրինակ. (Ուղղական.) Սիբերիացիք ցեղ ցեղ են։ — (Հայցական.) Արմաւի ողկոյզ մը ձեռքը՝ հատ հատ փրցուց կերաւ պտուղները։ Բովանդակ ձեռագիրը թերթ թերթ կարդալ տուաւ։ — (Աննախդիր տրական.) Ժողովրդեան բազմութիւնը դաս դաս բաժնած՝ նստուցին գետնին վրայ։ Նոյն տապանը խորշ խորշ բաժնուած էր։

Կրկնաւոր մակբայներու մէջ (280) յիշուած գոյականներն ալ աննախդիր հոլովներ են։

578. — Բ. Իբրեւ ածական՝ յոգնակի գոյականի քով. այսպէս. Տեսակ տեսակ բոյսերով եւ ծաղիկներով զարդարուած է երկիր։ Նոյնպէս յաջորդները.

Կարգ կարգ աթոռներ.
Շարք շարք մարգարիտներ.
Տուն տուն ընթերցմունք.
Փունջ փունջ ծաղկունք.
Գունդ գունդ զօրքեր.
Կերպ կերպ նենգութիւններ.
Հատոր հատոր գրքեր։

579. Կրկնեալ գոյական մը կրնայ նաեւ եզակի գոյականի վրայ դրուիլ՝ իբրեւ ածական կամ իբրեւ ուղղ. խնդիր-բնութեան. — միշտ անոր մասանցն ինչպիսութիւնը յայտնելով. այսպէս. Պատկառելի ծերունի մը նստեր էր, որուն ճակատը ծալք ծալք, եւ ալիք ալիք եղած էր ձիւնափայլ մօրուքը։ Վարդենին եւ ուրիշ շատ բոյսեր՝ մանրիկ տերեւներ ունին՝ ճեղք ճեղք եզերքով։ Սիրտս ջուր ջուր կ'ըլլար եւ արտասուքս չէր կրնար զսպել։ — Այսպէս ալ կ'ըսուի՝

Numérisé par CDMF (PP) - 2011

Ալէ ալէ դարան մը։ Ծոլ ծոլ եղաւ սրընթի պէս։ Թել թել եղեր կախուեր է։

## Բ. Ածական անուն։

580. Ցուցնակի գոյականի քով ածական մը շատ անգամ կրկնութեամբ կը դրուի. (փայելուչ են կարճ բառերը։) Ծանր ծանր խօսքերով բարերարին սիրտը ծանրացուց։

Մանր մանր խճահատք.
Սուր սուր փուշեր.
Դառն դառն տրտունջներ.
Մեծ մեծ ալիքներ.
Քաջ քաջ դիւցազունք.
Խոշոր խոշոր սպառնալիք-ներ.
Կլոր կլոր հատիկներ։

Քանի մը ածականի կրկնածն երկրորդական ձեւ մ'ալ ունի գրաբարէ առած. Նոր նոր կամ Նորանոր վարդապետութիւնք. Մեծ մեծ կամ Մեծամեծ խոստմունքներ. Ջերմ ջերմ կամ Ջերմաջերմ պաղատանքներ։

581. Շատ անգամ ածական մը կրկնուելով՝ խնդիր-բնութեան կ՚ըլլայ բայի քով, եւ կը նշանակէ երբ դեռ. մինչ դեռ. քանի որ դեռ. չափօրինակ. Ոսկի հալեցուցած՝ բերին տաք տաք Ակիւղասայ բերնէն վար լցուցին։ Շամփուր մը կարմրցընել տուաւ Սմբատ, եւ տաք տաք ոլորեց անցուց Մերուժանայ գլուխը։ Հիւանդ հիւանդ ոտք են հաներ։ Պաղ պաղ խմեց ու զովացաւ։ — (Այսինքն՝ քանի որ դեռ տաք էր, պաղ էր, եւայլն։)

## Գ. Բայ եւ Դերբայ։

582. Բայ մը կրկնութեամբ կը գործածուի գործողութեան երկարութիւնը, շարունակութիւնը, կրկնութիւնը ցուցընելու համար։ Այսպէս. Վազեց վազեց վերջապէս հասաւ ետեւնէն։ Կը նայի կը նայի եւ չեն կրնար բան տեսնել։ Քալէր քալէր հասեր է երիկուան դէմ։ Ժողվէր ժողվէր տունն է կրեր։ Սորվէլ սորվէլ եւ երբեք չգիտնալ։ — Ասոնք ալ նոյնպէս աւելի ընտանեկան լեզուի սովորական են։

Numérisé par CDMF (PP) - 2011

### Դ. Մակբայ։

583. Մակբայ մը կրկնուելով՝ իր նշանակութիւնը կը սաստկացընէ. օրինակ. Ահագին ծովուն երեսէն՝ լուսոյ աղօտ լուսովը հազի՜ հազի՜ կղզւոյն եզերքը կը նշմարուէին։ Կարելի է թէ դաւաճանութեան գլխաւորներն ասկէ շատ հեռու չըլլան. եւ գուցէ գուցէ մինչեւ ցայժմ հաւատարիմ համարուածներն ալ։ Երբեմն երբեմն լռութիւնը կ'ընդհատէր։ Արեւահողմ ըսուածը վնասակար քամի մըն է որ երբեմն երբեմն Սիկիլիոյ մէջ կը շնչէ։

Ուրիշ շատ կրկնաւորներ ալ կը գործածուին ռամկօրէն լեզուի մէջ, որոնք գրաւորի մէջ ընդհանրապէս խորշելի համարուած են։

---

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՒԵՐ

Մինչեւ հիմայ աւանդուած կանոններէն եւ օրինակներէն տեսանք որ մասանց-բանի շարքը շատ ազատութիւն կը վերցընէ, այսինքն՝ միեւնոյն խօսքը կրնայ այլեւայլ կերպով ըսուիլ՝ առանց սխալի եւ առանց իմաստին այլայլութիւն տալու։

584. Խօսքի մը այս կամ այն կերպով ըսուիլը՝ կը կոչուի Քերականական ձեւ։ — Բայց հարկ է զանազանել Սովորական եւ Ոչ սովորական ձեւ։

585. Քերականական ձեւ ըսելով՝ հասարակօրէն սովորական չեղողները կ'իմացուին, որ գլխաւորաբար չորս են. 1. Շրջումն, 2. Զեղչումն, 3. Աւելադրութիւն եւ 4. Բակասութիւն։

586. Այս ձեւերէն՝ կայ որ ի հարկէ են, կայ ալ որ ազատ ձեւեր են. ինչպէս օրինակներէն պիտի տեսնենք։

587. Այսպիսի քերականական ձեւերով կազմուած շարադրութիւն մը՝ կը կոչուի Ձեւաւոր շարադրութիւն։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

## ՇՐՋՈՒՄՆ

588. *Շրջումն կամ Շրջանն կամ Յեղաշրջութիւն* կ'ըսուի այն քերականական ձեւն, որ խօսքին՝ սովորական կարգէն խոտորած շարք մը կու տայ, կամ մասանց-բանի շարուածքին մէջ ետեւառաջութիւն. զոր օրինակ. Տեսայ ես զքեզ այսօր. փոխանակ՝ Ես այսօր զքեզ տեսայ։

589. Պարզ կամ բնական նախադասութեան շարք այս է. Նախ՝ **Անուն-բայի**. երկրորդ՝ **Խնդիր**. երրորդ՝ **Բայ**։ — **Շաղկապը** սովորաբար խօսքին սկիզբը կը դրուի։ **Մակբայն** անուն-բայէն յառաջ կամ վերջը։ **Խնդիր-սեռի** եւ **Խնդիր-բնութեան**՝ իրարու երբեմն նախադաս, եւ երբեմն յետադաս*։ (Չենք յիշեր յատկացուցիչը ածականը եւայլն, որ հարկաւ իրենց գլխաւոր գոյականին կից կը դրուին։)

* Խնդիր սեռին եթէ անորոշ է, խնդիր-բնութենէն առաջ կը դրուի. այսպէս. Հիւրերուն թէյ պատրաստեցէք։

Այս պարզ կամ բնական շարքէն խոտորումն է որ կը կոչուի Շրջումն կամ Յեղաշրջութիւն։

590. Երբ որ ուրիշ խօսքը յառաջ բերուելով խօսքին մէջը կամ վերջը կ'**ըսէ**, **ըսաւ** եւայլն բայն աւելցուի, այն բային անուն-բային իրմէ ետքը կը մնայ. զորօրինակ. Ամենայն ինչ ընդունայն է, ըսաւ **Իմաստունը**։ **Բախտը** դժբերները չի սիրեր, կ'ըսէր **Կօրոլօ Հէնֆէրոր**։ Պատրաստ ենք, պոռացին **ամէնքը** միաբերան, պատրաստ ենք՝ մեր արեան վերջին կաթիլը տալու։

591. Անուն-բային կամ խնդիրն իւր բայէն եւ յատկացեալն իւր յատկացուցչէն կը զատուի, երբ առջեւնին յարաբերական մ'ունին. ինչպէս. Այն ստախօս **ծառան**, որ քիչ օր յառաջ մեզի այնպէս գեղեցիկ հովանի կ'ըլլայէր, այսօր եւ ոչ մէկ **ճիւղը** տերեւիկ մ'ունի վրան։

592. **Բաղադրեալ** ժամանակներուն էական բայը շատ անգամ իւր դերբային նախադաս կ'ըլլայ. — միայն

Numérisé par CDMF (PP) - 2011

թէ էական բայէն յառաջ անուն-բայի, կամ բայի
խնդիր կամ մակբայ մ'ըլլայ։ Զորօրինակ. Այն ան-
հնարին ծանր բեռան տակ շունչն է կորեր խեղճ գե-
րւոյն։ Թէ ջուր շատ ըլլայ տուած բոյսերուն։ Ցող էր
իջեր դաշտերուն։ Շատ էք վազեր։ Ներս էին մտեր,
կամ ներս էին մտած։

593. Ուրացական եւ արգելական բայերուն բաց-
առական մասը գլխաւոր բայէն կը զատուի. այսպէս.
Չես մէյ մը դառնար մեզի նայեր։ (փոխանակ՝ Մէյ մը
չես դառնար։) Չեմ երբեք տեսած այնպիսի մէկը, չեմ
ալ ճանչնար։ Մի՛ շատ խօսիք ու զգայուն սրտերը վի-
րաւորեք։ Մի՛ իսկոյն ներս յարձակիք։

Բաղադրեալ ժամանակներուն միայն բացառական
այս շրջումը կ'առնու. Չէք շատ վազած այնչափ դառ-
նագառն մեղադրանաց։ Չէինք դեռ ներս մտեր ամենքս։

594. Շատ ուրիշ շրջումներ կ'ըլլան՝ կամ բառերու
շարքը փոփոխելով, կամ մէկ մասը միջանկեալ թող-
լով. որոնց միայն քանի մը օրինակ տանք։ Էինք մենք
ալ տուն մը ճշմարտացած մեր դրացեաց հետ։ Դուք
նոյն տունն, չէ՞ք յիշեր, քանի՛ ողբոց արտասուաց ար-
ժանի էիք։ Զգուշացէք, բուռ, վանքի վանքը մեծ
է։ Տեսնենք, կ'ըսէին, մինչեւ ցե՞րբ պիտի կարենանք
համբերել։ Խեղճ մինակ որ մնայ, տխուր է։ Դեռ չա-
ռինք մենք կործեմ գանձք ներս։ Իմ ալ (կամ իմս
ալ) սա էր բողոքս։

Խորթ է շրջումն երբ խօսքին շարքը կը խառ-
նակէ, իմաստը կը մթնցընէ եւ կ'ըլլայ երկդիմի կամ
անիմանալի։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՁԵՂՉՈՒՄՆ

595. Զեղչումն կ'անուանուի քերականական ձեւն
որ խօսքին մէկ էական մասը կը զեղչէ այսինքն կը
կտրէ. բայց ամբողջ իմաստը զօրութեամբ կամ լռե-
լեայն կ'իմացուի։ Զորօրինակ. Ի՞նչ կը խնդրես ինձմէ.

Numérisé par CDMF (PP) - 2011

Նախատարութի՞ւն։ Այսինքն՝ Թագաւորութի՞ւն կը խնդրէս։

> Հոս այն զեղչմունքը միայն կը դնենք՝ որոնք Հայերէն խօսքի կազմութեան էական մէկ մասը լսելեայն կ'իմացընեն։

596. — Ա. Գոյական անուն զեղչեալ։ — Քահանաները մարդկան լծոյն պարանոցնին կը խոնարհեցընեն, այլ ոչ Աստուծոյ. (այսինքն՝ Ոչ Աստուծոյ լծոյն։) Այս եւ քանի մը ասոր նման վկայութիւններն ստուգութեան կարօտ են. (այսինքն՝ Այս վկայութիւնն։)

597. — Բ. Մասնական անուն զեղչեալ։ — Կան որ կը տրտմին, կան՝ որ կ'ուրախանան. (այսինքն՝ Կան ոմանք որ։) — Նաեւ եղակի կը դրուի՝ Կայ որ, իբր դիմազուրկ, եւ մակբայակերպ մը կը ձեւացընէ. զորօրինակ. Գործարանները՝ կայ որ կրակով կը գործեն, կայ որ առանց կրակի։

598. — Գ. Էական բայ զեղչեալ, մանաւանդ երբ մէկ մը ներդրութեամբ դրուած է։ — Դուն քուն, բախտդ արթուն. (այսինքն՝ Դուն ի քուն ես եւ բախտդ արթուն է։) Բանտին պատուհանը ցած էր, եւ կալանաւորաց փոխատեանը նպաստաւոր։ Թագուհին նոյն իրիկունը շատ տրտում էր եւ գլխիկոր։

599. — Դ. Ամբողջ (դիմաւոր) բայ զեղչեալ։ — Երբեմն կանուխ կը հանին, երբեմն ուշ. (այսինքն՝ Երբեմն ուշ կը հանեն։) Վարէն զուարթ մարդագետին մը զմեզ կը զովացընէր, վերէն՝ ցօղագին ամպեր. (այսինքն՝ Ամպեր կը զովացընէին։)

600. Բացասական բայերուն միայն էական բայն եւ մի արգելականը ամբողջ խօսքի տեղ կը բռնեն. — մանաւանդ իբրեւ հարցման մը պատասխան։ Կը բաղձաս հետս գալ. — Չեմ. (այսինքն՝ Չեմ բաղձար։) Պատմե՞մ ձեզի մեր արկածները. — Մի. չենք ուզեր լսել. (այսինքն՝ Մի պատմեր։) Մէ՛ հաս, մի՛ հան. այլ առէք ներսը պահեցէք։

> Ընտանեկան լեզուի մէջ չեմ եւ մի՝ կրնան որոշ խօսք մը կազմել՝ առանց նախընթաց բայի։

Numérisé par CDMF (PP) - 2011

601. — Ե. Գերբայ զեղչեալ: — Կրնա՞ք իմ խմելու բաժակս խմել. պատասխան տուին թէ Կրնանք: (այսինքն՝ Կրնանք խմել:) Խոստացած էր որ ներկայ գտնուի, բայց չկրցաւ: Ըսած էի որ այգին ելլեն, բայց չուզեցին: — Քրտնած՝ ջուր խմելու չէ. (այսինքն՝ Քրտնած ըլլալով:)

602. — Զ. Նախադրութիւն զեղչեալ: — Դատաւորներո՞ւս դէմ բողոքեմ, թէ փաստաբաններուս. (այսինքն՝ փաստաբաններուս դէմ:)

603. — Է. Շաղկապներէն սովորաբար կը զեղչուին՝ թէ, որ, կամ: — Կարծեմ ոչ ոք իմացաւ մեր գալուստը. (այսինքն՝ Կարծեմ թէ ոչ ոք: Պէտք չէ որ եղածն յիշեցընենք, կարելի է վշտանայ: — Քանի գնաց՝ մէջերնին գժտութիւնը զայրացաւ. (այսինքն՝ Քանի որ գնաց:) — Տասը տասուերկու տարի արգելուած մնաց բերդին մէջ. (այսինքն՝ Տասը կամ տասուերկու:) Յուսամ թէ այդ երկար դատն ալ այսօր վաղը կը լմննայ:

604. — Ը. Շատ անգամ քանի մը մասունք-բանի կամ ամբողջ նախադասութիւն մը միանգամայն կը զեղչուի: — Կամ անկուած սուր սուսերներուն վրայէն ցատքելու էր, եւ կամ կրակի բոցերուն. (այսինքն՝ բոցերուն վրայէն ցատքելու էր:) Հարցուցին Աղեքսանդրի՝ թէ զո՞վ կ՚ընտրես քեզի յաջորդ. պատասխանեց թէ Արժանաւորը. (այսինքն Արժանաւորը կ՚ընտրեմ ինծի յաջորդ:)

Զեղչումը խորթ է՝ երբ լռելեայն չիմացուելու մաս մը կը կտրէ, ու խօսքը խեղ եւ կիսկատար կը թողու որ բան չի հասկցուիր:

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

605. *Աւելադրութիւն* կը կոչուի այն քերականական ձեւն որ (զեղչման հակառակ,) խօսքին էական մասերուն վրայ ըստ ինքեան աւելորդ մաս մը աւելցը-



Numérisé par CDMF (PP) - 2011

նելով՝ միանգամայն ոյժ եւ զարդ կ'աւելցընէ։ Զոր-օրինակ. Ի՜նչ կրցան ինծի չարաչարողներն ընել, ինծի որ ամէնէն ուժովն էի. — ուր երկրորդ ինծի դերանունը՝ միայն խօսքին ոյժ տալու համար աւելցուած կամ կրկնուած է։

Աւելադրութեան հետ չփոթելու չէ կրկնումը կամ կրկնաւորներն որ վերը (574) տեսանք։

606. Հայերէն լեզուի աւելադրութեան գլխաւոր տեսակներն են. 1. Միեւնոյն բառի կրկնութիւն, 2. Որոշիչ բառի մը յաւելուած, 3. Նոյնանշան կամ նմանաձայն բառեր քովէ քով բերել։

607. — Ա. Որեւիցէ մասն-բանի որ նախընթաց խօսքին էական էր՝ կրնայ երկրորդին վրայ ալ կրկնուիլ. այսպէս. Մեզ շտապեցուցէք այն վտանգաշատ վրիժագործին պարանոցին վրայ. մեզ եւ ոչ ոսկի մանեակ։ Տնանկներուն այցելութեան սովորեցուր ոտքդ, տնանկներուն եւ ոչ մեծատանց որ քեզի կանուխ կամ ուշ հեծել պիտի տան։ — Չէմ, չէմ ցաւիր բախտիս կորուստանը, կու լամ ազատութիւնս որ գերի գնաց։ Մէ՛, մի՛ մատուցանէք թագն անարժանին, որ արեամբ պիտի շաղախէ։

608. — Բ. Անուն-բային կամ խնդիրը որոշիչ բառով մը (հասարակօրէն անձնական կամ ցուցական դերանուամբ) կը կրկնուի. այսպէս։ Ալպիոսի բարեբարի այնչափ ապերախտ գտնուիլ՝ այս անհնար է ինծի։ Չտեսան այնչափ համբաւաւոր ապիրատները, եւ խեղճ պէտք մ'որ օտարին արան էր կոխեր, սպանիչ վճռեցին թէ մահապարտ է. — Նոյնպէս՝ Մէկ դժբախտութիւն մը խօսքին մէջ՝ աւելի է մէկ կամ մը։

609. Գոյականի կամ դերանուան մը առջեւ շատ անգամ կ'աւելցուի՝ ինքն ալ, ամէնն ալ, եւայլն՝ նոյն հոլովով. զոր օրինակ. Կամրջին մոյթերն, ամէնն ալ, մնաւեցան սառուցի հոսանքէն։ Քաղաքացիք գիւղացիք, ամէնքն հաւասարապէս տուգանք պահանջեց։ Նաւուբերն ուրն, ինքն ալ, սասանած էր։ Որոնց, ամէնուն ալ, գահ եւ բարձ եւ պատիւ շնորհեց թագաւորը։

Numérisé par CDMF (PP) - 2011

610. Այս, այդ եւ մանաւանդ այն ցուցականները շատ անգամ խօսքին սկիզբը կ'աւելցուին զարդի համար. զորօրինակ. Այն ինչպէս խեղճ կու լար մանուկն ու կը մրմնջէր։ Այն ինչպէս լեղապատառ՝ դռնէն դուրս թափեցան։ Այդ ի՞նչ շնորհքներ կ'ընես մեզի։

611. — Գ. Նոյն կամ նման հնչմամբ եւ նշանակութեամբ բառեր՝ զարդու համար կ'աւելցուին՝ որեւիցէ մասանց-բանի վրայ. Եկան հասան մխիթարութեան օրեր։ Հասաւ բռնեց քաղքին բարձունքը։ Ծոմ ծոմ դիմացայ կեցայ մինչեւ յետինը։ Ամէն դի քար ապառաժ դարձեր է։ Զարհուրանքէն քար դարձաւ ծոյ։ Պաղեցաւ ծոյ։ Ո՞ւր այնպէս եկեր են կ'երթան արտորնուզ. (կամ եկեր կ'երթան։) Տեսաւ թէ վրայ հասան, ճողոպրեց փախաւ։ Կ'ուզէ որ նորէն համբես մէկիկ մէկիկ։ Սուրը քաշեց, ղրկեց ջարդեց եւ ինք անյայտ գնաց։

Նոյնպէս հետեւեալները. (Նոտրագիրներն յաւելուած են.)

| Նոյնանշան. | Նմանաձայն. |
| --- | --- |
| Գող աւազակ մէկը. | Գոռում գոչում եւ աղաղակ. |
| Անօթի ծարաւ սպասել. | Լոփիկ ճնճիկ նստեր է. |
| Ցանել ցրուել. | Վերեւ կորեւ հողակոյտ մը. |
| Խաղալ խնդալ. | Կարօտովն հալիլ մաշիլ. |
| Կարօտովն հալիլ մաշիլ. | Լուռ մունջ. |
| Վշտովն էրիլ մխիլ. | Սուտ մուտ, կամ |
| Հագուած շտկած, կամ | Սուտումուտ լուրեր. |
| Հագուած կապուած. | Ցնդէ փնթի խօսքեր. |
| Ըրածը բռնածը չգիտնալ. | Ալէ ցրի գործածել. |
| Շէնք շնորհք. | Աղտ կեղտ. եւ |
| Ծայր ծոպ չունի. | Աղտոտ կեղտոտ։ |
| Տունս տեղս թողուցի. | |

Սովորական եղած աւելադրութեանց մէջ մէկ մասն երբեմն աննշանակ ձայն մըն է, ինչպէս Մանր մունր. եւ մանաւանդ մ գրով յարմարցուածները. ինչպէս Սուտ ու մուտ առասպելներ։



Numérisé par CDMF (PP) - 2011

Գրաւոր լեզուին մէջ ասոնց յաճախութիւնը ռամկական համարուած է, մանաւանդ բայերու վրայ. (ըննել ճնել. խառնեց մառնեց.) — թէպէտեւ ընտանեկան եւ թատերական ոճոյն կը ներուի։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### ԲԱԿԱՌՈՒԹԻՒՆ

612. *Բակառութիւն* այն ձեւն է որ ոչ թէ քերականական կանոնաց, այլ միայն խօսքին կամ խօսողին մտքին համեմատ համաձայնութիւն մ'ունի. զօրօրինակ. Բոլոր ժողովուրդը միաբան բողոքեցին. (փոխանակ՝ բողոքեց ըսելու։)

Բակառութիւնն այնպիսի ձեւ մըն է՝ զոր միայն նախնի ընտիր գրուածոց հեղինակութիւնը կրնայ արդարացընել։ Մեր արդի լեզուին մէջ, որ դասական հեղինակներ չունի, միայն ընդհանուր սովորութեամբ կրնայ բակառութիւն մը օրինաւոր համարուիլ։ Կ'ըլլան այս շատ եւ շատ բակառութիւններ ամէն օր, որոնք եթէ ռամկին բերանն են, սխալ կը կոչենք, իսկ եթէ գրագիտի գրչին տակ՝ կ'ըսենք գեղեցկութեան կամ անձնիշխանութեան։

613. Գլխաւորաբար բակառութիւն կ'ըլլայ 1. Հոլովոյ, 2. Թուոյ, եւ 3. Բայի դէմքերու։

614. — Ա. Հոլովոյ բակառութիւնն է մէկ հոլով մէկալին տեղ դնել. զորօրինակ. Դուն որ այնչափ քեզի դիմողներուն խիստ էիր, եւ զամէնքը ձեռնունայն կ'արձակէիր, ո՛վ ըսէր հիմայ կը յուսաս որ սփոփէ. (այսինքն՝ Քեզ որ խիստ էիր, ո՛վ հիմայ սփոփէ։) Գուբն որ փորեց բացաւ, ինքն ինկաւ նախ մէջը.) (այսինքն՝ Գբին մէջը։) — Այս ձեւը կը գործածուի՝ երբ հոլովելու բառին առջեւ ոչ դերանուն հանդիպի, ինչպէս օրինակներուս մէջ։

615. Դարձեալ սովորութիւն եղած է քանի մը դէպքի մէջ որեւիցէ հոլովի տեղ բացայայտիչը ուղղական դնել. այսպէս. Թզենւոյ ծառ. Քորեբոյ լեռան վրայ. Փառանու անապատէն. (փոխանակ՝ Թզենի ծառ. Քորեբ լեռ, եւայլն։)

616. — Բ. Թուոյ բակառութիւն կ'ըլլայ՝ եզակի

Numérisé par CDMF (PP) - 2011

կամ յոգնակի իրարու տեղ դնելով. **Մանասէի ձեռքը ոտքը** կապեցին եւ առին տարին Բաբիլոն. (փխկ. ձեռքերն եւ ոտքերը։) **Անկէ ետեւ Թագաւորը Նախարարաց բազմութեամբը դաշտավայրն ելան, ուր դարձեալ վրանները կանգնեցին։**

Թուոց սովորական բացառութիւնները տես 314, 315, եւ 395, 396։

617. — Գ. Դիմաց բացառութիւն կ'ըլլայ՝ բայի եւ դերանուան մէկ դէմքը միւսին տեղ դնելով. **Իմացաւ Ինքնակալը՝ թէ ճար չկայ պիտի մեռնիմ, քովը կանչեց իւր հաւատարիմները.** (փոխանակ՝ Իմացաւ թէ պիտի մեռնի։) **Ըսաւ թէ* դուրս պիտի ելլեմ, եւ ելաւ.** (փխկ. Ըսաւ թէ դուրս պիտի ելլէ, եւ ելաւ։

* Երկրորդ օրինակին մէջ բացառութիւն չէր ըլլար, եթէ առանց Թէ շաղկապի ըսուէր։

Խորթ է բացառութեան ձեւը՝ երբ լեզուին սովորութենէն դուրս է։

Numérisé par CDMF (PP) - 2011

Philippe PILIBOSSIAN
1 avenue Houette
93160 NOISY-LE-GRAND

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ, ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ, ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Քերականութեան արուեստը հինգ գլխաւոր բաժանում կամ մասն ունի ըստ նախնեաց. որ են՝ 1. Ստուգաբանութիւն, 2. Համաձայնութիւն, 3. Ուղղագրութիւն, 4. Առոգանութիւն, եւ 5. Տաղաչափութիւն։

Ստուգաբանութիւն այն մասն է՝ որ իւրաքանչիւր բառի կամ մասանց-բանի քերականական կազմութեան կանոնները կ'աւանդէ. (զորօրինակ՝ հոլովմունք, խոնարհմունք, եւայլն.) որ այս գործոյս Ա. Մասն անուանած ենք։ Հիմայ Ստուգաբանութիւն բառին այս նշանակութիւնը գրեթէ անսովոր եղած է*։ — Համաձայնութիւն՝ մասանց-բանի իրարու կապակցութիւն է, որ կ'ըսուի նաեւ Շարագրութիւն. եւ գործոյս Բ Մասը կը կացուցանէ։ — Ուղղագրութիւն՝ բառերուն անսխալ գրուածքն է, որ բովանդակ քերականական արուեստին գիտութենէն կախում ունի։ — Առոգանութիւն՝ որեւիցէ գրուածքին ուղիղ արտասանելն է։ — Տաղաչափութիւն՝ խօսքին վանկերն որոշ չափով ու թուով շարելու արուեստն է, որով Ոտանաւորը կը կազմուի։

Մինչեւ հիմայ խօսեցանք առաջին երկու էական մասերուն վրայ. հոս իբրեւ քերականական ուսման լրումն կամ ամբողջացուցիչ մասն՝ համառօտիւ եւ առանձինն կ'աւանդենք Ա. Ուղղագրութեան, Բ. Առոգանութեան եւ Գ. Տաղաչափութեան կանոնները

* Ստուգաբանութիւն հիմակուան առենս լեզուագիտութեան այն ճիւղը կը նշանակէ՝ որ բառերուն ներքին կամ ծածուկ կազմութիւնն ու բաղադրութիւնը լուծելու կը զբաղի։

Numérisé par CDMF (PP) - 2011

# Ա. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

618. *Ուղղագրութիւն կը կոչուի իւրաքանչիւր բառն անսխալ, այսինքն իւր յատուկ գրերովը գրելու կանոնը։*

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔ

619. Առանց ձայնաւոր գրի բառ չի կազմուիր ամենեւին. եւ նոյն իսկ ըստ ինքեան աննշանակ մասնիկներն որ գլխաւոր բառէն զատ կը գրուին՝ ձայնաւոր գրով կը ձեւանան։

620. Հայերէն լեզուի մէջ կրկնեալ գիր չկայ. ոչ ձայնաւոր եւ ոչ բաղաձայն։ Միայն ըստ պատահման կրնայ երկու նոյն գիր քովէ քով կցուիլ՝ (կրուսման կամ ածանցման, եւայլն կանոնով.) զօրօրինակ. Երրորդ. չորրորդ. քննել. փաթթել. գթութիւն. աննման. աննախանձ. խրատփփու. քաղաքք. (ի) մարգարէէ, եւայլն։

Հակառակ չեն այս կանոնիս՝ սուղ ը գրով կապուած բաղաձայններն որ քանի մը բառի սկիզբը կամ վերջը կը պատահին. ինչպէս. Գգուել. լլկ. ճճի. թթում. — տարր. երր. լուսանն, եւայլն։

Ա. Ձայնաւոր գրերէն՝

621. Ա եւ ո բառի վերջ չեն մնար, այլ միշտ անձայն յով կը վերջաւորին. այսպէս. Ծառայ. տղայ. գողոյ. երթայ. դշխոյ. մարդոյ։

Կը զարտուղին՝ Սա. ահա. եւ հրամայականները՝ գնա. դողա։ (Գրբր. Սորա. սոքա. ո. մատո. դարձո։)

622. Ե եւ օ բառի վերջ չեն մնար, այլ է կը փոխուի էի. այսպէս. (Գնեմ,) գնէ. (եմ, ես,) է։ — Օ տես վարը 630։

623. Ա եւ ո միայն յ եւ ւ կրնան առնուլ եւ երկբարբառ կազմել՝ այ, աւ եւ ոյ, ու. ուրիշ ձայնաւոր ասոնց չի յաջորդեր։

Numérisé par CDMF (PP) - 2011

624. Ն գիրը միայն ա եւ ո ձայնաւոր կրնայ առնուլ, եւ երկբարբառ կազմել՝ նա, նո. ուրիշ ձայնաւոր չի յաջորդեր։

625. Ը գրէն ետքը ո՛չ յ եւ ո՛չ ուրիշ ձայնաւոր կրնայ գալ. իսկ իրմէ յառաջ՝ գրբ. յ նախդիր միայն։ Բառի վերջն անշեշտ ը կը գտնուի միայն արդի լեզուին մէջ՝ փոխանակ գրբր. ըն վանկին. տես Մարդը. եօթը. ինքը։

626. Ը ձայնաւորը միավանկ բառ չի կազմեր, բայց կայ միայն գրբր. ընդ եւ ըստ, եւ աշխարհաբար՝ կը եւ մը, (փոխ. կու եւ մի,) որ նոյնպէս անշեշտ են։

627. Ց գրէն յառաջ միայն ա եւ ո կրնայ գալ, եւ այ, ոյ երկբարբառները կազմել։ — Կը գտնուին արդի լեզուին մէջ Մէյ մը, մէյ մէկ, (փոխ. մէկ մը.) էյնալ, (փոխ. ընկնիլ։)

Լեզուին ներքին կազմութիւնը կը պահանջէ՝ որ այս տեղս յ գիրը ձայնաւորաց կարգը դնենք, թէեւ ուրիշ տեղեր իբրեւ բաղաձայն ալ կը գործածուի՝ հըյի նման ձայնով։

Ըստ պատահման միայն բաղաձայն կու գայ յէն յառաջ. Անյապաղ. անյագ. յեղյեղել.

628. Ւ գրով բառ չի սկսիր։

629. Ւ գրէն յառաջ միայն կրնար ա, ե, է, ո գալ՝ եւ աւ, եւ, էւ, ու երկբարբառ կազմել։

Կը գտնուին

1. Հոլովմամբ՝ Հոգւոյ. տարւոյ. տարւան. օրւան, եւայլն։

2. Քանի մը տեղ կը գրուի ըւ՝ միայն ու հնչումը խափանելու համար. այսպէս՝ Տըւչութիւն. փոխ. տուչութիւն կամ տուըչութիւն.) Նոյնպէս ուել վերջաւորեալ բայերուն կրաւորականը՝ Հաշւըւիլ. հաշւըւած. պատւըւի. (տես 652։)

Մինչեւ մօտ ատեններս կը գրուէր՝ Դըւել. ըմւած. ֆընըւել. ղօղըւել. փաւըւէլ։ Հիմայ գրաբար ուղղագրութեան համեմատ ուղղուած՝ կը գրուի Ըն[illegible]. ըմւել. փեռըւել. փաւըւէլ, եւայլն։

Numérisé par CDMF (PP) - 2011

630. Օ գրէն ետքը միայն բաղաձայն կրնայ գալ։

Պատճառն է՝ որ ի բնէ Հայերէն օ գիր չըլլալով հին գրաբարի միայն բաղաձայնէ յառաջ աւ գրուածը յետին դարերուն մէջ օ ձայնաւորի փոխուեցաւ։

Ձայնաւորներու վրայ ըսուածներէն կը հետեւի որ Հայերէն ուղղագրութեան հակառակ բաղադրութիւններ են՝ աե, աէ, աի, աօ, աօ. եէ, եյ, եօ, եօօ. էե, էյ, էօ. իյ. ոե, ոէ, ոէ, օօյ. օյ. այլ միշտ կը բաղադրուի՝ այե, այէ, այե, ոյէ, եւայլն։ (Աւելորդ է ը ձայնաւորն յիշել՝ որ այսպիսի տեղեր երբեք մուտ չունի։)

Իօ երկբարբառ ունինք եօթն, արդեօք բառերուն մէջ. եւ դարձեալ յք. գործիականներ՝ կարծեօք, եւայլն։

---

Բ. Բաղաձայն գրերէն՝

631. Վ. գիր կրնայ միայն բառի սկիզբն ըլլալ. իսկ բառի մէջ՝ իրմէ առաջ միայն օ գիր կու գայ։

Կը զարտուղին արդի լեզուին քանի մ'ամփոփմունքները. ծովվել. խորվել. սովվիլ. թօթվել (փոխ. ծովովել. խորովել. սովրիլ. թօթափել.) եւ բարդերն ու ածանցները. Զօրավար. դարվեր. անվաւեր. հոգեվարք. եւայլն։

Այս պատճառաւ յատուկ անուանց մէջ ալ աւելի ընտիր է գրել Մորաւիա, Մոլտաւիա, Գաւիերա, քան թէ Մորավիա։

632. Ն եւ Մ անդական բաղաձայններէն ետքը՝ Միջին բաղաձայնները կրնան երբեմն նուրբ ըսուած տեսակին փոխուիլ. այսպէս. Խնծի, (փոխ. խնձի.) խանծել, (փոխ. խանձել.) խնտալ. ընտոր, եւայլն։

633. Ր գրէն ետեւ եթէ Ն հանդիպի՝ կը գրուի ռն. ինչպէս լեզուին ամէն արմատական բառերուն մէջ կը տեսնուի։

Կը զարտուղին քերականական ածանցները, բարդբառերն ու ամփոփմունքները ըստ օրինակ. Գարնան. սափորներ. յիմարներ. մաքերնիդ. կայրնալ. չորնալ. վէրնալ. վերնատուն. կրնամ. զարնել։

Numérisé par CDMF (PP) - 2011

634. Ր եւ Ռ գրերով բառ չի սկսիր Հայերէն, այլ կը գրուի եր կամ ռ: Իսկ օտար անուանց սկիզբը ռ է կամ Հռ. քիչ զարտուղութեամբ։

635. Մնացած նմանաձայն գրերուն համար, զոր օրինակ ց, ձ. — չ, ջ. — ք, ֆ. — ր, ռ. — յ, հ, եւ այլն. որոց կանոն չի կրնար տրուիլ. եւ միայն վարժութեամբ ու մտադիր ընթերցմամբ կը սորվուի: Սակայն կրնայ իբրեւ ընդհանուր կանոն առնուիլ՝ թէ Հայերէնի մէջ համեմատաբար աւելի յածախեալ են՝ չ, ց, ր, ք, ե, ո. եւ աւելի ցանցառ կը պատահին՝ ջ, ձ, ռ, ֆ, է, օ։

Դարձեալ շատ բանի ալ կը դիւրանայ ուղղագրութիւնը՝ բառերուն քերականական կազմութեանը, ածանցմանց ու ստուգաբանութեան մտադիր ըլլալով:

---

Հիմնական տառերու յածախեալ եւ ամենէն սովորական եղած սխալագիրները հետեւեալներն են. (որ հասարակօրէն նմանաձայն բառի մ'ուղղագրութենէն յառաջ կու գան:)

| | |
|---|---|
| Հոգնիլ, փոխանակ՝ | յոգնիլ. |
| Արձագանք, | արձագանգ. |
| Բրդիլ, | փրթիլ. |
| Հետադրդիր, | հետաքրքիր. |
| Խորոչ, խորոջ, | խռոչ, խռոջ. |
| Փակ, | բակ. (ած. ակլոռ.) |
| Դար, դարիլ, | (հաւու) թառ. |
| Գալել, | քալել. |
| Ամեն*, | ամէն. |
| Ժողուած, | ժողված, ժողվուած. |
| Մինջել. մունջել, | մնչել, մունչել. |
| Շշնչել. անշշունչ, | շշնջել. անշշունջ. |
| Որ նոր. ինչը նալ, | որն որ. ինչըն ալ. |
| Մի տեսնէր, | մի տեսներ. |
| Չես գիտէր, | չես գիտեր. |
| Չէր նայէր, | չէր նայեր. |
| Չէին անցնէր, | չէին անցներ. |

Numérisé par CDMF (PP) - 2011

Վեցերրորդ, փոխանակ՝ վեցերորդ.
Ուղղեցոյց, ուղեցոյց.
Խօստանալ, խոստանալ.
Դրօշմել, դրոշմել.
Անտօն. Անտոն.
Պատրիարգ, պատրիարք.
Եպարգոս, եպարքոս.

* Կան որ ամէն բառին ուղղագրութիւնն էջով ուզած են հաստատել, գրաբար ամենայնէն կրճատուած համարելով։ Ցայտնի է սակայն հակառակն՝ որ ամենայն բառին արմատն է ամէն՝ նաեւ հին լեզուին մէջ, եւ փոփոխման կանոնով է գիրն եի դարձած է։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՏՐՈՀՈՒԹԻՒՆ

636. *Տրոհութիւն* կը կոչուի՝ բառերը կամ խօսքի մասերն ըստ պատշաճի եւ ուղղագրութեան օրինօք բաժանելու կանոնը։

637. Տրոհութիւնն երկու մաս ունի, 1. Տողադարձ եւ 2. Կէտադրութիւն։

---

### §. 1. Տողադարձ:

638. *Տողադարձ* անուամբ կ'իմացուի՝ տողին ծայրը հասած բառին մէկ մասը յաջորդ տողն անցընելու կանոնը։

639. Տողադարձի ուղղութիւնը կը կայանայ բառերը վանկ առ վանկ բաժանելու վրայ, որ կը կոչուի *հեգել*. զորօրինակ պատերազմաւէր բառն ուղիղ հեգելու համար իւրաքանչիւր վանկին կը լուծուի կամ կը բաժանուի, այսպէս. պա-տե-րազ-մա-ւէր.

Տողադարձի կամ Հեգելու կանոնները հետեւեալներն են։

640. — 1. Միավանկ բառերը չեն բաժնուիր։ Այսպէս անբաժին են՝ ծառ, գէն, սէրտ։

641. — 2. Նոյնպէս անբաժին են երկբարբառ-

Numérisé par CDMF (PP) - 2011

ները, վանկի միայն մէկ վանկ են. (8։) Զորօրինակ․ ծայր․ գոյն․ սիւն․ ան-ցեալ․ շա-նիմ․ վայր-կեան․ եր-կայն․ նա-քոյր։

642. — 3. Երկու կից ձայնաւոր՝ որ զատ զատ վանկ կը կազմեն, իրարմէ կը բաժնուին․ ինչպէս․ մի-աբան․ լէ-ազօր․ Ուրի-էլ․ Բելի-ար․ ոչ-եղէնք․ կ'առնու-ին*, (ներգծ․ անկատ․) տեսնէ-իր։

* Զատ է կրկ. սահմ. ներկայ՝ կ'առ-նու-ին, ([illegible]) չի բաժնուիր՝ կ'առ-նու-ին։ Տես 652։

643. — 4. Եթէ երկու ձայնաւորի մէջ մէկ բաղաձայն գիր կայ՝ յաջորդ վանկին կ'անցնի․ զորօրինակ․ հո-գի․ դա-րի․ կա-տա-րե-ցաւ։

644. — 5. Եթէ երկու ձայնաւորի մէջ երկու բաղաձայն գիր ըլլայ, բաղաձայններն իրարմէ կը զատուին․ այսպէս․ ար-դար․ դառ-նալ․ խոս-քով․ բաշ-խել․ հան-գիստ։

645. Բայց շատ անգամ ընտիր կը համարուի ր եւ ռ (երբեմն նաեւ ղ կամ ւ) գրերուն նախընթաց բաղաձայնը մէկտեղ վար առնուլ․ ինչպէս․ մա-քրու-թիւն․ շաղա-կրատ․ Ե-փրեմ․ ա-գռաւ․ պա-տրանք․ պա-տրուակ․ մա-տուակել։

646. — 6. Եթէ երկու ձայնաւորի մէջ երեք բաղաձայն ըլլայ, միայն վերջինը — եթէ թոյլ գիր չէ, — յաջորդ ձայնաւորին կ'անցնի․ ինչպէս․ հանգ-չիլ․ Թարգ-ման․ Մուրտ-զէ։

Ընտրելու այն դէպքին համար իմանալու է՝ որ երեք բաղաձայններուն մէջ թոյլ ը ձայնաւոր չի լսուիր։

647. Եթէ երեք կից բաղաձայններուն վերջինն է թոյլ գիր, առաջին բաղաձայնը մինակ կը մնայ, եւ վերջին երկուքը կը զատուին․ այսպէս․ եր-կրորդ, բեր-կրիլ․ եր-կնաւոր․ աս-տղալից․ ան-գլուխ․ կար-ծրութիւն․ քաղ-ցրանալ․ բար-ձրագոյն։

Երկու ձայնաւորի մէջ երեք բաղաձայնէն աւելի որ ըլլայ, հարկաւ ը ձայնաւորով վանկ մը կ'աւելնայ․ որուն վրայ՝ վարը։

648. — 7. Եթէ բառ մը իւր ձայնաւորացը համ

Numérisé par CDMF (PP) - 2011

բանկրէն աւելի վանկ ունի. կամ թէ՝ — ուր որ երկու կամ երեք բաղաձայնի քով զօրութեամբ գրուած ը կը հնչուի, տողադարձի մէջ ը գիր մը կ'աւելցուի ներգործութեամբ, — թէ տողին սկիզբն ըլլայ եւ թէ վերջը։ Օրինակ. տը-կար. թըշ-նամի. ջըր-մուղ. մը-կըրատել. ըն-կըզմել. տըր-տընջել. քըրթ-մըն-ջել. չար-չըրկած. ըղ-դատտ. ըղ-ձեղ. ըս-տրուկ։

649. Բայց ը չի մնար՝ ուր որ գլխաւոր բառն անփոփոխ մնալով՝ նախընթաց նախդիր կամ մասնիկ ունի կամ՝ բարդ է. օրինակ. ըդ-թշնամին. ան-շէջը. ան-պտուղ. չնչին-տղայ. բանա-ստեղծ. նո-րա-ձեւար. նախա-կւոյ. ձեռն-տու. անձ-կալութիւն. ունկն-դիր. (եւ ոչ՝ ըդ-թըշնամին. ձեռըն-տու, ան-պըտուղ. եւայլն։)

Հեգելու եւ տողադարձի մէջ երկբարբառները պարզ ձայնաւոր համարելու է. անոր համար ըսինք թէ անբաժին են. (641։) Ասկէ կը հետեւի որ նաեւ

650. Աւ, եւ, իւ, ով, այ, ոյ երկբարբառները, թէեւ վերջի ձայներնին բաղաձայնի նման հնչէ (վեւի կամ յիի ձայնով,) պէտք չէ քակել։ Այսպէս կը բաժնուի՝ զօրաւ-որ. ցաւ-ալից. երեւ-ակ. բով-անդակ. վկայ-ել. հայ-երէն. (եւ ոչ՝ զօրա-ւոր. վկա-յել. բո-վանդակ. Յո-վաթամ. հա-յերէն։)

Ասոր հակառակ՝ բարդութեանց մէջ կը բաժնուի՝ քարա-յատակ. մաղձա-յոյզ, եւայլն. վասնզի յ գիրն երկբարբառ չի կազմեր։

651. Երկրորդ՝ բաղաձայնի նման հնչմամբ սկսող ուա, ուի, ուէ, եա, իւ, եւայլն երկբարբառներուն նախընթաց բաղաձայնն իրենցմէ անբաժին է։ Օրինակ Գը-րուի. ա-նուամբ. վա-ղուան. Ցե-ղուայ. ա-ղուոր. ըս-տուեր. պա-տուէր. ար-տեւք. կար-ծեւք. ան-ցեալ. վայր-կեան. յաւի-տեան. չարու-թեան. (եւ ոչ՝ ըստ-ուեր. արտ-եւք. յաւիտ-եան. չարութ-եան։)

652. Ու երկբարբառն ըւ գրելով կը բաժնուի՝ ուր որ իրեն ըւ հնչում կը լսուի. օրինակ Տըւ-աւ. լըւ-աց. կ'առ-նըւին. թըւ-ական։

Numérisé par CDMF (PP) - 2011

653. Քանի մը դէպքի մէջ որ ւ-իւնէն յառաջ Թոյլ գիր կը պատահի՝ սովորութիւն եղած է բաժանել՝ Օր-ւան. տար-ւոյ. տար-ւօք. բար-ւոք. գին-ւոյ. լեղ-ւոյ. հայել-ւոյ: Իսկ ուրիշ գրերն անբաժին կը մնան. ինչպէս՝ հո-գւոյ. որ-դւոյ:

654. Ընդհանրապէս ընտիր եւ աւելի քերականական կը համարուի տողադարձը՝ եթէ բառերուն կազմութեանը համեմատ ըլլայ. — որ շատ անգամ մինչեւ հիմայ տրուած կանոններէն խոտորում կը կրէ: Ըստ այսմ՝

655. Նախ՝ որեւիցէ ածանցման մէջ՝ կորուսման կանոնին միտ կը դրուի, եւ կը բաժնուի՝ (Մար-դիկ) մար-դկան. (եր-կինք) եր-կնից. մար-տկոց. կըն-ճռեալ. աղ-ջկան դար-բնութիւն. նա-խրութիւն. կո-տրել. եւայլն:

656. Երկրորդ՝ Բարդ բառերն իրենց յօդիչ մասնիկը կը վերածուի. եւ կը բաժնուի՝ Ցէր-ուցան. աղ-ուհացք. կէր-ուխուռ. անց-ուդարձ. հալ-ուեմաշ. փառ-ուեւառ. այլ-ազգի. այս-ինքն. հօր-եղբայր. հեռ-ընկալ. վէրջ-ընթեր. աշ-ատամբ. աշ-երախտ:

Ինքնին յայտնի է որ այս կանոնիս զեղծում կ'ըլլայ եւ սխալ՝ եթէ բաժանես Նոր-անշան. գործ-ակից. չար-աշնչան. ութ-երորդ. այլ թէ ոչ՝ հարկ կ'ըլլար բաժանել նաեւ՝ գործ-եալ. ծառ-եոյ՝ որ բացայայտ սխալ են:

657. Տողադարձի կանոնը կը պահանջէ վերջապէս՝ որ Ապաթարց նշանը (տես 670.) տողի ծայր չմնայ, եւ ապաթարց ունեցող բաղաձայնն իւր առջեւի ձայնաւոր գրէն չզատուի. այսպէս. Եր-կ'երկու. պի-տ'որ տեսնէ. Չ'ի-մանար. չ'առ-նուր. կ'ըն-թանայ. (եւ ոչ՝ երկ'-երկու. պիտ'-որ. չ'-առնուր. — ենթամնայով կամ առանց ենթամնայի:)

658. Տողադարձի նշանը կամ կամ նշանախեցն է ԸՆԹԱՄԱՆԱՅ՝ այս ձեւով. զորօրինակ՝ Մար-դիկ. վայր-կեան. բե-րան:

—

Numérisé par CDMF (PP) - 2011

## § . 2. *Կէտադրութիւն:*

659. Խօսքի այլեւայլ մասունքն իրարմէ պատշաճօրէն զատելու համար այլեւայլ նշանախեցներ կը գործածուին, զորոնք ընդհանուր անուամբ կէտ կը կոչենք, եւ անոնց գործածութիւնը՝ կէտադրութիւն։

660. Հիմակուան կէտադրութեան նշանները՝ հետեւեալ ութ նշանախեցներն են. որոնց չորս առաջինները բուն կէտադրութեան կը ծառայեն, կարդացողին քիչ շատ շունչի հանգիստ տալու համար. իսկ չորս վերջիններն երկրորդական նշաններ են, եւ բացայայտութեան կը ծառայեն։

Աւասիկ ասոնց անուններն ու ձեւերը։

| Բուն կէտեր. | | Կէտադր. նշաններ. | |
|---|---|---|---|
| 1 Բութ | ` | 5. Ապաթարց | ’ |
| 2. Ստորակէտ | , | 6. Մակակէտ | ’ |
| 3. Միջակէտ | . | 7. Չակերտ | “ „ |
| 4. Վերջակէտ | : | 8. Փակագիծ | ( ) |

Այս նշաններուս գործածութիւնը հետեւեալն է։

661. *Բութ* նշանը բառի մը վերջը կը դրուի՝ միեւնոյն խօսքին մէջ յաջորդ բառին չվերաբերիլը ցուցընելու համար. ուր շատ անգամ զեղչում մնած է, կամ բառ մը զօրութեամբ կ'իմացուի. ինչպէս. Ս—նի—ց—ց՝ Մեքսիկացիներուն հետ դրած դաշինքները։ Քու՝ թշնամեացդ ձեռքէն կրած վնասերդ. (քու կրած վնասերդ։) Ով որ երախտիք չ'ընէ՝ ապերախտութեան սպասէ։

Բութը կը ցուցընէ՝ թէ բառի մը վրայ շատ քիչ կանգ առնելու է։

*Ստորակէտ կը դրուի՝*

662. — Ա. Երկու կամ աւելի՝ կարճ նախադասութեանց մէջ՝ որ իրար կ'ամբողջացընեն. ինչպէս. Հասաւ քաղցրաշունչ եղանակը, ձիւներն հալեցան, անձրեւներն հեռացան, դալարիք զուարճացան, եւ զուարթացան մարդ եւ անասուն։ Լացքով կը ծնանինք, տրտունջով կ'ապրինք, սգով կը մեռնինք։

Numérisé par CDMF (PP) - 2011

663. — Բ. Միեւնոյն նախադասութեան մէջ նոյն կարգի բառեր որ ետեւէ ետեւ կրկնուած են, ստորակէտով կը զատուին. զորօրինակ միեւնոյն բայի՝ այլեւայլ անուն-բայիներ կամ խնդիրներ, միեւնոյն գոյականի այլեւայլ ածականներ, եւայլն: Այսպէս. քննեցէք, դիտեցէք, տեսէք. լսուած է երբեք այսպիսի նորանշան գործ մը:

664. Բայց եւ, կամ շաղկապով կապուած բառերն ստորակէտ չեն առնուր. զորօրինակ. Մեմփիս եւ Թեբէ՝ Եգիպտացւոց նշանաւոր քաղաքներն էին: Աթէնք եւ Սպարտա՝ իրարու նախանձորդ էին: Մեծատուն կամ աղքատ, գիտուն կամ տգէտ՝ ամէն մարդ հաւասար է Արարչին առջեւ:

> Ստորակէտի տեղ երբեմն բաւական կ'ըլլան նաեւ Ըւ, ու՚ բայց եւ ուրիշ շաղկապներ՝ եթէ բառ բառի հետ կը կապեն. ինչպէս. Հարուստ բայց ագահ մէկը:

665. Իսկ ուր որ խօսք խօսքի հետ եւ կամ ուրիշ շաղկապով մը կապուած է, հոն շատ անգամ ստորակէտ, երբեմն նաեւ ուրիշ կէտեր կը դրուին: Օրինակ. Տղուն համբոյրն ու գգուութիւնը գովեցի, եւ պախարակեցի ծնողացն անհոգութիւնը: Աղքատները պէտք ունին՝ եւ յիմարներն իմաստնոց գործիքն են եղած:

666. — Գ. Միջանկեալ բառ մը կամ խօսք մը սովորաբար երկու ստորակէտի մէջ կ'առնուի: Օրինակ. Տեսէք ահա՝ սուսեր եւ տէգ, [illegible] գործիքներ, այս տեղս՝ խաղաղութեան մշտնջենաւոր օթեւանին մէջ:

667. — Դ. Անուանց կոչականը, եթէ միջանկեալ ըլլայ եթէ ոչ, ստորակէտով կը զատուի. զորօրինակ. Այսուհետեւ ցնծացէք, ընկերներ, վասնզի հասաք վերջապէս ձեր բաղձանքին: Որդեակ, յարգէ ծերերը: Ձեզի են խօսքերս, ո՛ [illegible]:

Ստորակէտը քան զբութը քիչ մ'աւելի հանգիստ կու տայ ձայնին:

668. *Միջակէտը*, որ պարզապէս կէտ ալ կը կոչուի, ամբողջ խօսքի մը գլխաւոր նախադասութիւն-



Numérisé par CDMF (PP) - 2011

ներն իրարմէ կը զատէ։ Զորօրինակ. Երբ որ նաւ ելան, սկսան իրենց ընկերացը պատմել՝ թէ ինչպէս թանձրախուռն անտառին մէջ մոլորած կը թափառէին. անտառն, ըսին, մութ է եւ անկոխ. խիտ առ խիտ բուսած մացառներուն մէջէն՝ շատ տեղ միայն սուրերով կրնայ ճամբայ բացուիլ. ծառերն այնպէս թաւ ու բարձր են՝ որ երկինք բնաւ չի տեսնուիր։

Միջակէտն ստորակէտէն աւելի հանգիստ կուտայ շնչոյ։

Արդի ուղղագրութեան մէջ միջակէտն՝ իբր օժանդակ կէտ՝ ուրիշ գործածութիւն ալ ունի։ Տես վարը 675, 676։

669. *Վերջակէտ* կը դրուի ամբողջ եւ լրացեալ խօսքի մը վերջը։

Վերջակէտը կատարեալ հանգիստ է շնչոյ։

670. *Ապաթարց* նշանը կրճատուած ձայնաւոր գրին տեղը կը դրուի, եւ կը ցուցընէ թէ երկու կից ձայնաւորներէն մէկը կրճատուած է զորօրինակ. Անգամ մ'ալ, (փխկ. անգամ մը ալ.) պիտ'որ լսեմ, (պիտի որ լսեմ.) կ'եղծանէր, (կը եղծանէր.) երկ'երկու. (երկու երկու.) եւայլն։

Ապաթարցով կրճատութեանց տողադարձին համար՝ տես վերը 657։

Աւասիկ ապաթարցի գործածութեան սովորական սխալները։

| | | | |
|---|---|---|---|
| Զ'եմ, չ'է, փխկ. | չեմ, չէ. | Կ'ուգայ, փխկ. | կու գայ. |
| Զ'ըլլայ. | չըլլայ. | Կ'ուտամ, | կու տամ. |
| Զ'տեսնեմ, | չտեսնեմ. | Կ'ստանայ, | կը ստանայ. |
| Զ'տեսներ, | չի տեսներ. | Կ'գտնէ, | կը գտնէ. |

Այդ բառերուն մէջ ապաթարցը տեղի չունի, վասնզի ձայնաւորաց կրճատութիւն չկայ։

671. *Մակակէտ*՝ ի նախադրին սեպհական նշանն է. այսպէս. Վեր 'ի վերոյ. ձմեռն 'ի բուն. — որ հիմայ սկսած է անսովոր ըլլալու։

672. *Չակերտը* կոչման կամ վկայութեան նշան է, եւ յառաջ բերուած խօսքին կամ բառին սկիզբն

Numérisé par CDMF (PP) - 2011

ու վերջը կը դրուի. այսպէս. Նոյն փութանակի յաղթութեան համեմատ՝ այս կարճ թուղթս գրեց Կեսար, թէ "Եկայ, տեսայ, յաղթեցի„։ Այդ "թերեւս„ յաւելուածնիս ոմանց միտքը պղտորեր է։

Հայերէն չակերտին հին ձեւն որ հիմայ խափանուած է, նոտրագիր չայի գլուխ մըն էր (չ). որմէ իր անունն ալ առած է։ Հիմակուան ձեւն եւրոպական է։

673. *Փակագիծ* միջանկեալ խօսքի կամ բառի մը երկու դին կը դրուի՝ որն որ իբրեւ մեկնութիւն կամ ծանօթութիւն աւելցուած է. զորօրինակ.

Քանինե՛րն երազեցին որ կարենան հրով եւ սրով, արիւնահեղ ապստամբութեամբ, յափշտակութեամբ եւ սպանութեամբ (որովհետեւ ասոնք միայն էին իրենց միջոցները,) աշխարհիս ցանկացեալ երջանկութիւնը հաստատել։

Սխալ կ'ըլլայ փակագծի գործածութիւնը՝ եթէ չկարենաս փակագծեալները խօսքին մէջէն հանել՝ առանց խօսքը կրճատ ու կիսկատար թողլու. ինչպէս այս օրինակիս մէջ. Հայիդիի բնակիչները կը հաւատային թէ Ոգիներն՝ որոնց իրենք (Զէմի) անուն կուտային, ապագայ բաներու գուշակ են. ամէն մարդ, կ'ըսէին, իր առանձին (Զէմին) ունի, որուն պատգամ կը հարցընէ։ — Վասնզի փակագծիւ գրուածը միշտ երկրորդական մաս մըն է եւ ոչ էական։

Բայց շատ անգամ փակագծի տեղ երկու ստորակէտի մէջ կ'առնուի միջանկեալը կամ մեկնականը. (տես 666։)

---

Ուղղագրութեան մասերն են դարձեալ՝ 1. Համառօտագրութեան կերպն ու 2. Գլխագրաց գործածութիւնը։

674.—Ա. *Համառօտագրութիւն* է բառի մը մէկ մասը միայն գրել, որ ամբողջ կը կարդացուի։

675. Համառօտագրութեան համար հիմայ գործածուած նշանն է՝ համառօտեալ բառին առջին պարզ կէտ մը։ — Նոյնպէս

676. Արդի ուղղագրութեան մէջ թուահամարներու առջեւ լոկ կէտ մը կը դրուի՝ երբ նախ կամ ա–



Numérisé par CDMF (PP) - 2011

ՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ կը նշանակեն. (եթէ թուանշան ըլլայ. եթէ այբուբենք։)

Աւասիկ երկուքին մէկտեղ օրինակը. Բասիլիոս Ցովէն. (կամ Ցն.) Հերոլտ անուն մէկը՝ Լեւոն Բ.ին եւ Հեթում Ա.ին պատերազմները կը պատմէ. (այսինքն՝ Ցովհաննէս Հերոլտ՝ Լեւոն Երկրորդին եւ Հեթում Առաջինին պատերազմները կը պատմէ։)

Համառօտագրութեան որոշ կանոններ չի կրնար տրուիլ, բայց այնչափ միայն՝ որ համառօտեալ բառը կարելի ըլլայ անաշխատ կարդացուիլ։

677. — Բ. Գլխագիր տառերով կը սկսին

1. Ամէն խօսքի գլուխը կամ առաջին բառը. եւ ամէն վերջակէտէ ետքը. նոյնպէս ոտանաւորի ամէն մէկ տողին սկիզբը. (որուն համար հայերէն ցանցլունկ գիր ալ կոչուած են գլխագիրները։)

2. Իբր վկայութիւն բերուած խօսքը կամ բառը, թէեւ խօսքին մէջտեղն ըլլայ. — Եւ ասոր համար շատ անգամ չակերտ նշանն ալ զանց կ'առնուի։ Ագագ, Ամաղեկայ թագաւորը, մեռնելուն վայրկեանը գոչեց, թէ Ա՜ՅՍՉԱՓ դառն է եղեր մահը։

3. ԱՍՏՈՒԱԾ բառն եւ իր նոյնանշանները, ինչպէս ՏԷՐ. ԲԱՐՁՐԵԱԼՆ. ԱՐԱՐԻՉՆ, եւայլն։ Նոյնպէս ուրիշ պատուոյ, պաշտամանց եւայլն անունները. ինչպէս. Պատրիարք։ Ձեր Սրբութիւնը։ Մրցելով իրար պատուեցէք, կ'ըսէր Առաքեալը։

4. Ամէն յատուկ անունները, մանաւանդ գոյականները (101.) իրենց սովորական վերադրովը մէկտեղ. (429.) ինչպէս. Մծբին. Կասպից ծով. Աժդահակ. Վահան Գողթնացի. Կարոլոս Մեծն. Սուրբ Իգնատիոս. Յովսէփ Գեղեցիկ. եւայլն։

5. Գրքերու, նշանաւոր գործուածքներու անունները. օրօրինակ. ԹՈՎԲԱՅ գիրք. Մոլիէռի ԱԿԱՄԱՅ ԲԺԻՇԿԸ. Ռափայէլի ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ, եւայլն։

6. Հասարակ գոյականներ որ մասնաւոր կերպով մ'առնուած՝ որոշ միտք մ'ունեցած են՝ սովորական

Numérisé par CDMF (PP) - 2011

նշանակութիւնէն զատուելով: Օրինակ. Թեթեւ թեւերով սլացաւ արագաթռիչ Համբառը, եւ իր փողոյն ձայնը տիեզերաց լսելի ըրաւ: Այդ գրքին Ալքիւոնոցը մէջ նոր վրիպակներ սպրդեր են:

> Գլխագրաց գործածութիւնն որոշ սահման չունի. եւ շատ բան կրնայ վայելչութեամբ գլխագրով ըսկըսուիլ, ուր որ գրողը կ'ուզէ բառ մ'առանձին կերպով որոշել, եւ գլխաւոր կամ պատուաւոր բան մ'երեւցընել. ինչպէս այս խօսքիս մէջ դերանունը. Բայց իրօք' կայ երկրիս վրայ երկինք մը' զորն որ իրեն հետ վար բերաւ Անիկա որ ախոռի մը մէջ ծնաւ., եւ հիւսան մը խանութին մէջ զարգացաւ:

Philippe PILIBOSSIAN
1 avenue Houette
93160 NOISY-LE-GRAND

Numérisé par CDMF (PP) - 2011

# Բ. ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ

678. *Առոգանութիւն* կը կոչուի՝ բառերն ուղիղ արտաբերելու կանոնը: Ասոր մէկ մասն է նաեւ անսխալ հեգելը, որուն գրութեան կանոնը Տրոհութեան մէջ տեսանք:

679. Առոգանութեան արուեստը միայն ձայնաւոր գրերու վրայ կը յածի. եւ նշանները միայն ձայնաւորաց վրայ կը դրուին:

680. Առոգանութեան նշանացն անուններն ու ձեւերը ասոնք են:

| | | |
|---|---|---|
| Շեշտ ՛ | Երկար ՜ | Ոլորակ |
| Բութ ՝ | Սուղ ՚ | կամ Պարոյկ ° |

Ասոնց անուններէն քերականական բացատրութիւններ ելած են. շեշտել, բթել, երկարել, սղել: — Առոգանութեան մէջ իբրեւ ածականք կը գործածուին՝ Բութ բառ. Երկար կամ սուղ վանկ. ոլորակել է՝ բթեալ, երկարեալ, սղեալ:

681. — Ա. *Բութը* կը ցուցնէ թէ բառն անշեշտ է, այսինքն բառին վանկերն իրարու հաւասար սրութեան կամ բարձրութեան աստիճան ունին. կամ, եթէ միավանկ բառ է՝ միւս բառերէն աւելի բարձրութիւն չունի. զորօրինակ. Տարադարձ. չարախօս. իրենք ալ. ով որ: (Բութ նշանն երբեք չի գործածուիր գրութեան մէջ:)

682. Ամէն հայերէն բառ բութ է ի բնէ, — շատ քիչ բացառութեամբ: — (Ի բնէ բառին մեկնութիւնը տես վարը 687:)

683. — Բ. *Շեշտ* ունի այն վանկն որուն սուր կամ բարձր է ձայնը. զորօրինակ. Անօրէն են անոնք, չերբնա հետ, ոմրելի:

684. *Շեշտեալ* կ'ըսուի բառ մ'որուն վերջին վանկը շեշտ ունի. ինչպէս. Երբե՛ք չէր ասեր: Չէի՛ն լսեր ամենեւին:

685. Քանի մը բառ կայ հայերէն՝ որոնց շեշտն առաջին վանկին վրայ է. եւ են՝ գո՛նէ. փո՛ւցէ. ըէ–

Numérisé par CDMF (PP) - 2011

մայ․ ա՛րդեօք․ դա՛րձեալ․ բա՛րէ․ եւ յօդուածոյ՝ Ա՛յսօր․ ա՛յսպէս․ ի՛նչպէս․ ն՛այնչափ․ Ի՛նչու․ Ի՛նչպէս․ գրե՛թէ․ մի՛թէ։ — Մ՛անաւանդ․ ա՛ւասիկ․ վ՛անզի, (686․) վե-ցերորդ․ տա՛սներորդ․

686․ Այս կարգս են սուղ (կարճ կամ կէս) վան-կով յանգեալ բառերը․ Ա՛ստղ, (ա՛ստըղ․) դա՛ռն․ բա՛րձր․ ե՛ղբր․ գէնքերը․ անօթնները, եւայլն։

687․ Բառերուն շեշտն ու բութը երկու կերպով է․ 1․ *Ի բնէ*՝ որ բառին բնական է․ ինչպէս մինչեւ հիմայ բացատրածները․ եւ 2․ *Դիրքի*՝ որ բառին առած դիրքէն կախում ունի․ ինչպէս հիմայ պիտի տեսնենք։

688․ Ի բնէ բութ բառը շեշտ կ՛առնու դիրքով, կամ ի բնէ շեշտուածը դիրքով կը բթի՝

1․ Խօսքին գլխաւոր կամ երկրորդական բառն ըլլալուն համեմատ, որ բառին ետեւառաջութենէն կամ խօսքին իմաստէն կախում ունի․ զորօրինակ վերի (684) օրինակին երբե՛ք բառը․
Ի բնէ շեշտ․ Երբե՛ք չէին ասեր։ Սուտ՝ երբե՛ք չունէին։
Դիրքի բութ․ Չէին ասեր երբե՛ք։ Ո՛չ երբե՛ք կը ասէին։
Նոյնպէս շեշտուած է՝ Հատի՛կ մ՛ալ չմնաց․ եւ բութ՝ Մէկ հատի՛կ չմնաց։

2․ Բառին նշանակութեան տարբերութենէն․ ինչպէս ալ շաղկապն եւ ալ մակբայը։
Շեշտուած է՝ Ես ա՛լ աւելին գիտեմ։
Բութ է՝ Ե՛ս ալ գիտեմ։
Նոյնպէս՝ Ա՛լ չկրցանք տեսնել․ եւ Չկրցա՛նք ալ տեսնել։

3․ Կոչականներն ու հրամայականները կը բթին՝ երբ նախընթաց շեշտուած բառ մ՛ունին՝ որ իրենց վերադիրն է․ զորօրինակ․ Մա՛նր ջարդեցէ՛ք․ Ներս տա՛ր։ — Կոչականը՝ երբ նախընթաց ածական* մ՛ունի կամ երբ կրկնուած է՝ առաջին մասը կը շեշտուի․ այսպէս՝ Ո՛րդեակ, զօրակա՛նք, Սի՛մոն կոչականները՝ Սիրո՛ւն որդեակ․ Պարսի՛ց զօրականք․ Սի՛մոն Սիմոն։

* Նոյն նախընթաց շեշտուածներն ալ նոյն կանոնով կը բթին դարձեալ՝ երբ իրենցմէ յառաջ շեշտուած մ՛ունենան․ ինչպէս․ Մա՛նր մանր ջարդեցէք․ Ա՛յ սիրուն որդեակ․ Ո՛ Պարսից զօրականք․ Ո՛հ Սիմոն Սիմոն։

Numérisé par CDMF (PP) - 2011

* Ըսած ենք թէ ածական կրնայ համարուիլ՝ յատկացուցիչն իւր յատկացելոյն եւ բացայայտիչն իւր բացայայտելոյն. (338. ծան.) այսպէս նաեւ մակբայն իւր բային։

689. — Գ. *Երկար* նշանը կը ցուցընէ թէ վանկը սովորականէն աւելի երկայն տեւողութիւն ունի. այսպէս են մանաւանդ միջարկութիւնները. Վա՜յ ինձ. աւա՜ղ, եւայլն. եւ իբր ձայնարկութեամբ ու կրիւք բացատրուած շեշտեալները. Ա՜յսչափ կուրութիւն. Սոկրա՜տ մը մեռցընել։

690. — Դ. *Սուղ* նշանը կը ցուցընէ թէ վանկը սովորականէն աւելի կարճ տեւողութիւն ունի։ Այսպէս սուղ վանկ են՝

1. Գերանունական յօդերը բաղաձայնէ մը ետքը, եւ զօրութեամբ գրուած ը ձայնաւոր ունեցողներէն շատը. ինչպէս. Զայնը̆. փայտը̆ն. ը̆ղձալ. ը̆ստանալ. տը̆կար. կը̆նար. քաղցը̆ր, եւայլն. որ բոլորովին ալ կը կորսուին կամ կը պակսին՝ երբ ձայնաւորի հետ կապուած ըլլան. օրինակ. Որդի ստանալ. փայտն ալ. ուրն ալ. ընկերս էր։

2. Նախդիրներն ու քանի մը կարճ բառեր. Գիշերն ի̆ բուն. հեռն ի̆ վեր. ը̆զմեզ. ո̆ մարդիկ. կը̆ նայիս. անգամ մը̆ ալ։

Տաղաչափութեան մէջ սղում կը կոչենք՝ նաեւ վանկի մը կորսուիլը կամ բոլորովին պակսիլը. ինչպէս.
Ահա՛ նդունայն է ամենայն։

Հիմայ բոլորովին խափանուած է սուղ նշանին գործածութիւնը։

691. — Ե. *Պարոյկ* կամ *Ըզարակ*՝ հարցման նշան է, եւ հարցական խօսքին մէջ շեշտուած բառին վրայ կը դրուի՝ ուր որ բուն հարցումը կ'իյնայ։ Ո՞ր է տունդ։ Հի՞մայ* է վրէժխնդրութեան ատենը։ Դո՞ւն ապստամբաց գլուխ եղար։ — Վերջին օրինակին իւրաքանչիւր բառին վրայ կրնայ պարոյկը դրուիլ, ինչպէս որ հարցընողին միտքը կը պահանջէ։

* Հարցական բառին պարոյկը, ինչպէս նաեւ Երկարը՝ միայն շեշտեալ վանկին վրայ կ'իյնայ եւ ոչ

Numérisé par CDMF (PP) - 2011

սուղ վանկի կամ բաղաձայն գրի վրայ այսպէս. Ա՞յօր. Ի՞նչպէս. քանի՞ անգամ. ո՞րպէս. այնպիսի՞ ախոյեաններ. այնպիսիներո՞ւ վկայութեամբ։ Ո՞րչափ տխուր։

---

Կը մնայ տեսնել առոգանութեան միւս մասն ալ՝ որ Հայերէն վերծանութեան (ընթերցուածքի) էապէս կարեւոր է, եւ մինչեւ հոս ըսուածներուն իբր թէ հետեւութիւնը։

Տողադարձի կանոններն հետեւեալներուն հետ սերտ կապակցութեան մէջ են։

692. Երեք սուղ ձայնաւորները՝ ը, յ, ւ, երկու կերպ հնչում ունին։

693. — Ա. Ուր որ ներգործութեամբ ը գիր չկայ գրուած՝ երկու բան կայ դիտելու. 1. ուր ը կը հնչէ կամ չի հնչեր, եւ 2. ուր ազատ է ը հնչումը։

694. — 1. Բառի մը սկիզբն ուր երկու կամ երեք բաղաձայն կից է, առաջինէն ետքը սուղ ը կը մնայ. Ինչպէս. (Հպարտ,) Հըպարտ. հըլու. տըղայ. վըկայ. գընել. Թըշնամի. ըզլանալ. քըրտնիլ. Թըթու. չընայիլ. տըղէտ. ցըվախճան։

695. Բառի մը սկիզբն որ ս, զ, շ բաղաձայններէն ետքը պ, կ, տ, բ, գ, դ, փ, ք, թ, հանդիպի՝ բառէն յառաջ սուղ ը կը հնչուի. Ինչպէս. (Սպասել,) ըսպասել. ըսկիհ. ըստոյգ. ըստակ. ըսքանչելի. ըզբօսանք. ըզգայուն. ըշտապ. ըշտեմարան*, եւայլն։ — Զնախդիրը բաղաձայնէ յառաջ միշտ ըզ կը հնչէ. այսպէս. ըզձեզ. ըզկղզին։ Միայն ը ձայնով սկսածներուն վրայ՝ զը կը հնչէ՝ (զսպաս) զըսպաս։

Ուրիշ տեղեր՝ կը կարդացուի սը, շը, զը. ինչպէս Սըխալ. սընունդ. շընորհք. շըլարշ. շըռայլ. զըզուիլ. զըլանալ. զըրահ. զըրոյց։

* Կը զարտուղին Սըփռել. սըպրդել. սըկսթել. շըփոթ։ Օտար (արեւմտեան) բառերն երբեք չեն հընչուիր զը, սը. միայն սովորութիւնը ներելի ըրած է կարդալ սըթէմ եւ զըմասա յունարէն բառերը։

696. Կան բառեր ալ՝ որոնց ը հնչմանն ընդհանուր կանոն չկայ, եւ բառին բնութենէն ու կազմու-

Numérisé par CDMF (PP) - 2011

թեննէն կամ սովորութենէ կախում ունի. զորօրինակ Քօթմէյլէ բառը՝ Քըօթմընէյլէ (եւ ոչ Քօթըմէյլէ:) Միեւնոյն բայը կը հնչէ Կօրքութեւ, (կարկուտ գալ) եւ *կօրքնըթեւ, (կորել կցել:) Կօնքէ սեռականը՝ կօըՆքէ, (թռչնոյ,) եւ *կօնըքէ, (քամակի:) Սօթուխօս ածականը՝ սըթուխօս, (սուտ արմատէն:) — Կըքերօօք եւ Բըքերօօք բառերուն բաղաձայնները ճիշդ նման դիրք ունին. բայց առաջինը կը կարդացուի կը-կօօք (վանկի բարդ է,) իսկ երկրորդը՝ *Բըրքէ-թօօք, (Բըրքէ արմատէն ածանցեալ.) այսպէս ալ՝ Պօրօ-կէ եւ Պօրըօդէ:

* Թուահամարիս մէջի աստղանիշ բառերուն սովորութիւն է միշտ ը գիրը ներգործութեամբ դնել:

697. Սակայն շատ անգամ բառին կազմութեան հակառակ է ը հնչումը. այսպէս կը կարդանք Զափակցութիւն, (եւ ոչ-կըցութիւն.) դըպրաց (եւ ոչ դպըրաց.) նոյնպէս որբնութիւն. ծանրաքնի. որըքնիլ, եւայլն:

698. Բառի մը վերջին երկու բաղաձայններուն մէջ ուղղ ը ձայն կը մնայ՝ 1. եթէ ս, զ, ն յօդ է վերջին գիրը. Զայնըս. մարդըս. ուղըդ. ոյժըդ. նոյնպէս գրբըր. Նախադրիւ հոլովները, զգեստըս. յօդըս. ի կեանըս: — 2. Եթէ վերջինը ր, ն, ղ, ռ գրերէն մէկն է. քաղցըր. կայծըր. ասպըռ. միանձըն. ատըղ. արկըղ: — 3. Աստնք յօդ առնելով կամ յաջորդ ձայնաւորի հետ կցելով՝ իրենց ը ձայնը կը կորսնցընեն. Աստ'ղը. արկ'ղըս. քաղց'ր է:

699. Կորուսման կանոնով պակսած ձայնաւորին տեղ ը չի մտներ՝ բայց միայն ուր որ սովորութիւն եղած է կամ ուր ձայնի խստութիւն պատահի: Այսպէս. (Պարապ.) պաշտել. ծածկել. համբել. ամօական. տաճկութիւն. պարզըկել. եւայլն:

700. Բառի մը սկիզբն ու վերջը՝ երկու բաղաձայնի մէջ մտած ը ձայնը կը դադրի՝ երբ քովը ձայնաւոր գիր մը հանդիպի՝ որն որ բառին կից կը կարդացուի: Զորօրինակ. Կը-ողառնայ. մի-ողանիր. ի-ոկըզըան. ա՛նձն-իմ. ո՛ըն-որ. քոյըր-ալ. ինքն-ալ.

Numérisé par CDMF (PP) - 2011

հերքն-առած. ձեռքս-եր. գայլը-որսնօթենայ. կայծն-ըղկաղը. լեռն-ելան. ուրբաթն-առտու. ինն-անգամ. բարձր-է. ներքն-են: Նոյնպէս՝ Ակնունիմ. ձեռնունայն. անձնուրաց. տասն-ուչորս. տարբրական. Հիմնական. կայսրընտիր. եւայլն: — Կը զարտուղին բարդութեանց մէջ՝ կրկնեալ բաղաձայնով սկսածները. Սովա-լըլուկ. չարա-ճըճի:

Ասկէ զատ շատ անգամ տաղաչափութեան մէջ ը հնչումը կը լռէ. ինչպէս վարը կը տեսնենք:

701. — 2. Ազատ է ը հնչումը գլխաւորաբար երբ բաղաձայնէ մը ետքը դիւրաւ կցուելու գիր մը հանդիպի՝ ձայնաւորով մը մեկտեղ. ինչպէս. Պարագլուխ. կլափ. ծոնել. կոփել. կնճռել. սակայն ընդհանրապէս լաւագոյն է առանց ը յաւելուածոյ հնչել:

Ուրիշ տեղեր ալ կրնայ մերձաւոր ձայնաւորներուն դիրքը համեմատ ը հնչուիլ կամ ոչ:

702. — Բ. Ց գիրն՝ որ ի բնէ կարճ ի է, 1. երբեմն բոլորովին անձայն է, 2. երբեմն կը լսուի, եւ 3. բուն բաղաձայն գիր է եւ Յոյնի Նման կը հնչէ:

703. — 1. Յ անձայն է բառերուն վերջը՝ այ եւ ոյ երկբարբառներուն մէջ. այսպէս. Ծառայ. վկայ. վրայ. Տրդատայ. տեսայ. նայեցայ. դշխոյ. Նոյ. Աստուծոյ. որդւոյ. եփեսացւոյ. Հաճոյ. (որ կը կարդացուի՝ ծառա, որդւո, եւայլն:) — Կը զարտուղին հետեւեալները:

704. — 2. Յ գիրը (սուղ ի ձայնաւորի պէս) կը հնչէ, նախ՝ քանի մը կարճ բառերու վերջը. Հայ. խոյ. բոյ. այ. վայ: Երկրորդ՝ նոյն անձայն յ գրին վրայ բաղաձայն մը կցուելով. ինչպէս. Ծառայն. Աստուծոյս. որդւոյդ. եփեսացւոյն. Հաճոյք. (որ երբեք չի կարդացուիր՝ ծառայըն, եւայլն:) Երրորդ՝ արմատ բառերուն մէջ՝ բաղաձայնէ յառաջ. Երկայն. ծայր. Հայթայթել:

705. Անձայն ոյին եթէ բաղաձայն մը կից ըլլայ, (թէ արմատական եւ թէ եկամուտ,) հնչումը կը փոխուի եւ ույ ձայն կ'առնու. զորօրինակ. Ողջոյն. խա-

Numérisé par CDMF (P.P) - 2011

րոյն. որդւոյ. եփեսացւոյն. (որ կը կարդացուին՝ ողջոյն. որդւոյ, եւայլն։

706. — 3. Ասկէ զատ՝ յ բաղաձայն գիր է նոր լեզուին մէջ, եւ հայի նման կը հնչէ՝ միայն բառերուն սկիզբը, եւ անփոփոխ է ամէն դէպքի մէջ։ Այսպէս. Յարմար. յապաղել. յոյս. զՅակոբ. անյապաղ. թերայոյս. (կը կարդացուին՝ իբր հարմար. անհապաղ, եւայլն։)

707. — Գ. Ւ ձայնաւորն՝ որ ի բնէ շատ կարճ կամ սուղ ու է, գլխաւորաբար երկու կերպ հնչում ունի. 1. բուն եւ պարզ ու, ինչպէս Արդիւնք բառին մէջ. եւ 2. Թոյլ վէւի նման, ինչպէս Դաւիթ բառին մէջ։ Զատ է դարձեալ 3. ու գրով կազմած ու երկբարբառը, ինչպէս Մուր բառին մէջ, որ ճիշդ խօսելով երկբարբառ չէ, այլ երկու գրով ձեւացած պարզ ձայնաւոր։

708. — 1. Ւ ձայնաւորը նախընթաց էնիով մը (իւ,) իւ կը հնչէ՝ քանի որ հետը բաղաձայն մ'ունի. այսպէս. Իւր. իւրաքանչիւր. նիւթ. Եութիւն. հարիւր. հիւսել։

709. Նոյն իւ երկբարբառն իբր իվ կը հնչէ երբ առջեւը բաղաձայն չունի. զորօրինակ. Հիւանդ. իւ. ձայնիւ. հովիւը։

Ասոնց վրայ եկած յօդերն ու յոգնակի մասնիկները ձայնի փոփոխութիւն չեն ըներ. ինչպէս. Ձայնիւդ, (ձայնիւըդ.) Հաշիւն ալ. Հովիւք. Հովիւներ։

> Միայն գրաբար յոգն. գործիականը փոփոխութեամբ կը կարդանք բանիւք (իբր բանիւք. փխկ. բանիվք։)

710. — 2. Ու երկբարբառն իւր ձայնը կը պահէ քանի որ առջեւը բաղաձայն գիր ունի։ Իսկ եթէ առջեւը ձայնաւոր մ'ունի՝ ինք վէւի նման ձայն կ'առնու եւ յաջորդին հետ նոր երկբարբառ մը կը կազմէ. ինչպէս Մեղու, եւ մեղուաց, մեղուակն։ Թթու, եւ թթուաշ, թթուիլ, թթուութիւն։ Պրտու, եւ պրտուէոյ։ Հեռու, եւ հեռուանց։ Առնու, եւ առնուի, (ած. ողջոյն.) (որ կը կարդացուին վէւի նման՝ մեղվաց. թթվութիւն. հեռվանց. առնըվի։

Numérisé par CDMF (PP) - 2011

711. Միայն քանի մը դէպքի մէջ ու— յաջորդ ձայնաւորովն երկբարբառ չի կազմեր, այլ երկու զատ վանկ կը մնան. այսինքն Աւն——ի, (տճ. ու—յը—ըմ.) Թող——ին անկատարներուն եւ յատուկ անուանց մէջ, ինչպէս Սամու—էլ. Փանու—էլ. Սեփարու—իմ: Պի-ղու—ի բնակիչքը. (Պիզու քաղքին:)

Մտադրութեան արժանի է վերջապէս ե եւ ո ձայնաւորներուն ալ հնչումը, որոնք այլեւայլ դրից կամ գաւառաց եւ կարծեաց համեմատ՝ կրկին ձայն ունին:

Ե եւ ո ի բնէ ուրիշ բան չեն՝ եթէ ոչ սուղ է եւ սուղ օ (ով). սակայն առոգանութեան կանոնով՝ էջն իբր յէ. եւ ո դիրն իբր վօ կ'աւանդուի: Բայց մեր գաւառականին սովորական ընդհանուր հնչումն հետեւեալն է:

712. Ե եւ ո դրերուն բաղադրեալ ձայնը (յէ, վօ,) միայն բառի սկիզբը կը լսուի. այսպէս. Երբ. Եթէ. Եւս. Երկիր. Երիքով. ոսկր. ոսոխ. որկոր. (ի բաց առեալ ով բառն եւ Ովրէթ, Ովրեստ, ովկիանոս, եւայլն. օտար անունները, որ օվ կը հնչեն.) Եւ դարձեալ քանի մը տեղ վերջին է վանկը: Ուրիշ տեղեր առհասարակ պարզ ձայնով կը հնչուին՝ է եւ օ:

Numérisé par CDMF (PP) - 2011

## Գ. ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

713. *Խօսք մը կամ շարադրութիւն մը՝ որուն մասունքն որոշեալ չափերու եւ թուերու տակ չեն՝ Արձակ խօսք կ'անուանուի. ինչպէս բովանդակ քերականութեանս մէջ ցայս վայր աւանդուած լեզուն:*

714. *Ոտանաւոր կը կոչուի խօսք մը՝ որուն իւրաքանչիւր մասն որոշ չափու եւ թուոյ կանոնաւ կշռուած է:*

715. *Ոտանաւոր խօսք կազմելու արուեստն է՝ որ կը կոչուի Տաղաչափութիւն:*

716. *Տաղաչափութիւնը կամ Ոտանաւորն երկու տեսակ է. 1. Թուական եւ 2. Չափական։*

717. *Թուական ոտանաւորն՝ որուն հոս կանոնները կ'աւանդենք, ան է՝ որ վանկերու թուովը կազմուած է:*

718. *Չափական ոտանաւորն է՝ որ Քանակաւ եւ Ամանակաւ, այսինքն վանկերու երկարութեան կամ սղութեան չափովը կազմուած է: Այս տեսակը հին լեզուաց յատուկ է. որուն վրայ հոս չենք խօսիր։*

---

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՈՏԱՆԱՒՈՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

719. *Ոտանաւորի մասունքն են՝* 1. *Ոտք*, 2. *Անդամ*, 3. *Ցանգ*, 4. *Տող*, 5. *Տուն։*

720. *Ոտանաւորին էութենէն է՝ որ տող տող գրուի։*

---

### §. 1. *Տաղաչափութեան Ոտքերը:*

721. *Թուական տաղաչափութեան մէջ Ոտք ըսելով՝ տողի մը իւրաքանչիւր Վանկը կ'իմացուի։*

722. *Հայերէն տաղաչափութեան սովորական տողերն են՝ հինգ վանկէ մինչեւ տասնուվեց վանկով.*

Numérisé par CDMF (PP) - 2011

եւ վանկերուն թուոյն համեմատ կը կոչուին՝ Հնգոտ-նեան, Ցառոտնեան, Հնգետասանոտնեան, եւայլն։

723. Կը գտնուին դարձեալ նուազագոյն վանկի թուով տողեր ալ՝ Չորեքոտնեան, Երեքոտնեան, մինչեւ նաեւ Երկոտնեան եւ Միոտնեան. բայց մինակ չեն գործածուիր։

Օրինակները մէկանց կը տեսնենք վարը՝ §. 2։

Տաղաչափական Վանկերու կամ Ոտքերու կազմութեան օրէնքները հետեւեալներն են։

724. — Ա. Ամէն կատարեալ ձայնաւոր առանձին կամ իւր բաղաձայններովը մէկտեղ՝ մէկ վանկ՝ ուստի եւ մէկ ոտք կը ձեւացընէ թուական տաղաչափութեան մէջ։

Կ'ըսենք «կատարեալ ձայնաւոր». վասնզի ւ եւ յ երբեք զատ վանկ կամ ոտք չեն կազմեր. իսկ ը երբեմն ամբողջ վանկ է, երբեմն կէս, եւ երբեմն անհետ կ'ըլլայ։

725. Ը ձայնաւորն ամբողջ ոտք է՝ երբ իրմէն առջը դիւրաւ չամփոփուելու բաղաձայններ հանդիպին. ինչպէս. Ընկըն դիր. Գըլխաւոր. Ծանըր թըշնամինք. — ուր չի կրնար առանց չափազանց խստութեան անհետ ըլլալ։ — Օրինակներէս կը տեսնես որ կէս կամ ուղղ վանկ կազմող ը գիրը (18, ծան. եւ 694.) հնչման դիւրութեանը համեմատ ամբողջ ոտք կ'ըլլայ։

726. Հասարակօրէն ը գիրն՝ երբ ամբողջ ոտք է՝ տաղաչափութեան մէջ ներգործութեամբ կը գրուի։

727. Ը ձայնաւորն ոտք չի կազմեր եւ անհետ կ'ըլլայ, կամ (տաղաչափական բառով՝) կը սղի, երբ արձակ խօսքի մէջ ալ իւր յաջորդներուն հետ սովորութիւն է կից կարդալ. (700.) զորօրինակ երբ իրմէ առջը թոյլ բաղաձայնով մէկտեղ ձայնաւոր գիր հանդիպի։ Այսպէս.

Ծանր է. Լեռն ելան. Հովիւն ալ. (եւ ոչ՝ Ծանըր է. Հովիւըն ալ, եւայլն։)

728. Ոտանաւորի յատուկ է առանց ը ձայնի

կարդալ՝ Զուարթունն տըկար. ապարէգր, թէ-պէտեւ առջեւը ձայնաւոր գիր չպատահի:

729. Դարձեալ աղատ է ը ձայնաւորին սղումն՝ որ բառի մը առաջին կէս վանկերը չինած է. ինչպէս.

1 2 3 1 2 3 4 1 1 2
Սպանեցին, կամ ըսպանեցին. Բլուր կամ բըլուր. — որ շատ անգամ նախընթացին դիրքէն կախում ունի. ուստի կրնայ համառօտապէս ըսուիլ

1 2 3 4 1 2 3 1 2 3
Տան սպասաւոր. Ոսկի պսակ. Զանխլաբար,

1 2 3 4 5 1 2 3 4 1 2 3 4
եւ կամ՝ Տան ըսպասաւոր. Ոսկի պըսակ. Զանխըլաբար.

Այդ սղումը հարկ է ընել՝ երբ նախընթաց գիրը ձայնաւոր է. զորօրինակ.

1 2 3 1 2 3
Ինծի սպանեցին. Ինչու՞ չտապեցար:

Նոյնպէս ընդ եւ ըստ, ընդհանուր, [illegible], եւայլն կրնան բառ նախնեաց օրինացը՝ կրճատմամբ գրել, եւ համառօտապէս ապաթարցով կը նշանակուին. Նդ. 'ստ. Նդհանուր:

730. Տաղաչափութեան մէջ աններելի համարուած է՝ ը գրէն անմիջապէս ետքը ուրիշ ձայնաւոր գիր: Այսպէս խորթ է Գահը ելաւ. աչքը արտասուօք. — որ արձակ խօսքի մէջ երբեմն կը ներուի. (տես 439, ծան:)

731. Ընդհանրապէս խիստ կ'ըլլայ սղումը՝ եթէ յաջորդ վանկը ուա, ուէ, եւայլն երկբարբառն է. ինչպէս [illegible]. [illegible]. [illegible] բառերուն մէջ:

732. Նոյն կարգն է նաեւ ուա, ուէ եւայլն. երկբարբառներուն սղումը. որ եթէ երկու ամբողջ ոտք կազմեն՝ ըւա, եւայլն կը գրուին. իսկ եթէ մէկ ոտք, ը գրի սղում է: Այսպէս

1 2 3 1 2 3 1 2 3 4
Զըւարթուն. Թըւեցան. Նըւիրական.

1 2 1 2 1 2 3
եւ կամ՝ Զուարթուն. Թուեցան. Նուիրական:

Տես նաեւ Տրոհութեան եւ Առոգանութեան մասին մէջ:

Numérisé par CDMF (PP) - 2011

733. — Բ. Ոտքերու կազմութեան մէջ երկրորդ-տեսակ սղում մ'ալ կայ, երկու կից ձայնաւորներէն մէկ վանկի ամփոփել:

Ծովուն յատակ ու ալիքն յուզած. (կարդա՝ ուալիքն.)

Ահա՛ է թշնամւոյն. (կարդա՝ ահա՛յթշնամւոյն.)

Եթէ է վեր բառնայ. (կարդա՝ եթէյվեր.)

Հեղ մի ալ լսէի. (կարդա՝ հեղ մեալ լսէի:)

1 2 3 4 5 6
Որ բանտէ էին փրծեր. (կարդա՝ բանտէ՛ 'ին.)

Տեսէք, ահա՛ ուաղան. (ահա՛ 'ւաղան:)

Այս հակառակ՝ մեծ թերութիւն է ոտանաւորի մէջ՝ միեւնոյն ձայնաւորի քովէ քով կրկնածը զատ զատ երկու ոտք կամ երկու վանկ համրել. այսպէս.

1 2 3 4 5 6 7 1 2 3 4 5
Որ բանտէ էին փրծեր: Որդէ իմաստուն:

Նոյնպէս շատ ձայնաւորներ քովէ քով բերել. ինչպէս. Ցայտնէ է այդ: Գերէ էէ ամէնուդ: Տես նաեւ 1013:

734. Շատ անգամ սովորութիւն է աւելի բացայայտութեան համար՝ եղած սղումներն ապաթարցով նշանակել. Մ'ի վերուստ անդայք. խոստան'ւանարդ:

Միթէ 'մբռնեյի՞ն զիս քո պատիր բանք:

735. Ըսածնիս այն դէպքերուն համար իմանալու է՝ ուր երկու բառ քովէ քով եկած են: Իսկ միեւնոյն բառին մէջի կից ձայնաւորներն որ երկու վանկ կը կազմեն՝ չեն ամփոփուիր. այսպէս. Տեանէ-ին. է-ա-կան. ձի-ով. դէ-ականց, ծէ-ածան, եւայլն:

736. Բաղաձայնի քով մէկ ձայնաւոր դիր կըր-ճատելն ալ սովորական է տաղաչափութեան մէջ, մանաւանդ ը վերջաւորութիւնը. Ծովուն եզերք՝. ողբոցըս ձայներ՝. (փխ. եզերքը. ձայները:)

Այս ձայնաւորներուն եւ մանաւանդ ը ձայնաւորին ամբողջ ոտք կազմելուն կամ սղուելուն վրայ, (ինչպէս տրուած կանոններէն դիւրին է իմանալ,) ամէնէն աւելի որոշ կանոն եւ ընդհանուր օրէնք՝ հընչ-



Numérisé par CDMF (PP) - 2011

ման դիւրութիւնը, փափկութիւնն ու վայելչութիւնն․ է․ խորշելով խստութենէ եւ թուլութենէ, որ երկու ծայրերն են։

---

## §. 2. Հատած եւ Անդամ:

737. Հատած կ'ըսուի այն փոքր բաժանումն որ տաղաչափութեան մէջ տողի մը ոտքերն այլեւայլ Անդամներու կամ մասերու կը բաժնէ, կամ կ'անդամատէ: — Հատածը տողին մէջ հանգիստ է։

738. Հատածը բառին շեշտէն կախում ունի։ — Հայերէն տաղաչափութեան մէջ՝ շեշտեալ եւ ոչ բութ* վանկի առջեւ կ'ըլլայ հատած․ այսպէս․

Թէ Ամենազօրն | երբեք լի բաժակ՝
Կամ քեզի վըշտաց | ընծայէ ճաշակ։

* Բութ վանկ ըսելով այնպիսիները կ'իմանանք՝ որոնք շեշտ չեն կրնար առնուլ․ Մնացած ըստ ինքեան անշեշտ վերջով բառերը, ինչպէս է Հայերէն բառերուն մեծ մասը, կրնան շեշտուիլ կամ երկարիլ․ եւ Հայերէն տաղաչափութեան մէջ հատածին վերջը միշտ շեշտեալ կամ գոնէ երկար կը համարուի։

Նոյն կանոնը կը պահուի նաեւ այն բառերուն ու ոճերուն մէջ՝ որոնց մասերն իրարու հարկաւ կապակցեալ են եւ մէկտեղ կ'արտաբերուին․ ինչպէս․ օ՛րն ոք․ տանէ՛ մը․ նո՛ր տալ․ մա՛ն գալ․ շա՛տ անգամ․ ի՛ դուռ եկել․ եւայլն․ եւ մանաւանդ են եւ ալ բութ ձայներով բաղադրածները․ (90, 522։)

Թառեր ծառի | մը կատար՝:
Բանակին թոյլ | տուր հանգչի։
Արարչին առջն | ալ ահաւոր։

Տողին վերջն ալ, ինչպէս օրինակէս կը տեսնես, հատածի օրինաց տակն է․ որուն վրայ քիչ մը ետքը, 741։

739. Ասկէ կը հետեւի՝ որ տող մ'անդամատելու կամ հատած ընելու համար՝ հարկ չէ բառին լմըննալուն սպասել․ այլ շեշտին առջեւն անմիջապէս կ'ըլլայ հատածը․ զորօրինակ․

Numérisé par CDMF (PP) - 2011

Աշտարակ մ՚այն | պէս ամուր։
Ձըւարթ ճակա՛ | տըդ պըսակեալ.
Սեւացեալ թ՚ան | ձըր մըխով։
Արդարն որ չ՚ու | զեր երդնուլ։

740. Տողի մը վերջը, հատածի կանոնները ճշդիւ կը պահանջէ։ Ուստի հետեւեալ տողերուն նօտրագիր հատածն ու վերջաւորութիւնը խորթ են։

Արարչագործն որ՝ | ի մանկութենէ
Քեզի խնամակալ | եւ պահապան է։

Ասկէ զատ տողի վերջաւորութիւնը քանի մը առանձին գիտելիք ունի։

741. — 1. Տողին վերջը չէ թէ միայն բութ-վանկ չի դրուիր, այլ եւ ոչ կէս մնացած բառ։ Ուստի բութ վերջ ունեցող կամ հարկաւ իրարու կապակցեալ երկու բառերուն՝ չի կրնար վերջին մասը յաջորդ տողին անցնիլ։ Այսպէս անբաժին են՝ փայլակըն. քաղ-ցըր. տա-սը. — որն որ. քանի որ. բան մը. մի սիրտ. ո՛վ տեսաւ. լսեն պիտի. գայլը պէս. մեր վրայ. քան զիս. կու գան. կը սիրէր. չեմ ուզեր. եւայլն։

742. — 2. Տողին վերջը շաղկապ չի դրուիր, եւ ոչ որեւիցէ յարաբերական բառ։ Ուստի խորթ է եւ, ու, կամ, թէ, եւս, բայց, եւայլն նախադաս շաղկապներով, կամ ով որ, որն որ, երբ որ, եւայլն յարաբերական բառերով տող մը վերջաւորել։

Ի բայց կ՚առնուին յետադաս շաղկապները. զոր-օրինակ՝ անգամ. եւս. մանաւանդ։

743. Կարճ տողով ոտանաւորներն որ չեն անդամատիր, (տես 746.) եւ որոնց իւրաքանչիւր տողը մէկ մէկ հատած է, շատ անգամ անդամատութեան եւ վերջաւորութեան օրէնքներէն ազատ են։

Այսպէս քեզ, ո՛ մարդ,
Կ՚առնէ Ձուարթունն։

Կ՚երգէի՛ր. լա՛ւ է.
Հիմա ալ կաքաւէ՛։

Գայլն ըսաւ. բայց ի՞նչ
Կըրնամ ես ընել։

Իմ բախտիս քան
Մ՚ու չէ խափան։



Numérisé par CDMF (PP) - 2011

Բայց դարձեալ ասոնց մէջ ալ ը ձայնաւորով չի ներուիր տող վերջաւորել:

---

744. Տողի անդամներուն թիւը՝ տողին երկայնութենէն կամ կարճութենէն կախում ունի:

745. Տողի մը այլեւայլ անդամները՝ կամ որ հաւասար վանկով են, կամ որ անհաւասար. — սակայն անհաւասար անդամներուն մէջ՝ դրեթէ միշտ վերջինն է կարճագոյն:

746. Չատածն՝ որ ըսինք թէ հանգիստ մըն է, միայն երկընկեկ տողերու համար է: Կարճ տողերը՝ մինչեւ Հնգոտնեան՝ ամենեւին չեն անդամատիր: Օրինակ.

Ա. Չորեքոտնեան.

Ըղհունձքն ոսկի,
Զգանձ մեր ազգի՝
Դուք սեաւ 'ւ օտար
Հաւուց վըտառ,
Ի՞ր էք կըտեր
Զանգին արտեր:

Նոյնը տես դարձեալ Հնգոտնեան տողերով ալ:

Բ. Հնգոտնեան.

Հունձքերը դեղին
Գանձն են մեր գեղին.
Դո՞ւք ինչու՝ օտար
Սեւ թըռչնոց վըտառ,
Կուտ կուտ էք կըտեր
Այդ սիրուն արտեր՝:

747. Վեցոտնեանէ մինչեւ ցՎեշտասանոտնեան այսպէս կ'անդամատին տողերը:

Գ. Վեցոտնեան. 3-3.

Ալըպակաց | կռան, կոփիւն,
'Ի ոչ ընչից ¦ կայ հոս վիշտ.
Գահ արկեալ | խոր լռութիւն |
Ցարկիս տակ | կ'հանդչի միշտ:

Numérisé par CDMF (PP) - 2011

Դ. Եօթնոտնեան. 4-3.

Քանի՜ պատիր | ընծաներ
Չեն հզօր սըրտեր | եղծաներ։

Զը՛նես չարիք | կամ վը՛նաս,
Զայն անպատիժ | չի մը՛նար.
Գործէ բարիքը՛ն | որ կըրնաս,
Բարին կ'առնու | զվարձն արդար։

Ե. Ութոտնեան. 4-4.

Ձիւնով սառամբ | պըսակաւոր՝
Կ'իշխէ ձըմեռն | ընդ դաշտ ընդ ձոր։

Շուշանն շըքեղ | պերճահասակ
Զիւր ձիւն բաժակն | ունի պըսակ։

Զ. Իննոտնեան. 3-3-3.

Ճարտարին | գովասանն | է իւր գործ'.
Վկայ իրեն | այս առածս | ունի զփորձ։

Է. Տասնոտնեան. 5-5.

Շուն մը կ'ելլէ դէմն՝ | որ ճամբէն շեղէր
Անըզգաստ յոտար | ընկած էր տեղեր։

Այսպէս ցօղաւո՛րն | ալ խըրնձորենի
Իւր ոսկի խընձորն | պընդակազմ ունի։

Ը. Մետասանոտնեան. 4-4-3.

Զարագործէն՝ | կայ միշտ իւր խիղճն | ամբաստան.
Խիղճն է դահիճն | որ եւ կըտրեց | դատաստան։

Թ. Երկոտասանոտնեան. 4-4-4.

Գողդողալով | կ'աղերսէր Էշն. | Տէր Գայլ, կ'ըսէ,
Խեղճ եմ, խնայէ. | ճարպէ եմ զուրկ, | զուրկ եմ մըսէ.
Ի՛նչ ալ ցաւեր...։ | — Խեղճ ես, այո. | 'ւ ի՞նչ շատ տանջիս.

Այդպէս ցաւոտ | կեանք մը բառնալ՝ | պարտք է խըղճիս։

Numérisé par CDMF (PP) - 2011

### Ժ. Երեքտասանոտնեան. 3-3-4-3.

Արուեստից | Հնարագիւտ | եղան մեր ժիր | նախահարք.
Կա՛յ որ միտք | ջանացաւ, | կա՛յ որ ցուցին | պատահարք։
Զոյգ ջորեք | կ'երթային. | մէկը չոր յարդ | էր բարձեր.
Ճոխ բեռամբ | բարձրավիզ՝ | հարկաց մէկա՛ | լը գանձեր՛։

### ԺԱ. Չորեքտասանոտնեան. 4-3-4-3.

Ո՞ւր կար շըքեղ | մէկ պըսակ, | կամ ո՞վ նըմանն | էր տեսեր՝
Սուրբ միութեանն | որ սըրտերն | այնպէս սերտիւ | կը հիւսէր։

### ԺԲ. Հնգետասանոտնեան. 4-4-4-3.

Առաքինի | կենաց ընթացք | մը հօր եւ մօր | արժանի՝
Զաւկին հայլի | 'մն է՝ ուր իւր վարք՝ | ծնողաց նման | կը ծնանի։

### ԺԳ. Վեշտասանոտնեան. 4-4-4-4.

Հաւատարմիդ,* | կ'ըսէ, աղէ, | ո՞վ յորդորեց | ըղձեղ՝ Արմէն
Կանչել անուն. | կամ թէ թերեւս | կարծէ՞ք իրաւ | թ' է մեր զարմէն։
Յամօթ եղան։ | Իսկ Աղգասէրն** | առնուլ կապել՝ | կու տայ նըշան
Զամբարհաւածն,*** | եւ անխընայ | կոշկոճել հետ | իւր տանը շան։

* Տանը շան։ ** Գաղիկ։ *** ԶՏղնը։

Ասոնք են սովորական հատածները. բայց կրնայ տաղաչափը վայելուչ կերպով ուրիշ բաղադրութիւններ ալ յարմարել։ Այս տողերուս մէջէն բուն եւ յաճախ գործածականներն են՝ Հնգոտնեանը՝ առանց հատածի. Եօթնոտնեանը՝ 4-3. Ութոտնեանը՝ 4-4. Տասնոտնեանը՝ 5-5. Երեքտասանոտն՝ 3-3-4-3. Չորեքտասանոտն՝ 4-3-4-3, եւ Հնգետասանոտն՝ 4-4-4-3։

Numérisé par CDMF (PP) - 2011

## §. 3. Յանգ:

748. Յանգ կ'ըսուի տաղաչափութեան մէջ այլեւայլ տողերու նմանաձայն վերջաւորութիւնը. զորօրինակ.

4-4. Կ'երգեն զըւարթ՝ հրեշտակներ—
Ձայնակցելով՝ երկրէս հեռու:

749. Յանգերով շինուած ոտանաւոր մը կը կոչուի Յանգական կամ Յանգաւոր, իսկ առանց յանգի շինուածը՝ Անյանգ: — Նոր լեզուաց տաղաչափութիւնն ընդհանրապէս յանգական է:

750. Յանգերուն էական նմանութիւնը վերջին ձայնաւոր գրերուն նոյնութենէն է, որոնց յաջորդող բաղաձայնները ալ հարկաւ իրարու նման կամ նոյն պէտք են ըլլալ:

751. Շատ անգամ նմանաձայն ձայնաւորներն ալ յանգի կը ծառայեն, մանաւանդ երբ նախընթաց բաղաձայններն ալ իրարու հետ նոյն կամ խիստ նման ըլլան. զորօրինակ՝ Տեսնէք եւ հանդէսնէք. Մըտօք եւ ատօք. Որբոյն, զուարթնոյն եւ դղըրդեան:

752. Բաղաձայն գրերու նմանութիւն բաւական է. ինչպէս բ, պ, - ւ, ջ, ճ. - ց, ձ, ծ. - ք, բ, դ. - ւ, ժ, եւայլն. այսպէս Յառաջ եւ բարաչ. Տարած եւ փառաց. Արջ, փարչ եւ կարճ: Ընդհանրապէս մեծ նմանութիւն հարկաւոր է վերջին ձայնաւորէն ետքը: Անոր համար՝

Շատ անզօր եւ անբաւական յանգ են՝ Տրտում, սահուն. — ուշիմ, գետին. — պատմել, ճամբեր. — պահեստ, ուրեց. — զգաստ, արկած. — գողոց, առողջ:

Տողերու յանգերն այնչափ աւելի ընտիր են եւ գեղեցիկ, որչափ որ իրենց նմանութիւնը մեծ է եւ զգալի:

### Ա.

753. Տաղաչափութեան յանգը նոյնաձայնութեան կողմանէ կը բաժնուի՝ 1. Տկար, 2. Չափաւոր, եւ 3. Ճոխ:

Numérisé par CDMF (PP) - 2011

754. — 1. *Տկար կամ Հասարակ է յանգը՝ եթէ միայն մէկ նման ձայնաւոր գիր ունի, եւ կամ եթէ վերջին բաղաձայնները բաւական նման չեն իրարու: Զորօրինակ.*

Գինի. Դողայ. Անարգէ. Դաշտ. Անդաստ.
Փրկեցի. Արքայ. Մարգարէ. Փառք. Անարատ.

Տկար յանգի օրինակ.

4-4. Ո՛ փայտ չըռչին, դու լաստափայտ,
Ի՞նչպէս յանկարծ՝ իմ անարատ
Քեզի որդեակս աւանդ տըւի,
Եւ ոչ աչուրս տեսնեն պիտի:

Տկար կամ Հասարակ յանգերը ներելի են մանաւանդ կարճ (2-5տանեան) տողերու:

755. — 2. *Չափաւոր յանգ է՝ ամբողջ եւ լեցուն միավանկը. այսինքն ձայնաւորն ու քովի բաղաձայնը. զորօրինակ.*

Խորան. Անհաշտ. Լայն. Մարգարէս. Արեան.
Կու տան. Կռապաշտ. Ձայն. Ձեռքերէս. Գերեան.

Չափաւոր յանգի օրինակ:

4-4. Շուշանն շըքեղ պերճահասակ
Ջիւր ձիւն բաժակն ունի պըսակ:

4-3. Քունդ անո՜յշ, Մա՛յր. հանգչէ մէջս.
Ալ չարթըննաս տեսնես վէշս:

756. — 3. *Ճոխ յանգ կը կոչուի այն յանգն որ երկու (կամ աւելի) ամբողջ եւ լեցուն վանկերով է: Զորօրինակ.*

Նշխար. Արեւ. Լուանի. Արեան. Դաշտի. Աստղէն.
Տշխար. Բարեւ. Բուանի. Դարեան. Պաշտի. Ցաւաղէն.

Ճոխ յանգի օրինակ.

4-3. Մի՛ դու զաստուած փըշաքեր,
Անխորձ մանկիկ, շօշափեր:

4-4. Ինչպէս պաշտիմ ես քու ցեղէն,
Ես հողանիւթ՝ դուն բոցեղէն:

Numérisé par CDMF (PP) - 2011

5-5. Շուն մը կ'ելլէ դէմս՝ որ ճամբէն շեղէր
Անըզգաստ՝ յօտար ընկած էր տեղէր։

Ճոխ յանգ կը վայլէ մանաւանդ մեծատանեան տաղերու։

Պէտք է համբակները մտադիր ընել՝ որ ճոխ յանգերու սիրոյն համար շատ անգամ կրնայ ծաղրական ըլլալ տաղաչափ մը, երբ անյարմար յաւելուածներով եւ աւելորդ ածականներով ըսելիքը բանադրուէ. եւ թէ աւելի յաճախ՝ իմաստներ կը զոհուին ճոխ յանգերու, մանաւանդ եթէ կարճ տողով է ոտանաւորը։

Յանգերու կազմութեան վրայ քանի մը բան ալ կայ դիտելու։

757. Անարգ յանգ համարուած է հիմակու ատենս, մանաւանդ թէ եւ ոչ ճշմարիտ յանգ է՝ եթէ միեւնոյն ածանցիչ մասնիկն իբրեւ ինք իրեն նմանաձայն կրկնուի. ինչպէս.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սիրեցի. | Տեսած. | Լաւութիւն. | Լեռներու. | Հեռաւոր. |
| Ասացի. | Մտած. | Նեղութիւն. | Ձորերու. | Մերձաւոր. |
| Թողուցի. | Եղած. | Էութիւն. | Գետերու. | Ցօղաւոր. |

Բայց քանի մը դէպքը ասկէ բացառութիւն ունին։

758. — 1. Եթէ նոյն մասնիկէն յառաջ բառական յանգ կազմող գիր կայ, մասնիկը նոյն ճշմարիտ յանգին վրայ աւելցուած կը համարուի. ինչպէս. Վարդերու, զարդերու. — գեհենի, մեհենի. — Սառայէն, ծառայէն, վկայէն. — խորութիւն, չորութիւն, եւայլն. որոնցմէ ոմանք նաեւ ճոխ յանգ են։

759. — 2. Երբեմն կը ներուի միեւնոյն մասնիկը՝ նաեւ առանց նախընթաց կատարեալ յանգի, բառական որ նման հնչմունք կից գտնուին. ինչպէս. Կարդալ, խորդալ. — մռնչել. կանչել. — արուօրէն, ի պղոշէն։ Բայց ասոնք ակար յանգէ աւելի չեն։

760. — 3. Կրնայ միեւնոյն բառը տարբեր ածանցիչ յաւելուածներով ալ կրկնուիլ եւ յանգ կապել. օրինակի համար՝ Միածնաւ գործիականն՝ Որմէ ծնաւ բային հետ. Այսպէս ալ՝

Numérisé par CDMF (PP) - 2011

4-4. Ի՜նչ բարեբեր ազնիւ տընկեր
4-3. Ձեն այն ծիր ձեռքըն տընկեր.

ուր յանգ շինողը՝ միայն եր մասնիկն է. առաջին տողին մէջ յոգնականակերտ, երկրորդին մէջ բայակերտ։

Յայտնի է թէ այսպիսի յանգեր յաճախելու չէ։

761. Յանգերու կազմութեան մէկ յատկութիւնն ալ է՝ մերձաւոր գրերէն օգնութիւն առնելով ձեւանալ։ Ասով շատ անգամ ըստ ինքեան տկար յանգ մը չափաւոր եւ վայելուչ կ'ըլլայ, եւ չափաւորը ճոխ յանգի կերպարանք կ'առնու։

Աղջիկք. Առաջին. Բորբոք. Դանդաղ.
Կեղծիք. Արարչին. Մորմոք. Ծանծաղ։

## Բ.

762. Յանգերը Դասաւորութեան կողմանէ գըլխաւորաբար չորս տեսակ են. 1. Անանջատ. 2. Հիւսեալ. 3. Գրկախառն եւ 4. Ընդհատ։

763. — 1. *Անանջատ* է յանգը՝ երբ իրարու նմանները զոյգ զոյգ եւ անընդհատ մէկը զմէկ կը յաջորդեն։

3-3-4-3.

Մարդկային հընարից ճարտարութեան արուեստք–
Արահետ եղան ջուրըն, ու խոր գիշեր՝ դարձաւ օր.–
Քանի՜ գիւտք օգտակար կամ պիտանի՝ ցայսօր դեռ–
Մեր նախնեաց հանճարէն իրենց ճամբայ են հորդեր։

764. — 2. *Հիւսեալ* է յանգը՝ երբ մէկ նման եւ մէկ աննման հետզհետէ շարուած են։

5. Գայլ մը կար. շուներ՝ Բարեկամ, (ընկեր-ն.
Բայց չոր ոսկր ու մորթ. Ըսեր է մեղմով,)
Ա՜նչափ քաջ՝ շուներ-ն* Բարձր ատրճաններ
Էին պահանորդ։ Չեն միշտ ապահով։

* Վերջին Ն գիրը յաջորդ ձայնաւորին հետ կցելով՝ կը ձեւայ օրինաւոր յանգ՝ շուներ եւ շուներ։ Նոյնպէս երկրորդ օրինակին մէջը։

765. — 3. *Գրկախառն* է յանգը՝ երբ առաջինը չորրորդին՝ եւ երկրորդն երրորդին հետ նոյնաձայն են։

Numérisé par CDMF (PP) - 2011

3-3-3. Ժըրութեամբ մարդ հոգի կը դառնայ,
Կ'ըլլայ տէր ճաշակի եւ ճըքանց.
Կը գըտնէ հաճոյից մ'ալ հոն գանձ՝
Զոր իրմէն ոչ ոք բնաւ կը բառնայ:

766. — 4. *Ընդհատ* կը կոչուին յանգերը՝ երբ չորս տողերէն առաջինը, երկրորդն ու չորրորդը նոյնավերջ են, իսկ երրորդը յանգ չի կազմեր:

5-5. Մինչեւ ամք լըանան, օրը կատարէ
Կըռուէ, տար սիրով՝ ինչպէս ես տարէ,
Բեթղեհէմ գեղէն մինչեւ Գողգոթա.
Ու մէկ՝ այլ երսուն եւ երեք տարէ:

Հիմնական բուն ստորաբաժանումներն են՝ Անանջատն ու Հիւսեալը: Անանջատ յանգ հասարակօրէն չորս տողէն աւելի չ'ըլլար:

767. Մեծապէս զգուշանալու է տաղաչափութեան մէջ *Ցարաժամ* յանգերէն. այսինքն որ յանգ չպահանջուած տեղ մը, զորօրինակ տողին մէջ տեղն ըստ պատահման յանգ մը չձեւանայ, որ նախընթաց ու հետեւորդ կանոնաւոր յանգերուն մէջ տեղը մտնելով՝ անոնց ներդաշնակութիւնը կ'եղծանէ. ինչպէս յաջորդ տողերուս մէջ.

4-4. Ճըշմարտութիւն ու վարդ քընքուշ,
Թէեւ անոյշ՝ բայց չեն անփուշ:

—

## §. 4. Տող եւ Տուն:

Ոտանաւորին էութենէն է, ինչպէս ըսինք, որ տող տող գրուի: Տողերուն որպիսութիւնը վանկերուն համրանքէն կախում ունի:

768. Մէկը զմէկ յաջորդող տողերն իրենց երկայնութեանը կամ վանկերուն թուոյն կողմանէ կրնան բաժնուիլ՝ 1. Հաւասար, 2. Անհաւասար, եւ 3. Խառն տողեր:

769. — Ա. Հաւասար են տողերը՝ երբ իրար

Numérisé par CDMF (PP) - 2011

յաջորդողներուն վանկերը զուգաթիւ են. ինչպէս. 4, 4 — 4, 4 — 4, 4, եւայլն։

770. — Բ. Անհաւասար են՝ երբ առաջին տողը երրորդին, եւ երկրորդը չորրորդին հաւասար է. ինչպէս. 4, 4 – 4, 3, — 4, 4 — 4, 3։ կամ այսպէս.

3. Կը ցընծան
4-3. Մեր դեղորայք՝ երբ հընծանն
3. Որ զեղու
4-3. Քաղցուով առատ. կամ մեղու
3. Լի դհիւթեր
4-3. Ջանոյշ մեղրին է նիւթեր։

771. — Գ. Խառն տողերով կ'ըլլայ ոտանաւորը՝ երբ քանի մը տող մէկ որոշ համրանքով է, եւ քանի մը տող դարձեալ ուրիշ չափով. Զորօրինակ.

5-5. Արարչին գործոյն անարդը չըկայ.
Տիեզերք ամէն՝ իւր ուժոյն վըկայ.
5. Գազանք ու մարդիկ,
Ծառեր ու ծաղիկ,
Եւ նոյն իսկ պըզտիկ
Սերմին ալ հատիկ։
4-3. Հընչեն անտառք եւ բըլուր
Աստուծոյ ոյժն ընդհանուր։

---

772. Շատ տողեր ետեւէ ետեւ ՏՈՒՆ մը կը կազմեն։ Բայց կայ ոտանաւոր որ տնատեալ է, այսինքն որոշեալ տներ ունի, կայ ալ որ առանց տան է։

773. Այլեւայլ ոտանաւորի տեսակներու համեմատ պէսպէս թիւ կ'ունենան տներուն ալ տողերը։ Հասարակօրէն կարճ ոտքով ոտանաւորներուն՝ չորս չորս տողով է մէկ տունը։

Այս տնատութեանց համեմատ է նաեւ յանգերու յաջորդութիւնն որ վերը (762) տեսանք։

---

Numérisé par CDMF (PP) - 2011

## ՅՕԴՈՒԱԾ Բ·

### ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԼԵԶՈՒ

774. Տաղաչափական լեզուին արձակէն ունեցած տարբերութիւնները գլխաւորաբար երկուքի կրնան ամփոփուիլ, որ են՝ Վայելչութիւն եւ Ազատութիւն։

775. Վայելչութիւնը կ'առնու բառերու եւ ձեւերու յաճախութենէն ու պէսպիսութենէն. որոնց շատը գրաբարէն կամ երբեմն հին ռամկօրէնէն եւ քիչ մ'ալ գաւառական լեզուներէն փոխառեալ է։

Այսպէս կրնայ միեւնոյն բառին յոքնակին այլեւայլ կերպով ըսուիլ՝ Աչք· աչեր· աչքեր· աչուի· աչուըներ· Թող աչանցդ բառն ալ եւ աչկանց (նուազականը) գրաբարէ փոխառեալ։

776. Բառերու (քերականական կամ ածանցական) ձեւը՝ աւելի ազնուագոյն կը համարուի տաղաչափութեան մէջ՝ եթէ գրաբարի համեմատ գրուի· Այսպէս՝ ծառերոյն· գնաց այլ· Միայէ· չայր· խնդրայր· Հարայց· Մրայց· Վերայց· շատ անգամ է, ը, ու նախադիրներն իրօք կը գրուին· է ջերմէն· է մաչերոյն· յաչերոյն· ըզնոր յոյնն· յետ (փխկ· Եթ)· եւ մանաւանդ ն փոխանակ ը յօդի։ Բայց հիմակուան ձեւերն ալ շատ գործածական են։

Երբեմն կ–, կը մասնիկը կը զեղչուի բոլորովին կամ ըստ մասին՝ ուր որ ստորադասականի հետ շփոթելու վախ չըլլայ։ Այսպէս (մանաւանդ կենով սկսած բայերուն.)

Կարծէ՞ք թէ եմ ձեր թշնամի։
Գիտեմ մըտաւ, կոխէք անխէթ։

Վառէց կոյսկըրտեց թանձր ու դէր խոտեր,
Արձակ համարձակ երգոյր եւ ոտեր։

Նոյնպէս ալ՝ Կայր նայէր· Կան շըւարած եւ տղջէն։ Կ'առնույր երգոյր· Կ'ուտէ ու լոֆէ· Կ'այրէ զամէնն ու տունըրէ։ Գընայր փխկ· Կ'երգոր· եւայլն։

Numérisé par CDMF (PP) - 2011

777. Խօսքի կամ շարադրութեան ձեւերը կամ քերականական համաձայնութիւնն ալ կրնայ մինչեւ որոշ սահման մը գրաբարի կամ նախնեաց ռամկօրէնին նման ըլլալ։ Տես երես 207, ծան։

778. Բառերն իրենց նշանակութեան կողմանէ ալ տաղաչափութեան (եւ ընդհանրապէս բանաստեղծութեան) մէջ սովորականէն տարբեր միտք կ'առնուն։ Այսպէս կը գործածուի՝

| | | | |
|---|---|---|---|
| Արեւ, | փիւկ. կեանք. | Ալիք, | ծով կամ ջուր. |
| Սար, | լեռ. | Երկաթ, | սուր. |
| Բարձունք, | լեռինք կամ երկինք. | Երկաթք, | շղթայք, կապանք. |
| Գանձ, | դրամ. ստակ. | Զոյգ կամ Կրկին, | երկու. |
| Դրախտ, | պարտէզ. | Պատմել, | ըսել. եւայլն։ |

779. Տաղաչափական լեզուին վայելչութիւնն ու ազատութիւնը գլխաւորաբար Քերականական ձեւերուն (585) վրայ է, որոնք առաւելապէս ոտանաւորներու մէջ իրենց տեղիքն ունին։

780. Շրջման ձեւը տաղաչափութեան յատուկ է, եւ կրնան շատ անգամ սովորականէն դուրս շրջմունքներ ալ ըլլալ. որոնք ան ատեն միայն վայելուչ են՝ երբ իմաստի այլայլութիւն չեն ի տար։ Այսպէս շատ յաճախ կ'ըսուի՝ Ծաղկունքն ամէն. Հունձքերն ոսկի. Բլրին այն ի ծայր. Նըման հրէին թափառական. Հողմերն առեր են տարեր. եւ ուրիշ դարձուածներ՝ քիչ շատ գրաբարի նմանութեամբ։

781. Զեղչման ձեւը շատ սովորական է ոտանաւորի մէջ։ Բայց. մանաւանդ հարկ է զեղչել յաճախ շաղկապները, մեկնական խօսքերն ու պատճառաբանութիւնները. երբեմն ալ էական բայը, եւ ը ու մը յօդերը. — որով խօսքը հատու եւ ուժով կ'ըլլայ։

782. Աւելադրութեան ձեւը կ'ըլլայ այլեւայլ սովորական յաւելուածներէն զատ՝ մանր մանր կրկնաւորներով. ինչպէս՝ Փոյլ փոյլ տեսայ փայփլել. Վառ վառ փայլին. Շող շող կը ցոլայ. Այն ծով ծով աչեր։ Ծով է ծով տերեւներ ծալածոյ թերթեր։

Numérisé par CDMF (PP) - 2011

783. Բնականութեան ձեւն ամենէն աւելի տաղաչափութեան մէջ ներեալ է. բաւական որ վայելուչ ըլլայ եւ մթութիւն չտայ։

Տաղաչափութեան այլեւայլ դարձուածները պարզապէս ճաշակի եւ ճարտարութեան արդիւնք ըլլալուն՝ որոշ կանոններ չի կրնար անոնց վրայ աւանդուիլ։

—

Տաղաչափական լեզուին զգուշալի մասերն են հետեւեալները։

784. Ընդհանրապէս աններելի կը համարուի տաղաչափութեան մէջ ամէն ստորին բացատրութիւն, եւ խորթ ու ռամկական բառ։ Բայց շատ անգամ վայելուչ են ընտանեկան դարձուածները։

785. Զգուշալի է ձայնի խստութիւնը, որ յառաջ կու գայ՝ կամ յաճախ եւ դժուարին սղմունքներէ, եւ կամ ծանրալուր գրերու խռնութենէ. (ինչպէս Ա Յօդ. մէջ տեսանք։)

786. Աղմանց եւ գրաբար կամ հին ռամկ. ձեւերու գործածութեան մէջ միտ դնելու է որ իրարու ներհակ երկու կերպերը քովէ քով չդան. զորօրինակ՝ Աղբերն ճրաւ. (մէկը աղեալ եւ միւսը ոչ.) Յետ դարձոյց ու փոխցում, եւայլն։

787. Քերթուածը միօրինակ եւ տաղտուկ չընելու համար զգուշանալու է որ բայերը միշտ խնդրոյն կամ ամբողջ նախադասութեան վերջը չմնան, ինչպէս արձակ խօսքի մէջ սովորութիւն է։

Այսպէս իւր արձակ Ազատութեանցը հետ՝ միանգամայն շատ կապեր եւ զգուշութիւններ ունի Տաղաչափութիւնը, որոնցմէ Արձակ խօսքն ազատ է։

Ընդհանրապէս արդի լեզուաւ տաղաչափութիւնը կրնայ եւ պէտք է մինչեւ որոշ աստիճան մը գրաբարի նման ըլլալ՝ միշտ իւր սահմանին մէջ մնալով. (777.) եւ այդ սահմանին մէջ կշիռ կենալն է քերթողին ճարտարութիւնը եւ բովանդակ քերթուածին վայելչութիւնը։ Աւանդի կրնայ շատ անգամ աշխարհաբար ոտանաւորի մը մէջ յանկարծ անճահ եւ անչահ գրաբար մը խառնուիլ՝ որ լեզուին եւ ոճոյն զարդ մը չըլլալէն զատ՝ բոլոր խօսքը կը խանգարէ կամ ծաղրա-

Numérisé par CDMF (PP) - 2011

կան կ'ընէ. որով աշխարհաբար ըլլալէն կը դադրի՝ առանց գրաբար ըլլալու. ինչպէս հետեւեալ տողերուս մէջ.

Ականջըս դղընչեց երբ առի զայն դոյժ,
Դառն արտօսր այտերս ծածկեց կարի յոյժ.

ուր յայտնապէս յանգի պէտքն աւելցուցած է նոյն անբաղադրյդ գրաբարը կոչէ յոյժ, եւ բովանդակ տողը խանգարած։ Նոյնն իմացիր ուրիշ զեղծմանց համար ալ։
Ձեւոց պէսպիսութեան մէջ գլխաւոր միտ դրուելիքն է՝ որ լեզուին յատուկ կերպարանքն ու ճշմարիտ նկարագիրը պահուի։

Վերջապէս միտք առնելու կարեւոր բան մ'ալ է համբակներու՝ թէ տաղաչափական ազատութեանց անուամբ երբեք չի ներուիր քերականական սխալներ ընել՝ եւ ոչ լեզուի մէջ։

---

Ուրիշ շատ կանոններու եւ օրէնքներու հմտութիւն կից է տաղաչափութեան արուեստին. որոնք յատկապէս բանաստեղծութեան արուեստին օրէնքներն ըլլալուն՝ զատ ուսում ու պարապմունք կը պահանջեն. որ այս գործոյս չի վերաբերիր։

Philippe PILIBOSSIAN
1 avenue Houette
93160 NOISY-LE-GRAND

Numérisé par CDMF (PP) - 2011

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՍԿԶԲՈՒՆՔ

## ԳՐԱԲԱՐ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Numérisé par CDMF (FF) - 2011

Գրաբար հայերէնի՝ արդի լեզուին վրայ ունեցած մեծ ազդեցութիւնը, եւ մանաւանդ անոր անկէ կախումն ու անոր կարօտութիւնը՝ անհրաժեշտ հարկ կ՚ընեն բուն գրաբարը միշտ աչքի տակ ունենալ։ Առաջիկայ համառօտ Յաւելուածդ՝ գրաբար հայերէնի սկզբունքը եւ գլխաւորաբար աշխարհաբարի մէջ գործածուած ձեւերուն իբր թէ ուրուագիծ պատկերն ըլլալով՝ թէեւ նոյն վախճանին համեմատ ծառայութիւն մը կրնայ մատուցանել. սակայն չի անօրիներ գրաբարի կեր-պական ու կարգաւորեալ ուսումը, մանաւանդ այնպիսի-ներու՝ որ նաեւ աշխարհաբարի կատարեալ ու հիմնական հմտութիւն կը բաղձան ունենալ։

Numérisé par CDMF (FF) - 2011

# ՍԿԶԲՈՒՆՔ
# ԳՐԱԲԱՐ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

## ԱՆՈՒՆ ԵՒ ԴԵՐԱՆՈՒՆ

### *Հոլով եւ հոլովումն:*

*Գրաբար Հայերէնի գլխաւոր հոլովներն* եօթն են. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական, Ներգոյական:*

* Երկրորդական հոլովներուն վրայ քիչ մը ետքը:

*Հոլովներէն ոմանք վերջաւորով են, այսինքն վերջին ձայնը յաւելուածով, ինչպէս. (Բան,) բանի, բանէ. եւ ոմանք նախդրիւ միայն. ինչպէս, զբան: Կան ալ որ նախդրիւ-վերջաւորով են. ի բանէ. ի բանից:*

*Յոքնակի շինող գրերն երեք են. ք, ս, ց: — Ք եւ ս վերջաւորով չեն շիներ, վասնզի առանց նոր ձայնաւորի պարզապէս բառին վրայ կ'աւելցուին:*

*Հոլովմունք ութ տեսակ են. — Հինգը ձայնաւորի յաւելուածով, ինչպէս. (Բան,) բանի. (Քաղաք,) քաղաքաց. եւ երեքը խառնմամբ, ինչպէս. (Անձն,) անձին. (Հիմն,) Հիմանց:*

*Անուան հոլովմանց սեռականն ու տրականը նոյն են իրարու հետ:*

Այլեւայլ հոլովմունքն իրարմէ գլխաւորաբար եզ. գործիականի կամ յք. սեռականի մէջ կ'որոշուին. բայց քերականութեանց եւ բառարաններու սովորութիւն է՝ եզ. սեռ. եւ գործ. նշանակել. այսպէս. Քաղաք, ի, աւ. Գառն, ռին, ռամբ:

*Հոլովմանց փոփոխութիւնները կորուսման եւ փոփոխման օրինաց վրայ հաստատուած են:*



Numérisé par CDMF (FF) - 2011

## Կանոնաւոր հոլովմունք:

| | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. |
|---|---|---|---|---|---|
| | | **Եզակի.** | | | |
| Ուղ. | բան. | կարգ. | թիւ. | կղզի. | Զարդ. |
| Հայց. | զբան. | զկարգ. | զթիւ. | զկղզի. | զԶարդ. |
| Ս. Տ. | բանի. | կարգի. | թուոյ. | կղզւոյ. | Զարդու. |
| Բաց. | ի բանէ. | ի կարգէ. | ի թուոյ. | ի կղզւոյ. | ի Զարդուէ. |
| Գործ. | բանիւ. | կարգաւ. | թուով. | կղզեաւ. | Զարդու. |
| Ներգ. | ի բանի. | ի կարգի. | ի թուի*. | ի կղզւոջ. | ի Զարդու. |
| | | **Յոգնակի.** | | | |
| Ուղ. | բանք. | կարգք. | թիւք. | կղզիք. | Զարդք. |
| Հայց. | զբանս. | զկարգս. | զթիւս. | զկղզիս. | զԶարդս. |
| Ս. Տ. | բանից. | կարգաց. | թուոց. | կղզեաց. | Զարդուց. |
| Բաց. | ի բանից. | ի կարգաց. | ի թուոց. | ի կղզեաց. | ի Զարդուց. |
| Գործ. | բանիւք. | կարգօք. | թուովք. | կղզեօք. | Զարդուք. |
| Ներգ. | ի բանս. | ի կարգս. | ի թիւս. | ի կղզիս. | ի Զարդս. |

* Ոմանց ներգոյականը լոկ նախդրիւ է. ի գետ. յաթոռ, ի ծոց, յոքնականներուն պէս:
Ե Հոլովման անուններէն ոմանց բացառականը պարզապէս ի կ'ըլլայ. ի գետոյ. ի ծովէ:

| | Զ. | Է. | Ը. |
|---|---|---|---|
| | | **Եզակի.** | |
| Ուղ. | Անձն. | Հիմն. | Արիւն. | Ոսկր. |
| Հայց. | զԱնձն. | զՀիմն. | զԱրիւն. | զՈսկր. |
| Ս. Տ. | Անձին. | Հիման. | Արեան. | Ոսկեր. |
| Բաց. | յԱնձնէ.° | ի Հիմանէ. | յԱրենէ.° | յՈսկերէ. |
| Գործ. | Անձամբ. | Հիմամբ. | Արեամբ. | Ոսկերբ. |
| Ներգ. | յԱնձին. | ի Հիման. | յԱրեան. | յՈսկեր. |
| | | **Յոգնակի.** | | |
| Ուղ. | Անձինք. | Հիմունք. | Արիւնք. | Ոսկերք. |
| Հայց. | զԱնձինս. | զՀիմունս. | զԱրիւնս. | զՈսկերս. |
| Ս. Տ. | Անձանց. | Հիմանց. | Արեանց. | Ոսկերց, րաց. |
| Բաց. | յԱնձանց. | ի Հիմանց. | յԱրեանց. | յՈսկերց, րաց. |
| Գործ. | Անձամբք. | Հիմամբք. | Արեամբք. | Ոսկերօք. |
| Ներգ. | յԱնձինս. | ի Հիմունս. | յԱրիւնս. | յՈսկերս. |

Numérisé par CDMF (FF) - 2011

* Զ հոլովման անուններէն ոմանց բցռ. Է հոլովման պէս է. ի ձեռանէ. յատանէ. ի կաթանէ:

Շատ յատուկ եւ այլազգի անուններ իրենց սեպհական հոլովում մ'ունին, սեռ. տր. գործ. ա.: Արամ, մայ, մաւ. Եսայի, այեայ, այեաւ. Հեղինէ, նեայ, նեաւ: Իսկ ա վերջաւորեալները պարզ յ կը յաւելուն սեռ. տր. ու բցռ. հոլովներուն մէջ. Սամարիա, րիայ,

Յատկ. անուանց ներգոյականը վերջահոլով չ'ըլլար. եւ կ'ըսուի՝ ի Սիոնի. ի Բեթսամիս. յԱյենոնի. յԵգիպտոս: — Բացառութիւնները շատ քիչ են:

---

## Անկանոն կամ զարտուղի հոլովմունք:

Անկանոն հոլովմանց հայցականն ու ներգոյականը զանց կ'առնենք այս տեղս կրկնել, որ առանձին դժուարութիւն մը չունին:

### Եզակի.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Այր. | Հայր. | Քոյր. | Կին. | Գիւղ. | Օր. |
| Ս. Տ. | Առն. | Հօր. | Քեռ. | Կնոջ. | Գեղջ. | Աւուր. |
| Բցռ. | յԱռնէ. | ի Հօրէ. | ի Քեռէ. | ի Կնոջէ. | ի Գեղջէ. | յՕրէ. |
| Գրծ. | Արամբ. | Հարբ. | Քերբ. | Կանամբ. | Գիւղիւ. | Աւուրբ. |

### Յոգնակի.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Արք. | Հարք. | Քորք. | Կանայք. | Գիւղ. [illegible] Յոգն. չունի. | Աւուրք. |
| Ս. Տ. | Արանց. | Հարց. | Քերց. | Կանանց. | | Աւուրց. |
| Բցռ. | յԱրանց. | ի Հարց. | ի Քերց. | ի Կանանց. | | յԱւուրց. |
| Գրծ. | Արամբք. | Հարբք. | Քերբք. | Կանամբք. | | Աւուրբք. |

Կին բառին եզ. գրծ. կ'ըլլայ նաեւ Կնաւ. եւ Հայր, յք. սեռ. երբեմն Հարանց:

Այր բառին պէս է Տէր, տեառն. ի տեառնէ. տերամբ. Տեարք, տեարց կամ տերանց. տերամբք: Հայր բառին պէս՝ Մայր եւ Եղբայր: Կին բառին պէս՝ Տիկին, տիկնոջ, կնաւ. Տիկնայք, կնայց, կնամբք:

Տեղի եւ տարի, բցռ. ի տեղւոջէ. ի տարւոջէ:

Տիւ (ցորեկ). տուընջեան, ջենէ, ջեամբ: Յոգն. ունի միայն՝ Տիւք, զտիւս: Ունի բցռ. մ'ալ՝ ի տուէ, որ իբր ներգոյական կը բանի:

Numérisé par CDMF (FF) - 2011

Աստուած անունն առանց յօդի կը հոլովի. Աստուծոյ, ծով. իսկ դից համար կայ՝ Աստուածոյն, աստուածոց կամ աստուծոց։

Ուրիշ մանր զարտուղութիւնները տես վարը՝ 1։

---

## Հոլովմանց վրայ գիտելիք :

### I

Խառն հոլովմունք եւ կէս զարտուղիններ։ — Ի վերջաւորեալ միավանկները Գ հոլովման տակն են, իսկ բազմավանկները Դ հոլովման։

Որդի, հոգի՝ Գ հոլովմ. տակն են, միայն ի գիրն ւ-ի փոխելով. Հոգւոյ, գւով, գւոց։ Նոյնպէս ոչ, եւ ի վերջաւորեալներուն շատը. ինչպէս՝ Փարիսեցւոց։

Եայ վերջաւորեալներուն ոմանց յոգն. կ՚ըլլայ՝ (Արուարձանեայք,) եայց, եօք. (փոխ. էից, էիւք։)

Անուանց վրայի մանր Ը. Թ. Ց... գլխագիրները՝ Ա. Բ. Գ... հոլովման տակն ըլլալը կը ցուցընեն։ Նոյնպէս վարը բայերու Ա. Բ. Գ լծորդ։

Զ եւ Է հոլովմունքն ըն վերջով անուանց է։ — Է հոլովման տակն են՝ Տուն, շուն, անուն, ձեղուն, բառերն եւ ուր, իկ վերջով նուազականները, թէեւ ըն չեն վերջաւորիր. սեռ. Տան, շան, անուան, ձեղուան, (փոքրիկ,) փոքրկան. աղջկան. (մանուկ,) մանկան։ Իսկ երկրորդ օրինակին (Արիւն, արեան) պէս են՝ Տեղի, ագի, հանգիստ, ժամանակ, [illegible] բառերը. Տեղեաց. ի տեղիս. հանգստեամբ. բայց սեռ. եւ տր. սովորաբար՝ փախստի, թաքստի։ — Ընդհանրապէս իւն վերջ ունեցողներն՝ Է հոլովմ. երկրորդ օրինակին տակ են։

Կողմն, սերմն, անուն, յոգ. կողմանք, սերմանք, անուանք, (փոխ. ունք։)

Ը հոլովումը՝ իր եւ իւ վերջաւորածներուն է։ — Բայց Փոքր բառը կէս զարտուղի է եւ խառն կը հոլովի. Եզ. ուղ. Փոքր. սեռ. տր. փոքու. բաց. ի փոքուէ. գործ. փոքու։ Յոգն. Փոքունք. քունց. քումբք։ Այսպէս նաեւ՝ Ծունր. մանր. բարձր. քաղցր. սուր. թանձր. մեղր։

Հին, նոր, ոչ, յառ, ամուրք, դիւթ, ներքին, յետքին եւայլն. եւ երբեմն եալ անցեալներն եզ. ներգոյակա-

Numérisé par CDMF (FF) - 2011

նի մէջ ում կը վերջաւորին. ի հնում. ի ձախում թեւի. ի ներքնում։ Քիչ տեղ ալ տրականը. որմէ բցա. ալ՝ ի ձախմէ. ընդ աջմէ։

Շատ բառերուն եզակին եւ յոգնակին զատ զատ հոլովմանց տակ են. ինչպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Ձեռն, ռին[Զ]. յք. ձեռք, ռաց[Բ]. | | Երէց, էցու[Ե]. յք. | երիցունք[Է]. |
| Ոտն, ոտին. | ոտք, ոտից[Ա]. | Պառաւ, ւու. | ւունք. |
| Մատն, տին. | մատունք[Է]. | Սարկաւագ[Բ]. | գունք.* |
| Մասն, սին. | մասունք. | Ծնունդ, գեան[Զ]. | ծնունդք[Գ]. |
| Հարսն, սին. | հարսունք. | Մնունդ, նդեան. | մնունդք. |
| Քոյր, ի, իւ[Ա]. | քորինք[Զ]. | Ժողովուրդ, դեան. | վուրդք։ |

* Միայն յք. նախդրիւ հոլովներուն մէջ։

Ոմանք եզակիէն տարբեր յոգնակի ունին։

Ունկն, կանէ. յք. ականջք[Բ]. — Ակն, կանէ. յք. աչք, չաց[Բ]. — Ծունր, յք. ծունկք[Բ]։

Ք գրէն զատ կան քանի մը յոգնականակերպ մասնիկներ ալ. Մարդիկ, դկանէ. մանկտի[Դ]. ծակտի. գրեան[Գ]. խոզեան. կանանի[Դ]. նամականի, եւայլն։

2.

Կրկին հոլովումներ։ — Շատ անուններ երկու կամ երեք հոլովմանց կերպ ալ կրնան հոլովիլ. այսպէս. Բերդ, բերդէց[Ա] եւ բերդաց[Բ]. Մոգաց[Բ] եւ մոգուց[Ե]. Լուսնի[Ա] եւ լուսնոյ[Գ]. Նաւ, նաւու[Բ], (նաւուց[Գ],) նաւաց[Բ], եւ նաւու[Ե], նաւուց. Հրոյ[Գ] կամ հուրբ[Ը]. Ջրոյ[Գ] կամ ջուրց[Ը]։ Մահ, մահու[Ե]. եւ մահուանէ[Է]. անուն. անուամբ. յք. մահք[Ե] եւ մահուանք[Է]. հոյց[Ե]։ — Ցանկ. անուանց աւելի յաճախ է այլեւայլ կերպ հոլովումները։

3.

Պակասաւոր անուններ կան՝ թուով կամ հոլովով։

Ա. Թուով պակասաւոր են՝ 1. *Անյոքնակական* անուններն որ միայն եզականի մէջ կը գործածուին. ինչպէս. Լոյս. քաղց. ատր. կաթն, եւայլն։ — Գոյական յատկ. անուններն ընդհանրապէս անյոգնական են։ 2. *Անեզական* անուններն, որ միայն յոգնակի ունին. Կրօնք. աղօթք. փառք. դագաղք. հարսանիք. միտք. կամք, եւ ուրիշ շատ գոյականներ։

Բ. Հոլովով պակասաւոր են շատ անուններ որ նախդրիւ միայն կը հոլովին, եւ կ'ըսուին *Անհոլով*.

Numérisé par CDMF (FF) - 2011

ինչպէս. Այրելուչ. դոյզն. առատաձեռն. արբունք. հնչիւն. ծունր, եւայլն։ Եւս մասնկաւ ածականները միայն յոգն. կը հոլովին՝ եանք, եանց, եամբք։

4.

Երկրորդական հոլովներ։ — Գլխաւոր հոլովներէն զատ՝ կայ նաեւ՝ 1. Պատմական որ զայով բացառական է, եւ կը նշանակէ՝ բանի մը վրայօք (խօսիլ, պատմել, կարծել, տրտնջել, գոհանալ.) ինչպէս՝ զԱրքայէ։ 2. Պարառական որ զ նախդրիւ գործիական է, եւ կը նշանակէ՝ բանի մը բոլորտիքը, քովերը. եւայլն. ինչպէս զքաղաքաւ։ 3. Կոչական որ մեր մէջն ուղղականէն տարբեր ձեւ չունի. (տես 64։) Միայն ու վերջով օտար անուանց կոչականն երբեմն է կ'ըլլայ. Պետրէ։

Նոյնպէս է ներգոյական հոլովը՝ որ եզականի մէջ հասարակօրէն տրականի վրայ ի նախդիր աւելցնելով կը ձեւանայ. բայց մենք գլխաւոր հոլովներուն կարգը կը դնենք՝ շատ բացառութեանցը համար։ Տես վարը։

5.

Նախդրիւ հոլովներ։ — Նախդիրները տես 60։

Զ նախդիրը հայցական կը շինէ. Բաշխել զինչ իւր. որ առանց նախդրի՝ կ'ըլլայ Անորոշ հայցական. Բաշխել ինչ։ Դարձեալ Պատմական ու Պարառական կը շինէ. ինչպէս վերը տեսանք։

Ուրիշ դէպքերու մէջ կը գրուի խնդիր-բնութեան՝ Զտուշէ կամ զէնտոնէ հարկանեմ, Զահէ հարկանիմ, եւայլն։

Ի, (յ,) ց, առ՝ հայցականի վրայ (զայի տեղ) կը գրուին եւ այլեւայլ կերպով տրականի միտք կու տան. Դարձաւ ի քաղաք իւր։ Եկին առ իս։ Առէ ցնոսա։

Այս նախդրիւ հոլովները՝ տրականի նշանակութիւն ունենալնուն համար առաւելութիւն եղած է նախդրիւ տրական անուանել, որ ճիշդ խօսելով՝ ի, յ, ց, առ նախդրով հայցական են։

Ի նախդիրը տրականի վրայ գրուելով երբեմն բացառական կը շինէ եւ երբեմն ներգոյական։

Ա. Բացառական կը շինէ՝ եզակի եւ յոգնակի ամէն հոլովմանց մէջ. ի լուսոյ. յարմատոյ. ի Տրդատայ. ի բանից. ի վշտաց. ի հեծանց. յիմաց. յորոց. — յայսմ տանէ. ի նմին գեղջէ։ Միայն՝ եզականի մէջ ուր որ

Numérisé par CDMF (FF) - 2011

տրականին ծայրն է. — Ե կամ բաղաձայն, բացառականն է կը վերջաւորի. ի տեղւոյէ. ի ծովէ, յանձնէ. ի գեղջէ. ի մտաց. յաւուրծէ. ի յերկնէ. յորմէ:

Բ. Ներգոյական կը շինէ ի նախդիրը տրականի վրայ դրուելով՝ միայն եզականի մէջ. ի տեղւոջ. ի ծովու. ի գրան. ի նմա. ի յերկրում. յորում. — յայսմ տան. ի նմին գեղջ: Իսկ յոգնակիններուն եւ բոլոր Գ հոլովմ. եզականին մէջ՝ հայցականի վրայ կը դրուի ի նախդիրը. ինչպէս. ի քաղաքս ի տեղիս. ի գետս. ի գիրս. յայնմ ամի. ի ժողովուրդ իմում. ի ծոց իւրում. — նոյնպէս յատկ. անուանց եւ էական գերանուանց մէջ. ի Սիոն. ի Հռոմ. յիս. որ տրականի միտք ալ կու տայ: Բայց Գ հոլովման ներգոյ. սովորաբար ի կը վերջաւորի. ի մարմնի. ի մեղջի, եւ այլն: Իսկ Դ հոլովմ. եզակին զատ ներգոյ. ունի. ի կղզւոջ. ի տարւոջ. յայգւոջ. (երես 212:)

Ընդ եւ ըստ երբեմն իբրեւ նախդիր կը գործածուին. Հայել ընդ երկինս. Ըստ օրէնս անցանել:

---

## Թուական անուանք:

Բացարձակ.

Մի, մէո. միոջ, միոյ. մը. միում. ի միոջէ. միով. ի միում:

Երկու, հայց. զերկուս. սեռ. երկուց. գործ. երկուք: (Ուղղական ալ երբեմն Երկուք. տես վարը ծանօթ:)

Երեք, զերիս. երից. երիւք: Չորք, զչորս. չորից. չորիւք.

Հինգ, հնգից. հնգիւք կամ դիւք: Վեց, վեցից. իւք:

Եւթն, եւթանց. թամբք: Ութ, ութից. ութիւք:

Ինն, յգն. Իննունք. իննունց. իննումբք:

Տասն, սին. սամբ. սունք, սանց, սամբք. (սնից, սնիւք:)

Մետասան. երկոտասան. երեքտասան. չորեքտասան. հնգետասան. վեշտասան. — սանից. սանիւք:

Եւթնեւտասն. ութեւտասն. իննեւտասն. — տասանց:

Քսան. երեսուն. քառասուն. յիսուն. վաթսուն. եւթանասուն. ութսուն. իննսուն. — քսանից. քառասնից. եւթանասնից:

Հարիւր. երկերիւր. երեքհարիւր. չորեքհարիւր. հինգհարիւր. — հարիւրոյ, րով. րոց, (կամ րից. րովք:)

Հազար, ի. աւ. աց. օք: Բեւր, բիւրու. րուց. րուք:

Numérisé par CDMF (FF) - 2011

Ոմանց յոգնակին միայն գոյականաբար կը գործածուի. Երկուք ի նոցանէ. իննսունքն ուր են. Նոքա ութսունքն։ — Հինգէն վեր եղակի ալ կ'ըլլայ՝ մանաւանդ գործիական. Հնգիւ չափ. յիսնիւ չափ։

Դասականներն աշխարհաբարին հետ նոյն են, (տես եւ 121.) Բ հոլովման տակ։ Սեռ. տրականն ու ներգոյ. հասարակօրէն ում է. միայն Առաջին կ'ըլլայ ջնոյ. նում. Բաց. նոյ կամ նմէ. նով. — Բաղադրեալները՝ Քաններորդ չորրորդ. քաններորդի չորրորդի։

Բաշխականները՝ Մի մի, երկու երկու, եւայլն։

Երկուքն ալ, երեքն ալ, եւայլն. գրաբար յատուկ ձեւով կ'ըսուի՝ Երկոքեան. երեքեան. չորեքեան. եւթանեքեան, եւայլն։

Ուղ. Երկոքեան կամ քին. Բաց. յԵրկոցունց.
Հայց. զԵրկոսեան կամ սին. Գործ. Երկոքումք, քումբք։
Ս. Տ. Երկոցուն, ցունց. Ներգ. յԵրկոսեան, սին։

---

## Միջակ կամ Մասնական անուանք:

Հարցականներուն արմատն է ո, (մարդու,) եւ ի, (իրաց։) Ասոնց վրայ ն կամ ք դրուելով ուրիշ մասնականներ կ'ըլլեն։

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ. | Ո՞. ո՞վ. ով. | Ոմն. Մէկը. | Ոք. Մէկը. |
| Հայց. | զՈ. զով. | զՈմն. | զՈք. |
| Սեռ. | Ոյր. | Ուրումն. | Ուրուք. |
| Տր. | Ում. | Ումեմն. | Ումեք. |
| Բաց. | յՈւմէ. | յՈւմեմնէ. | յՈւմեքէ. |
| Գործ. | — | Ոմամբ. | — |
| Ներգ. | յՈւմ. | յՈւմեմն. | յՈւմեք. |
| Ուղ. | Զի՞. զի՞նչ.* | Ինչ. (քան)մը. | (Իք.) |
| Հայց. | Զի. զինչ. | Ինչ. | — |
| Սեռ. | Էր. | — | Իրիք. |
| Տր. | Իմ. հիմ. | Իմեմն. | Իմիք. |
| Բաց. | առ իմէ. | յԻմեմնէ. | յԻմեքէ. |
| Գործ. | Իւ. | — | Իւիք. |
| Ներգ. | յԻմ. | յԻմեմն. | յԻմիք. |

* (Ընդ) Էր. Հի՞մ. առ իմէ՞ եւ պատճառ. ընդէ՞. կը նշանակեն ինչո՞ւ։

Numérisé par CDMF (FF) - 2011

Յոգնակի ունին միայն Ո եւ Ոմն. այսպէս։

Ոյք. զոյս. ոյց. յոյց. Ոմանք. զոմանս. ոմանց. յոմանց. ոմամբք.

Միմեանց եւ Իրերաց, (իրարու) ուղղական չունին։

Իւրաքանչիւր, Ամենիւր, (ամէն մէկը, եւ ամէն մէկուն։)

Ամենայն, ի. իւ. (ամէն.) յք. չունի։ — Ամենեքեան,

Բոլորեքեան, (ամէնքն ալ.) երկոքեան բառին պէս։

Այլ, (ուրիշ.) այլոյ. այլում. յայլմէ. այլով. այլոց։

Միւս, (մէկալ.) միւսոյ. սում. ս'մէ. սով. սոց, եւայլն։

---

## Դերանուանց հոլովումը:

### Ա. Էական կամ Անձնական դերանուններ։

| | Ա ԴԷՄՔ. | Բ ԴԷՄՔ. | Գ ԴԷՄՔ. |
|---|---|---|---|
| | | Եզակի. | |
| Ուղ. | Ես. | Դու. | — |
| Հյց. | զիս. | զքեզ. | —* |
| Սեռ. | իմ. | քո. | իւր. |
| Տր. | ինձ. | քեզ. | իւր. |
| Բցռ. | յինէն. | ի քէն. | յիւրմէ. |
| Գրծ. | ինեւ. | քեւ. | զիւրեաւ, րեւ. |
| Նրգ. | յիս. | ի քեզ. | — |
| | | Յոգնակի. | |
| Ուղ. | Մեք. | Դուք. | — |
| Հյց. | զՄեզ. | զՁեզ. | — |
| Սեռ. | Մեր. | Ձեր. | իւրեանց. |
| Տր. | Մեզ. | Ձեզ. | իւրեանց. |
| Բցռ. | ի Մէնջ. | ի Ձէնջ. | յիւրեանց. |
| Գրծ. | Մեւք. | Ձեւք. | իւրեամբք. |
| Նրգ. | ի Մեզ. | ի Ձեզ. | յիւրեանս. |

* Իւր բերեւ Հյց. չի գտնուիր. բայց միայն նախդրով՝ զիւր, առ իւր. (իրեն։)

Ինքն դերանունն երեք դէմքի ալ կը ծառայէ. բայց մինակ որ մնայ՝ Գ դէմքի է։ Կը հոլովի՝ Ինքեան. յինքենէ. ինքեամբ. ինքեանք, քեանց, քեամբք։

Numérisé par CDMF (FF) - 2011

Բ. Ցուցական դերանուններ՝ դիմորոշ յօդերուն համեմատ. Սա, դա, նա. Այս, այդ, այն. Սոյն, դոյն, նոյն։

| | | 1. | 2. | 3. |
|---|---|---|---|---|
| Եզ. | Ուղ. | Սա. | Այս. | Սոյն. |
| | Հայց. | զՍա. | զԱյս. | զՍոյն. |
| | Սեռ. | Սորա. | Այսր. այսորիկ. | Սորին. |
| | Տր. | Սմա. | Այսմ. այսմիկ. | Սմին. |
| | Բաց. | ի Սմանէ. | յԱյսմ*. յայսմանէ. | ի Սմին*. |
| | Գործ. | Սովաւ. | Այսու. այսուիկ. | Սովին. |
| | Ներգ. | ի Սմա. | յԱյսմ. յայսմիկ. | ի Սմին. |
| Յգ. | Ուղ. | Սոքա. | Այս. այսոքիկ. | Սոքին. |
| | Հայց. | զՍոսա. | զԱյս. զայսոսիկ. | զՍոսին. |
| | Սեռ. | Սոցա. | Այսց. այսոցիկ. | Սոցին. |
| | Տր. | Սոցա. | Այսց. այսոցիկ. | Սոցին. |
| | Բաց. | ի Սոցանէ. | յԱյսց. յայսցանէ. | ի Սոցունց. |
| | Գործ. | Սոքօք. | — այսոքիւք. | Սոքիմբք. |
| | Ներգ. | ի Սոսա. | յԱյս. յայսոսիկ. | ի Սոսին. |

* Բացառականի մէջ յայսմ եւ ի սմին՝ միայն կից դիպականով մը կրնան կենալ. Յայսմ բանէ. ի սմին բանէ։ Իսկ մինակ՝ կ'ըսուի յայսմանէ. ի սմանէ։

Սոյն ուրիշ ձեւեր ալ ունի. Սեռ. յգ. սորուն. սոցունց. Գործ. սովիմբ. յգ. սովիմբք, սոքումբք։ Յոքն. դարձեալ սոյնք. զսոյնս. ի սոյնս. եւ բցռ. ի սո-յին տանց։ — Այն ունի յգ. մ'ալ. այնք. զայնս։

Սա, դա, նա, մինակ կը բանին դիպականաբար։

Այս, այդ, այն, Սոյն, դոյն, նոյն, թէ մինակ եւ թէ դիպականով մը։

Այս, այդ, այն երկու ձեւ ունին, կարճ եւ երկայն. — կարճերը հասարակօրէն յետադաս դիպական մը կ'ունենան. իսկ երկայնները կը գործածուին երբ մինակ են կամ նախադաս դիպական մ'ունին. այսպէս. Այս տուն. այսր տան. այսմ տան. յայսմ տանէ. Այս տունք. այսց տանց. — Տուն այս. զտուն զայս. տան այսորիկ. ի տանէ յայսմանէ. ի տան յայսմիկ. Տունք այսոքիկ. ի տանց յայսցանէ, եւայլն։ — Նոտրագիր նախդիրներն ու յօդերն էական են։

Գ. Ստացական եւ Յարաբերական դերանունները՝ Իմ, քո, մեր, ձեր, իւր եւ Որ՝ պարզ հոլովում ունին. Իմ,

Numérisé par CDMF (FF) - 2011

իմոյ. իմում. յիմ՚մէ. իմով. յիմում. իմք. իմոց. եւայլն։ Նոյնպէս Ձերոյ, ձերում. ի մեր՚մէ. իւրոց. իւրովք, եւ այլն։ Որ, որոյ. որում. յորմէ. որք. որոց. որովք։ — Քո ստացականը կրկին հոլովուած ունի։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ. | Քո. (քու.) | քոյ. | քում. | ի քումմէ. | քով. |
| | — | քոյոյ. | քոյում. | — | քոյով. |
| Յք. | Քո. | քոց. | քոց. | ի քոց. | քովք. |
| | Քոյք. | քոյոց. | քոյոց. | ի քոյոց. | քոյովք։ |

Առանք իրենց գոյականին հետ մէկտեղ կը հոլովին. Բանի իմոյ. ի տանէ քումմէ. ի քումմէ յետանէ. իմոց բանից. որդւոց քոց. յորմէ ողջէ. որոց անուանց։ Յոգն. ք եւ ս գրերը միայն այն ատեն կը գրուին՝ երբ առանց գոյականի մինակ որ ըլլան։

## ԲԱՅ ԵՒ ԴԵՐԲԱՅ

Բայերուն եղանակներն ու պարզ ժամանակներն ասոնք են.

*Սահման.* Ներկայ, Անկատար, Կատարեալ, Ապառնի։
*Հրաման.* Բուն հրամայական եւ Արգելական։
*Ստորադ.* Ներկայ. (ստոր. անկտր. չունի գրաբարը։)
*Դերբայ.* Աներեւոյթ, Ընդունելութիւն եւ Անցեալ։

Բայերուն կանոնաւոր ժամանակներն են՝

1. Սահմ. ներկայ եւ 2. անկատար. 3. Ստոր. ներկայ. 4. Հրամայականին արգելականն. ու 5. Աներեւոյթը։

Անկանոն ժամանակներն են՝

1. Սահմ. կատարեալ. 2. Ապառնի. 3. բուն Հրամայականը, եւ 4. Անցեալ։ — Ընդ. ներկայ՝ երբեմն կանոնաւոր է, եւ երբեմն անկանոն։

Անկանոն ժամանակ կոչելնուս պատճառն է՝ որ բոլոր լեզուին՝ թէ կանոնաւոր եւ թէ զարտուղի բայերուն այս ժամանակներն են այլայլութիւն կրողը. ուր որ կանոնաւոր ըսուած ժամանակները սահմ. ներկային վրայէն պարզ կերպով կը ձեւանան, եւ ընդհանրապէս ամէն լծորդութեանց մէջ իրարու նման՝ միայն ձայնաւորներուն տարբերութեանը վրայ կը դառնան։ (Նշմը տեսանք այլափոխարարի վրայ աւ. 199։) Բայց ճշդիւ մտադիր ըլլողը կը գտնէ՝ որ աւելի պարզ եւ զուտ արմատական են այդ անկանոն ըսուած ժամանակները։

Numérisé par CDMF (FF) - 2011

## *Էական բայեր:*

*Էական բայերն են՝ Եմ, Լինիմ, Եղանիմ պակասաւորները, որ իրարմէ ելած՝ մէկը զմէկ կը լրացընեն:*

| | | | |
|---|---|---|---|
| Սահմանակ. | Եմ. իմ. | Լինիմ. Կ'ըլլամ. | Եղանիմ. Կ'ըլլամ. |
| Ներկայ. | Ես. | Լինիս. | Եղանիս. |
| | Է. | Լինի. | Եղանի. |
| | Եմք. | Լինիմք. | Եղանիմք. |
| | Էք. | Լինիք. | Եղանիք. |
| | Են. | Լինին. | Եղանին. |
| Անկատար. | Էի. | Լինէի. | Եղանէի. |
| | Էիր. | Լինէիր. | Եղանէիր. |
| | Էր. | Լինէր. | Եղանէր. |
| | Էաք. | Լինէաք. | Եղանէաք. |
| | Էիք. | Լինէիք. | Եղանէիք. |
| | Էին. | Լինէին. | Եղանէին. |
| Կատարեալ. | — | — | Եղէ. |
| | — | — | Եղեր. |
| | — | — | Եղեւ. |
| | — | — | Եղեաք, (Եղաք.) |
| | — | — | Եղէք. |
| | — | — | Եղեն. |
| Ապառնի. | — | — | Եղէց. |
| | — | Լիցիս. | Եղիցիս, ցես. |
| | — | Լիցի. | Եղիցի. |
| | — | Լիցուք. | Եղիցուք. |
| | — | Լիջիք. | Եղիջիք. |
| | — | Լիցին. | Եղիցին. |
| Հրամայակ. | — | Լեր. լիջիր. | —. եղիջիր. |
| | — | Լերուք. | Եղերուք. |
| Արգելական. | — | Մի լինիր. | Մի եղանիր. |
| | — | Մի լինիք. | Մի եղանիք. |
| Ստորադ. | Իցեմ. | Լինիցիմ. | Եղանիցիմ. |
| Ներկայ. | Իցես. | Լինիցիս. | Եղանիցիս. |
| | Իցէ. | Լինիցի. | Եղանիցի. |
| | Իցեմք. | Լինիցիմք. | Եղանիցիմք. |
| | Իցէք. | Լինիցիք. | Եղանիցիք. |
| | Իցեն. | Լինիցին. | Եղանիցին. |
| Դերբայ. | | | |
| Աներեւոյթ. | — | Լինել. | Եղանել. |
| Ընդունել. | — | — | — |
| Անցեալ. | — | Լեալ, (լինեալ.) | Եղեալ. |
| Ապառնի. | — | Լինելոց. | Եղանելոց: |

Numérisé par CDMF (FF) - 2011

Եմ բայը Հրմ. մ'ունի՝ որ միայն ողջ բառին քով կը գտնուի. Ո՛ղջ եր. ո՜ղջ էք։ — Եղանէմ բայը կանոնաւոր ժամանակներուն մէջ անսովոր է։

—

## Կանոնաւոր խոնարհմունք։

Նախագիտելիք։ — Երկու տեսակ բայ կայ Հայերէնի մէջ. 1. Պարզ բայեր, որոնց արմատին վրայ կ'աւելցուին խոնարհման գիրերը. Գործ-եմ. գործ-եայ. դարման-եա. Հեղ-ի. Հեղ-այ. զեն-այց, եւայլն։ 2. Յաւելուածով բայեր, որոնց արմատին վրայ կանոնաւոր ժամանակներուն մէջ եկամուտ Ն գիր (շատ անգամ ալ ան, երբեմն ու, նու) յաւելնալէն ետքը խոնարհման գիրերը կու գան. ինչպէս. Առն-ում. գողա-ն-այ. Հատան-էի. թռչ-ել. կորնչ-ելոյ, եւայլն։

Գրաբար բայերն երեք լծորդութիւն ունին, որ առՀմ. ներկայէն կ'որոշուին. եւ են՝ ամ. եմ. ում։

Ա լծ. Աղամ. աղացի. աղա. աղացեալ.
Բ լծ. Գործեմ. գործեցի. գործեա. գործեալ, (եցեալ.)
Գ լծ. Հեղում. հեղի. հեղ. հեղեալ։

Այս երեք գլխաւոր լծորդութեանց ամէն մէկն իւր Յաւելուածով բայերն ունի. որոնց անկանոն ժամանակներն ամէնը մէկանց Գ լծորդութեան տակն են։

Բայի մը լծորդութիւնը քերականութեանց եւ բառարաններու մէջ կար. եւ Հրմ. վերջաւորութիւններով կը նշանակուի. այսպէս. Դողամ, ացի, ա. Կամ, կացի, կաց. Սիրեմ, եցի, եա. Զենում, զենի. զեն։

Ներգծ. բայ կրւր. ընելու ընդհանուր կանոնն է՝ — ներգործականի եմը իմի դարձընել, եւ՝ է յաւելուածը այի։ Մնացածները ներգործականին հետ նոյն կը մնան, զորոնք սաստղանիշ կը նշանակենք։ Քանի մը զարտուղութիւնները յաջորդ պատկերը կը ցուցընէ։

Խոնարհմանց փոփոխութիւնները Կորուսման եւ փոփոխման օրինաց վրայ հաստատեալ են. Տեսէց, տե՛ս'ցէ. եղէց. եղէցի. չէջ, չէջանիմ. չէջոյց, չէջուցանեմ. եւայլն։

Լծորդութեանց պատկերին մէջ քանի մը ժամանակ փակագծիւ որոշուած են, միայն բային կանոնաւոր ձեւը ցուցընելու համար. բայց քիչ բայ նոյն կերպով կը խոնարհի։ Տես վարը Գիտելեաց մէջ։

Numérisé par CDMF (FF) - 2011

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | Ա. ԼԾՈՐԴ. | Բ. ԼԾՈՐԴ. | Գ. ԼԾՈՐԴ. |
|---|---|---|---|
| Սահման. Ներկայ. | Աղ-ամ. | Գործ-եմ. | Հեղ-ում. |
| | Աղ-աս. | Գործ-ես. | Հեղ-ուս. |
| | Աղ-այ. | Գործ-է. | Հեղ-ու. |
| | Աղ-ամք. | Գործ-եմք. | Հեղ-ումք. |
| | Աղ-այք. | Գործ-էք. | Հեղ-ուք. |
| | Աղ-ան. | Գործ-են. | Հեղ-ուն. |
| Անկատար. | Աղ-այի. | Գործ-էի. | Հեղ-ուի. |
| | Աղ-այիր. | Գործ-էիր. | Հեղ-ուիր. |
| | Աղ-այր. | Գործ-էր. | Հեղ-այր. |
| | Աղ-այաք. | Գործ-էաք. | Հեղ-ուաք. |
| | Աղ-այիք. | Գործ-էիք. | Հեղ-ուիք. |
| | Աղ-ային. | Գործ-էին. | Հեղ-ուին. |
| Կատարեալ. | Աղ-ացի. | Գործ-եցի. | Հեղ-ի. |
| | Աղ-ացեր. | Գործ-եցեր. | Հեղ-եր. |
| | Աղ-աց. | Գործ-եաց. | Հեղ, կամ ե-հեղ. |
| | Աղ-ացաք. | Գործ-եցաք. | Հեղ-աք. |
| | Աղ-ացէք, ցիք. | Գործ-եցէք, ցիք. | Հեղ-էք, իք. |
| | Աղ-ացին. | Գործ-եցին. | Հեղ-ին. |
| Ապառնի. | Աղ-ացից. | Գործ-եցից. | Հեղ-ից. |
| | Աղ-ասցես. | Գործ-եսցես. | Հեղ-ցես. |
| | Աղ-ասցէ. | Գործ-եսցէ. | Հեղ-ցէ. |
| | Աղ-ասցուք. | Գործ-եսցուք. | Հեղ-ցուք. |
| | Աղ-աջիք. | Գործ-եջիք. | Հեղ-ջիք. |
| | Աղ-ասցեն. | Գործ-եսցեն. | Հեղ-ցեն. |
| Հրամայ. | Աղ-ա. աղ-աջիր. | Գործ-եա. գոր-ծ-եջիր. | Հեղ. հեղ-ջիր. |
| | Աղ-ացէք. | Գործ-եցէք. | Հեղ-էք. |
| Արգելակ. | Մի աղ-ար. | Մի գործ-եր. | Մի հեղ-ուր. |
| | Մի աղ-այք. | Մի գործ-էք. | Մի հեղ-ուք. |
| Ստորադ. Ներկայ. | Աղ-այցեմ. | Գործ-իցեմ. | Հեղ-ուցում. |
| | Աղ-այցես. | Գործ-իցես. | Հեղ-ուցուս. |
| | Աղ-այցէ. | Գործ-իցէ. | Հեղ-ուցու. |
| | Աղ-այցեմք. | Գործ-իցեմք. | Հեղ-ուցումք. |
| | Աղ-այցէք. | Գործ-իցէք. | Հեղ-ուցուք. |
| | Աղ-այցեն. | Գործ-իցեն. | Հեղ-ուցուն. |

Numérisé par CDMF (FF) - 2011

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

| | Ա. ԼԾՈՐԴ. | Բ. ԼԾՈՐԴ. | Գ. ԼԾՈՐԴ. |
|---|---|---|---|
| Սահման. Ներկայ. | *(Աղ-ամ.) | գործ-իմ. | *Հեղ-ում. |
| | *(Աղ-աս.) | գործ-իս. | *Հեղ-ուս. |
| | *(Աղ-այ.) | գործ-ի. | *Հեղ-ու. |
| | *(Աղ-ամք.) | գործ-իմք. | *Հեղ-ումք. |
| | *(Աղ-այք.) | գործ-իք. | *Հեղ-ուք. |
| | *(Աղ-ան.) | գործ-ին. | *Հեղ-ուն. |
| Անկատար. | *(Աղ-այի.) | *գործ-էի. | *Հեղ-ուի. |
| | *(Աղ-այիր.) | *գործ-էիր. | *Հեղ-ուիր. |
| | *(Աղ-այր.) | *գործ-էր. | *Հեղ-ույր. |
| | *(Աղ-այաք.) | *գործ-էաք. | *Հեղ-ուաք. |
| | *(Աղ-այիք.) | *գործ-էիք. | *Հեղ-ուիք. |
| | *(Աղ-ային.) | *գործ-էին. | *Հեղ-ուին. |
| Կատարեալ. | Աղ-ացայ. | գործ-եցայ. | Հեղ-այ. |
| | Աղ-ացար. | գործ-եցար. | Հեղ-ար. |
| | Աղ-ացաւ. | գործ-եցաւ. | Հեղ-աւ. |
| | *Աղ-ացաք. | *գործ-եցաք. | *Հեղ-աք. |
| | Աղ-ացայք. | գործ-եցայք. | Հեղ-այք, արուք |
| | Աղ-ացան. | գործ-եցան. | Հեղ-ան. |
| Ըղձական. | Աղ-ացայց. | գործ-եցայց. | Հեղ-այց. |
| | Աղ-ասցիս. | գործ-եսցիս. | Հեղ-ցիս. |
| | Աղ-ասցի. | գործ-եսցի. | Հեղ-ցի. |
| | *Աղ-ասցուք. | *գործ-եսցուք. | *Հեղ-ցուք. |
| | *Աղ-աջիք. | *գործ-եջիք. | *Հեղ-ջիք. |
| | Աղ-ասցին. | գործ-եսցին. | Հեղ-ցին. |
| Հրամայ. | Աղ-ացիր, *ա-ղ-աջիր. | գործ-եաց, *գործ-եջիր. | Հեղ-իր, *հեղ-ջիր. |
| | Աղ-ացարուք. | գործ-եցարուք. | Հեղ-արուք. |
| Արգել. | *(Մի աղ-ար.) | Մի գործ-իր. | *Մի հեղ-ուր. |
| | *(Մի աղ-այք.) | Մի գործ-իք. | *Մի հեղ-ուք. |
| Ստորադ. Ներկայ. | Աղ-այցիմ. | գործ-իցիմ. | *Հեղ-ուցում. |
| | Աղ-այցիս. | գործ-իցիս. | *Հեղ-ուցուս. |
| | Աղ-այցի. | գործ-իցի. | *Հեղ-ուցու. |
| | Աղ-այցիմք. | գործ-իցիմք. | *Հեղ-ուցումք. |
| | Աղ-այցիք. | գործ-իցիք. | *Հեղ-ուցուք. |
| | Աղ-այցին. | գործ-իցին. | *Հեղ-ուցուն. |



Numérisé par CDMF (FF) - 2011

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| Դերբայ. | Ա. ԼԾՈՐԴ. | Բ. ԼԾՈՐԴ. | Գ. ԼԾՈՐԴ. |
|---|---|---|---|
| Աներեւոյթ. | Աղ-ալ. | Գործ-ել. | Հեղ-ուլ. |
| Ընդունել. | Աղ-ացող. | Գործ-ող. | (Հեղ-ող.) |
| Անցեալ. | Աղ-ացեալ. | Գործ-եալ. | Հեղ-եալ. |
| Ապառնի. | Աղ-ալոց. | Գործ-ելոց. | Հեղ-լոց. |

1. *Աներեւոյթն ու ընդունելն.-Ներկան կը հոլովին։ Աղալ-ոյ. գործել-ոյ, հեղլ-ով. Աղացող-ի. գործող-աց։ Աներեւոյթը յոքն. չունի։ Մնացած երկուքն անհոլով են։*

*Բանի մը Բ լծորդութեան (մանաւանդ ղ, չ, ճ վերջով) բայերուն անցեալը՝ ներգործականի մէջ ալ եցեալ կ'ըլլայ. Կոչեցեալ. աղաչեցեալ. պրեցեալ։ Չէզոքներէն՝ Ամաչեցեալ. ննջեցեալ. աճեցեալ.*

*Բայց կրաւորականի մէջ աւելի յաճախ է եցեալ անցեալը, մանաւանդ վերջահոլով. ինչպէս յաջորդ երեսը կը ցուցնէ։*

2. *Եալ եւ լոց դերբայներէն՝ էմ էականով կը ձեւանան բաղադրեալ ժամանակները։*

Սահմ. Յարակատար. Գործեալ եմ, ես, է, եմք. (գործեր եմ։)
Գերակատար. Գործեալ էի, էիր, էաք. (գործեր էի։)
Ստորդս. Անցեալ. Գործեալ իցեմ, իցես. (գործած ըլլամ։)

կամ անուն բային սեռականի գործածելով. (տես 247։)
Յարակատար. Գործեալ է իմ, է քո, իւր, մեր. ձեր։
Գերակատար. Գործեալ էր իմ, էր քո, իւր, մեր. ձեր։
Ստոր. անց. Գործեալ իցէ իմ, քո, իւր, մեր, եւայլն։

Սահմ. Ապառնի. Գործելոց եմ, ես, է, եմք. (պիտի գործեմ։)
Ապառ-անցեալ. Գործելոց էի, էիր. (պիտի գործէի։)
Ստոր. Ապառնի. Գործելոց իցեմ, իցես, իցէ. (գործելու ըլլամ։)

3. *Լի դերբայ ներգործականի մէջ ալ կայ՝ երբեմն ածական, փոխանակ ող դերբայի. Առնելի, օրինակն։ Չէզոք՝ Մտանելեաց եւ ելանելեաց. (մտողաց, ելողաց։)*

Numérisé par CDMF (FF) - 2011

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

| Դերբայ. | Ա. ԼԾՈՐԴ. | Բ. ԼԾՈՐԴ. | Գ. ԼԾՈՐԴ. |
|---|---|---|---|
| Աներեւոյթ. | *Աղ-ալ. | *Գործ-ել. (իլ.) | *Հեղ-ուլ. |
| Ընդունելի. | — | — | — |
| Անցեալ. | *Աղ-ացեալ. | *Գործ-(եց)եալ, | *Հեղ-եալ. |
| Ապառնի. | *Աղ-ալոց.-ալի. | *Գործ-ելոց.-ելի. | *Հեղ-լոց. լի։ |

1. Կրաւորականի դերբայներն հոլովական են. Աներեւոյթը ներգործականին պէս։ Անցեալն՝ Աղացեալ-ոյ[Ա]. գործեցել-ոյ[Բ]. ու-ելոյ[Գ*]։ — Ելի դերբայն ածական է եւ կը հոլովի լոյ, լեաց[Գ]. խօսելի. սիրելի. չեզոք՝ ելեւելի զարմանալի։ — Անհոլով է լոց ապառնին.

* Ոմանք՝ Հեղլոյ. Թողլոյ. փխկ. Հեղելոյ. Թողելոյ.

Բ. լծորդութեան եցեալ անցեալն հասարակօրէն վերջնահոլովներուն է. Սիրեցելոց. պահեցելոյ. կրթեցելոց, եւայլն։ — Կրաւորակերպներէն՝ կամեցեալ. նայեցեալ, ճայեցեալ. եւ երբեմն՝ համբեցեալ եւ խօսեցեալ։ — Ընդհանրապէս շատ քիչ բայ կայ եցեալ անցելով։

2. Կրաւորականին բաղադրեալ ժամանակներն ալ ներգործականին հետ ճշգիւ նոյն են։ Այսպէս.

Յարակատար. Գործեալ եմ, ես, է. եմք. (գործուած եմ.)
Ապառնի-անցեալ. Գործելոց էի, էիր. (պիտի գործուէի.) եւայլն։

Բայց կրաւորականն ուրիշ բաղադրեալներ ալ ունի։ — Կարգին մէջ Ա. եւ Գ. լծ. փակագծիւ որոշեալներուն տեղ՝ (որ ներգործականին հետ նոյն են,) սովորաբար եալ դերբայիւ եւ լինել էականով բաղադրեալ ժամանակներ կը գործածուին։ Այսպէս.

Սահ. Ներկայ. Աղացեալ լինիմ, (եւ ոչ՝ աղամ,) կ'աղացուիմ։ Արգել. Մի լինիր աղացեալ, (եւ ոչ՝ մի աղար.) մի աղացուիր։

Երբեմն նաեւ բուն կրաւ. ձեւերուն տեղ. Տեսեալ եղէ, փխկ. տեսայ. (տեսնուեցայ։)

3. Ելի դերբայիւ ալ կ'ըլլայ կրաւոր։ Սիրելի եմ, ես, լինիցիմ. (փխկ՝ սիրիմ, սիրեալ լինիմ։) Առնելի է նոցա, (փխկ՝ առնի ի նոցանէ։)



Numérisé par CDMF (FF) - 2011

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

### Ն յատկութեամբ բայերը:

Երեք լծորդութիւններն ալ ունին իրենց եկամուտ գրով՝ երկրորդական օրինակները: (Տես երես

**1. Առաջին լծորդութիւն. Ն-ամ:**

*Սահմ.* Ներկայ. Բանամ,* բանաս, բանայ. նամք, նայք, նան.
Անկատ. Բանայի, բանայիր, նայր. նայաք, նայիք, նային.
Կատար. Բացի, բացիր, բաց. բացաք, բացիք (ցէք), ցին.
Ապառ. Բացից, բացցես, բացցէ. բացցուք, բացջիք. ցեն.
*Հրամայակ.* Բաց կամ բացջիր. բացէք.
Արգել. Մի բանար. մի բանայք.
*Ստոր.* Ներկ. Բանայցեմ, բանայցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.
*Դերբայք.* Բանալ: Բացող: Բացեալ: Բանալոց:

* Արմատն է բաց. բայց վրան ն աւելցած ատեն ց գիրը կը կորսուի, եւ կ'ըլլայ բանամ, փխ. բացնամ: Այսպէս նաեւ՝ թանամ, զգենամ, յենամ. ընկենանամ, (արմատ՝ թաց, զգեց, յեց, ընկեց:)

**2. Երկրորդ լծորդութիւն. ան-եմ (միջին ձայնով:)**

*Սահմ.* Ներկայ. Հատանեմ, հատանես, նէ. նեմք, նէք, նեն.
Անկատ. Հատանէի, անէիր, նէր. նէաք, նէիք, նէին.
Կատար. Հատի, հատիր, հատ. հատաք, հատէք (տիք), տին.
Ապառ. Հատից, հատցես, հատցէ. հատցուք, ջիք, ցեն.
*Հրամայակ.* Հատ կամ հատջիր. հատէք.
Արգել. Մի հատաներ. մի հատանէք.
*Ստոր.* Ներկ. Հատանիցեմ, անիցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.
*Դերբայք.* Հատանել: Հատող, հատանող*: Հատեալ: Հատանելոց:

**3. Երրորդ լծորդութիւն. Ն-ում:**

*Սահմ.* Ներկայ. Առնում, առնուս, նու. նումք, նուք, նուն.
Անկատ. Առնուի, նուիր, նուր. նուաք, նուիք, նուին.
Կատար. Առի, առիր, առ. առաք, առիք, (ռէք), առին.
Ապառ. Առից, առցես, առցէ, առցուք, առջիք, առցեն.
*Հրամայակ.* Ա՛ռ կամ առջիր. առէք.
Արգել. Մի առնուր. մի առնուք.
*Ստոր.* Ներկ. Առնուցում. նուցուս, ցու. ցումք, ցուք, ցուն.
*Դերբայք.* Առնուլ: Առող*: Առեալ: Առնլոց:

* Ընդուն. ներկայի համար՝ տես երես 221:

Numérisé par CDMF (FF) - 2011

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

223:) Այս՝ յաւելուածով բայերուն անկանոն ժամանակներն՝ որ յաւելուած չեն առնուր՝ ամենն ալ Գ. լծորդութեան տակ են, որ համառօտագրով կ'որոշենք:

### 1. Առաջին լծորդութ. Ա-ամ, (ան-ամ, են-ամ:)

Սահմ. Ներկայ. *Բանամ, բանաս, բանայ. նամք, նայք, նան.
Անցեալ. *Բանայի, բանայիր, նայր. նայաք, նայիք. նային.
Կատար. Բացայ, բացար, բացաւ. *բացաք, բացայք, բացան.
Ապառ. Բացայց, բացցիս, բացցի. *բացցուք, *բացջիք, ցին.
Հրամայակ. Բացիր կամ *բացջիր. բացարուք.
Արգել. *Մի՛ բանար. *մի՛ բանայք.
Ստոր. Ներկ. *Բանայցեմ կամ ցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին.
Դերբայ. *Բանալ: *Բացեալ. *Բանալոց: Բանալի:

Անամ եւ ենամ կրաւորակաները ձայնէ ի ձայն ըստ Ա. լծ. կը խոնարհին:
Գթահանամ, Կատ. Հացայ. Հրմ. Հայցիր. Անց. Հացեալ:
Առբենամ, Կատ. բեցայ. Հրմ. բեցիր. Անց. բեցեալ:
Իսկ ստորոգս. կ'ըլլան նայցեմ, եւ ոչ նայցիմ:

### 2. Երկրորդ լծորդութիւն. ան-իմ:

Սահմ. Ներկայ. Հասանիմ, հասանիս, անի. անիմք, անիք. անին.
Անցեալ. Հասանէի, անէիր, անէր. անէաք, անէիք. նէին.
Կատար. Հասայ, հասար, հասաւ. *հասաք, հասայք, ան.
Ապառ. Հասայց, հասցես, ցէ. *հասցուք, *հասջիք, ցեն.
Հրամայակ. Հաս-իր կամ *հաս-ջիր. հասարուք:
Արգել. Մի՛ հասանիր. մի՛ հասանիք.
Ստոր. Ներկ. Հասանիցիմ, անիցիս, անիցի. ցիմք, ցիք, ցին.
Դերբայ. *Հասանել, (նիլ:) *Հասեալ: *Հասանելոց. լի:

Ընէ՛, նէլ՛ կրաւորակաները ասոր Գիտակցաց ձեւ:

### 3. Երրորդ լծորդութիւն. Ն-ում:

Սահմ. Ներկայ. *Առնում, առնուս, նու. նումք, նուք, նուն:
Անցեալ. *Առնուի, նուիր, նուր. նուաք, նուիք, նուին,
Կատար. *Առայ, առար, առաւ. *առաք, առայք, առան.
Ապառ. Առայց, առցես, առցէ. *առցուք, *առջիք, ցեն.
Հրամայակ. Առէր, *առջիր. առարուք:
Արգել. *Մի՛ առնուր, *մի՛ առնուք.
Ստոր. Ներկ. *Առնուցում, նուցուս, ցու. ցումք, ցուք, ցուն.
Դերբայ. *Առնուլ: *Առեալ: *Առնլոց: Առնլի:

Numérisé par CDMF (FF) - 2011

## Անկանոն խոնարհմունք:

Անկանոն կամ զարտուղի բայերուն բաւական է միայն անկանոն ժամանակները նշանակել. վասնզի կանոնաւոր ժամանակները, ինչպէս յայտնի է, ըստ իրենց վերջաւորութեանը՝ երեք կանոնաւոր լծորդութեանց տակ են՝ թէ ներգործականի եւ թէ կրաւորականի մէջ: Զորօրինակ. Երթամ, անց. երթայի. արգել. մի երթար. ապառ. երթայցեմ. աներբ. Երթալ. դերբայ ապռ. երթալոց:

### Ա. Տամ. տալ:

Կտր. Ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն.
Ապռ. Տաց, տացես, տացէ. տացուք, տայջիք, տացեն.
Հրմ. Տուր, տուջիր. տուք: Ընդուն. Տուիչ. տուող: Անց. Տուեալ:

Կրաւորականի կանոնաւոր ժամանակ՝ կայ միայն ապառ. Տայցիմ, եւ դերբ. ապռ. Տալոց. տալի: Մնացածն էական բայով. Տուեալ լինիմ:

Կտր. Տուայ, տուար, տուաւ. *տուաք, տուայք, տուան.
Ապռ. Տուայց, տուցիս, տուցի. (*տացուք, *տայջիք.) տացին.
Հրմ. չունի: Անցեալ. *Տուեալ. տուելոյ. լով:

### Բ. Գամ. գալ:

Կտր. Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, եկին.
Ապռ. Եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք. եկեսջիք, եկեսցեն.
Հրմ. Ե՛կ, եկեսջիր. եկայք: Ընդուն. չունի: Անցեալ. Եկեալ:

### Գ. Երթամ. երթալ:

Կտր. Չոգայ, չոգար, չոգաւ. չոգաք, չոգայք, չոգան.
Ապռ. Երթայց, երթիցես, երթիցէ. թիցուք. թիջիք. թիցեն.
Հրմ. Ե՛րթ, երթիջիր. երթայք: Անց. Երթեալ:

### Դ. Առնեմ. ընել:

Կտր. Արարի. արարեր, արար. արարաք, րէք (րիք). րին.
Ապռ. Արարից. արասցես, արասցէ. արասցուք. սջիք, սցեն.
Հրմ. Արա՛, արասջիր. արարէք: (Ընդ. Արարող, առնող:)
Անց. Արարեալ:
Կրաւ. Կտր. Արարայ, արարար, արարաւ. *րաք, րայք, րան.
Ապռ. Արարայց. րասցիս. րասցի. *արասցուք, *րասջիք. րասցին.
Հրմի չունի: Անցեալ. *Արարեալ, արարելոյ, րելով:

Numérisé par CDMF (FF) - 2011

Ե. Յառնեմ. ոտք ելնել:

Կտր. Յարեայ, յարեար, յարեաւ. յարեաք, յարեայք կամ յարուք, յարեան.
Ապ. Յարեայց, յարիցես, յարիցէ. յարիցուք, յարիջիք, յարիցեն.
Հրմ. Արի, յարիջիր. արէք: Անց. Յարուցեալ, յարուցելոյ:

Զ. Գտանեմ. գտնել:

Կտր. Գտի, գտեր, (գտեր,) եգիտ. գտաք, գտէք, գտին.
Ապ. Գտից, գտցես, գտցէ. գտցուք, գտջիք, գտցեն:
Հրմ. Գտիր. գտջիր. գտէք: Անց. Գտեալ:
Կրաւ. Կտր. Գտայ, գտար, գտաւ. *գտաք, գտայք, գտան.
Ապ. Գտայց, գտցիս, գտցի. *գտցուք, *գտջիք, գտցին.
Հրմ. Եզ. չունի. — յգ. գտարուք: Անց. *Գտեալ, գտելոյ:

Է. Լսեմ. լսել:

Կտր. Լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան.
Ապ. Լուայց, լուիցես, լուիցէ. լուիցուք, լուիջիք, լուիցեն.
Հրմ. Լուր, լուիջիր. լուարուք: Անց. Լուեալ:

Ը. Ճանաչեմ. ճանչնալ:

Կտր. Ծանեայ, ծանեար, ծանեաւ, ծանեաք, ծանեայք, ծանեան.
Ապ. Ծանեայց, ծանիցես, ծանիցէ, ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն.
Հրմ. Ծանիր, ծանիջիր. ծաներուք: Անց. Ծանուցեալ:

Թ. Ուտեմ. ուտել:

Կտր. Կերայ, կերար, կերաւ կամ եկեր. կերաք, կերայք, կերան.
Ապ. Կերայց, կերիցես, կերիցէ. կերիցուք, կերիջիք, կերիցեն.
Հրմ. Կեր, կերիջիր. կերայք: Ընդ. Կերող: Անց. Կերեալ:

Ժ. Ունիմ. բռնել*:

Կտր. Կալայ, կալար, կալաւ. կալաք, կալայք, կալան.
Ապ. Կալայց, կալցիս (ցես), կալցի. կալցուք, կալջիք, կալցին.
Հրմ. Կա՛լ, (կա՛,) կալջիր. կալարուք: Անց. Կալեալ:

* Ունիմ բայը կանոնաւոր ժամանակներուն մէջ թէ ունենալ կը նշանակէ եւ թէ բռնել:

Այսպէս ալ. Ընդունիմ. անկանոն ժամանակներուն մէջ՝ Ընկալայ, ընկալայց. ընկա՛լ. ընկալեալ:

Լուայ, ծանեայ. կերայ եւ կալայ ներգն. կատարեալները եւ իրենց —այց ապառնին կրաւորականի մէջ ալ ուրիշ բայերով կը ձեւանան: Օրինակ. Լուայ,

Numérisé par CDMF (FF) - 2011

լռեայց. կրա. Լռելի եղէ, եղէց. (կամ դիմազուրկ Լռեղեւ. լսւր լէտի:) — Ծածեայ, եայց. կրա. Ծածուցայ, ցայց: — Կեցայ, ցայց. կրա. Կեր եղէ. Ճարակ եղէց: — Կալայ, լայց. կրա. Կ'ըսուի ըմբռնեցայ, կալեալ կամ ձերբակալ եղէ, եւայլն:

ԺԸ. Ըմպեմ. խմել:

Կտր. Արբի, արբեր, արբ, (եարբ.) արբաք, ըէք (ըէք.) բին.
Աղս. Արբից, արբցես, արբցէ. արբցուք, արբջիք, արբցեն:
Հրմ. Արբ, արբջիր. արբէք: Ընդ. Արբեալ:

Կայ ընդունել. Արբեցող. խմող. (արբենալ բայէն:)

Կրա. Արբեալ եղէ, եղեցի: Կանոնաւոր ժամանակները՝ Ըմպի, ըմպեցի:

---

## Բայերու խոնարհման վրայ դիտելիք:

### 1.

Ընդհանուր դիտելիք: — Չէզոք բայերէն ոմանք ներգործականի ձեւով կը խոնարհին ու կ'ըսուին ներգործաձեւեր. եւ ոմանք կրաւորականի ձեւով՝ եւ կը կոչուին կրաւորաձեւեր:

Ներգ. եւ ներգործակերպ բայերուն կոր. եղ. 3դ դէմքին ձեւը միավանկ է՝ սկիզբը շատ անգամ ե կ'առնու. Եհեղ. Եբաց. Եհատ. Եմուտ. Եառ. Եարբ. Եարկ, Եած: Իսկ ձեւը բազմավանկ է, ե չ'առնուր. Անէծ. կոչեաց. խօսեաց: Այսպէս նաեւ միւս դէմքերն ու կրաւորականը՝ Եհեղէր. Եհեղաւ:

Ապառնի կ'ըլլայ՝ կոր. եղ. Ա դէմքին վրայ ց աւելցնելով. Բացից. հեղից. գործեցից. — բացայց. հեղայց. գործեցայց: Կը զարտուղի՝ Եդու, ապառ. դից:

Ապառնի կր. 2դ դէմք ջիր՝ միանգամայն կր. հրամայական է: Ասկէ եղ. հրամայականն ելած է՝ Աղաչջի՛ր. տեսջի՛ր:

### 2.

Մանր զարտուղութիւններ: — Ա. Ուցանեմ մասնիկաւ բայերուն որ Հատուցանեմին պէս կը խոնարհին, հրամայականը կ'ըլլայ ո:

Հատուցանեմ, կոր. հատուցի. հրմ. հատուցո. անց. հատուցեալ: (Տես աշխարհաբար՝ 235:)

Numérisé par CDMF (FF) - 2011

Անցողականը (232.) ածականաբար գործածուած բայով կ'ըլլայ. Ցած ըմպել. հառաչանել. տուր ինձ գինել. (238.)

Բ. Նկատմամբ Ն, Նն, եւ Ն գիր ունեցող կրաւորակերպ չէզոքներ:

Երկրորդ լծ. Ն, Նն յաւելուած ունեցող կրաւորակերպներըը, եւ Գ. լծ. Ն ունեցողներէն ոմանք՝ սահմ. կատ. եայ կ'ըլլան. որմէ արդ. եայց, իցես, եւ հրամ. յք. երուք այսպէս.

Հանգ-չիմ, հանգ-եայ. եայց, իցես, իցէ. իր, երուք.
Երկ-նչիմ, երկ-եայ. եայց, իցես. երկ-իր, երուք.
Մած-նում, մած-եայ. եայց, իցես. մած-իր, արուք:

Ասոնցմէ կը զատուելին դարձեալ՝

1. Զարթնում, Մոռանամ եւ Մտանեմ, եայ. — հրամ. յք. զարթի՛ք, մոռացի՛ք, մտի՛ք, կամ մտէքուք:
2. Քաղցնում, ցեայ. — անց. քաղց-եալ, (փոխ. -ուա-ցեալ:).

Ասոնց ամենուն անցեալն իրենց ներգործականէն առնուած է. Հանգուցեալ. մաշուցեալ. զարթուցեալ. (հանգուցանեմ, եւայլն ներգործականներէն)

Իսկ ամենեւին զատուածութիւն չունին անոնք՝ որոց կատ. այ է. ինչպէս՝
Զրօսնում, զրօսայ, սայց, սցիս. սիր. սարուք. սեալ:
Ջեռնում, ռայ, ռայց. ռիր. ռարուք. ռեալ. եւայլն.
— Միայն Երդնում՝ առօք է. երդուայ. երդուայց: դուիցես. դուիր. դուարուք. դուեալ:

Անկանիմ բայը հրամ. յք. կ'ըլլայ՝ անկէրուք (փոխ. արուք.) իսկ Աճանեմ՝ կ'ըլլայ աճարուք եւ աճէրուք:

Հարկանեմ ներգործ. բային կ յաւելուածն՝ անկանոն ժամանակներուն մէջ կը կորսուի. Հարի, հարից, հա՛ր. — Հարայ, Հարայց, Հարեալ:

3.

Խառն խոնարհմունք: — Առնեմ, գիտեմ, կարեմ եւ մարթեմ Բ լծորդ. բայերը՝ միայն անկանոն ժամանակներուն մէջ Ա լծորդ. տակ են.

Արարի, արարեր, արար. արարաք: Արարից, արասցես, ցէ: Արա՛, արարջիր, արարէք: Արարեալ: Կրաւորական՝ Արարայ. արարայց, արարիս, եւայլն:

Numérisé par CDMF (FF) - 2011

Նոյնպէս՝ Գիտացի, ացիր, ա, ացեալ։ Կարացի, մարթացի հրմ. չունին։ — Ընդ. ներկայ՝ Ատող, գիտող, կարող։

Ածել, բերել, հանել, նստիլ պարզ բայերուն անկանոն ժամանակներն ալ (հրամայականին պէս) Գ լծ. տակ են.

Ածի, ածեր։ Ածից, ածցես։ Ա՛ծ, ածջի՛ր։ Ածեալ։
Բերի, բերեր։ Բերից, բերցես։ Բե՛ր, բերջի՛ր։ Բերեալ։
Հանի, հաներ։ Հանից, հանցես։ Հա՛ն, հանջի՛ր։ Հանեալ։
Նստայ, տար։ Նստայց, ցիս։ Նի՛ստ, նստջի՛ք։ Նստեալ։

Ընկենուլ բայն անկանոն ժամանակներուն մէջ Բ լծ. տակ է. — կտր. ընկեցի, ընկեցեր, ընկեց. ապռ. ընկեցից, ցես. հրմ. ընկե՛ց, ընկեցէ՛ք. անց. ընկեցեալ։ Կրաւորական՝ Ընկեցայ. ընկեցայց, եւայլն։

Կամ եւ Լամ, հրամայական՝ կա՛ց, լա՛ց։ Նոյնպէս Կեամ, հրմ. կեա՛ց. — կտր. կեցի. ապռ. կեցից. դերբ. կեալ. կեցեալ. կելոց. իսկ ստոր. կեցցեմ (փխկ. կեայցեմ)։

Շատ կրաւորակերպ չէզոքներուն եւ հասարակ բայերուն (տես Թիւ 5.) հրամայականը ներգործակերպ է եզակիի մէջ.

Նստիմ, նստայ, նի՛ստ.
Տանիմ, տարայ, տա՛ր. յգ. տարջի՛ք.
Դառնամ, դարձայ, դա՛րձ.
Ընթանամ, ացայ, ընթա՛.
Իմանամ, ցայ, իմա՛.
Մոռանամ, ցայ, մոռա՛*.
Որսամ, ցայ, որսա՛.
Ողորմիմ, ողորմեա՛ եւ մեա՛ց.
Համարիմ, րեա՛ եւ րեա՛ց։

Նոյնպէս ջանա՛. գթա՛. փութա՛. յագա՛. ցնծա՛ եւ յգ. ցնծացէ՛ք**։ Բայց յոգնակիները կրաւորակերպ են. Ընթացարո՛ւք. իմացարո՛ւք. ողորմեցարո՛ւք, եւայլն։

* Այսինքն՝ ներգործականի նշանակութեամբ։
** Ցնծամ կրաւորակերպ բային ապռ. Յգ. դէմքերն ալ ներգործակերպ են. ցնծասցի, ցնծասցե՛ն։

## 4.

Երկին ձեւով խոնարհումներ։ — Կան բայեր որոնք կամ ամբողջ կամ ըստ մասին երկու կերպ կը խոնարհին.

Ծածկեմ, եցի. եւ ծածկիմ, եցայ. Դատեմ, եցայ. եւ դատիմ, եցի.
Բնակեմ, եցի. բնակիմ, եցայ. Սխալեմ. եցի. սխալիմ, եցայ։

Numérisé par CDMF (FF) - 2011

Աը գտնուի չէ՛ր հրամայականն ալ կանոնաւորներուն պէս ձեւացած. Մոռնեցի՛ր. մոռնեցէ՛ք. լռնեցէ՛ք. առնեցի՛ր. բազմեցի՛ր. (փոխ. մոռցի՛ր. մոռցէ՛ք. լռեցէ՛ք. կերիցի՛ր. բազմեցի՛ր.)— Ընդ. ներկայ՝ Տեսանող եւ տեսող.) Հարցանող (եւ ոչ՝ հարցող.) Բայց անամ եւ ենամ՝ միշտ կ՚ըլլան ացող, եցող. իսկ ն. նչ եկամուտ դրոշներն ընդունելութիւն չունին։

Ասոր հակառակ կայ նաեւ (կանոնաւոր ժամանակներէն՝) անկանոն ձեւով առորդա. Ելթէ մեղէցէք, երթէցէք, լուէցէք. (փոխ. մեղանչեցէք, երթայցէք.)

Կրաւոր. անկար. -էալ փոխ. -եր կայ քիչ տեղ. ճանաչէալ. կոչէալ. — Այսպէս նաեւ կրաւ. աներեւ. էլ՝ որ ընտիր չէ. Գործէլ. բառնէլ. բանէլ. հեղանէլ.

Ներգործ. կար. մը. 2. դէմք՝ լաւագոյն է -եր քան -էր. բայց կրաւ. ունի -այ եւ -որատ, կրկին ձեւով։ Միայն թէ ամէն բայ չ՚ունենար -որատ ձեւով կար. մանաւանդ զարտուղի բայերը։

Համբերել՝ թէ Գ եւ թէ Բ լծորդ. ձեւով կը խոնարհի անկանոն ժամանակներուն մէջ. կար. Համբերի, համբեր, եւ համբերեցի, համբերեցաւ. այլ. համբերեց, եւ համբերեցաւ. հրմ. համբե՛ր, եւ համբերէ՛։

5.

Պակասաւոր խոնարհմունք։ — Մինչեւ հիմա տեսանք որ ամէն բայ ամէն ժամանակ չ՚ունենար։ Անոնցմէ զատ՝

Ա. Բուն Պակասաւոր բայերն (219.) են՝ 1. որ միայն կանոնաւոր ժամանակներն ունին, եւ 2. որ միայն անկանոն ժամանակները, եւ դարձեալ 3. որոնց միայն քանի մը դէմքը գործածական է.

1. Սհմ. Ներկ. Պարտիմ. պարտիս, տի. տիմք, իք, ին.
Անկ. Պարտէի, տէիր, տէր. տէաք, էիք, էին.
Ստոր. Ներկ. Պարտիցիմ, ցիս, ցի, ցիմք, ցիք, ին. — չէոք եմ. կամ փոխէ անձն։
2. Սհմ. աղա. —, գոգցես, գոգցէ. ցուք, ջիք, ցեն.
Հրամայակ. Գոգ, գոգջի՛ր. գոգէ՛ք. — չէ։
3. Գոյ. գոն։ Գոյր. գոյին։ Գուցէ. ցեն։ (Գոլ.) — չկայ։
4. Կայ. կան։ Կայր. կային։ Կայցէ. ցեն։ (Կալ.) — չկայ։

Numérisé par CDMF (FF) - 2011

Զատ է կամ, կաս, կայ՝ ամբողջ չեզոք բայն որ կենալ, կայնիլ կը նշանակէ։ — Այս երկու բայերով կը լինուին՝ Գոյ իմ. կայ իմ. չկայ իմ. (ունիմ. չունիմ։)

Բ. Գրաբարի մէջ Հասարակ ձայն բառաձները, միայն կրաւ. ձեւով՝ թէ կրաւորականի եւ թէ ներգործականի տեղ կ'անցնին։ Այսպէս են՝ Համարիմ, համարեցայ. (համարիլ եւ համարուիլ, կամ համրել եւ համրուիլ.) Մոռացայ, (մոռցաւ եւ մոռցուեցաւ.) Գողացայ, (գողնան եւ գողցուին.) Ընթեռնուին, (կը կարդային եւ կը կարդացուէին.) եւայլն։

Ա եւ Գ լծ. Հասարակ բայերուն կրաւորականը սովորաբար լինիմ էականով կը ձեւանայ. Մոռացեալ լինիմ, կամ ի մոռացօնս լինիմ. մոռացօնք եղեն։

Կամիմ, եցայ, եաց. ներգործական նշանակութեամբ է, եւ կրաւորական չունի։ Գերբայ՝ Կամել. կամեցող. կամեցեալ։

Հասարակ են բառ իմիք նաեւ Գ լծ. կանոնաւոր ժամանակներն որ փակագծիւ որոշեցինք, (երես 225.) Թողացան մեղք. (թողուին.) Մին առնոցու. (առնուի.) Առնլոց է քաղաքն. (պիտի առնուի.) — կամ կրաւորականէ չեզոք (474.) Ծով ոչ լնու. գինին հեղաւ. Զեղան հնձանք. եւայլն։ Իսկ Ա լծ. մէջ չէզոքներու յատուկ են այդ կրաւորական ժամանակները. Բանան դրունք. (կը բացուին.) Երկիր որ ոչ բանաս. (չես թրջիր.) Ընդ բանալ դրանցն։ Բանայցէն* աչք ձեր։

* Այցէն ձեւը կրաւորականի յատուկ է. Բանայցէ. բացանայցէ։

Գ. Դիմազուրկ կամ Միադիմի բայերը. (222։) Սահմ. Ցաւէ (ինձ, քեզ.) Ցաւէր։ Ցաւեաց։ Ցաւեսցէ։ Ստոր. Ցաւիցէ։ Գերբայ. Ցաւել. ցաւեալ. — կը ցաւիմ։

Միայն կանոնաւոր ժամանակներն ունի՝

Մարթի։ Մարթէր։ Մարթիցի։ Մարթել. — կրնալի է։

Դարձեալ՝ Արժան է. ի դէպ է. բաւ է. հարկ է. պարտ էր. անկ իցէ. դէպ լինի, լինէր, եւայլն։

6.

Բացասական բայեր՝ —. Բային սկիզբը ոչ կամ

Numérisé par CDMF (FF) - 2011

ւ գտնելով։ Ու տեսի կամ չտեսի. ու եղեւ կամ չեղեւ։ Ու գոյին կամ չգոյին. — ու գոյ. չկայ։

Այս վերջիններուս տեղ շատ անգամ կ՚ըսուի աշխ. ներկ. եզ. չէ, Չէ ուրեք. (այսինքն ոչ գոյ։) Չէ իմ ընկեր. (չունիմ.) չէ մեր տեսեալ. (տեսած չունինք։)

Իսկ արգելական ունին հրամայականէն զատ՝ ապառնին, ստորդս. եւ աներեւոյթը. Մի՛ տեսից. մի՛ տեսցէ. մի՛ տեսցեն. մի՛ լինել. մի՛ վաղվաղել, եւայլն։

---

# ԱՆՓՈՓՈԽ ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ

Շատ անփոփոխ մասունք-բանի զանց կ՚առնենք հոս կրկնել՝ որոնք աշխարհաբարը գրաբարէ փոխառեալ կը գործածէ, եւ որ Քերականութեան Ա Մասին մէջ յիշուեցան. (Գլ. Ե. Զ. Է եւ Ը։)

---

## Մակբայ։

Նախադասելիքը տես Ա մասին մէջ՝ երես 73։

Արդ գիտացի. (հիմայ.)
Նախ զխոտն եւ ապա զցորեանն. (յառաջ, ետքը.)
Ե՞րբ եկիր այսր. (երբ.)
Մինչ (դեռ) զարմացեալ էին. (երբ դեռ.)
Դեռ եւս. (դեռ նոր.)
Յաւէտ եւ հանապազ. (միշտ, ամէն օր.) (նոյնս.)
Վաղ մեռաւ. (շուտ. կա-
Ոչ կամիմ. Մի՛ խնդրեր.
Ոչ եւս. Մի՛ եւս. (այլ չէ. այլ մի.) [չէ վախճան.)
Չեւ է կատարած. (դեռ
Երէկ այնպէս. (երէկ, իրաւ.)
Կարի առաքելաց. (շատ.)
Խնդացին յոյժ. (շատ.)
Հետէ ընթանայցեն. (ասոր.)
Արդէն իսկ. (հիմակուընէ.)

Մտին ի ներքս. (ներս.) արտաք.
Կացին ի ներքս. (ներսը.) ներքոյ.
Ելին արտաքս. (դուրս.) արտա.
Կացին արտաքոյ. (դուրսը.) ներքոյ. [սէն դրսէն.)
Ներքոյ եւ արտաքոյ. (ներ-
Յետոյ զղջացաւ. (ետքը.)
Յետոյ. (ետեւէն, կռնըկէն.)
Հուսկ յետոյ. (ամէնէն ետքը.)
Տակաւին ո՞չ իմանայք. (դեռ.)
Ի բաց կացին. | (մէկդի.
Կայր մեկուսի. | զատ.)
(Ի) զուր վաստակեցի. | (փուճ
Ընդ վայր ջանացայ. | տեղը. վայրապար.)
Թերեւս ամաչեսցեն. (գուցէ.)

Numérisé par CDMF (FF) - 2011

Մասնական անուններէ ածանցեալներ.

Ո՞ւր իցէ նա. Ներգ. (ո՞ւր է.) Յո՞, Յո՞ երթայցես. տրակ.
Ուր եւն երթամ. տրակ.) (ո՞ւր երթաս.)
ուր որ.) [(տեղ մը.) Ուստի՞ ճանաչես զիս.
Եթէ ուրեք. Ոչ ուրեք. Եւ այլ ուստեք. (ուրիշ
Զի՞ կոչեցեր զիս. (ինչո՞ւ.) տեղէ մ'ալ.)
Զիա՞րդ. (ինչպէս.) [չափ.) Ընդէ՞ր, Հի՞մ. | (ինչո՞ւ.
Քանի՞ գեղեցկացար. (ինչ- Զմէ՞, առ իմէ՞. | եր. 218.)

Դերանուանական մակբայներ. 3. դէմքի համեմատ:

| 1. | 2. | 3. |
|---|---|---|
| Աստ. | Այդր. | Անդ. Ներգ. (հոս*. [illegible].) |
| Այսր. | Այդր. | Անդր. տրակ. (հոս. [illegible].) |
| Աստի. | Այտի. | Անտի. բաց. (հոսկէ, աստեղէն.) |
| Աստէն. | — | Անդէն.** Ներգ. (հոն նոյն տեղէն.) |
| Այսրէն. | Այդրէն. | Անդրէն. տրակ. (դարձեալ հոն.) |
| Աստուստ. | — | Անդուստ. բաց. (անկէ.) |
| Այսպէս. | Այդպէս. | Այնպէս. |
| Աւասիկ. | Աւադիկ. | Աւանիկ. (ահա.) |
| Այսօր. | — | Այն օր. |
| Այժմ. | — | Յայնժամ. (հիմայ. ան ատեն.) |
| (Ես)ինձէն. | Քեզէն. | Իւրովի. (ինք իրենս. ինք իր- |
| (Մեք)մեզէն. | Ձեզէն. | Ինքնին.*** մէ, եւայլն:) |

Որպէս. (ինչպէս.) Սոյնպէս. Դոյնպէս. Նոյնպէս. Դոյն-չափ. Այսչափ. Նոյնգունակ, եւայլն:

* Այս տեղս միայն առաջին դէմքի նշանակութիւնը կը դնենք, որմէ 2դ եւ 3դ դէմքերուն ալ կ'իմացուի. զորօրինակ՝ այդր, այդ տեղը. անդ, այնտեղէն, եւայլն:

** Անդէն կը նշանակէ նաեւ՝ շուտ մը. եւ Անդրէն՝ դարձեալ, նորէն:

*** Ինքնին երեք դէմքի ալ կրնայ գործածուիլ:

Կրկնաւոր մակբայներ.

Ամի ամի. | (ամէն տա- | Բացէ ի բաց.
Ամ յամէ. | րի.) | Տանէ ի տուն. Տուն ի տանէ.
Ամ ըստ ամէ. | | (տունէ տուն.) [լուսի.)
Օր ըստ օրէ. (ամէն օր.) Ծայր ի ծայր. (գլխէ գը-

Numérisé par CDMF (FF) - 2011

Առ սակաւ սակաւ. (կամաց կամաց.)

Իսկ եւ իսկ.
Մերձ ընդ մերձ.
Հուպ ընդ հուպ. } (անմիջապէս.)

Կարճիկարճոյ. (համառօտ.)

Խառն ի խուռն. (խառնակ, անորոշ կերպով.)

Հազիւ հազ. (հազիւ.)

Եւս քան զեւս. (միշտ աւելի.)

Մակբայակերպներ.

Սակաւիկ մի. Փոքր մի.

Գամ մի. (մէյ մը.)

Փոքր ի շատէ. (քիչ շատ.)

Լրիւ իւրով. (բովանդակ.)

Ընդ ո՞ր. (ի՞նչ ճամբով.)

Սրտի մտօք. (սիրով։)

Գուցէ լուիցեն. (չըլլայ թէ.)

Բերան ի բերան. (բերնէ բերան.)

Է զի, Է ուրեք զի. (երբեմն.)

Երբեմն մի եւ նոյն մակբայը քովէ քով կը կըրկնուի, որ վարը մասանց-բանի Կրկնութեան մէջ կը տեսնենք. (երես 247։)

---

## Նախդիր եւ Նախադրութիւն:

Նախդիրներն են՝ զ, ի, յ, ց. եւ երբեմն առ, ընդ, ըստ։

Նախդիրն ասով կը զանազանի նախադրութենէ՝ որ առաջինը հոլովին նշանակութիւնը կը փոխէ, կամ հոլով կը շինէ, (Հոլովակերտ.) իսկ երկրորդը հոլով կ'առնու եւ նշանակութիւն մը կ'աւելցընէ բառին վրայ, (Հոլովառու.) զորօրինակ. Ասեն ցնա, (անոր.) Ասեն վասն նորա. (անոր համար։) Այս պատճառաւ՝ Առ եւ ընդ երբեմն նախդիր են եւ երբեմն նախադրութիւն։

Նախդիրներն իրենց անուան միշտ նախադաս են։ Նախադրութիւններէն ոմանք նախադաս են եւ ոմանք յետադաս։ Կան ալ որ թէ առաջ թէ ետ կը դրուին։

### 1. Հայցական խնդրով նախադրութիւններ։

Առ ջուրս. (ջրերու քով.)

Առ իս.* (քովս.)

Առ նախանձ. (համար.)

Առ տեղ. Առ հաղալ.

Ընդ իս*. (հետս.)

Ընդ իշխանս. (հետ.)

Ընդ իս եւ ընդ նա. (մէջերնիս.)

Ընդ քաղաքն. (մէջէն.)

Ըստ քաղաքն. (անդին.)

Ըստ գործս իւր.
Ըստ անձեղլուսնին. } (համեմատ.)

Numérisé par CDMF (FF) - 2011

| | |
|---|---|
| Նախդրիւ հայցական. | Մինչ— ի ծով. Մինչ— ցերբ. |

Առ— ի կեանս. Առ— ի խրատու. Ք—ն զթշնամիսն իմ. (աւելի.)
Արագ— առ ի լսել. (լսելու.) Իբրև— զհուր. (կրակի պէս.)
Մինչ— առ նա. Որպէս զաղաւնի. (պէս.)

* Առ, է, ց, ընդ, ըստ բառերուն քով եւ դերանունը միշտ հայց. հոլով կը դրուի, փխկ. տրականի:

Առ, (քովը.) ընդ, (հետը) եզակիի մէջ տրական կ'ուզեն. եւ յոգն. մէջ հայցական: Այսպէս է նաեւ ներգոյականին է նախդիրը:

2. Սեռական խնդրով.

| | |
|---|---|
| Առ— նախանձու. (համար.) | Առանց սրոյ եւ գաւազանի. |
| Ընդ իմ. (իմ տեղս.) | Ցե— սպարիկ. (տակը.) |
| Վասն մեր. (մեզի համար.) | Զօրէն տղայոց. (պէս.) |
| Առաջի ձեր / Ձեր առաջի — դատեցայ. (առջեւը.) | Ի վերայ մեր. / Ի մեր վերայ. — (վրայ.) |

Հոլովուած գոյականներ ալ իրենց յատկացուցչին քովը նախադրութիւն եղած են. Յաղագս առնելոյ. յիր աղագս. քո աղագս. (քու պատճառաւդ:) Ի ձեր աղագս. (ձեր պատճառաւ:) Ի մէջ լերանց. ի մէջ ձեռբում. (մէջը.) ի մէջոյ վիմաց. (մէջէն:) Զհետ նորա. Զկնի մեր. կամ՝ Զնորա զհետ. Զմեր կնի. (ետեւէն:)

3. Տրական խնդրով.

| | |
|---|---|
| Առ նմա. Առ դրան. (քով.) | Լո— է լո— ժողովրդեանն. |
| Ընդ ում. (որու հետ.) | Ինձ լո— է լո—. (լսեցնելով.) |
| Ըստ հրամանի. (համեմատ.) | Մինչև անդրէն դառնալոյ. |

4. Բացառական խնդր. (նախդրիւ եւ աննախդիր:)

| | |
|---|---|
| Առ օրինակէ. (օրինակ ըլլալու համար.) | Առ ի քէն. (քու քովէդ, կողմանէդ. քու քովդ.) |
| Առ ականէ (նորա). (ակնածութեան համար:) | Առ ի ծառոյն. (ծառին քովէն.) |
| Առ յիշատակէ. | Ընդ աջմէ. (աջ դին, դիէն.) |
| Առ ի չգոյէ. (չըլլալուն համար.) | Ըստ նմանէ, Ըստ նոցանէ. (ետեւէն, յաջորդելով. |
| Առ ի քաւելոյ զմեղս. | Ըստ հարաւոյ. (կողմանէ.) |

Numérisé par CDMF (FF) - 2011

Ի սկզբանէ հետէ. (ի վեր.) Ցայսմ հետէ. ՅԱդամայ Բաց ի քէն. (քեզմէ ի զատ.) հետէ. (ի վեր.)

5. Գործիական խնդրով.

Առ ճանապարհաւ. Առ լերամբն. } (վրանները. քովերը. քովէն.)
Փոքր է առ Նովաւ. (քովը, բաղդատութեամբ.)
Առ Թարայիւ. Առ աշտարակաւն. (օրովը. ժամանակները.)
Հնդիւ չափ. Միջովք չափ.
Ընդ Թզենեաւ. (տակը.)
Հանդերձ մարբն. Նովաւ հանդերձ. } (մէկտեղ.)

---

## Շաղկապ:

Գործածական շաղկապներն են՝

Գիտեմ եւ ես. (ես ալ.)
Եւ ինքն եկն. (ինքն ալ.)
Մեզէն իսկ լուաք.
Իսկ զի՞ մկրտես. (հապա.)
Մի՛ յաղթիր այլ յաղթեա.
Ապա (ուրեմն) ազատ են.

Նոյնս ոչ բարի է. Լուաք ոչ ասէին. } (ոչ.)
Զի, (որովհետեւ) գիտացից.
Զի, քանզի. (վասնզի.)
Թէպէտ ի չարիս թէպէտ ի բարիս. (Թէ՛ չարի եւ թէ՛ բարւոյ:)

---

## Միջարկութիւն:

Ո՛, ո՜, փախերուք.
Ա՛, ա՜, տէր.
Օ՜, եկայք. Օ՜, արիք.
Աղէ դու. Աղէ աստ.

Վա՜յ. Վա՜յ ինձ.
Եղո՜ւկ դու. (վա՜յ քեզ.)
Ո՜ սքանչելիք.
Ո՜վ մարդասիրութեանն:

Օրինակներէս կը տեսնես որ միջարկութիւններէն ոմանք կրնան հոլով մ'ալ խնդիր առնուլ:

---

## Անփոփոխ մասանց-բանի վրայ գիտելիք:

1. Միեւնոյն անփոփոխ մասն-բանի հոլով առած՝ նախադրութիւն է, իսկ բայի վրայ՝ մակբայ է. ինչպէս. Շուրջ զնովաւ. եւ Շուրջ գալ. — Անկէ զատ

2. Կայ բուն մակբայներէն՝ որ խնդիր առած եւ նախադրութիւն եղած է. ինչպէս. Ցերեկ խո-



Numérisé par CDMF (FF) - 2011

բանին. յետոյ նորա կայր. ի վերոյ երկնից. յայնկոյս գետոյն. արտաքոյ այգւոյն. առաջոյ նորա. մինչեւ յամբոխէն. եւայլն:

3. Կայ նախադրութիւն՝ որուն խնդիրը զօրութեամբ դրուած եւ ինք մակբայ եղած է. զորօրինակ. Ընթացաւ ընդ առաջ. (այսինքն՝ որդւոյն.) ի վերոյ հասանել. (այսինքն՝ իրայն.) երթայր առաջի կամ' գնէ. (այսինքն՝ նոցա:)

4. Ուր, ուրէք, ուստէք, երբեմն մակբայներն ածականով մ'ալ կը բանին. Այլ ուր կամ այլուր. այլ ուրէք, (ուրիշ տեղ.) ամենայն ուրէք. (ամէն տեղ.) յո՞ ուրէք, (ո՞ւր.) այլ ուստէք. (ուրիշ տեղէ մը.) եւ ոչ ուստէք, եւայլն: Իսկ անգամ թուականով՝ քանիցս անգամ. երկիցս անգամ:

5. Կան բաղդատական մակբայներ ալ. Վաղագոյն. աւելագոյն. յառաջագոյն, եւայլն:

---

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Անուն-բայի միշտ ուղղական է: Բայց սովորաբար սեռական կը դրուի՝ երբ բայն անցեալ է. Նորա առեալ զպատառն՝ ել արտաքս. (անիկայ պատառն առած՝ դուրս ելաւ:

Տրական կը դրուի անուն-բային՝ երբ բայն աներեւոյթ* է. Ոչ կամիմք թագաւորել դմա: Լսել քեզ զձայն քո: (Որ անիկա թագաւոր ըլլայ. որ ես լսեմ:)

* Աներեւութին ներգործականն ալ կրնայ տրական առնուլ. Յանցանել քեզ ընդ անապատ: ի կալ նմա յաղօթս: (Փոխ. յանցանել քեզ. ի կալ նորա:)

Անեզական անուն-բային, թէեւ նշանակութիւնն եզակի ըլլայ, յոգնակի բայ կ'ուզէ: Աննման են այլոց կեանք նորա: Հաւատք քո կեցուցին զքեզ:

Ածական, Յատկացուցիչ, Բացայայտիչ՝ ամէնն ալ կրնան գլխաւոր գոյականէն թէ յառաջ եւ թէ ետքը դրուիլ*. բայց նախդիրը միշտ նախընթացը կ'առնու. այսպէս.

Numérisé par CDMF (FF) - 2011

Ածակ. Ի սրբոյ Հոգւոյն. — Ի Հոգւոյն սրբոյ։
Ցոյց. Զաշխարհն Պարսից. — ԶՊարսից աշխարհն։
Բղայս. Առ արքայ Արտաշէս. — Առ Արտաշէս արքայ։

* Յարաբերական եւ հարցական յառկացուցիչք միշտ նախադաս են. Զորոյ զգիրսն հրաման ետ այրել. Զո՞յր պատկեր եւ գիր ունի (դահեկանդ)։

Առնից համաձայնութեան ընդհանուր կանոնը հետեւեալն է։

Ա. Նախադաս ածականը սովորաբար անհոլով կը մնայ. իսկ յետադասը գրեթէ միշտ կը հոլովի. այսպէս.

| | Նախադաս. | Յետադաս. |
|---|---|---|
| Եզ. Ուղ. | Վայրենի ծառ. | Ծառ վայրենի. |
| Հայց. | զՎայրենի ծառ. | զԾառ վայրենի. |
| Ս. Տ. | Վայրենի ծառոյ. | Ծառոյ վայրենւոյ. |
| Բցռ. | ի Վայրենի ծառոյ. | ի Ծառոյ վայրենւոյ. |
| Գրծ. | Վայրենի ծառով. | Ծառով վայրենեաւ. |
| Ներգ. | ի Վայրենի ծառ. | ի Ծառ վայրենի*. |
| Յգ. Ուղ. | Վայրենի ծառք. | Ծառք վայրենիք. |
| Հայց. | զՎայրենի ծառս. | զԾառս վայրենիս. |
| Ս. Տ. | Վայրենի ծառոց. | Ծառոց վայրենեաց. |
| Բցռ. | ի Վայրենի ծառոց. | ի Ծառոց վայրենեաց. |
| Գրծ. | Վայրենի ծառովք. | Ծառովք վայրենեօք. |
| Ներգ. | ի Վայրենի ծառս. | ի Ծառս վայրենիս։ |

* Անհոլով ներգոյականին ածականն այլ անհոլով կը մնայ. Ի ծառ վայրենի, (եւ ոչ՝ ի ծառ վայրենւոյ։)

Հասարակօրէն միավանկ նախադաս ածականները մէկտեղ կը հոլովին. Սրբոյ քաղաքին. Մեծին Արտաշիրայ. Այլոյ հնձանի։ Իսկ զարտուղութիւն է՝ յետադաս անհոլով. Հրամանաւ արքունի. Ի բանս քաղցրս։

Բ. Բացայայտիչն եթէ մարդու անուն է՝ մէկտեղ կը հոլովի. Թադէի առաքելոյ. Նոյ մարդոյ։ Եթէ տեղւոյ անուն է՝ անհոլով կը մնայ, երբ նախադաս է. իսկ յետադասը միշտ մէկտեղ կը հոլովի. զորօրինակ. Եփրատ գետոյ։ — Գետոյն Նեղոսի։

---



Numérisé par CDMF (FF) - 2011

# ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

## Բայերու խնդիր:

Քանի մը ներգծ. բայ՝ խնդիր-սեռի տրական հոլով կ'առնուն. Յաղթեցի նոցա. Լուր ինձ. Պաշտպանեցէ ինձ. Զգայ ցրտոյ: Տանիցի վշտաց. (համբերէ:)

Իսկ խնդիր-բնութեան՝ գլխաւորաբար ներգոյական, պատճառական եւ պարառական հոլովներու մէջ տարբեր է աշխարհաբարէն:

Ներգոյական խնդիր-բնութեան կ'առնուն քանի մը բայեր՝ որ աշխարհաբար տրական կ'ուզեն. Դնել ի բանտի. ի գետնի. Եդին ի գերեզմանի. Եդ ի մտի իւրում. Հեծեալ ի ջորւոջ իւրում. Հարին ի նիզակի. Հարեալ յեղեգան. (եղեգի վրայ անցուցած:)

Պատճառական խնդիր-բնութեան կ'առնուն՝ Ողջիմ (բռնել.) եւ կախեմ. (որ աշխարհաբար բացառ. կ'ուզեն.) Կալաւ զլեզուէ նորա. Զձեռանէ կալեալ. Կախեցին զփայտէ. զպարանոց. (լեզուէն, ձեռքէն, եւայլն:)

Պարառական խնդիր կ'առնուն Ծիծաղիմ, այպն առնեմ, (ծաղրել.) անցանեմ, (չբռնել, չպահել, դրժել.) զանցանեմ, զանց առնեմ, (թողուլ անցնիլ.) այսպէս. Մի ծիծաղեսցին զինեւ: Այպն արարեալ զնովաւ. (երբեմն հայց. զնա:) Անցին զուխտիւ, զերդմամբ: Անցանել զօրինօք, զբանիւք:

Ուղղական եւ հայցական խնդիր-բնութեան՝ երբեմն ի նախդրիւ կը դրուի. Եղիցուք մեք ձեզ ի ծառայս. (փոխ. ծառայք:) Արարից զքեզ յազգ մեծ եւ ի բազում: Յոչինչ համարիմ: Եղեն յոչինչ. (ոչինչ եղան:)

Գնել, վաճառել, եւայլն. սեռական հոլով խնդիր-բնութեան կ'առնուն. Արծաթոյ վաճառել. (սակով.) Վաճառեցին տասն դահեկանի: Ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր:

---

## Դերբայներու խնդիր:

Ներգործ. բայերու ընդունելութ. ներկային՝ սեռական հոլով կը դրուի. — նոյնպէս նոյն ոյժն ունե-

Numérisé par CDMF (FF) - 2011

ցող բայանուններուն եւ ածականներուն։ Բաղձեալ կամեցող։ Առաջնորդ ուներեալն Յիսուսի. (զՅիսուս բանողներուն։) Անեղծք օրէնացն. (երես 226։) Համատիչն բնութեանց։

Կրաւորական, չեզոք բայերու դերբայներն եւ անոնց նոյնանշաններն իրենց բնական խնդիրը կը պահեն՝ նոյն նմանող լեցուք. Հարեալք ի կուսէ։ Լցեալ Հոգւով։ Երկիւղած յԱստուծոյ։ Շարժուն է հողմոյ։ Կոխան յոտից։ Զհոգւոյն հայհոյութիւն. (պատմ. հոլով։) Յետ դարձին ի Բաբելոնէ։

## Ածական անուանց խնդիր։

Քանի մ'ածական անուանց խնդրառութիւնը գրաբարի մէջ տարբեր է աշխարհաբարէն. (տես երես 106,) եւ կամ երկու կերպ։

| | |
|---|---|
| Բաւական ամենայնի. | Կարօտ օգնականութեան. |
| Բաւական ի կերակուր. | Կարօտ յօգնականութենէ. |
| Առ ամենայն ինչ բաւական. | Կարօտ հացիւ եւ ջրով. |
| Եղելոցն խելամուտ. | Արեամբ ծարաւի. |
| Նուաղ ի գիտութենէ. (գիտութեան կարօտ.) | Արագ առ ի լսել. |
| | Ծանր առ ի բարկանալ։ |

Բաղդատական ածականը միշտ բուն նախադրութեամբ խնդիր կ'առնու. Փղձրագոյն քան զամենայն սերմանիս։ Մեծ քան զամենայն բանջար։ (383։)

Գերադրական աստիճան՝ գրաբարի մէջ եւս, քաջ, յոյժ, հաւ եւայլն մակբայներով կը ձեւանայ։

Թուական եւ մասնական անուանք յոգնակի սեռ. խնդիր կ'առնուն. Երկուք ի նոցանէ։ Ոմանք ի դպրացն։ (Տես 388, 389։)

Numérisé par CDMF (FF) - 2011

# ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ

## *Անուան թիւն ու հոլովը:*

*Անուն մը շատ անգամ եզակի կը մնայ յոգնակի մտքով. մանաւանդ թուական անուանց յետադաս դրականը. Քսան դահեկանէն, ի հնգետասան տարւոյ։*

Բայց կ'ըսուի յոգնակի՝ Յետ երկոտասան ամաց. Քառասուն աւուրց. իսկ յօդով՝ շատ անգամ եզակի կը մնայ. Յետ քառասուն աւուրն. Եւանց եւթն օրն. — որուն որոշ կանոն չկայ. միայն անեզական (երկու, երեք, չորք) թուականներուն առջեւն հարկաւ յոգնակի դրուելու է։

*Չափի անունները գլխաւոր բառին քով այլեւայլ հոլով կը դրուին. Հատանել փայտ մի չափն կանգուն. Խորութիւն ծովուն նշան էր: Ոսկի վահան է հազար քանքարէ. (կշիռք:) — Բաժակ մի ջուր. եւ կը հոլովի՝ Բաժակաւ միով ջրով: (Աշխարհաբարը տես 415, Բ:)*

*Ժամանակի որոշման համար՝ երբ հարցման կը պատասխանէ սովորաբար ներգոյական, երբեմն ալ հայցական: Յաւուրն եւթներորդի մի գործեսցես:*

*Որչափ ատեն եւ քանի անգամ հարցմանց՝ հայցական. Զվեց օր գործեսցես: Թագաւորեաց ամս տասն: — Եւթն անգամ յաւուր:*

*Սեռական-ուղղական եւ սեռական-տրական յաճախ է գրաբար. (169, 404.) որ բառ առեղայն նախադիր ալ կ'առնուն. Աստուծոյքն. ընոցայն.* զհօրոյն. յԱբրահամուն: Իւր գործքն չար էին, եւ եղբօրն՝ արդարք: Տուք զկայսերն՝ կայսեր: Բանի ղարղատ մեք ոչ կերաք. (մեկուսի:) — Վահան մի բեւր քանքարոյ. (արժէք:) Այրի ամաց ութսուն եւ չորից:*

* Դերանուններն վերջահոլով ալ ունին. Նորայոցն. նոցայոցն:

*Անոր համար բայով ալ կ'ըսուի՝ Եղեւ երկոտասան ամաց: Մեռաւ ամաց հարիւր եւ տասնից:*

Numérisé par CDMF (FF) - 2011

## Յօդերու գործածութիւնը:

Ս, դ, ն դիմորոշները թէ որոշիչ յօդ են եւ թէ դերանուանական: Դերանուանականներն երեքպատիկ զօրութիւն ունին.

Խական դեր. Ես Հովիւս յանցեայ:

Ցուցակ. դեր. Դուքդ ոչխարքդ զի՞ արարին:

Ստացակ. դեր. Զոգիդ ի քէն ի բաց պահանջեսցեն:

Կրնայ առանց դերանուան ալ ըսուիլ՝ Հովիւս. ոչխարքդ:

Շատ անգամ ցուցական յօդին (ինչպէս նաեւ ցուցական դերանուան եւ երբեմն որոշիչ յօդին) տեղ դերանուանական մակբայներ կը գործածուին. ի տուն այսր. (յայս տուն.) ի տանէ այտի. (յայդմ տանէ.) Ի տուն անդր. (ի տանն։) Ի շարժելոյ անտի. (ի շարժելոյն)

Ասոր հետ նիշդ կապակցութիւն ունի աստի, այտի, անտի մակբայներուն ալ մասնական անուան տեղ գործածութիւնը. Ի տեղւոջ աստի կալ յաղօթս. Էր ի քաղաքի անդի. Մտանէր ի գեղ անդի. Ընդ դուռն անդի մտանէին. Ցոյլ ազգ անդի. (ուրիշ ազգի մը)

Գրաբարի յատուկ է՝ յարաբերական բառի մը յաջորդող բառին վրայ յօդ դնել. Զոր առեալն. (զորն որ առեալ։) Մինչ ուրն գիտէիք. Որ ուրդ հաւատաս. Որ խօսիդ ընդ քեզ. Որ ի մէնջս աստցաւ. Որ մտադեալն ծառայեցաւ: Որդ եան երթամ: Որդիս հաստատեցան:

Նմէ գոյականն ածականէն յառաջ է՝ միշտ գոյականը յօդ կ'առնու. Ծառն վայրենի:

Նոյնպէս նախընթաց ածականն այս դէպքերուս մէջ. Մեծն արին Արամազդ. Քաջին Վահագնի. Երանելոյն Ներսեսի: (Տես 428, ծան:)

Գրաբարի յատուկ է շատ անգամ որոշեալ բառի վրայ յօդ չդնել. Զօրքն Արտաշէս. Բանակայ օտարելոյ. Աստուած՝ հզօր է. Խոր է ծով. Կործանեցի զտուն նորա: Բարկութիւն կորուսանէ զիմաստունս: Երկրորդ բնութիւն է սովորութիւն: Նոյնպէս առանց անորոշ՝ յօդի կ'ըսուի՝ Էր ի տեղւոջն պարտէզ, եւ ի պարտիզի անդ գերեզման նոր. (պարտէզ մը կար. գերեզման մը:)

---

Numérisé par CDMF (FF) - 2011

## Բառերու կրկնութիւնն ու շարքը :

1. Կրկնեալ եզ. գոյականը՝ իւրաքանչիւր կը նշանակէ. Առն առն. (ամէն մէկուն:) Քաղաքի քաղաքի. Գնդի գնդի, դրօշու դրօշու. (իւրաքանչիւր գնդի եւ դրօշի:)

2. Կրկնեալ յոգն. գոյականներն՝ այլեւայլ կամ շատ կը ցուցընեն. Ի կողմանց կողմանց: Ի տեղիս տեղիս: Քաղաքաց քաղաքաց. (շատ քաղաքներու:) Մտանէն ի փոսս փոսս: Բազմեցուցին զնոսա երախս երախս: (Տես աշխարհաբարը՝ 575:)

3. Նոյն կերպով է մասնական անուանց ալ եւ անոնցմէ ելած մակբայներուն կրկնութիւնը. Զոր ումեք ումեք արկեալ էր. (մէկուն մէկալին ձգածը.) Ոմանց ոմանց. Ինչ ինչ, (քանի մը բան.) Ուրեք ուրեք, (տեղ տեղ.) Ուստեք ուստեք, (ուրկէ ուրկէ:)

4. Կրկնեալ ածականը յոգնականի պէս ունի ժողովեցէք զբարի բարին, զչար չարն. (աղէկները, գէշերը:) Զընտիր ընտիր հեծելոց նորա. (ընտիրները:) (Տես 580:)

5. Թուականներուն կրկնածը բաշխական է. (Տե-րես 218:)

6. Բայց սովորաբար այս ձեւով կը կրկնուի. Ո—նէլ ո—նէր եւ առաջինն: Տօլ եփո— կնիք:

7. Իսկ յօդի եւ նախդրի կրկնութիւնը հասարակօրէն կամայական է: Զորդի իւր զկրտսեր: Զփարաւոնի զերագն: Զդորս զոտս եւ զձեռս: Զքան եւ զինն ազգաց: Զաճիւնախառն զկրակն: Ցերկիրն է գետնմ: — Զքահանայից զփառսն: Զգրոցն ճշմարտութիւնն: Զչար ցանկութիւնն ընչից:

Նոյնպէս ազատ է յօդի եւ նախդրի ետեւառաջութիւնը, կամ միեւնոյն խօսքին մերթ այս եւ մերթ այն մասին վրայ դրուիլը. եւ ընդհանրապէս գրաբար շարագրութեան կարգը շատ ազատ է. կրնայ միեւնոյն մասն-բանի, (զորօրինակ բայը, անուն-բային կամ խնդիրը) միեւնոյն խօսքին մէջ անհամար գրից փոփոխութիւն առնուլ: Զորօրինակ. Ոչ ընդ 'նմա էին

Numérisé par CDMF (FF) - 2011

Հրեայքն՝ լային. (փխկ. Հրեայքն որք ընդ նմա էին՝ լային։) Անձնեցուն որ ի նմանէ ողջ էին. (փխկ. անձնայն ազգաց որք ի նմանէ էին։) Կարէ է ցրտոյ ըմպելոյ. (ի կարի ըմպելոյ ի ցրտոյ։) Նա տեսանեմք տանէլ. (Նա տեսանիկ տեսանեմք։) Ընդ այսր ընդդէմ. ընդ հողմոյն դէմ. (ընդդէմ այսր. ընդդէմ հողմոյն.) Եւայլն. Եւայլն։

---

Գրաբար հայերէնի այս համառօտ սկզբունքը տալէն ետեւ՝ աւելի հմտութիւն բաղձացողին կը յանձնենք գրաբար քերականութեան կարգաւորեալ ուսման հետ՝ ընտիր հեղինակաց յաճախ եւ ուշադիր ընթերցումն։

Numérisé par CDMF (FF) - 2011

# ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԵՒ ԳՐԱԲԱՐ

---

Քերականութիւնն իւր տեսական մասէն զատ՝ որ մինչեւ այս տեղս ուսանեցինք, ունի իւր գործնական կամ նիւթական մասն ալ, որ գլխաւորաբար այս երեք հրահանգներէս կը բաղկանայ. Լուծումն, Ընթերցուած եւ Շարադրութիւն։

Երկու վերջինները քերականութեանս կարգէն դուրս կը համարինք. իսկ Լուծման հրահանգը չենք ուզեր բոլորովին առանց ակնարկութեան թողուլ. վասնզի Լուծումը դեռ քերականութեան սահմանին մէջն է, եւ միանգամայն Ընթերցուածի, (ուղիղ հասկընալու) եւ Շարադրութեան (անսխալ գրելու) իբրեւ հիմ եւ առաջնորդ կը ծառայէ հաւասարապէս։

*Լուծում* կամ *Վերլուծութիւն* կը կոչուի այն քերականական կրթութիւնն որ խօսքի մը իւրաքանչիւր մասանց տեսակը, որպիսութիւնն ու վարած պաշտօնը կ'որոշէ. զորօրինակ թէ ո՛ր բառ ինչ կարգի մասն-բանի է, որ անուն ինչ հոլով է, կամ ո՛ր բայ ինչ հոլով խնդիր է առեր, եւայլն։

Քերականական լուծումն երկու տեսակ կրնանք բաժանել՝ դիւրին եւ գործնական ընելու համար. 1. *Ստուգաբանական լուծում*, որ բառերու վրայ կը զբաղի, որոշելով իւրաքանչիւր տեսակները, (անուն, դերանուն, բայ, մակբայ, եւայլն,) եւ ձեւերը, (հոլով, ժամանակ, դէմք, եւայլն,) — քերականութեան Ա մասին վրայէն, որ կ'աւանդէ Ստուգաբանութեան կամ բառերու կազմութեան օրէնքը, (տես երես 167.) 2. *Համաձայնական լուծում*. որ խօսքը կամ ամբողջ նախադասութիւնը կը լուծէ, մասանց-բանի իրարու յարաբերութիւնը կամ իւրաքանչիւրին վարած պաշտօնը որոշելով. (զորօրինակ թէ անուն-բայի է կամ

Numérisé par CDMF (FF) - 2011

խնդիր, կամ վերադիր, կամ յարաբերեալ, եւայլն։) — քերականութեան Բ մասին վրայէն, որ այլեւայլ բառերով խօսք մը կազմելու օրէնքը կ'աւանդէ։

Գնենք վերլուծութեան օրինակ՝ միեւնոյն աւակն աշխարհաբար եւ գրաբար։

---

# ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Քաղքի մը մէջ մէկ հարուստ կար եւ մէկ աղքատ։ | Հարուստը բազմաթիւ ոչխարներ ու կովեր ունէր, | իսկ աղքատն ոչինչ ունէր՝ բայց միայն գառնուկ մը, | որ իր ստըկովը գնած, սնուցած ու որդւոցը հետ մեծցուցած էր։ | Անոր հացէն կ'ուտէր գառնուկն | ու անոր ղաւաթէն կը խմէր, | եւ անոր գիրկը կը հանգչէր. | եւ անոր զաւկի պէս էր եղած։ | Օր մը որ հարստին հիւր եկաւ, | ափկայ իր ունեցածներուն խնայելով՝ | աղքատին գառնուկն առաւ | եւ հիւրին կերակուր ըրաւ։

## Ա. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

| | |
|---|---|
| Քաղքի | գոյական անուն, հասարակ. Ա հոլով, եզ. սեռ. կորուսմամբ՝ փխկ. քաղաքի։ — Ուղղ. քաղաք։ |
| մը | անորոշ յօդ։ |
| մէջ | նախադրութիւն։ |
| մէկ | թուական անուն, բացարձակ։ |
| հարուստ | ածական անուն, հասարակ։ |
| կար | չէզոք բայ, պակասաւոր. Դ լծորդ. Սհմ. անկատ. եզ. 3 դ. առանց կը մասնկան։ — Սհմ. ներկայ՝ կայ։ |
| եւ | շաղկապ։ |
| մէկ | թուական անուն, բացարձակ։ |
| աղքատ։ | ածական անուն, հասարակ։ |
| Հարուստ-ը | ածական անուն, հասարակ, ը յօդով որոշեալ. եզ. ուղղական։ |
| բազմաթիւ | ածական անուն, հասարակ։ |
| ոչխարներ | գոյական անուն, հասարակ. Ա հոլով. Յոգն. հայցական, անորոշ հոլով. — Եզ. ուղղ. ոչխար։ |
| ու | շաղկապ։ |

Numérisé par CDMF (FF) - 2011

կօշեր — գոյական անուն, հասարակ. Ա հոլովմ. Յոգն. հայցական, անորոշ հոլովմ. — Եզ. ուղղ. կօշ։

ունէր, — ներգործական բայ, պակասաւոր. Բ լծորդ. Սհմ. անկատր. եզ. 3 դ. առանց կը մասնկան. — Սհմ. ներկայ՝ ունիմ։

իսկ — շաղկապ։

աղքատ-ն, ածական անուն, հասարակ, ն յօդով որոշեալ։ Եզ. ուղղական։

ոչինչ — մասնական անուն, գոյական։ Եզ. հայցական։

ունէր՝ — ներգործական բայ, պակասաւոր. Բ լծորդ. Սհմ. անկատր. եզ. 3 դ. առանց կը մասնկան. — Սհմ. ներկայ՝ ունիմ։

բայց — շաղկապ։ }
միայն — մակբայ։ } Բայց միայն՝ բաղադրեալ շաղկապ ալ կը համարուի։

գառնուկ — գոյական անուն, հսրկ. Ա կամ Գ հոլովմ. Եզ. հայցական, անորոշ հոլովմ.

մը, — անորոշ յօդ։

որ — յարաբերական դերանուն, գոյական. Եզ. հայցական։

իր — ստացական դերանուն, ածական. 3 դ. եզակի։

ստըկով-ը — գոյական անուն, հասարակ. Ա հոլովմ. ը ստացական յօդով. Եզ. գործիական, կարուստամբ՝ փխկ. ստակով։

գնած, — ներգործ. բայ. Ա խոնրհմ. ընդուն. անցեալ. — Աներեւոյթ՝ գնել։ }
սնուցած — ներգործ բայ. կէս-զարտուղի խոնրհմ. ընդ. անցեալ. — Աներեւոյթ՝ սնուցանել։ } Գնած, սնուցած եւ քիչ մը ետքը ծծցուցած անցեալները մէկ էական (էր) բայով՝ սհմ. գերակատար մ'եղած են։

ու — շաղկապ։

որդւոց-ը — գոյ. անուն, հսրկ. կէս-զարտուղի հոլովմ. Յոգնակի սեռական, ը ստացական յօդով. այսինքն՝ իր որդւոցը։ — Եզ. ուղղ. որդի։

հետ — նախադրութիւն։

ծծցուցած էր, ներգրծ. բայ, կէս-զարտուղի խոնարհմ. Սհմ. գերակատար, եզ. 3 դ. — Աներեւոյթ՝ ծծցնել։

Անոր — ցուցական դերանուն, 3 դ. Եզ. սեռական։ — Ուղղ. այն կամ ան։

հացէ-ն — գոյ. անուն, հսրկ. Ա հոլովմ. Եզ. բացառական, ն ստացական յօդով։ — Ուղղ. հաց։

կ'ուտէր — ներգրծ. բայ, զարտուղի խոնարհմ. Սհմ. անկատար, եզ. 3 դ. Կ՝ կրճատուած մասնիկ՝ փխկ. կը։ — Աներեւ. ուտել։

գառնուկ-ն, գոյ. անուն, հսրկ. Ա կամ Գ հոլովմ. Եզ. ուղղ. ն յօդով որոշեալ։

Numérisé par CDMF (FF) - 2011

ու — շաղկապ։

անոր — ցուցական դերանուն, 3 դէմք։ Եզ. սեռ. — Ուղղ. այն կամ ան։

զաւաթ-ն — գոյ. անուն, հորկ. Ա հոլովմ։ Եզ. բցռ. ն ստաց. յօդով։ — Ուղղ. գաւաթ։

կը խմէր, — ներգործ. բայ, Ա խոնարհմ։ Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Աներև. խմել։

ու — շաղկապ։

անոր — ցուց. դերանուն, 3 դէմք։ Եզ. սեռ. — Ուղղ. այն կամ ան։

գիրկ-ը — գոյ. անուն, հորկ. Ա հոլովմ։ Աննախդիր ներգոյական, ը ստաց. յօդով։

կը հանգչէր. — չէզոք բայ. Բ խոնարհմ. կամ կէս-զլողի։ Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Աներև. հանգչիլ։

ու — շաղկապ։

անոր — ցուց. դեր. 3 դ. Եզ. սեռ. — Ուղղ. այն կամ ան։

զաւկի — գոյ. անուն, հորկ. Ա հոլովմ։ Եզ. տրական, կորուսմամբ՝ փխկ. զաւակի։ — Ուղղ. զաւակ։

պէս — նախադրութիւն։

էր եղած։ — այսինքն եղած էր. էական բայ։ Սհմ. գերակատար, եզ. 3 դ. — Աներև. ըլլալ։

Օր — գոյ. անուն, հորկ. Գ հոլովմ։ Եզակի, անորոշ։

մը — անորոշ յօդ։

որ — շաղկապ։

հարստի-ն ած. անուն հորկ. Ա հոլովմ։ Եզ. տրական, կորուսմամբ՝ փխկ. հարուստի. — ն յօդով որոշեալ։ — Ուղղ. հարուստ։

հիւր — գոյ. անուն հորկ. Ա հոլովմ։ Եզ. ուղղ. անորոշ։

եկաւ, — չէզոք բայ, զլտղի խոնարհմ. Սհմ. կատ. եզ. 3 դ. — Աներև. գալ։

ասիկայ — ցուցական դերանուն, գոյական. 1 դէմք։ Եզ. ուղղ.

իւր — ստացական դերանուն, ածական. 3 դ.

ունեցածները-ն — դերբայ ածական. ընդուն. անցեալ՝ ունենալ բայէն. Յոգ. տրական. ն յօդով որոշեալ. — Եզ. ուղղ. ունեցած։

խնայելով՝ դերբայ աներևոյթ՝ խնայել բայէն։

աղքատի-ն ած. անուն, Ա հոլովմ։ Եզ. սեռական, ն յօդով որոշեալ։ — Ուղղ. աղքատ։

գառնուկ-ն գոյ. անուն, հորկ. Ա կամ Գ հոլովմ։ Եզ. հայցական, ն յօդով որոշեալ։

տուաւ — ներգործ. բայ, զլտղի խոնարհմ։ Սհմ. կատ. եզ. 3 դ. — Աներև. տալ կամ տանիլ։

Numérisé par CDMF (FF) - 2011

ու  շաղկապ։

հիւրի-ն  գոյ. անուն, հարկ. Ա հոլովմ։ Եզ. տրական, ն յօդով որոշեալ։ — Ուղղ. հիւր։

կերակուր  գոյ. անուն, հարկ. Ա հոլովմ. կամ կէս-գրաղի։ Եզ., հայցկն. անորոշ։

բրաւ։  ներգործ. բայ, գրոցի խոնարհմ։ Սհմ. կատ. եզ. 3 դ. — Աներեւ. ընել։

## Բ. ՀԱՄԱԴԱՍՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

Քաղքի մը խնդիր՝ մէկ նախադրութեան։
մէջ  յետադաս նախադրութիւն։  } խնդիր-բնութեան՝ չոր բային։

մէկ հարուստ  դոյականը զօրութեամբ՝ մօրը։ Առաջին անուն-բայի՝ չոր բային։

կար  բայ՝ մէկ հօրաքոյր (մօրը) անուան-բայի։

եւ  շաղկապ՝ առաջին եւ երկրորդ անուանց բայի զօդիչ։

մէկ աղքատ։  գոյականը զօրութեամբ՝ մօրը։ Երկրորդ անուն-բայի՝ չոր բայն որ երկու նախադասութիւնը մէկի ամփոփած է։

— Մինչեւ հոս՝ Առաջին նախադասութիւն։

հարուստը  ածական՝ որ ը յօդով գոյական եղած է։ Անուն-բայի՝ ունէր բային։

բազմաթիւ  ածական՝ ոչխարներ ու կովեր գոյականներուն։

ոչխարներ  առաջին խնդիր-սեռի՝ ունէր բային։

ու  շաղկապ՝ ոչխարներ ու կովեր խնդիրներուն զօդիչ։

կովեր  երկրորդ խնդիր-սեռի՝ ունէր բային։

ունէր  բայ՝ հարուստը անուան-բայի։

— Երկրորդ նախադասութիւն։

իսկ  շաղկապ՝ երկրորդ եւ երրորդ նախադասութեանց զօդիչ։

աղքատն  ածական՝ որ ն յօդով գոյական եղած է։ Ն յօդ՝ յաջորդ (ո) ձայնաւորին համար։ Անուն-բայի՝ ունէր բային, որ զօրութեամբ կ'իմացուի։

ոչինչ  առաջին խնդիր-սեռի՝ ունէր բային։

ունէր՝  բայ։

բայց  շաղկապ՝ ոչինչ եւ գառնուկ մը խնդիրներուն զօդիչ։

միայն  մակբայ՝ գառնուկ մը (ունէր) բային։

գառնուկ մը,  երկրորդ խնդիր-սեռի՝ ունէր բային։

— Երրորդ նախադասութիւն։

Numérisé par CDMF (FF) - 2011

որ — խնդիր-սեռի՝ գնած, անցեալ եւ ձեւացեալ եր բայերուն։

Անուն-բայի զօրութեամբ՝ ինքը այսինքն աղքատը։

իւր սորվածը խնդիր-բնութեան՝ գնած (եր) բային։

գնած, — առաջին բայ, | որոնք ձեւացեալ եր երրորդ բայով միացած՝ երեք նախադասութիւնը մէկի ամփոփած են։ (Տես 491։)
անուցած — երկրորդ բայ, |

ու — շաղկապ՝ անցեալ եւ ձեւացեալ եր բայերուն զօդիչ։

որդւոյը — խնդիր՝ հետ նախադրութեան։ | խնդիր-բն. ձեւացեալ եր բային.
հետ — յետադաս նախադրութիւն։ |

մեծցուցած էր։ բայ։

— Չորրորդ նախադասութիւն։

Անոր — յատկացուցիչ՝ հօրն յատկացեալին.

Հայրն — յատկացեալ՝ անոր յատկացուցչին։ խնդիր-բն. կ'ուտէր բային.

կ'ուտէր — բայ՝ [illegible] անուան-բայի։ — խնդիր-սեռի զօրութեամբ կ'իմացուի՝ իւր հացը*. (տես 392։)

գաւանուկն, անուն-բայի՝ կ'ուտէր բային։ Ն յօդով՝ յաջորդ (ա) ձայնաւորին պատճառաւ։

— Հինգերորդ նախադասութիւն։

* Ուտել, խմել ու նման ներգործական բայերն առանց հայցական խնդրոյ ձեւով՝ չէզոք ալ կրնան համարուիլ։

ու — շաղկապ՝ հինգերորդ եւ վեցերորդ նախադասութեանց զօդիչ։

անոր — յատկացուցիչ՝ գաւաթին յատկացեալին։

գաւաթէն — յատկացեալ՝ անոր յատկացուցչին։ խնդիր-բն. կը խմէր բային։

կը խմէր, — բայ։ խնդիր-սեռի զօրութեամբ կ'իմացուի՝ իւր ջուրը։ (Տես վերի ծանօթ։)

Անուն-բայի զօրութեամբ՝ անիկայ այսինքն գաւանուկը։

— Վեցերորդ նախադասութիւն։

եւ — շաղկապ՝ վեցերորդ եւ եօթներորդ նախադասութեանց զօդիչ։

անոր — յատկացուցիչ՝ գիրկը յատկացեալին։ | խնդիր-բն. կը հանգչէր բային։
գիրկը — յատկացեալ՝ անոր յատկացուցչին։ |

կը հանգչէր. բայ։

Անուն-բայի զօրութեամբ՝ անիկայ այսինքն գաւանուկը։

— Եօթներորդ նախադասութիւն։

Numérisé par CDMF (FF) - 2011

եւ — շաղկապ՝ եօթներորդ եւ ութերորդ նախադասութեանց զօդիչ։

անոր — գլխաւոր խնդիր-բն. եղած էր բային։

զաւկի — խնդիր՝ դեռ նախադրութեան։ | Երկրորդական խնդ.-

պէտ — յետադաս նախադրութիւն։ | բն. եղած էր բային։

էր եղած։ բայ։ Զոյգ դեռ էր եղած. շրջուած, փխկ. զոյգ դեռ եղած էր։

Անուն-բայի զօրութեամբ՝ ածական այսինքն գտանուկը։

— Ութերորդ նախադասութիւն։

Որ մը — մակբայակերպ. (281։)

որ — միջանկեալ շաղկապ. (366, եւ. 533, ծան։)

հարստին — խնդիր-բն. ենթ. բային։ — Աերջահոլով՝ մարդու մը (եւ ոչ տեղ մը) գալ ցուցընելուն համար. (360 եւ. 364։)

հիւր — անուն-բայի՝ ենթ. բային։

եկաւ — բայ՝ հետը անուան-բայի։

— Իններորդ նախադասութիւն։

Ոսկեայ — (այսինքն հարուստը.) անուն-բայի՝ ընծայելոց բային։

իւր ունեցածներուն խնդիր-բնութեան ընծայելոց բային։

ընծայելով՝ բայ։ Անուն-բայի՝ ածական։

— Տասներորդ նախադասութիւն։

աղքատին — յատկացուցիչ՝ գտանուկն յատկացելոյն։

գտանուկն — յատկացեալ՝ աղքատին յատկացուցչին։ խնդիր-սեռի՝ առաւ բային։

առաւ — բայ։ Անուն-բայի զօրութեամբ՝ ածական այսինքն հարուստը։

— Տասնումեկերորդ նախադասութիւն։

եւ — շաղկապ՝ ԺԱ եւ ԺԲ նախադասութեանց զօդիչ։

հիւրին — երկրորդ խնդիր-բնութեան՝ ըրաւ բային։

կերակուր գլխաւոր խնդիր-բնութեան՝ ըրաւ բային։

ըրաւ։ — բայ։

Անուն-բայի զօրութեամբ՝ ածական այսինքն հարուստը։ խնդիր-սեռի զօրութեամբ՝ ընծայ այսինքն զգտանուկը։

— Տասներկուերորդ նախադասութիւն

Numérisé par CDMF (FF) - 2011

# ԳՐԱԲԱՐ

Այր երկու էին ի քաղաքի միում, մին մեծատուն եւ միւսն աղքատ։ | Եւ մեծատանն էին հօտք եւ անդեայք բազում յոյժ. | եւ աղքատին՝ եւ ոչ ինչ բայց որոջ մի փոքր, | զոր ստացեալ եւ սնուցեալ էր ընդ որդիս նորա ի միասին. | ի հացէ նորա ուտէր, | եւ ի բաժակէ նորա ըմպէր, | եւ ի ծոց նորա ննջէր. | եւ էր նորա իբրեւ դուստր։ | Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն. | եւ խնայեաց առնուլ ի հօտից իւրոց եւ յանդէոց իւրոց. | եւ էառ զորոջ աղքատին, | եւ արար առնն եկելոյ կերակուր։

## Ա. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

Այր — գոյական անուն, հասարակ. զուգի հոլովմ. Յոքն. ուղղական։ — Եզ. ուղղ. այր։

երկու — Թուական անուն, բացարձակ. յոքնակի, անեզական։

էին — էական բայ, պակասաւոր։ Սհմ. անկատար, յք. 3 դ։ — Սհմ. ներկայ՝ եմ։

ի քաղաքի — գոյ. անուն, հասարակ. Բ հոլովմ. Եզ. ներգոյ։ — Ուղղ. քաղաք։

միում, — Թուական անուն, բացարձակ. Եզ. տրական՝ է նախդրով (ի քաղաքի միում) ներգոյական եղած։

մի-ն — Թուական անուն, բացարձակ։ Եզ. ուղղ. Ն յօդով որոշեալ։

մեծատուն — ածական անուն, հասարակ. Է հոլովմ. Եզ. ուղղական։

եւ — շաղկապ։

միւս-ն — մասնական անուն։ Եզ. ուղղ. Ն յօդով որոշեալ։

աղքատ։ — ածական անուն, հասարակ։ Բ հոլովմ. Եզ. ուղղ։

Եւ — շաղկապ։

մեծատան-ն — ածական անուն, հասարակ. Է հոլովմ. Եզ. սեռ. Ն յօդով որոշեալ։ — Ուղղ. մեծատուն։

էին — էական բայ, պակասաւոր։ Սհմ. անկատր. յք. 3 դ։ — Սհմ. ներկայ՝ եմ։

հօտք — գոյ. անուն, հասարակ. Ա հոլովմ. Յք. ուղղ։ — Եզ. ուղղ. հօտ։

եւ — շաղկապ։

անդեայք — գոյ. անուն, հասարակ. Գ հոլովմ. Յք. ուղղ։ — Եզ. ուղղ. անդեայ։



Numérisé par CDMF (FF) - 2011

բազում ածական անուն. հասարակ. Բ հոլով։
լոյժ. մակբայ։
եւ շաղկապ։
աղքատի-ն ած. անուն, հասարակ. Բ հոլով։ Եզ. սեռ., ն յօդով որոշեալ։ — Ուղղ. աղքատ։
եւ ոչ շաղկապ։
ինչ՝ մասնական անուն, գոյական։ Եզ. ուղղ.։ } կամ՝ եւ — շաղկապ. ոչինչ մասնական անուն։
բայց շաղկապ։
որոջ գոյ. անուն, հարկ. Բ հոլով։ Եզ. ուղղական։
մի թուական անուն, բացարձակ, Եզ. ուղղական։
փոքր, ած. անուն, հարկ. կէս-գլաղի։ Եզ. ուղղական։
զ-որ յարաբերական դերանուն։ Եզ. հայցական։
ստացեալ ներգործ. բայ. Ա լծորդ. ն յաւելուածով, հարկ. կամ կրաւորակերպ. (տես երես 229։) ընդ. անցեալ. որ էր եականով (օժանդակ՝ էր) եղած է սահմ. գերկատար։ եզ. 3 դ. — Սահմ. ներկ. ստանամ։
սնուցեալ էր, ներգործ. բայ. Բ լծորդ. ն յաւելուածով։ Սհմ. գերկատ. եզ. 3 դ. — Սհմ. ներկայ՝ սնուցանեմ։
ընդ նախադրութիւն։
որդիս գոյ. անուն, հարկ. խառն հոլով։ Յք. հյց. աննախդիր. (տես երես 240։) — Եզ. ուղղ. որդի։
նորա, ցուցական դերանուն, գոյական. 3 դէմք։ Եզ. սեռ. — Ուղղ. նա։
ի միասին մակբայ։
ի հացէ գոյ. անուն, հարկ. Ա հոլով։ Եզ. Ուղղ. հաց։
նորա ցուցական դերանուն, գոյական. 3 դ։ Եզ. սեռ. — Ուղղ. նա։
ուտէր ներգործ. բայ, գլաղի խառն խոնարհմ։ Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Սհմ. ներկ. ուտեմ, (կատ. կերայ։)
եւ շաղկապ։
ի բաժակէ գոյ. անուն, հարկ. Բ հոլով։ Եզ. բաց. — Ուղղ. բաժակ։
նորա ցուցական դերանուն, գոյական. 3 դ. Եզ. սեռ. — Ուղղ. նա։
ըմպէր, ներգործ. բայ, գլաղի խառն խոնարհմ։ Եզ. Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Սհմ. ներկայ՝ ըմպեմ։ (կատ. արբի։)
եւ շաղկապ։
ի ծոց գոյ. անուն. հարկ. Դ հոլով։ Եզ. ներգոյ։ կամ՝ ծոց, հայցական՝ որ ի նախդիրով ներգոյական եղած է. (տես երես 217։) — Ուղղ. ծոց։
նորա ցուցական դերանուն. գոյական. 3 դ. Եզ. սեռ. — Ուղղ. նա։

Numerise par CDMF (FF) - 2011

ննջէր  չէզոք բայ, ներգործական. Բ լծորդ. Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Սհմ. ներկայ՝ ննջեմ։

եւ  շաղկապ։

էր  էական բայ, պակասաւոր. Սհմ. անկատ. եզ. 3 դ. — Սհմ. ներկ. եմ։

նորա  ցուցական դերանուն, դիմական. 3 դ. եզ. սեռ. — Ուղղ. նա։

իբրեւ  նախադրութիւն.

դ-դուստր: անուն, հասր. Ը հոլովմ. եզ. հայց. — Ուղղ. դուստր։

## Բ. ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

Արք երկու  անուն-բայի՝ էին բային։

էին  բայ՝ արք երկու անուան-բայի։

ի քաղաքի միում  խնդիր-բնութեան՝ էին բային. ներգոյական՝ դադարում ցուցընելուն համար։

—  Մինչեւ հոս՝ Առաջին նախադասութիւն։

մին  անուն-բայի. Բայ՝ զօրութեամբ կ'իմացուի էր. — Մի ածականը ն յօդով գոյական եղած։

մեծատուն  ուղղական խնդիր-բնութեան՝ էր բային։

—  Երկրորդ նախադասութիւն։

եւ  շաղկապ՝ երկրորդ եւ երրորդ նախադասութեանց զօդիչ։

միւսն  անուն-բայի. Բայ՝ զօրութեամբ կ'իմացուի էր. — Միւս ածականը ն յօդով գոյական եղած։

աղքատ  ուղղ. խնդ. բնութեան՝ էր բային։

—  Երրորդ նախադասութիւն։

• Այս երեք նախադասութիւնները մէկ կ'ամփոփուին՝ եթէ մին մեծատուն ու միւսն աղքատ ածակաները՝ արք երկու գլխաւոր գոյականին բացայայտիչ համարուին։

Եւ  շաղկապ՝ նախընթաց նախադասութեանց եւ չորրորդին զօդիչ։

Մեծատանն  սեռական խնդիր-բն. էին բային։

էին  բայ՝ հօտք եւ անդէայք անուան-բայի. որ սեռական խնդրոյն ունենալ կը նշանակէ։

հօտք  առաջին անուն-բայի՝ էին բային։

եւ  շաղկապ՝ հօտ. անդէայք անուանց բայի զօդիչ։

անդէայք  երկրորդ անուն-բայի՝ էին բային։

բազում  վերջադաս ածական՝ հօտ. անդէայք գոյականներուն։ Անփոփոխ՝ փխկ. Բազմաց։



Numérisé par CDMF (FF) - 2011

յոյժ. մակբայ՝ բաղդատ ածականին։

— Չորրորդ Նախադասութիւն։

եւ շաղկապ՝ չորրորդ եւ հինգերորդ նախադասութեանց զօդիչ։

աղքատին սեռական խնդ.-ըն. էր բային որ զօրութեամբ կ'իմացուի, եւ ունենալ կը նշանակէ։
Բայ՝ զօրութեամբ կ'իմացուի՝ էր։

եւ ոչ շաղկապ։ } Եթէ ոչինչ իբրեւ մէկ բառ առնուի՝
ինչ, անուն-բայի։ } եւ շաղկապը սաստկացուցիչ է։

բայց շաղկապ՝ ոչ ինչ ու որոջ մի անուանց-բայի զօդիչ՝ որ երկու նախադասութիւն մէկի ամփոփած է։

որոջ մի անուն-բայի՝ վերոյիշեալ էր բային, որ զօրութեամբ կ'իմացուի։ Յարաբերեալ՝ յաջորդ զոր յարաբերականին։

փոքր, վերջադաս ածական՝ որոջ գոյականին։

— Հինգերորդ Նախադասութիւն։

զոր խնդիր-սեռի՝ ստացեալ եւ սնուցեալ էր բայերուն։ Յարաբերական որոջ մի յարաբերեալին։

ստացեալ առաջին բայ՝ որ յաջորդ սնուցեալ անցեալին հետ միանալ՝ էր էականով բաղադրեալ ժամանակ կազմած է։
Անուն-բայի՝ զօրութեամբ նա կամ նորա։

եւ շաղկապ՝ ստացեալ ու սնուցեալ անցեալներուն զօդիչ։

սնուցեալ էր, երկրորդ բայ, որ ստացեալ անցեալին էր էականովը գերակատարի լրացուցած է։

ընդ նախադաս նախադրութիւն։ } խնդիր-ըն. սնուցեալ
որդիս հայց. խնդիր՝ ընդ նախադրութ. (տես երես 240։) } էր բային. եւ յատկացեալ՝ նորա յատկացուցչին։
նորա յատկացուցիչ՝ որդւոց յատկացելոյն։

ի միասին. մակբայ՝ սնուցեալ էր բային։

— Վեցերորդ Նախադասութիւն։

ի հացէ խնդիր-ըն. ուտէր բային։ Յատկացեալ՝ նորա յատկացուցչին։

նորա յատկացուցիչ՝ ի հացէ յատկացելոյն։

ուտէր, բայ։ խնդիր-սեռի զօրութեամբ՝ զհաց իւր. (Տես աշխարհաբարի հինգերորդ նախադասութեան ծանօթութիւնը. երես 255։)
Անուն-բայի զօրութեամբ կ'իմացուի՝ որոջն։

— Եօթներորդ Նախադասութիւն։

եւ շաղկապ՝ եօթներորդ եւ ութերորդ նախադասութեանց զօդիչ։

Numérisé par CDMF (FF) - 2011

ի բաժակէ    խնդիր-բն․ ըմպէր բային։ Յատկացեալ՝ նորա յատկացուցչին։

նորա    յատկացուցիչ՝ է բաժակէ յատկացելոյն։

ըմպէր,    բայ։ խնդիր-սեռի զօրութեամբ՝ ջուր։ Տես աշխարհաբարի հինգերորդ նախադասութեան ծանօթութիւնը. երես 255։)
Անուն-բայի զօրութեամբ՝ նա այսինքն որոջն։

— Ութերորդ նախադասութիւն։

եւ    շաղկապ՝ ութերորդ եւ իններորդ նախադասութեանց զօդիչ։

ի ծոց    խնդիր-բն․ ննջէր բային։ Յատկացեալ՝ նորա յատկացուցչին։

նորա    յատկացուցիչ՝ է ծոց յատկացելոյն։

ննջէր.    բայ։
Անուն-բայի զօրութեամբ՝ նա, այսինքն որոջն։

— Իններորդ նախադասութիւն։

Նոյն կերպով միացած մասերն ալ կը լուծուին։

---

Բայց շատերու սովորութիւն է՝ նախադասութեան մէջէն յառաջ անուն-բային որոշել, (եթէ ներգործութեամբ դրուած ըլլայ՝ եթէ զօրութեամբ.) յետոյ բային եւ իւր խնդիրը․ եւ անկէ ետքը՝ խօսքին երկրորդական կամ ամբողջացուցիչ մասերը լուծել։

---

Այս Լուծման հրահանգն այս տեղս այսչափ համառօտ նշանակելնուս պատճառն է՝ որ բովանդակ քերականութեան, եւ մանաւանդ Բ մասին ընթացքին մէջ այս նպատակն ալ միշտ աչքի առջեւ ունենալով՝ եւ երբեմն երբեմն իրական լուծմունքն ալ տալով, այնպէս ջանացած ենք առաջնորդել, որ աւանդուած կանոններուն մտադիր մէկը՝ իւրաքանչիւր մասանց-բանի տուած դիրքն ու վարած պաշտօնին դիւրաւ խելամուտ ըլլայ, եւ պէտք չունենայ երկարատեն Լուծման հրահանգներու մէջ թարթափելու։

Numérisé par CDMF (FF) - 2011

# ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
# ԲԱՌԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ
## ԱՅԲՈՒԲԵՆԻ ԿԱՐԳԱՒ

*(Թուանշաններն երեսները կը ցուցնեն: — Աստղանիշ թուերը գրաբարի յատուկ մասերն են:)*


Ածական անուն. 20. 95. 106. 114. *242. 245.
— աստիճանները. 21.
— ցուցական եւ ստացական. տես Դերանուն։
Ածանց կամ Ածանցմունք. } 62.
Ածանց կամ Ածանցեալ. }
Անփամ (տողադարձութ.) 194.
Անեզական. *215.
Աներեւոյթ գերբայ. 42. 70. 133.
— Աներեւոյթ. կար. 68. ապա. 69.
— Աներեւոյթ բայ. 134. աներ. դոյական. 135. աներ. ածական. 136.
Անկանոն կամ Զարտուղի հոլովմ. 8.
— Կէս զարտուղի. 8. *214.
— Բուն զարտուղի. 11. *213.
Անկանոն կամ Զարտուղի խոնարհմունք. 44.
— Կէս զարտուղի. 51. *232.
— Բուն զարտուղի. 53. *230.
Անկանոն ժամանակներ. 50. *221.
Անկատար ժամանակ (բայի). 42.
Անհոլով. *215.
Անձնական կամ Էական դերանուն. 30. *219.
Անյանգ ոտանաւոր. 190.
Անյայտական. *215.
Անփոփոխիր հոլովներ. 12.
Անորոշ հայցական. *216.
Անորոշ յօդ. 19.
Անուն. 4.
— Ածական եւ Գոյականն. 20.
— Յատուկ անուն. 22. Հասարակ անուն. 22.
— Թուական. անուն. 23.
— Մասնական անուն. 26.
Անուն-բայի. 89. *242.
Անցեալ (անցած) ժամանակներ. 42.
Անցեալ գերբայ. 70. 138.
— Անցեալ ածական. 140. անց. դոյական. 139. անց. բայ. 138.
Անցողական բայեր. 63.
— Կրկին անցողական. 65.
Անփոփոխ մասունք-բանի. 3. 146. *237.
Աշխարհաբար. Արդի հայերէն. 1.
Ապաթարց. 178.
Ապառնի ժամանակ (բայի) 42. 67.
— Ապառնի-անկատ. 67. *227.
— Ապառնի-յրկատ. 67.
— Ապառնի-գերկատ. 67.
Առաջին դէմք. 29. 42.
Առաջին լծորդութիւն. 45. *224.
Առաջին հոլովումն. 5. *212.
Առոգանութիւն. 182.
Աստիճանք (ածականի). 21.
Արդի հայերէն. Արդի լեզու. 1.
Արձակ խօսք. 190.
Արմատ. 62.
Աւելադրութիւն. 161.

Բազմավանկ. 2.
Բաղկացութիւն. 164.
Բաղադրեալ ժամանակներ (բայի). 66. 131. *226.
Բաղաձայն գիր. 2. 170.
Բաղդատական աստիճան. 21. 107.
Բայ. 41.
Ներգործ. կրաւ. չէզոք. 41. Լծական բայեր. 43. *222. Անցողական. 63. Բացառական. 58. *236. Դիմազուրկ. 57. *236. Պակասաւոր. 56. *235. Հասարակ բայ. *236.
— Բայերու խոնարհմ. — Կանոնաւոր. 44. *223. Անկանոն բայեր. 53. *230.
— Բայերու դէմքը. 42.
— Բայերու սեռը. 41. 127.
— Բայերու եղանակները ու ժամանակները. 41. 42. 128.
Բայանուն. 72.


Numérisé par CDMF (FF) - 2011

Բաշխական թուականք. 24. *218.
Բառ. 2.
Բացայայտեալ. 92.
Բացայայտիչ. 92. *242.
Բացառական հոլով. 4. 103. 106. 111. *216.
— ածանցիք. 13.
— Բացառականէ ածական. 111.
Բացասական բայ. 58—62. 130. *236.
Բացասական ձեւ (բայերու). 58.
Բացասական մակբայ. 75.
Բացարձակ գերադրական. 21.
Բացարձակ թուական. 24. 121. *217.
Բութ, նշան (կիսադադարութ.) 176.
Բութ վանկ. (առոգանութ.) 182.

Գերադրական աստիճան. 21. 107.
— Ըստ ինքեան գերադրական, կամ Բացարձակ գերադր. 21.
— Համեմատութեամբ գերադր. 21. 107.
Գերակատար կամ Վաղակատար ժամանակ. 67. 68.
Գիր կամ Տառ. 1.
— Հայերէն գիրք. 1.
— Ձայնաւոր եւ Բաղաձայն. 1.
Գլխագիր տառք. 180.
Գոյական անուն. 20. 92. 114.
— Գոյականէ մակբայներ. 75.
— Գոյականէ նախադրութիւններ. 82.
Գործիական հոլով. 4. 104. 107. 111.
— Գործիականէ ածական. 112.
Գրաբար. 1. 211.

Դասական թուական. 24. *218.
Դերանուն. 29, 123.
— Ած. եւ գոյ. դերանուններ. 29.
— Անձնական կամ Էական. 30. Ցուցական. 32. Ստացական. 35. Յարաբերական. 40.
— Դերանուանց հոլովումը. 30—40. *219.
— Դերանուանց դէմքը. 29.
Դերանուանական հոլովում. 9. 30.
Դերանուանական մակբայներ. 78. *238.
Դերանուանական յօդ. տես Դիմորոշ.
Դերբայ. 42. 70. 131. *226. 244.
— Դերբ. աններեւոյթ. 133. Դերբ. ընդունելութիւն. 137. Դերբ. անցեալ. 138. 144. Դերբ. ապառնի. 140. 144.
Դէմք — դերանուանց. 29.
— բայերու. 42. 90.
Դիմազուրկ. տես Միադիմի.
Դիմորոշ կամ Դերանուանական յօդ. 33. 120.
Դրական աստիճան. 21.
Դրիւ (բութ կամ շեշտ). 183.

Ենթամնայ. 175.
Երկար (նշան եւ վանկ). 134.
Երկբարբառ. 2. 174. 188. 192.
Երկրորդ դէմք. 29. 42.
Երկրորդ հոլովումն. 6. *212.
Երկրորդ ընդունելութիւն. 46. *224.
Երկրորդ ուղղական. 99.
Երկրորդական հոլովներ. *216.
Երրորդ դէմք. 29. 42.
Երրորդ ընդունելութիւն. 47. *224.
Երրորդ հոլովումն. 6. *212.

Զարտուղի. տես Անկանոն.
Զեղչումն. 159.

Էական բայ 43. *222.
Էական դերանուն. տես Անձնական.
Էն մասնիկ. 108.

Ը (որոշեալ) յօդ. 17. 116 - 120.
Ընդհատ յանգ. 203.
Ընդունելութիւն (ներկայ). 42. 70. 137. *226.

Թիւ. 3. — Անուանց. 4. 100. Ածականներու. 95.
— Դերանուանց. 29.
— Բայերու. 42. 91.
Թուականն անուն. 23. 108. 121. *217.
Թուական տառանաւոր. 190.

Ժամանակ (բայի). 42. 128.
— Պարզ եւ Բաղադրեալ. 66. *220.
— Կանոնաւոր եւ Անկանոն. 50. *221.
Ժամանակական մակբայ. 76.
Ժամանակակերտ մասնիկներ. 60.
Ժամանակի որոշմունք. 113. *246.
Ժխտական. տես Բացասական.

Ի բնէ (բութ կամ շեշտ). 183.

Լծորդութիւն (բայերու). 42.
Լուծումն կամ Վերլուծութիւն քերականական. 250.
— Համաձայնական. 250.
— Ստուգաբանական. 250.

Խնդիր. 89. 96.
— Բայերու. 97. *244. Խնդրառութի. 97. Խնդիր-քն. 99.
Դերբայի. 105. *244.
— Ածականի, եւայլն. 106. *245.

Numérisé par CDMF (FF) - 2011

— Նախադրութեան. 81. *239.
Խնդրառութիւն. 96. 89. *244. տես և Խնդիր։
Խոնարհումն. 3. 41.
— Կանոնաւոր և Անկանոն. 44—55. *222—231.
Խօսք. 2. 89.

Կանոնաւոր ժամանակներ. 50. *221.
Կանոնաւոր խոնարհմունք. 44. *223.
Կանոնաւոր հոլովմունք. 5. *212.
Կատարեալ ժամանակ (բայի). 42.
Կարճ (վանկ). տես Սուղ։
Կէս-զարտուղի. տես յԱնկանոն։
Կէս վանկ. տես Սուղ։
Կէտ. 176 և 177.
Կը կու մասնիկ. 69.
Կիսադրութիւն. 176.
Կիրառութիւն (մասանց-բանի). 89. 109. *246.
Կոչական հոլով. 14. *216. Շեշտ. 183.
Կոր մասնիկ. 69.
Կորուսման և փոփոխման հոլովումն. 14.
Կրաւորական բայ. 41. 127.
— Լծորդութ. 49. 61. *225 – 229.
Կրաւորակերպ. *232.
Կրկին-անցողական. 65.
Կրկին խոնարհմունք. *234.
Կրկին կատարեալ. 67.
Կրկին հոլովմունք. *215.
Կրկին յոդնակի. 36.
Կրկնաւոր, Կրկնեալ բառ, կամ Մասանց-բանի կրկնութիւնք. 154. *248.
Կրկնաւոր մակբայներ. 79. *238.
Կրճատումն. տես յԱպաթարց։

Համաձայնական լուծումն. 250.
Համաձայնութիւն (ընդհանուր), կամ Շարադրութիւն. 89.
Համաձայնութիւն (բան). 89. 90. *242.
Համառօտագրութիւն. 179.
Համեմատութեամբ գերադրական. 21. 107.
Հայերէն (լեզու). 1.
Հայցական-հոլով. 4. 97. 100. 109.
— Ներքոյ հայց. 17. *216.
Հաստատական անուն. 22.
Հաստատական բայ. *236.
Հատած (տաղաչափ.) 194.
Հարկադրական. 67.
Հարցական անուն. 27. 28.
Հարցական մակբայ. 75.
Հարցական նշան. տես Պարոյկ.
Հեգ. Հեգել. 172.
Հիւսեալ յանգեր. 202.
Հոլով. 3. 4. 109. *211
— Ներգործականք. *216.
Հոլովեալ մակբայներ. 76.
Հոլովումն. 5.
Կանոնաւոր. 5. *212. Անկանոն. 8. *213. Խառն, Կրկին, եւայլն. *214.
Հրամայական եղանակ (բայի). 40.
— Հրմ. կատարեալ և ապառնի. 68.

Ձայնարկութիւն. տես Միջարկութիւն.
Ձայնաւոր (գիր). 1. 169. 182.
Ձև (բացառական.) 58.
Ձև (քերականական). 157.
Ձեւաւոր շարադրութիւն. 157. *248.

Ճոխ յանգ. 200.

Մաքակէտ. 178.
Մակբայ. 73. 146. *237.
Մակբայի նախադրութիւն. 81.
Մակբայակերպք. 80. 114. *239.
Մասնական կամ Միջակ անուն. 26. 121. *218.
Մասն-բանի. 2.
— Փոփոխականք, Անփոփոխք. 3.
Մասանց-բ. կազմութիւն. 3.
— Համաձայնութիւն. 80.
Միադիմի կամ Դիմազուրկ բայ. 57. *236.
Միավանկ. 2.
Միջակ անուն. տես Մասնական.
Միջակէտ. 177.
Միջարկութիւն. 87. *241.

Յանգ (տաղաչափութ.) 199.
Յանգական ստանաւոր. 199.
Յատկացեալ. 93.
Յատկացուցիչ. 93. *242.
Յատուկ անուն. 22.
- Գոյական և ածական յատկ. անուանք. 22.
— Հոլովումն. 22. *213.
— Յօդառութիւն. 117.
Յարաբերական դերանուն. 30. 40. 124. *220.
Յարաբերեալ. 124.
Յարակատար ժամանակ. 67. 68.
— Յրկար. անորոշ. 67.
— Յրկար. պայմանական. 67.
Յաւելուածով բայեր. *223. 228.
Յեղաշրջութիւն. տես Շրջումն.
Յետադաս նախադրութիւն. 81.
Յոդնակի. 3. 42.
Յօդ. 17.
Որոշեալ յօդ. 17. 93. 110.

Numérisé par CDMF (FF) - 2011

Անորոշ յօդ. 10, 120.
Յօդով հոլովմ. 13. 19.
Դիմորոշ կամ Դերանուանական յօդ. 33. 126. *247.

Նախադաս նախադասութիւն. 81.
Նախադասութիւն. 89.
— Շարքը. 158. *248.
Նախադրութիւն. 80. 148. *239.
Նախդիր. 12. 82. *239.
— Հոլովականներու եւ Հոլովմանց. *239.
Նախդրիւ հոլովներ. *211. 216.
Ներգոյական հոլով. 13. *217.
— Աննախդիր. 13. 103. 110
Ներգործական բայ. 43.
— Լծորդութիւնը. 44.
Ներգործականերով (չէզոք). *232.
Ներկայ ժամանակ (բայի). 42.
Նի մասնիկ. 70.

Շաղկապ. 83. 150. *241.
Շարադրութիւն. 89.
— Պարզ եւ ձեւաւոր. 157. 159.
Շեշտ. 182.
Շրջումն, Շրջան կամ Յեղաշրջութիւն. 158.

Ոլորակ. տես Պարոյկ:
Ոտանաւոր. 190.
Ոտք (տաղաչափութ.) 191.
Որակական մակբայ. 107.
Ուղղագրութիւն. 73.
Ուղղական հոլով. 4. 99. 106. 109.
Ուրացական. տես Բացասական:

Չակերտ. 178.
Չափական ոտանաւոր. 190.
Չափաւոր յանգ. 200.
Չափի անուններ. 106. *246.
Չէզոք բայ. 43.
Ներգործականերով եւ Կրաւորականերով. *232.
Չէ բացասական մասնիկ. 59.
Չորրորդ հոլովումն. 7. *212.
Չորրորդ լծորդութիւն. 48.

Պակասաւոր անուններ. *215.
Պակասաւոր բայեր. 56. *235.
Պայմանական ժամանակ (բայի). 67.
Պատմական հոլով. 216.
Պարառական հոլով. *216.
Պարզ բայեր. *223.
Պարզ ժամանակներ (բայի). 66. *221.
Պարոյկ կամ Ոլորակ. 184.

Ռամկական, Ռամկօրէն. 1.

Սահմանական եղանակ (բայի) 41. 67.
Սեռ (բայերու). 41. 127.
Սեռական հոլով. 5. 101.
— Սեռականէ-տրական. 110.
— Սեռականէ-ուղղական կամ ստացական. 39. 84. *246.
Սղումն. 184. 191.
Սուղ (ձայնէ եւ նշան). 4. 184.
Ստացական դերանուն. 30. 35. *220.
Ստացական յօդ. 33. 127. 116. *247.
Ստորադասական եղանակ (բայի). 41. 67.
Ստորակէտ. 176.
Ստուգաբանական լուծումն. 150.
Ստուգաբանութիւն. 167.

Վաղակատար. տես Գերակատար:
Վանկ. 2. տես եւ Հեգել. Ոտք:
Վերլուծութիւն, տես Լուծումն:
Վերջակէտ. 178.
Վերջահոլով. 113. *211.

Տաղաչափութիւն. 191.
Տանգլուխ գիր. 180.
Տեղական մակբայ. 73.
Տկար յանգ. 200.
Տող (տաղաչափութ.) 203.
Տողադարձ. 172.
Տուն (տաղաչափութ.) 204.
Տրական (վերջահոլով.) 4. 101. 106.
— Աննախդիր. 13. 102. 110. 113. *2.
Տրոհութիւն. 172.

Ցուցական դերանուն. 30. 32. *220.
Ցուցական յօդ. 33. *247.

Փակագիծ. 179.
Փոխադարձ բայ. 127.
Փոփոխական (մասնկը-բառի). 2.
Փոփոխմամբ հոլովումն. 14.

Քերականական Լուծումն, կամ Վերլուծութիւն. 250.
Քերականական ձեւեր. 157.
Քերականութիւն. 1.
Քերականութեան մասերը. 167.

Numérisé par CDMF (FF) - 2011

Philippe PILIBOSSIAN
1 avenue Houette
93160 NOISY-LE-GRAND

Numérisé par CDMF (FF) - 2011